Ս.Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(Մ.Թ.Ա. VI - Մ.Թ. IV ԴԴ.)

Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(Մ.Թ.Ա. VI – Մ.Թ. IV ԴԴ.)

9(47.925)
Կ-85

Հ. Հ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(Մ.Թ.Ա. VI – Մ.Թ. IV ԴԴ.)

3518

ԵՐԵՒԱՆ - 2005

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Կ - 858

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Սույն աշխատությունն ավարտված է եղել ավելի քան երեք տասնամյակ առաջ, որի համար Հ. Հ. Գիտությունների Ազգային Ակադեմիայի Պատմության Ինստիտուտը հեղինակին շնորհել է պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Տարբեր պատճառներով նրա հրատարակությունը կասեցվել է, և այժմ այն ներկայացվում է գիտական հասարակայնության ուշադրությանը: Գրված լինելով ավելի քան 30 տարի առաջ, աշխատության մեջ արտացոլված է այդ ժամանակի պատմագիտական տերմինաբանությունը, որը մենք որոշել ենք թողնել անփոփոխ, ինչը ավելի ճիշտ կարտացոլի այդ ժամանակի պատմագիտական մտքի մակարդակը և պատկերացումները:

Ս.Մ.Կ.

Գիրքը հրատարակվում է Հ.Օ.Ֆ.ի «Ա. Պէրպէրեան» ֆոնտի հովանավորությամբ

Ս.Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Կ - 858 Հին Հայաստանի պետական կառուցվածքը –
(մ.թ.ա. VI – մ.թ. IV դդ.) — Եր.- Լուսակն, 2005

Գրքի սրբագրիչ, ինչպես նաև հունարեն,
գերմաներեն և ռուսերեն տեքստերի մեքենագրող՝
ԴՈՐԱ ՍԱՔԱՅԱՆ

Հայերեն տեքստի մեքենագրող և էջադրող՝
ՄԱՐՕ ՄԱՆԱՎԵԱՆ

Կ 0503020913 ---------- 2005 ԳՄԴ 63.3 (2Հ)
0150 (01) - 2005

ISBN 99941-48-03-6

© Ս.Մ. Կրկյաշարյան, 2005 թ.
© «ԼՈՒՍԱԿՆ» Հրատարակչություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հին Հայաստանի պետական կառուցվածքի հարցը սերտորեն առնչվում է Հայկական լեռնաշխարհում պետականության առաջացման նախադրյալների, հայկական առաջին պետության առաջացման և պետական հաստատությունների հետագա զարգացման հարցերի հետ: Հայ ժողովրդի պատմության համար կարևորագույն նշանակություն ունեցող այս հարցերը պատմագրության մեջ ըստ էության իրենց բավարար լուծումը դեռևս չեն ստացել: Այսպիսի վիճակը պիտի վերագրել, առաջին հերթին այն բանին, որ մեզ հասած մատենագրական աղբյուրները, լինեն դրանք հայկական թե օտարալեզու, խիստ ժլատ, շատ դեպքում նույնիսկ ծայր աստիճան շփոթ ու կասկածելի, եթե չասենք՝ հակասական, տվյալներ են հաղորդում հայկական պետության առաջացման և Հայաստանում տիրող պետական կարգերի մասին: Հին Հայաստանին վերաբերող տվյալների կցկտուր ու խառնաշփոթ վիճակը հնարավորություն չի ընձեռել ուսումնասիրողներին Հայաստանի հնագույն շրջանի թեկուզ և քաղաքական պատմությունը հանգամանորէն շարադրելու, ուր մնաց թե երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական հարաբերություններին և պետական կառուցվածքին վերաբերող հարցերը բավարար չափով լուսաբանելու:

Ընդհանրապես հին Հայաստանի պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրները զանազանատիպ են թե՛ իրենց բնույթով, թե՛ ըստ գրության ժամանակի: Հին Հայաստանին վերաբերող վկայությունները ցաք ու ցրիվ սփռված են մ.թ.ա. V դարի պատմիչ Հերոդոտոսից մինչև մ.թ. VI դարում ապրած բյուզանդական մատենագիր Պրոկոպիոս Կեսարացին (չհաշված X դարի բյուզանդական բառարանագիր Սուիդասին, ինչպես նաև հնագույն մատյաններից տեղեկություններ քաղած մի շարք բյուզանդական տարեգիրներին) ընկած ավելի քան հազար տարի ընդգրկող ժամանակահատվածում ապրած հունա-հռոմեական մի շարք հեղինակների երկերում: Հայաստանին և հայերին առնչվող նյութերը պրպտելիս, հաճախ հարկադրված ենք լինում քրքրելու

անտիկ հեղինակների ոչ միայն պատմական երկերը, այլև անտիկ բնագետների, աշխարհագրագետների, բարոյախոսների, մինչև իսկ գեղարվեստական խոսքի վարպետների գործերը:

Հունա-լատինական գրավոր աղբյուրները, ընդհանուր առմամբ, ունեն անժխտելի մի առավելություն: Նրանց հեղինակների ճնշող մեծամասնությունը առավել կամ պակաս չափով ժամանակակից են իրենց նկարագրած իրադարձություններին և կամ օգտվել են այդ իրադարձությունների մասին գրած ավելի վաղ հեղինակների գործերից: Անտիկ հեղինակների երկերի այդ արժանիքը, սակայն, հասնում է նվազագույնի այն դեպքում, երբ արդեն խոսքը վերաբերում է Հայաստանի ներքին պատմությանը առնչվող հարցերին: Անժխտելի է, որ նրանց ուշադրության կենտրոնում եղել է հունա-հռոմեական աշխարհը, որից դուրս գտնված բոլոր երկրները դիտվել են որպես բարբարոսական: Հետևաբար, նրանք խիստ պատահականորեն, դեպքից դեպք են գրում Հայաստանի մասին, որը, հանդիսանալով այդ աշխարհի ծայրամասերից մեկը, չէր կարող նրանց լուրջ ուշադրության առարկան դառնալ: Հայաստանի մասին նրանք, ընդհանրապես, գրել են քաղաքական որևէ իրադարձության կամ հունա-հռոմեական աշխարհի արքաների ու զորա-հրամանատարների նվաճողական արշավանքների կապակցությամբ: Ուստի և օտարալեզու այդ սկզբնաղբյուրները շոշափում են, գլխավորապես, Հայաստանի արտաքին քաղաքական պատմության հարցերը, ուշադրություն չդարձնելով երկրի ներքին կյանքի վրա[1]: Հասկանալի է, որ դրանցում պահպանված կցկտուր տեղեկությունները բոլորովին էլ բավական չեն հին Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմությունը շարադրելու համար:

Չնայած այն բանին, որ պայմանավորված լինելով հայկական գրերի գյուտի հետ, մեր ազգային մատենագրությունը պետք է երևան գար միայն մ.թ. V դարում և դրանից հետո, երբ դեռևս ութ դար առաջ կազմավորված հայկական ինքնուրույն պետականությունն արդեն վերացել էր և նրա մասին մեր նախնիները միայն հուշեր և զրույցներ էին պահպանել, երբ հեթանոսական

(1) *Բացառություն են կազմում Քսենոփոն Աթենացու «Անաբասիս»* (Κύρου ἀνάβασις) *և «Կյուրոպեդիա»* (Κύρου παιδεία) *ինչպես և Ստրաբոնի «Աշխարհագրություն»* (Γεωγραφικά) *երկերը:*

Հայաստանի գրավոր հուշարձանները (եթե այդպիսիները գոյություն են ունեցել երբևիցե), քրիստոնեության, որպես պետական կրոնի, ընդունումից հետո, համարյա ամբողջջապես ոչնչացվել էին, այնուամենայնիվ, հին Հայաստանի ներքին, սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունն ուսումնասիրելիս, անգնահատելի են մեր անդրանիկ պատմագիրների, առանձնապես Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու մատյանները: Հակառակ իր վարքագրական բնույթին, Ագաթանգեղոսի երկը պատմագիտական մեծ արժեք է ներկայացնում հին Հայաստանի տեղագրության, երկրում տիրող նախարարական կարգերի, հայկական դիցաբանության և պաշտամունքային կենտրոնների, ինչպես նաև երկրի ներքին կյանքի այլ բնագավառների ուսումնասիրման համար[2]: Փավստոս Բուզանդի մատյանում ևս, որտեղ թեպետև շարադրված են ընդամենը 55 տարվա դեպքերը, սկսած Խոսրով Կոտակի (332-338 թթ.) թագավորությունից մինչև Հռոմի և Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին բաժանումը (387 թ.), պահպանված են արժեքավոր տեղեկություններ հայոց թագավորի և հայ նախարարների փոխհարաբերությունների, ինչպես նաև տարբեր գործակալությունների մասին[3]:

Սակայն հայ մատենագիրներից մեզ համար միշտ էլ անփոխարինելի մնում է Մովսես Խորենացին: Մեր ազգային մատենագիրներից միայն պատմահայրն է, որ Հայաստանի կապակցված պատմությունը շարադրելիս հնագույն ժամանակներից մինչև հայ Արշակունյաց թագավորության անկումը, աշխատել է պատմական ժամանակագրության մեջ հանգամանորեն տալ հայկական թագավորության առաջացման պատմությունը, նկարագրել Հայաստանի պետական կարգը, տեղեկություններ հաղորդել Հայաստանի պետական կառուցվածքի մասին[4]: Սակայն, ինչպես նոր նշեցինք, հայկական պետականության առաջացման և պետական համապատասխան հաստատությունների ստեղծման

(2) *Ագաթանգեղոսի մասին եղած լիակատար մատենագիտությունը տես Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 151-213:*

(3) *Փավստոս Բուզանդի հրատարակությունների մատենագիտությունը տես* «История Армении Фавстоса Бузанда», Ереван, 1953, էջ 233-237:

(4) *Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գլուք Բ:*

ժամանակաշրջանից հայ պատմիչին ամբողջ հարյուրամյակներ են բաժանում: Եթե այս նկատառմանն ավելացնենք նաև ոչ պակաս նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ Խորենացու ապրած տարիներին հայոց աշխարհը կորցրել էր իր ինքնուրույն պետականությունը և քաղաքական անկախությունը, և գուցե պետական մի շարք հաստատություններ վերացել էին կամ ձևափոխվել բյուզանդա-պարսկական նվաճողների շահերին համապատասխան, ապա մեզ համար ավելի քան պարզ կլինի, որ նա ևս, մեր մյուս մատենագիրների նման, չէր կարող բացարձակապես ճշգրիտ և սպառիչ պատկերացում ունենալ հին Հայաստանի պետական կարգի և պետական կառուցվածքի մասին: Հետևաբար, նշված հարցերին անդրադառնալիս, պատմահայրը ամեն անգամ հարկադրված էր դիմելու իրենից առաջ գոյություն ունեցած և իրեն մատչելի ինագույն աղբյուրներին՝ մատենագրական թե վիմագիր: Իսկ այդ աղբյուրները, իր իսկ Խորենացու վկայությամբ, բացառապես օտարաբան էին: Մովսես Խորենացու օգտագործած բազմաթիվ աղբյուրների թվում նշանակալից տեղ են գրավում նաև սերնդե սերունդ ավանդված ազգային բանավոր զրույցները, որոնք, սակայն, շատ դեպքերում չէին համապատասխանում օտար գրավոր աղբյուրների վկայություններին և ստացել էին վիպական երանգավորում: Անտիկ հեղինակների մատյաններից օգտվելիս, Մովսես Խորենացին աշխատել է Հայաստանի և հայերի մասին նրանց հաղորդած տվյալները հաշտեցնել մեր ազգային զրույցներում և բանավոր պատումներում պահպանված հիշատակությունների հետ, բոլոր դեպքերում նախապատվությունը տալով վերջիններին: Այստեղից էլ, գլխավորապես, բխում են պատմահոր տվյալների մասնակի անճշտությունները և շեղումները հատկապես Հայաստանի արտաքին քաղաքական պատմությանը վերաբերող վկայություններում: Առավել ստույգ և արժանահավատ են երկրի ներքին, սոցիալ-տնտեսական պատմությանը վերաբերող Խորենացու հաղորդած տեղեկությունները: Այդ ստուգության կորագիծը առավել բարձրանում է, պատմահոր ապրած ժամանակաշրջանին մերձենալուն համընթաց:

Ահա թե ինչու Հայաստանի հնագույն ժամանակաշրջանի պատմությանը վերաբերող Մովսես Խորենացու հաղորդած տվյալներից օգտվելիս, դրանք ստուգելու, ճշգրտելու կամ լրացնելու համար ամեն անգամ կարիք է զգացվում դիմելու օտարա-

բան հեղինակների երկերում հայերի և Հայաստանի մասին պահպանված զուգահեռ և առնչակից հաղորդումներին, մանավանդ որ այդ հեղինակների մի մասը, իր իսկ պատմահոր հավաստիացումներին համաձայն, եղել են Խորենացու աղբյուրները: Այդ հեղինակների ճշմող մեծամասնությունը, սակայն, անձնապես չի եղել Հայաստանում, ուստի և նրանք գրել են Հայաստանի մասին սոսկ իրենց լսածների կամ ավելի վաղ հեղինակների երկերում այդ մասին կարդացածի հիման վրա[5]: Նույնիսկ Հերոդոտոսի նման հեղինակը, որն իր պատմական երկը շարադրելու համար նյութեր ու տպավորություններ քաղելու նպատակով շրջագայել է բազմաթիվ երկրներ, մեր կարծիքով, չի եղել Հայաստանում: Մեր այս ենթադրությունը հիմնված է բոլորովին էլ Հայաստանին չվերաբերող Հերոդոտոսի մի վկայության վրա, որը, սակայն, անուղղակի կերպով ցույց է տալիս, որ առաջին պատմագիրը ինքը չի այցելել Հայաստան: Նկարագրելով հին եգիպտացիների կենցաղը, նա գրում է, որ «նրանք միակ ժողովուրդն են, որոնք իրենց անասունների հետ ապրում են նույն հարկի տակ»[6]: Եթե նա իսկապես այցելած լիներ Հայաստան, ապա Քսենոփոնի նման նա ևս կտեսներ, որ այդ ժամանակ հայկական գյուղերում էլ մարդիկ իրենց ընտանի կենդանիների հետ ապրում էին միևնույն տանը[7]: Ինչքան էլ որ մեզ համար գայթակղիչ թվա Հետոդոտոսի՝ Հայաստան այցելած լինելու ենթադրությունը, այնուամենայնիվ, քանի որ ինքն այդ մասին ոչ մի հիշատակություն չունի, մենք մեզ իրավունք չենք վերապահում նրան վերագրելու այն, ինչ վկայված չէ նրա պատմության մեջ: Ուստի և չհիմնավորված պիտի համարել ակադ. Հ.Հ. Մանանդյանի կարծիքը, երբ գրում է. «Ավելի քան հավանական է, որ նա (Հերոդոտոսը _ Ս.Կ.) ևս, ինչպես և Քսենոփոնը, նույնպես անձամբ եղել էր Հայաստանում և արմենների ու նրանց երկրի մասին գրել էր, գլխավորապես, այն, ինչ որ ինքը տեսել էր կամ

(5) *Տես Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 9–31, որտեղ հանգամանորեն խոսվում է օտարերկրյա այդ հեղինակների մասին:*

(6) Herodoti Historiae, II, 36.

(7) Xenophontis Expeditio Cyri (*այսուհետև՝* Anabasis), *գիրք* IV, *գլ.* 5, 26:

լսել էր իր ճանապարհորդությունների ընթացքում»[8]: Այս տեսակետից երջանիկ բացառություն են կազմում անտիկ հեղինակներից Քսենոփոնը և Ստրաբոնը, որոնք անձամբ եղել են Հայաստանում, հետևաբար, հայերի ու նրանց երկրի մասին գրել են հիմնականում այն, ինչ իրենք տեսել են կամ տեղում լսել[9]: Դեռ ավելին: Ստրաբոնը չի բավարարվել այդքանով: Նա օգտվել է իրենից առաջ Հայաստանով անցած և հայերի ու նրանց երկրի մասին գրած նախորդ հեղինակների գործերից, ինչպիսիք եղել են Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկիցներ Կյուրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին[10]:

Հերոդոտոսի և Քսենոփոնի հաճամապատասխան երկերը, սակայն, մեզ քիչ բանով կարող են օգնել հայկական թագավորության պետական կառուցվածքն ուսումնասիրելու գործում, քանի որ դրանք գրվել են այն ժամանակ, երբ Հայկական լեռնաշխարհը գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ և հայերը դեռևս չէին կարողացել ստեղծել իրենց ինքնուրույն պետականությունը, թեպետև Քսենոփոնն իր «Կյուրոսի դաստիարակությունը» (Κύρου παιδεία) պատմական վեպում հանգամանալից կերպով խոսում է արմենների թագավորի և նրա ընտանիքի, ինչպես նաև «պատվավոր արմենների» մասին[11]: Այնուամենայնիվ, այս երկու խոշորագույն պատմագիրների վկայություններն անփոխարինելի են հայկական պետականության առաջացման սոցիալ-տնտեսական ու քաղաքական նախադրյալներն ուսումնասիրելու համար, քանի որ դրանք միակն են ամբողջ մատենագրության մեջ, որ նյութեր են հաղորդում այդ հարցի վերաբերյալ:

Հայաստանի ինագույն այդ շրջանի պատմությունն ուսումնասիրելիս, հնարավոր չէ անուշադրության մատնել Հերոդոտոսի այն եզակի վկայությունները, որոնք վերաբերում են Հայ-

(8) *Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 362: Հ. Մանանդյանի այս ենթադրությունը, մեր կարծիքով, հիմնված է իր իսկ Հերոդոտոսի այն հավաստիացման վրա, թե ինքը անցել է «արքունի ճանապարհով», որի մի հատվածը, ինչպես հայտնի է, ձգվում էր հայկական Մոխքի միջով:*

(9) *Ս.Մ. Կրկյաշարյան, նշվ. աշխ., էջ 10-11 և 20-22:*

(10) Strabo, XI, 14, 12 (C. 530).

(11) Xenophontis Cyropaedia, III, 1, 1-43; III,2, 1-26.

կական լեռնաշխարհի և Բաբելոնի միջև գոյություն ունեցած առևտրական հարաբերություններին, հայերի զեն ու զրահին, Աքեմենյանների գանձարանին մուծած նրանց հարկերի չափին և այլն[12]:

Նախահելլենիստական ժամանակաշրջանի Հայաստանի պատմությունն ուսումնասիրելիս, առանձին ուշադրության են արժանի Քսենոփոնի հանրահայտ երկերը՝ «Կյուրոսի դաստիարակությունը» (Κύρου παιδεία) և «Անաբասիսը» (Κύρου ανάβασις): Սրանցից առաջինը իսկական պատմական երկ չհանդիսանալով հանդերձ (այն առավելապես բարոյախոսական-քաղաքական վեպ է), արժեքավոր տեղեկություններ է բովանդակում Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ գտնված մ.թ.ա. VI դարի Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի, ինչպես նաև հետաքրքիր զրույցներ այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերի մասին[13]: Գալով Քսենոփոնի «Անաբասիս» երկին, ապա Հայաստանին վերաբերող դրա հատվածները[14], գրված լինելով ականատեսի գրչով (հիշենք, որ 10 հազար հելլեն վարձկանների հաճանջի ճանապարհի մի զգալի մասն անցնում էր Հայկական լեռնաշխարհի միջով), բոլոր ուսումնասիրողների համար եղել են ամենահուսալի սկզբնաղբյուրը պարսկական սատրապի գերիշխանության տակ գտնված Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը շարադրելիս:

Մեզ համար առանձնապես արժեքավոր է նաև Հայաստանին սահմանակից Պոնտական Ամասիա քաղաքում ծնված հույն մատենագիր Ստրաբոնի (մ.թ.ա. 64-մ.թ. 20) պատմա-աշխարհագրական բնույթի հանրահայտ «Աշխարհագրություն» (Γεωγραφικά) երկը, որում լայնորեն օգտագործված են ոչ միայն հեղինակի անձնական դիտողությունները և տպավորությունները

(12) Herodot, I 72, 180, 194; III, 93, 94; V, 49, 52; VII, 73, 79.

(13) Xenoph., Cyrop., II, 1,6; 4,9-32; III 1,1-43; 2,1-31; 3,1-5; 3,36; VIII 4,24: *Հայերեն թարգմանությունը տես Քսենոփոն, Կյուրոսապատում. Ֆրանսերենից թարգմ. Աշոտ Մուրադխանյան, Թեհրան, 1971:*

(14) Xenoph., Anabasis, III, 5,5-18; IV, 1,1-28; 2,1-26; 3,1-34; 4,1-22; 4,1-36; 6,1-27; 7,1-27; V, 5,1; 5,16-17; 6,36; VII 8,25: *Հայերեն թարգմանությունը տես Քսենոփոն, Անաբասիս, բնագրից թարգմանեց և ծանոթագրեց՝ Սիմոն Կրկյաշարյան, Երևան, 1970:*

իր ճանապարհորդություններից, այլև մեզ հայտնի երկերը այնպիսի հեղինակների, ինչպիսիք են Հերոդոտոսը, Պոլիբիոսը և այլն[15], ինչպես նաև այլ հեղինակների (Երատոսթենես, Հիպարքոս, Արտեմիդորոս Եփեսացի, Թեոփանես Միտիլենացի, Մեդիոս Լարիսացի և ուրիշներ)[16] մեզ չհասած գործերը: Ստրաբոնի այս երկը իր ժամանակի չափանիշով պատմա-աշխարհագրական և ազգագրական մի յուրատեսակ հանրագիտարան է, որում, իմիջիայլոց, արժանահավատ վկայություններ կան ոչ միայն հայկական պետականության վաղագույն շրջանի, այլև Հայաստանին հարևան մյուս երկրների (Պարսկաստան, Ատրոպատենե, Ալբանիա, Իբերիա, Պոնտոս, Կապադովկիա, Ասորիք) պատմության մասին, որոնց հետ հայերն ունեցել են սերտ քաղաքական և մշակութային հարաբերություններ դեռևս հնագույն ժամանակներից սկսած:

Մեզ համար որոշակի արժեք են ներկայացնում հույն պատմիչ Դիոդորոս Սիկիլիացու (մ.թ.ա. շուրջ 90-20 թթ.) «Պատմական գրադարան»ում (Βιβλιοθήκη ἱστορική) պահպանված և մեր պատմության հնագույն շրջանին վերաբերող առանձին հատվածներ, որոնք դեռևս հայագիտության մեջ պատշաճ ուշադրության չեն արժանացել: Մեր սույն ուսումնասիրության մի շարք հատվածներ բացառապես հիմնված են Դիոդորոսի հաղորդած այդ վկայությունների վրա[17]:

Թեպետև իր բնույթով հռոմայեցի հեղինակ Գայոս Պլինիոս Ավագի «Բնության պատմությունը» (Naturalis Historiae) ուղղակիորեն պատմական բովանդակություն ունեցող երկ չէ, սակայն դրանում կա եզակի մի տեղեկություն Հայաստանի Ի դարի վարչական բաժանման մասին, որի պատմագիտական արժեքը դժվար է գերագնահատել[18]:

Հայկական և Պոնտական թագավորությունների կարևորագույն շրջաններից մեկի՝ Տիգրան Բ-ի և Միհրդատ Ջ Եվպատորի (մ.թ.ա. Ի դարի առաջին կեսը) փոթորկալից պատմությունն առաջին հերթին ուսումնասիրում ենք Պլուտարքոսի և Ապպիանոսի

(15) Strabo, XI, 14,13 (c. 531); XI, 14,16 (c. 533); XIV, 2,29 (C. 683).
(16) *Նույն տեղում*, I, 3,1 (c. 47); II, 1,11 (c.71); II, 1,29 (c.82); XI, 14,8 (C.529) *և այլն*:
(17) Diodori Bibliotheca Historica, vol. I-V, Lipsiae, 1866-1868.
(18) C. Plinii Secundi Naturalis Historiae, Paris, 1883, VI, 9.

հաղորդած արժեքավոր տեղեկությունների հիման վրա: Հույն պատմիչ և բարոյախոս Պլուտարքոսը (46-123 թթ.) հեղինակ է անտիկ աշխարհի հայտնի ռազմական ու քաղաքական գործիչների կենսագրությունների (Βίοι παράλληλοι)[19], որոնց առանձին հատվածները, շատ դեպքերում, մեր միակ գրավոր աղբյուրներն են մ.թ.ա. Ի դարի Հայաստանի և նրան հարևան երկրների պատմության ուսումնասիրման համար: Պլուտարքոսի երկերից օգտվելիս, սակայն, երբեք չի կարելի մոռանալ հեղինակի արիստոկրատական ծագումը, բացահայտ հռոմեասեր կողմնորոշումը, բարոյախոսական շեշտված նպատակադրումը, ինչպես նաև նրա բացասական վերաբերմունքը ժողովրդական զանգվածների սոցիալական շարժումների և Հռոմին հակադրվողների նկատմամբ: Նույնը պիտի ասել նաև Ապպիանոս Ալեքսանդրիացու մասին (մ.թ. II դ.), որի «Հռոմեական պատմության» 12-րդ՝ «Միհրդատական» գրքում ընդարձակ կերպով նկարագրված են Միհրդատի և Տիգրանի պատերազմները Հռոմի դեմ, Տիգրանակերտի կառուցումը, ինչպես նաև հայոց թագավորի որդիների բանսարկությունները իրենց հոր՝ Տիգրան Մեծի դեմ: Նույնքան կարևոր են այդ երկի 11-րդ՝ «Սիրիական» գրքում Հայաստանի, հատկապես Տիգրան Բ-ի նվաճումների և գործունեության մասին Ապպիանոսի հաղորդած եզակի տեղեկությունները[20]:

Հին Հայաստանի, ինչպես և Պոնտոսի թագավորության պետական կառուցվածքն ու քաղաքական պատմությունն ուսումնասիրողի համար անփոխարինելի է մ.թ.ա. Ի դարի հույն հռետոր, փիլիսոփա և մատենագիր, Տիգրան Մեծի արքունիքում ապրած և նրա թագավորության պատմությունը գրած Մետրոդորոս Սկեպսացու երկի կորուստը[21]:

Մինչև վերջին դարասկիզբը Առաջավոր Ասիայի հելլենիստական, ինչպես նաև Հռոմի տիրապետության ժամանակաշրջանի պատմությունը ուսումնասիրվել ու շարադրվել է, հիմնականում, գրավոր պատմողական աղբյուրների տվյալների հիման վրա: Սակայն, այն բանից հետո, երբ վերջին հարյուրամյակում նշված տարածքի վրայ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ

(19) Plutarchi Vitae parallelae, vol. 1-4, Lipsiae, 1914-1939.
(20) Appiani Alexandrini Historia Romana, I-II, Lipsiae, 1879.
(21) Strabo, XIII, 1,55; C. Plin., Nat. Hist., XXXIV; Plutarchi Vitae, Lucullus, XXII, 3-6.

ճուճարեն վիմական արձանագրություններ[22], արդեն բավական չէ այդ երկրների պատմությունն ուսումնասիրել հենվելով բացառապես պատմողական աղբյուրների վկայությունների վրա: Այժմ արդեն հելլենիզմի պատմությունն ուսումնասիրողի տրամադրության տակ եղած վիմական արձանագրությունները, բոլոր դեպքերում, օգնում են լուսաբանելու այդ շրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության կարեվորագույն հարցերը:

Դժբախտաբար, հին հայկական քաղաքների սիստեմատիկ հնագիտական պեղումները դեռևս վեջերս են սկսվել (այն էլ՝ միայն Խորհրդային Հայաստանի տարածքի վրա) և, կարծում ենք, որ դրանք նորանոր արձանագրություններ կտան, որոնց ուսումնասիրությունը նոր լույս կարող է սփռել մեր ժողովրդի հնագույն շրջանի պատմության վրա: Այսուհանդերձ, պատմական Հայաստանի տարածքի վրա տարբեր ժամանակներում, բոլորովին պատահական կերպով, հայտնաբերվել են, հելլենիստական Արևելքի մյուս երկրների հետ համեմատած, ոչ մեծաթիվ, շուրջ երկու տասնյակ արձանագրություններ արամեերեն, հունարեն և լատիներեն, որոնք անմիջականորեն վերաբերում են Հայաստանի հելլենիստական շրջանի պատմությանը[23]: Դրանք հարազատ վավերագրեր են և ժամանակակից աղբյուրներ այն

(22) *Այդ արձանագրությունները ի մի հավաքելու և հրատարակելու չնորհակալ գործը կատարել է գերմանացի պիտենական Վ. Դիտենբերգերը* (W. Dittenberger, Orientis Graeci Inscriptiones Selectae, vol. I-II, Lipsiae, 1903-1905. *այսուհետև՝* OGIS): *Նորագյուտ հունարեն արձանագրությունների մասին տես* «Revue des études greques» *հանդեսի համարներում:*

(23) *Հայաստանում հայտնաբերված այդ արձանագրությունները տարբեր ժամանակներում հրապարակվել են առանձին հետազոտողների կողմից, իսկ վերջերս ամփոփված են* К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953 *աշխատության մեջ: Արամեերեն մի արձանագրություն հրատարակել է Գ.Ա. Տիրացյանը (Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, ՏեղԳԱՀԳ, 1957, Նո 10, էջ 108): Արամեերեն երկու արձանագրություն հրատարակել է Ա.Գ. Փերիխանյանը* (А.Г.Периханян, Арамейская надпись из Гарни, *ՊԲՀ*, 1964, Նո 3, *էջ* 123-138: *Նույնի*, Арамейская надпись из Зангезура, *ՊԲՀ*, 1965, Նո 4, *էջ* 107-128): *Լատիներեն արձանագրություն հրատարակել է Բ.Ն. Առաքելյանը (Լատիներեն արձանագրություն Արտաշատից, ՊԲՀ*, 1967, Նո 4): *Բոլորովին վերջերս արամեերեն երկու արձանագրություն հրատարակեց Գ.Հ. Կարախանյանը (Արամեերեն երկու արձանագրություններ, ՊԲՀ*, 1971, Նո 3, *էջ* 274-276): *Այս վերջին*

դեպքերի և իրավիճակի, որոնց դրանք վերաբերում են: Այս առավելության կողքին, սակայն, այդ արձանագրություններն ունեն երկու ակնառու թերություն՝ մեծ մասամբ թերատ են, վատ պահպանված և չափազանց դժվար է դրանց ճիշտ թվագրումը:

Հայաստանում հայտնաբերված անտիկ շրջանին վերաբերող այդ արձանագրություններից բոլորը չէ, որ այս կամ այն չափով արժեք են ներկայացնում հին Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության հետ առնչված հարցերը լուսաբանելու համար: Այդ արձանագրություններից պատմաբանի համար առավել արժեքավոր են Արմավիրի, Գառնիի, Ապարանի, Տիգրանակերտի հունարեն, ինչպես նաև վերջերս Հայաստանում հայտնաբերված արամեերեն մի շարք արձանագրությունները, որոնց ուսումնասիրությունը որոշակի լույս է սփռում հին Հայաստանի ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլև մշակույթի պատմության վրա: Ուստի և բոլորովին պատահական չպիտի համարել այն դրական երևույթը, որ հիշյալ արձանագրություններով զբաղվել ու զբաղվում են համաշխարհային ճանաչում գտած այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, Մ.Ի. Ռոստովցևը, Յ. Մարկվարտը, Հ. Մանանդյանը, Կ.Վ. Տրեվերը, Լ. Ռոբերը և ուրիշներ[24]: Ամենայն հավանականությամբ, այդ արձանագրություններից մի քանիսը, ինչպես Գառնիի հունարեն արձանագրությունը և Արտաշեսի անունը

արձանագրությունների գիտական մեկնությունը տես A. Perikhanian, Les inscriptions araméennes du roi Artachés, "Revue des études arméniennes", nouvelle serie, tome VIII, 1971, *էջ* 169-174: *Վերջին տարիներին հայտնաբերված վերոհիշյալ արձանագրությունները լավագույն երաշխիքն է այն բանի, որ Մովսեական Հայաստանում սկսված հնավայրերի պեղումները մեզ կտան Հայաստանի հին շրջանի պատմությանը վերաբերող վիմական նոր տվյալներ:*

(24) C.F. Lehmann-Haupt, Eine griechische Inschrift aus der Spätzeit Tigranokertas, "Klio", VIII (1908), s. 447-520; М.И. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб., 1911; J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, *էջ* 134-135: *Հ.Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան*, 1946: *Նույնի, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան*, 1946: Я.А. Манандян, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, Известия АН Арм. ССР, Общественные науки, 1951, № 4; К.В. Тревер, Очерки ..., *էջ* 99-288.

կրող արամեերեն արձանագրությունները, դեռևս մեկ և կես հազարամյակ առաջ ծառայել են որպես սկզբնաղբյուր Մովսես Խորենացուն[25]: Այդ մտքին է հանգեցնում ուսումնասիրողին Գառնիում կառուցված հոյակապ հուշարձանների մասին պատմաւոր հաղորդած տեղեկությունների զարմանալի համընկնումը Գառնիի արձանագրության բովանդակությանը, ինչպես նաև վերոհիշյալ արամեերեն արձանագրությունները կրող կոթողների ձևի համընկնումը Խորենացու տված նկարագրության հետ:

Անցյալում մի շարք անվանի հայագետներ հմտալից աշխատություններ են հեղինակել հին Հայաստանի պատմության վերաբերյալ, ընդհանրապես. բայց բոլոր դեպքերում պատմագիտության մեջ հայ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությունը մնում էր համարյա խոպան, քանի որ նախասովետական հայագետներն իրենց ուշադրությունը գերազանցապես բևեռել էին երկրի քաղաքական պատմության վրա, այն էլ շարադրելով իբրև թագավորների և ռազմական գործողություններ վարած զորահրամանատարների պատմություն: Երջանիկ բացառություն է պրոֆ. Ն. Ադոնցը, որը էական ներդրում ունի հին, հատկապես մարզպանական Հայաստանի հասարակարգի ուսումնասիրման գործում:

Այսուհանդերձ, սխալ կլիներ պնդել, թե այս ուղղությամբ հայագետները ոչինչ չեն արել: Դեռևս անցյալ հարյուրամյակում Մխիթարյան միաբաններից Ղ. Ինճիճյանը, առաջին անգամ, փորձեց ուսումնասիրել հին Հայաստանի պետական կարգը: Իր աշխատության մեջ նա ամենայն մանրամասնությամբ թվարկում է հայ իրականության մեջ նկատված պետական պաշտոնները և հաստատությունները (բդեշխ, նախարար, իշխան, նահապետ, տանուտեր, հազարապետ, սպարապետ, սեպուհ, ոստանիկ և այլն), ամեն անգամ վկայակոչելով հայկական մատենագրական աղբյուրների տվյալները, սակայն առանց պատմագիտական անհրաժեշտ մեկնաբանության: Այս առումով նրա աշխատությունը կարելի է համարել սկզբնաղբյուրներից վերցրած վկայու-

(25) *Մովսես Խորենացի, Բ,ղ: Բ,ծգ: Համառ. Հ.Մ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին*, ՊԲՀ, 1965, Նո 3, էջ 229-234: *Գ.Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան*, 1966, էջ 185-190:

թյունների հավաքում և դասդասում[26]:

Հետագայում մի աշխատանք կատարել է նաև վրացի կովկասագետ Ի. Ջավախովը, առանձին ուսումնասիրություն նվիրելով հին Վրաստանի և հին Հայաստանի պետական կարգին: Ցավոք, այս վերջին աշխատությունը ևս այսօր չի կարելի բավարար համարել, քանի որ դրա հեղինակը նույնպես սահմանափակվում է գրավոր աղբյուրներում հանդիպող սոցիալական մի շարք տերմինների (թագավոր, տանուտեր, տուն, տոհմ, սեպուհ և այլն) սոսկ բանասիրական վերլուծությամբ: Թեպետ Ի. Ջավախովը իր ուսումնասիրության Հայաստանին վերաբերող հատվածում հենվել է բացառապես Փավստոս Բուզանդի, Եղիշէի և Ղազար Փարպեցու տվյալների վրա, շրջանցելով նույնիսկ ամենակարևոր աղբյուրը՝ Մովսես Խորենացուն, այսուհանդերձ նրա որոշ դիտողությունները կարող են մեզ համար օգտակար լինել[27]:

Ն. Ադոնցը հայագետներից առաջինն էր, որը Հայաստանի ֆեոդալական կարգերի ուսումնասիրությունը դրեց իրական, լուրջ գիտական հիմքի վրա: Առաջին անգամ նա տվեց Հայաստանի վաղ ֆեոդալական հասարակության սոցիալ-իրավական կառուցվածքի գիտական խոր վերլուծությունը[28]: Ն. Ադոնցը, սակայն, իր ամբողջ ուշադրությունը բևեռել էր հարցի քաղաքական և իրավական կողմի վրա, չփորձելով բացահայտել նախարարական կազմակերպության առաջացման և հետագա զարգացման սոցիալ-տնտեսական ակունքները: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեծ հայագետը հիմնականում նպատակադրված է եղել պատկերելու, ինչպես աշխատության վերնագիրն է ազդարարում, Հուստինիանոս կայսեր ժամանակ Հայաստանում տիրող դրությունը: Դեպի նախորդ դարերը նրա կատարած անհուսափելի անդրադարձումները կրում են, առավելապես, պատմա-աշխարհագրական, տեղագրական բնույթ: Այս ասպարեզում Ն. Ադոնցի սկսած գործը լրացնելու ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին Հ.Հ. Մանանդյանը, Խ.

(26) *Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Հ. Բ, Վենետիկ*, 1835:

(27) И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, С.П.б., 1905.

(28) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С.П.б., 1908.

Սամվելյանը, Ս.Տ. Երեմյանը, Բ.Ն. Առաքելյանը, Գ.Խ. Սարգսյանը, Ս.Գ. Փերիկխանյանը, Գ.Ա. Տիրացյանը, Հ. Ժամկոչյանը և մի շարք խորհրդահայ պատմաբաններ:

Այսպես, Հ. Մանանդյանն իր «ֆեոդալիզմը հին Հայաստանում» ընդհանրացնող աշխատության մեջ ուսումնասիրել է նախարարական տերությունների ներքին կազմակերպությունը և կառուցվածքը, ինչպես նաև նախարարների և թագավորի փոխհարաբերությունները: Հ. Մանանդյանն առանձնապես զգաղվել է հին Հայաստանի նյութական բարիքներ ստեղծողների, անմիջական արտադրողների դրությամբ[29]:

Խորհրդային իշխանության տարիներին լույս են տեսել հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերին նվիրված մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ: Առանձին ուշադրության է արժանացել Հայաստանում ստրկության և ստրկատիրական հասարակարգի գոյության հարցը: Այս առնչությամբ էլ առաջացել են բուռն վեճեր: Այժմ արդեն որոշակիորեն ուրվագծվել է երկու հակադիր տեսակետ: Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ Հայաստանում ստրկությունը, որպես երևույթ, նկատելի է, բայց այն չի եղել տիրապետող և չի կատարել արտադրության մեջ գերիշխող դեր. հետևաբար, չի կարելի խոսել Հայաստանում ստրկատիրական հասարակարգի գոյության մասին[30]: Վերջին տասնամյակներում, սակայն, ավելի ու ավելի հաստատվում է Ս.Տ. Երեմյանի առաջադրած այն տեսակետը, թե հին Հայաստանը ևս անցել է ստրկատիրական հասարակարգի պատմափուլը, թեպետև ստրկատիրությունը մեր

(29) *Հ.Հ. Մանանդյան, ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան), Երևան, 1934: Այս ուսումնասիրության մեջ հեղինակը հանրագումարի է բերել մինչ այդ իր իսկ հրատարակած մի շարք հոդվածներում արծարծված հարցերը:*

(30) Նույն տեղում՝ Я.А. Манандян, Актуальные вопросы историографии древней Армении, «Историк марксист», 1940, N^{O} 6; Նույնի՝ Проблемы общественного строя доаршакидской Армении, «Исторические записки», 1945, N^{O} 15. *Խ. Սամուելյան, Ստրկությունը հին Հայաստանում, ՀՍՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», N^{O} 2, Երևան, 1937: Նույնի, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1957: Նույնի, Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը, Տեղ. ՀԳԱՀԳ, 1951, N^{O} 8, էջ 23-46:*

երկրում ունեցել է այլ բնույթ, քան ռուսա-ռոմեական աշխարհում[31]: Այս վերջին տեսակետն էլ շարադրված է ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած հայ ժողովրդի պատմության ութհատորյակի առաջին հատորում, ինչպես նաև բուհական ու դպրոցական ձեռնարկներում[32]:

Վերջին տասնամյակներին հին Հայաստանի պատմության առանձին հարցերից առավել ուշադրության է արժանացել քաղաքների և քաղաքային կյանքի պատմությունը. հարց, որը բոլորովին անտեսվել էր նախախորհրդային պատմագրության մեջ: Այս հարցի ուսումնասիրման սկիզբը դրեց Հ.Հ. Մանանդյանը, 1930թ. ռուսերեն հրատարակած իր «Հայաստանի քաղաքների և առևտրի մասին հին ժամանակների համաշխարհային առևտրի կապակցությամբ (5-րդ դ. մ.թ.ա. - 15-րդ դ. մ.թ.)» մենագրությամբ, որի առաջին գլուխները վերաբերվում են Հայաստանի հնագույն քաղաքների պատմությանը[33]: Մենագրության մեջ հավաքված ու մշակված փաստերի առատության շնորհիվ այդ գիրքը միշտ էլ մնում է իբրև անհրաժեշտ ձեռնարկ ընդհանրապես հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողի համար: Սակայն Հայաստանում քաղաքների առաջացումն ու քաղաքային կյանքի զարգացումը Հ. Մանանդյանը դիտում է երկրի ներքին առաջընթացից, արտադրողական ուժերի զարգացումից կտրված: Նա գտնում է, որ հայկական քաղաքները եղել են սոսկ Հայաստանի վրայով անցնող տարանցիկ առևտրի կենտրոններ, որի շնորհիվ էլ նրանք առաջացել ու զարգացել են:

(31) С.Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, *Տեղ. ՀԳԱՀԳ*, 1948, № 11; *Նույնի*, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1. *Գ.Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962: Իրենց մի շարք աշխատություններում նույն տեսակետն են պաշտպանել նաև Բ. Առաքելյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Փերիխանյանը, Հ. Ժամկոչյանը, Գ. Տիրացյանը և ուրիշներ:*

(32) *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971: Հայ ժողովրդի պատմություն (Ձեռնարկ միջնակարգ դպրոցների համար հ. 1, Երևան, 1956: Հայ ժողովրդի պատմություն (բուհական ձեռնարկ), հ. 1, Երևան 1963:*

(33) Я.А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён (V в. до н.э. - XV в. н.э.), Ереван, 1930, *2րդ հրատ.* Ереван, 1954.

Հին Հայաստանի ստրկատիրական հասարակության հարցերն ուսումնասիրելիս, ակադ. Ս.Տ. Երեմյանն իր աշխատություններում ուշադրություն է դարձրել նաև հայկական հնագույն քաղաքների առաջացման հարցին: Հին Հայաստանի քաղաքների առաջացումը նա իրավամբ դիտում է հայկական հասարակության զարգացման ընդհանուր հետևախորքի վրա, ցույց տալով, որ Հայաստանում քաղաքների երևան գալը պատմական երկարատև պրոցեսի արդյունք է: Հայաստանում քաղաքների հետագա զարգացմանը դրականորեն նպաստել է Առաջավոր Ասիայում հելլենիստական պետությունների առաջացումը, որի հետևանքով ստեղծվեցին նպաստավոր պայմաններ միջազգային առևտրական փոխանակության համար և քաղաքները դարձան արհեստների և տարանցիկ առևտրի կենտրոններ: Ս.Տ. Երեմյանը, ուսումնասիրելով հին Հայաստանի քաղաքների սոցիալ-տնտեսական կառուցվածքը, հանգել է այն ճիշտ եզրակացության, թե այդ ժամանակաշրջանի հայկական քաղաքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը վերարտադրում էր հելլենիստական քաղաքի ընդհանուր պատկերը[34]:

Գ.Խ. Սարգսյանն իր «Տիգրանակերտ» մենագրության մեջ[35] հիմնականում ուշադրություն է դարձրել հին Հայաստանի քաղաքային համայնքի ուսումնասիրման վրա: Ուսումնասիրելով Արևելքի նախահելլենիստական շրջանի քաղաքների սոցիալ-տնտեսական իրավիճակը, նա գտնում է, որ այդ քաղաքները դեռևս նախկինում ունեցել են իրենց ներքին ինքնավարության օրգանները և վայելել են որոշակի առանձնաշնորհումներ՝ տրված հին արևելյան տերությունների արքաների կողմից: Այս հետևախորքի վրա էլ լուսաբանելով Տիգրանակերտ քաղաքին վերաբերող նյութերը, Գ. Սարգսյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հայկական քաղաքներում ևս կազմակերպված էին իրական և

(34) С.Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, *Տես՝ ՀԳԱՀԳ*, 1948, N° 11; *Նույնի*, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, N° 1. *Նույնի*, Развитие городов и городской жизни в древней Армении, М., 1953 (автореферат докт. дисс.)

(35) Г.Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960.

պոտենցիալ ստրկատերերի համայնքներ, որոնք հայոց թագավորի սոցիալական կարևոր հենարաններից էին IV դ. կենտրոնախույս նախարարների դեմ նրա մղած պայքարում. պայքար, որը նշանավորում էր Հայաստանում աստիճանական անցումը ավատական կարգերին:

Հայաստանի հնագույն քաղաքների պատմությունը զբաղեցրել է նաև մեզ: Այդ հարցին նվիրված մեր մենագրության մեջ ցույց է տրված, որ հելլենիստական քաղաքներն, ընդհանրապես, առաջացել են հիմնականում երկու եղանակով. 1) Արևելքի հին քաղաքներին և ռազմաստրատեգիական ու տնտեսական կարևորություն ունեցող բնակավայրերին հելլենիստական միապետները շնորհել են հունական պոլիսի կարգավիճակ: 2) Իրենք՝ թագավորները կառուցում էին նոր քաղաքներ: Այդ քաղաքները նրանց անհրաժեշտ էին որպես վարչական, ռազմական և տնտեսական հենարաններ Արևելքի ընդարձակ տարածությունները յուրացնելու և վերահսկելու համար: Կենտրոնական իշխանության ուժեղացումով կամ թուլացումով այդ քաղաքների արտոնությունները համապատասխանաբար սահմանափակվում էին կամ ընդարձակվում[36]: Մենք նշել ենք, որ մ.թ.ա. III – մ.թ. II դդ. Հայաստանում մի շարք քաղաքների առաջացումը պատահական երևույթ չէր: Այն օրինաչափ հետևանքն էր արդեն դարեր առաջ սկսած հայկական էթնիկական տարրերի համախմբման գործընթացի, որը բացել էր Հայաստանի համար տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման ժամանակաշրջան[37]: Ս.Գ. Փերիխանյանը հատուկ ուսումնասիրության է ենթարկել հայկական հեթանոսական տաճարներն ու տաճարային տնտեսությունները: Նա բացահայտել է Փոքր Ասիայի և հին Հայաստանի տաճարների և տաճարային տնտեսությունների ծագումը և կազմավորումը, դրանցում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, երկրի տնտեսական կյանքում տաճարների ունեցած դերը, ինչպես և թագավորական իշխանության հետ նրանց ունեցած փոխհարաբերությունները, որոնք ընդհանուր գծերով նման են եղել թագավորական իշխանության հետ քաղաքների

(36) *Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 43-78:*

(37) *Նույն տեղում, էջ 85:*

ունեցած փոխհարաբերություններին[38]:

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությունն ուսումնասիրելիս հայագետներն անդրադարձել են նաև Հայաստանում հողային հարաբերությունների և գյուղական համայնքի հարցերին: Հենվելով մեր վաղ միջնադարյան աղբյուրների տվյալների վրա, Հ. Մանանդյանը գտնում է, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել գյուղական համայնք և համայնական հողատիրություն, որ մ.թ. V-VII դդ. Հայաստանում նկատվող համայնական կարգերի շատ երևույթներ իրենց արմատներով հասնում են նույնիսկ մինչև Արտաշեսյան թագավորության շրջանը, որ Քսենոփոնի նկարագրած հայկական գյուղը ինքնին տոհմական համայնք է[39]: Այս հարցում նա համերաշխ է Ն. Ադոնցի տեսակետին: Մեծ հայագետը փորձել է ցույց տալ նաև այդ համայնքի ներքին կառուցվածքը: Անդրադառնալով հողի սեփականատիրության հարցին, Հ. Մանանդյանը նշում է, որ հողի գերագույն սեփականատերը ոչ թե սուվերեն թագավորն էր, այլ յուրաքանչյուր նախարարական տիրույթ կազմում էր տվյալ նախարարի լիակատար ժառանգական սեփականությունը[40]:

Ս.Տ. Երեմյանը ևս ուսումնասիրելով հայկական միջնֆեոդալական գյուղական համայնքը, գտնում է, որ այն կազմված էր արյունազգակցական ընտանիքներից, որ այստեղ գոյություն ուներ կոլեկտիվ հողային սեփականություն, մասնավոր հողօգտագործման առկայությամբ: Գյուղացի-համայնականները համայնքի հետ կապված էին հողից օգտվելու ժառանգական իրավունքով, որից զրկված էր տվյալ համայնքին չպատկանող մարդը: Համայնականները կոլեկտիվ կերպով էին հարկվում և կոլեկտիվ կերպով էլ կատարում իրենց պարհակները, որոնք շարունակ աճում էին, իսկ համայնականը աստիճանաբար ընկնում էր ստրկական վիճակի մեջ, համալրելով ստրուկների շարքերը[41]:

(38) А.Г. Периханян, Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. до н.э. - III в. н.э.), М., 1959.

(39) *Հ.Հ. Մանանդյան, Դիտողություններ չինականների դրության մասին մարզպանության շրջանում, Երևան, 1925: Նույնի, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934:*

(40) *Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 316:*

(41) С.Т. Еремян, Рабовладельческое общество в древней Армении, (автореферат), 1953, *էջ 15 և հաջ.:*

Գ. Սարգսյանը նոր փաստարկներով հիմնավորելով Ս. Երեմյանի վերոհիշյալ դրույթը, ավելացնում է, որ Արևելքի երկրներում գյուղական համայնքը եղել է ոչ միայն մասնատիրական տնտեսություններում աշխատող ստրուկների կազմը համալրելու աղբյուր, այլև ինքնին հանդիսացել է անմիջական ստրկատիրական շահագործման օբյեկտ[42]: Նույնպիսի տեսակետ է զարգացնում նաև Գ. Տիրացյանը «Անաբասիս» գրքում զետեղված իր «Անաբասիսը և Հայաստանը» հոդվածում[43]:

Վերջին տարիներին հայագետներն առանձին ուշադրություն են դարձնում ուրարտական պետության անկումից հետո Հայկական լեռնաշխարհում առաջին հայկական պետական կազմավորումների առաջացման, ինչպես նաև դրանք գլխավորած արքայատոհմերի հարցին: Ս. Երեմյանն ու Գ. Տիրացյանը ցույց են տվել, որ դեռևս Ուրարտական թագավորության վերջին շրջանում, ուրարտական պետականության ընդերքում կոնսոլիդացում էին հայ-արմենական էթնիկական տարրերը, նախադրյալներ ստեղծելով հայկական թագավորության կազմավորման համար[44]: Այդ տեսակետները ամփոփված են Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի առաջին հատորում[45]:

Վերջին տասնամյակներում Հայաստանում առանձին թափ են ստացել ինավայրերի սիստեմատիկ պեղումները: Մեր ուսումնասիրության մեջ արծարծվող հարցերի առնչությամբ առանձին հետաքրքրություն ներկայացնում են Գառնիի ամրոցի տարածքի, Արմավիրի և պատմական Արտաշատի պեղումները: Գառնիի պեղումների մասին պարբերական մամուլում լույս են տեսել մի շարք հոդվածներ, իսկ ընդհանուր արդյունքները ամփոփված են առանձին պրակներում: Մեզ համար հատուկ նշանակություն

(42) *Գ.Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, էջ 51:*

(43) *Անաբասիս, էջ 235-236:*

(44) *Ս.Տ. Երեմյան, Հայկական առաջին պետական կազմավորումները (մ.թ.ա. VII-VI դդ.), ՊԲՀ, 1963, Ն 3: Գ.Ա. Տիրացյան, Հին Հայկական պետության առաջացումը, ՊԲՀ, 1966, Ն 4, էջ 83-103: Г.А. Тирацян, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, ՊԲՀ, Ն 2:*

(45) *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1971, էջ 423-463:*

ունեն I և II պրակները, որոնք վերաբերում են Գառնիի անտիկ շրջանին[46]: Արմավիրի պեղումների արդյունքները թեպետև չեն ամփոփված առանձին պրակի մեջ, սակայն գիտական պարբերականներում հրատարակված առանձին հոդվածները և գիտական հաշվետվությունները հին շրջանին վերաբերող որոշակի նյութեր են պարունակում: Ինչ վերաբերում է Արտաշատի վերջերս սկսված պեղումներին, ապա դեռևս հրապարակի վրա չունենք պեղումների արդյունքները ամփոփող ուսումնասիրություններ և հանգամանալից հաշվետվություններ, իսկ ընթացիկ մամուլում երևացած լրագրային հաղորդումները միայն շատ ընդհանուր պատկեր են ներկայացնում:

Հայտնաբերված հնագիտական նյութերը հաճախ լրացնում են և հաստատում գրավոր աղբյուրների տվյալները, իսկ վերջիններիս չգոյության դեպքում՝ ուսումնասիրողի համար մնում են միակ և անփոխարինելի սկզբնաղբյուր:

(46) Б.Н. Аракелян, Гарни I, Ереван, 1951; Гарни II, Ереван, 1957.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական ինքնուրույն պետականության առաջացումը և հետագա զարգացումը սերտորեն պայմանավորված է եղել պատմական երկու կարևորագույն գործոններով, մեկը ներքին, մյուսը՝ արտաքին: Առաջինը՝ Հայաստանի բնական-աշխարհագրական սահմաններում հայկական էթնիկական տարրերի համախմբման հետևանքով սկսած և աստիճանաբար իր ավարտին հասնող հայ ժողովրդի կազմավորման պատմական բարդ ու երկարատև պրոցեսն էր, երկրորդը՝ Ալեքսանդր Մակեդոնացու բանակի հարվածների տակ, առանց այն էլ քայքայման ու կործանման եզրին հասած, Աքեմենյան Պարսկաստանի վերջնական փլուզման հետևանքով երկրի քաղաքական անկախություն ձեռք բերելու հանգամանքն էր: Հայկական էթնիկական տարրերի համախմբումն, ըստ երևույթին, սկսվել էր դեռևս նախորդ դարերում: Հայկական լեռնաշխարհում կազմավորված Ուրարտական թագավորության ժամանակ, երբ Արմե-Շուպրիա երկրում համեմատաբար ուժեղ պետական միավորում կազմած հայարմենական ցեղերը հարկատու էին ուրարտացիներին: Դեռևս դարեր առաջ սկսած հայկական ցեղակից տարրերի համախմբման պատմական այդ կարևոր պրոցեսը պիտի առավել ևս ուժեղանար մ.թ.ա. VI դարի սկզբին, ուրարտական թագավորության թուլացման և վերջնական կործանման կապակցությամբ:

Անտիկ հեղինակների, հատկապես Հերոդոտոսի ու Քսենոփոնի, երկերում հետաքրքիր մի շարք տեղեկություններ են հաղորդվում հայկական հասարակության ներքին զարգացման մասին մ.թ.ա. VI-V դարերում, երբ Արմենիան գտնվում էր Աքե-

մենյան Պարսկաստանի տիրապետության տակ որպես այդ տերության սատրապություն։ Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում ինքը՝ Աքեմենյանների պարսկական տերությունը։

Հելլենիստական աշխարհի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրմանը նվիրված իր կոթողային եռահատոր աշխատության մեջ Մ.Ի. Ռոստովցևը ճիշտ կերպով նկատում է, որ Աքեմենյան Պարսկաստանը «երբեք չի կազմել սոցիալ-տնտեսական մի բնական միավոր։ Այս փաստը լավ հայտնի էր Պարսկական կայսրության մեծ կազմակերպիչներին՝ Կյուրոսին ու Դարեհին, և այն արտացոլվել է տերության բաժանման մեջ իր պարսկական կորիզին և զանազան սատրապություններին, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ուրույն էկոնոմիկան և հասարակական դեմքը»[1]։

Խոսելով Աքեմենյանների տերության նախորդած Մեդական թագավորության մասին, ակադ. Հ.Հ. Մանանդյանը ևս նշում է, որ այն «կենտրոնացած ու միասնական պետություն չէր, այլ, պարզապես, համադաշնակցություն էր նվաճված ու հպատակեցված ցեղերի ու երկրների, որոնք պարտավոր էին իրենց նոր տերերին տուրք վճարել և նրանց զորք տալ պատերազմների ժամանակ։ Մեդացիների գերիշխանությանը ենթարկված ժողովուրդներն ու երկրները պահպանում էին իրենց ներքին ինքնուրույն կազմակերպությունը»[2]։

Այս վերջին հանգամանքն էլ հիմնական պատճառն է դառնում Մեդական թագավորության կարճատև գոյության։ Սրան հաջորդած պարսկական տերությունը ժառանգեց ոչ միայն իր նախորդի տիրույթները, այլև նրան հատուկ թուլությունները։

Աքեմենյանների ընդարձակածավալ տերության կազմի մեջ մտնող երկրները գտնվում էին հասարակական, տնտեսական և քաղաքական, ինչպես նաև մշակութային զարգացման տարբեր աստիճանների վրա։ Նրա սահմաններում ընդգրկված էին մի կողմից Միջին Ասիայի և Իրանական սարահարթի նահապետական կենցաղով ապրող ցեղեր, մյուս կողմից՝ Փոքր Ասիայի և

(1) M.I. Rostovtzeff, The social and economic history of the hellenistic world (այսուհետև՝ SEHHW), Oxford, 1941, էջ 77։

(2) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 37։

Փյունիկիայի հունական և փյունիկյան առափնյա վաճառաշահ խոշոր քաղաքներ և Միջագետքի ու Եգիպտոսի հնագույն, զարգացած մշակույթի հասարակություն։ Այս երկրները մինչև Աքեմենյան տերության կործանումն էլ մնացին իրարից մեկուսացած, ինքնամփոփ, իրենց ներքին ինքնավարությամբ և չկազմեցին մի միասնական սոցիալ-տնտեսական ու քաղաքական միավոր։

Մեդական և, հետագայում, Աքեմենյան տերության քաղաքական գերիշխանության տակ իրենց ինքնուրույն ներքին կազմակերպությունը պահպանող երկրների թվում էր, անկասկած, նաև Հայկական լեռնաշխարհը՝ Արմենիան։ Այսպիսի եզրահանգման են հայագետներին բերել Հերոդոտոսի և Քսենոփոնի արժանահավատ վկայությունները արմենների և Արմենիայի մասին։

Անհիմն կլիներ ժխտել, որ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկը առավելապես խրատական, բարոյա-քաղաքական պատմավեպ է, քան իսկական պատմական երկ, որի գլխավոր հերոսը, Կյուրոսը, իդեալական միապետի կերպարն է, դաստիարակված Քսենոփոնի ուսուցիչ, հույն փիլիսոփա Սոկրատեսի սկզբունքներով, այնպես, ինչպես դրանք հասկանում էր ինքը՝ Քսենոփոնը։ Մեզ համար, սակայն, կարևորն այն է, որ հույն մատենագիրն իր այս երկը չարադրելիս ուրիշների մոտ չհանդիպող, հետաքրքիր պատումներ է հաղորդում Կյուրոսի և արմենների բասիլևսի (βασιλεύς)՝ թագավորի փոխհարաբերությունների մասին։ Այդ տվյալների ուսումնասիրությունից կարելի է հանգել այն անվիճելի եզրակացության, թե այդ ժամանակ արմեններն արդեն վասելելիս են եղել քաղաքական որոշ ինքնուրույնություն։ Հ. Մանանդյանն իրավամբ նշում է, որ «վեպի այս մասում Քսենոփոնին կարող էին աղբյուր ծառայած լինել տեղական ավանդությունները և հիշողությունները, որոնց նա հնարավորություն ուներ ծանոթանալու իր և հույն զորքերի հայտնի նահանջի ժամանակ, Արմենիայի միջով 401–400 թ. (նախքան մեր թվ.)»[3]։ Այս կապակցությամբ խորհրդային հայտնի արևելագետ Ի.Մ. Դյակոնովը ևս գրում է. «Համարյա ոչինչ չի տալիս մեզ Քսենոփոնի «Կյուրոպեդիան»։ Իրական դեպքերն ... այնքան են աղավաղված, ենթարկվելով գրական-բարոյախոսական խնդիրներին,

(3) Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 39։

որ հիմնվել «Կյուրոպեդիայի» վրա չի կարելի։ Բացառություն են կազմում, հավանաբար, հայ-մեդական հարաբերություններին վերաբերող տվյալները»[4]։

Սոցիալ-տնտեսական ու քաղաքական ինչպիսի՞ պատկեր ուներ Արմենիան Քսենոփոնի այդ երկի տվյալներով։ Մ.թ.ա. VI դարի առաջին կեսին արմենական ցեղերն արդեն համախմբվելով կազմած են եղել մի պատկառելի ցեղային միություն։ Այդ ցեղային միության գլուխ կանգնած է եղել թագավոր-առաջնորդը, բասիլևսը (βασιλεύς), որը հպատակ էր և դաշնակից Մեդական թագավորությանը, վերջինիս վճարելով տարեկան տուրք և պատերազմական արշավանքների ժամանակ մեդական թագավորին տրամադրելով պատկառելի քանակությամբ զորք՝ 4000 հեծելազոր և 20000 հետևակ[5]։ Որպես լրացում Քսենոփոնի այս հաղորդումներին, տեղին է հիշատակել Ստրաբոնի հայտնի վկայությունն այն մասին, թե Աքեմենյանների տիրապետության շրջանում Հայաստանի սատրապը պարսից արքայից արքային ուղարկում էր տարեկան 20 հազար մորուկ Միհրական տոների համար (τοῖς Μιθρακινοῖς)[6]։ Թշնամու դեմ պատերազմ վարելու դեպքում արմենների բասիլևսը, Քսենոփոնի պատմելով, կարող էր չարժման մեջ դնել մինչև 8000 հեծելազոր և 40 հազար հետևակ, իսկ նրա նյութական հարստությունը հասնում էր ավելի քան 3 հազար տաղանդի[7]։ Հատկանշական է, որ մի չարք անգամներ Քսենոփոնը պարսից զորագլուխ Կյուրոսի բերանով խոսում է արմենների երկրի սահմանների, ինչպես նաև կառուցված ամրությունների մասին[8]։ Բասիլևս-առաջնորդ, ավելի քան պատկառելի բանակ և բավականաչափ հարստություն, ինչպես նաև երկրի որոշակի սահմաններ, հավանաբար պայմանավորված էթնիկական տարաբնակեցմամբ, — ահա այն հիմնական տարրերը, որոնց առկայությունն անկասկած է դարձնում այն, որ արմենների երկիրը մարական, հետագայում նաև պարսկական, տիրապետության ժամանակ վայելում էր քաղաքական ներքին լայն ինքնավարություն։

(4) И.М. Дьяконов, История Мидии от древнейших времён до конца IV века до н.э., М.-Л., 1956, стр. 414.
(5) Xenoph., Cyrop., II, 4, 12.
(6) Strabo, Xi, 14, 9 (c. 530).
(7) Xenoph., Cyrop., III, 1, 33.
(8) Նույն տեղում, II, 1, 6։ 4, 16։ 4, 21։

Այս առնչությամբ խիստ արժեքավոր է հույն-պարսկական պատերազմների մասին Հերոդոտոսի հաղորդումների այն հատվածը, որը վերաբերում է արմենների մասնակցությանը Հելլադայի դեմ պարսկական զորքի արշավանքին։ Այնտեղ, իմիջիայլոց, ասված է, թե «արմենները ... զինված էին փռյուգիացիների նման և այս երկուսի առաջնորդն էր Արտոքմեսը (Արտաչեսը — Մ.Կ.), որն ամուսնացած էր Դարեհի աղջկա հետ»[9]։ Գաղտնիք չէ, որ մ.թ.ա. V դարի սկիզբին Հունաստան արշաված պարսկական հսկայական բանակը հեռու էր միատարր և միաձույլ լինելուց։ Խառնիճաղանճ այդ բանակը հավաքագրված էր Աքեմենյան Պարսկաստանին ենթակա տարբեր ցեղերով բնակեցված երկրներից, ըստ առանձին սատրապությունների, իսկ այդ սատրապություններից յուրաքանչյուրի հիմքում, որպես վարչական միավորի, ընկած էր էթնիկական սկզբունքը, միաժամանակ, սակայն, հաշվի էին առնված բնական-աշխարհագրական սահմանները։ Սրանից պիտի եզրակացնել թե արմենները, որոնք առանձին հիշատակվում են պարսկական բանակի կողմում, հավաքագրված էին առանձին սատրապությունից և, փռյուգիացիների հետ միասին, ունեին իրենց առանձին հրամանատարին, հանձին Դարեհ Ա Վշտասպի փեսայի, Արտոքմեսի։

Էթնիկական սկզբունքով է հավաքագրված եղել նաև Դարեհ Գ Կողոմանոսի զորքը, երբ վերջինս պատերազմ էր մղում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ։ Դիոդորոսն, օրինակ, գրում է, որ «Դարեհն իր զորքերը ըստ ազգությունների ճակատելուց հետո, ինքը ևս անցավ Ալեքսանդրի դիմաց և բանակը չարժեց թշնամու դեմ»[10]։ Մղված ճակատամարտին մասնակցել են նաև արմենները, որոնց առաջնորդները, ինչպես վկայում է Արրիանոսը, եղել են Օրոնտեսը և Միթրաուստեսը (Ὀρόντης καί Μιθραύστης)[11]։ Դեռևս Քսենոփոնը, նկարագրելով պարսկական գահի հավակնորդ Կյուրոս Կրտսերի և Արտաքսերքսես Բ Մնեմոնի միջև մ.թ.ա. 401 թ. Կունաքսայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, իր հերթին նույնպես նկատում է, որ պարսկական

(9) Herodot., VII, 73։ Հմմտ. նաև Herodot., VII, 60 և 67։ Xenoph., Cyrop., V, 3, 38-39։ Xenoph., Anabasis, I, 8, 9։ Arrian, Anabasis, III, 3,11.
(10) Diodori Bibliotheca Historica, XVII, 58, 1.
(11) Arrian., Anabasis, III, 8,5.

զորքերը «առաջ էին չարժվում բաժանված ըստ ազգությունների»[12]:

Աղբյուրների վկայություններից կարելի է հետևցնել, թե Աքեմենյան տերության յուրաքանչյուր սատրապությունում, պատերազմի ժամանակ հավաքված զորքերից բացի, կային նաև կանոնավոր զորամասեր, որոնք գտնվում էին մշտական ռազմական ծառայության մեջ: Սրանց պարտականությունն էր պաշտպանել սատրապության սահմանները հնարավոր արշավանքներից, ինչպես նաև, տեղավորված լինելով բերդերում և ամրոցներում, հետևել երկրում անդորրության և կարգի պահպանման: Այս երևույթը լավագույնս նկատվում է Հայաստանում. այդ մասին կան ականատես Քսենոփոնի տվյալները: «Լուսաբացին, — վկայում է հույն պատմիչը, — գետի այն կողմը նրանք (հելլենները – Ս.Կ.) նկատեցին սպառազինված հեծյալների, որոնք պատրաստ էին խոչընդոտելու գետանցը, իսկ հեծյալներից վերև, բլուրների վրա չարվել էին հետևակ զորքեր, որոնք պետք է արգելեին հելլեններին Արմենիա դուրս գալ: Սրանք Օրոնտասի և Արտուխասի արմեններն էին և մարդերն ու խալդայները վարձկան»[13]: Շարունակության մեջ նույնպիսի մի վկայության մենք հանդիպում ենք նաև Արևմտյան Արմենիայի հյուպարքոս Տիրիբազոսի մասին[14]:

Քսենոփոնի վերոհիշյալ առաջին վկայությունը տարբեր կարծիքների տեղիք է տվել: Բանն այն է, որ Քսենոփոնի այս նախադասությունից պարզ չի երևում, թե արդյո՞ք և՛ արմենները, և՛ մարդերը, և՛ խալդայները վարձկաններ էին, թե՞ «վարձկան» բառը վերաբերում է միայն խալդայներին կամ մարդերին ու խալդայներիին միասին: Մ.Ի. Մաքսիմովայի ռուսերեն թարգմանությամբ[15] բոլորը, նույնիսկ արմենները վարձկաններ են, իսկ ուրիշների թարգմանություններում այդ բանն այդպես էլ պարզ չի հասկացվում: Մենք կարծում ենք, որ Քսենոփոնի վկայությամբ, վարձկաններ են եղել միայն խալդայները, որովհետև՝ 1) Արմենիան պարսկական տիրապետության տակ գտնվող

(12) Xenoph., Anabasis, I, 8, 9: Քսենոփոն, Անաբասիս, թարգ. Ս.Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 28:
(13) Նույն տեղում, էջ 89: Xenoph., Anabasis, IV, 5, 3-4.
(14) Xenoph., Anabasis, IV, 4, 18: Քսենոփոն, Անաբասիս, էջ 94:
(15) Ксенофонт, Анабасис, М.-Л., 1951, էջ 102:

առանձին սատրապություն էր և արմենները պարտավոր էին զորք հատկացնել սատրապին, տվյալ դեպքում՝ Օրոնտասին. հետևաբար, նրանք չէին կարող վարձկան լինել և 2) հաջորդ նախադասությամբ Քսենոփոնը նշում է, թե «խալդայները ազատ էին», հետևաբար, նրանք պարտավոր չէին ծառայելու պարսկական բանակում: Այս հանգամանքը Քսենոփոնը մատնանշում է նաև մեկ այլ առիթով[16]: Այս նույն կարծիքին է եղել նաև Հյուբշմանը[17], անորոշ վերապահումներով՝ Հ.Հ. Մանանդյանը[18], իսկ Յ. Մարկվարտը ենթադրում է, որ վարձկան եղել են ոչ միայն խալդայները, այլև մարդերը[19]: Այս կարծիքը պաշտպանում է նաև Գ.Ա. Տիրացյանը իր վերջին ուսումնասիրություններից մեկում[20]:

Վերջին ժամանակներս հայագիտության մեջ արտահայտվում է այն տեսակետը, թե Ուրարտական թագավորության անկումից անմիջապես հետո, մ.թ.ա. VI դարի սկզբին, Հայկական լեռնաշխարհում ստեղծվել է Երվանդունիների հայկական պետությունը[21]: Հին Հայաստանում առաջացած վաղագույն պետական կազմավորումների հարցով հիմնականում զբաղվել են ակադ. Ս.Տ. Երեմյանը և Գ.Ա. Տիրացյանը: Նրանց տեսակետները ամփոփված են ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի առաջին հատորում[22]:

Ս.Տ. Երեմյանը գտնում է, որ հայկական առաջին պետու-

(16) Xenoph., Anabasis, V, 5, 17: Քսենոփոն, Անաբասիս, էջ 122:
(17) M.H. Hübschman, Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904, էջ 190 և 207:
(18) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1944, հ.Ա, էջ 68-69:
(19) J. Markwart, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919, 5. 17.
(20) Г.А. Тирацян, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, ՊԲՀ, Նո 2 ՊԲՀ, 1972, Նո 2, էջ 110-111:
(21) Հայ ժողովրդի պատմություն (բուհական ձեռնարկ), հ. 1, Երևան, 1963, էջ 120-128: Գ.Ա. Տիրացյան, Հին Հայկական պետության առաջացումը, ՊԲՀ, 1966, Նո 4, էջ 83-102: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 435-443: Է.Լ. Դանիելյան, Հայաստանի մ.թ.ա. VII-VI դդ. պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, Նո 11, էջ 72-86:
(22) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 423-443:

թյունը կազմավորվել է դեռևս մ.թ.ա. VII դարի վերջին Արմե-Շուպրիայում, իսկ մ.թ.ա. VI դարի սկզբին դրան զուգահեռ կազմավորվում է Երվանդունիների հայկական պետությունը։ Այս երկու պետությունները չուտով միավորվում են և կազմում մեկ միասնական հայկական թագավորություն։ Ս.Տ. Երեմյանի ձևակերպումները, սակայն, ոչ բոլոր դեպքերում են հստակ։ Նա գրում է, որ «Ուրարտուի թագավորության կործանումից հետո (այսինքն՝ VI դ. սկիզբը) մարական գերիշխանության և հայկական ցեղային միությունների քաղաքական հեգեմոնիայի իրադրության մեջ, ավարտվեց հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, որի հիման վրա երևան եկան հայկական առաջին պետական կազմավորումները»[23]։ Հետևաբար, սա պատմական մի պրոցես էր, որն սկսվել էր Ուրարտուի կործանումից հետո և հայկական պետությունը չէր կարող առաջանալ ավելի վաղ՝ VII դարում։ Հատկանշական է, որ Ս.Տ. Երեմյանը որպես հայկական պետության գոյության վաստ VI դարում նշում է այն, որ Հեկատեոս Միլետացին հիշատակում է արմեններին[24]։ Բայց այդ դեռ քիչ բան է ասում, քանի որ հելլեն հեղինակները հիշատակում են բազմաթիվ այլ ցեղերի ու ժողովուրդների ևս, որոնք, սակայն, պետություն չէին ստեղծել տակավին։

Արմե-Շուպրիան պետություն համարելու հարցում հիրավի առավել զգույշ է Գ.Ա. Տիրացյանը, համարելով, որ Արմե-Շուպրիայի հասարակությունը կանգնած էր պետականության ստեղծման շեմին, բայց նա ևս գտնում է, որ մ.թ.ա. VI դարի սկզբին Հայաստանում կազմավորվել էր Երվանդունիների պետությունը[25]։ Հաջորդ էջերում մենք դեռևս կանդրադառնանք Երվանդունիների հարստության հարցին։ Այստեղ բավարարվենք նշելով, որ սկզբնաղբյուրներում պահպանված կցկտուր տվյալները դեռևս մեզ չեն տալիս այն հաստատուն հիմքը պնդելու, թե մ.թ.ա. VI դարի սկզբին ստեղծվել էր հայկական անկախ պետություն։ Այդպիսին, մեր հաստատ համոզմամբ, ստեղծվեց միայն մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակներից սկսած, երբ, օգտվելով ստեղծված բարենպաստ քաղաքական պայմաններից, Հայաստանի սատրապ Օրոնտես-Երվանդը իրեն հայտարարեց Հայաստանի

(23) Նույն տեղում, էջ 423։
(24) Նույն տեղում, էջ 435։
(25) Գ.Ա. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 92 և հաջ.

թագավոր, որով և ստեղծվում է անկախ մի պետություն, որն իրար հաջորդած երեք արքայատոհմերի — Երվանդունի, Արտաշեսյան, Արշակունի — գահակալության պայմաններում հարատևեց մոտ յոթ և կես հարյուրամյակ։

Ինչո՞ւ, թեպետև հասունացել էին երկրում սոցիալ-տնտեսական որոշակի պայմաններ անկախ պետություն ստեղծելու համար, այնուամենայնիվ, մ.թ.ա. VI դարում այն այդպես էլ չստեղծվեց։ Պատճառը կարող է մեկը լինել. դրան խանգարեցին զուտ արտաքին քաղաքական հանգամանքներ, որոնք դանդաղեցրին հայկական հասարակության զարգացման բնականոն ընթացքը։ Ուրարտուի անկումից հետո մինչև Երվանդունիների թագավորության հաստատումը (մ.թ.ա. IV դ.) հայերը, սկզբում, մի քանի տասնամյակ, որպես «դաշնակիցներ», այնուհետև՝ որպես հպատակներ, ենթարկվել են նախ մարական, հետագայում՝ նրանց հաջորդած Աքեմենյան թագավորների տիրապետությանը։

Բացի անտիկ հեղինակների պատմողական երկերից, Հայաստանի պատմության հնագույն այս շրջանի համար մեզ հասել է կարևորագույն, իր տեսակի մեջ եզակի մի սկզբնաղբյուր։ Այդ՝ Բեհիստունի ժայռի վրա՝ ներկայիս Քիրմանշահ քաղաքից ոչ հեռու, Դարեհ Ա-ի թողած եռալեզվյան (հին պարսկերեն, էլամերեն և ակկադերեն) սեպագիր հայտնի արձանագրությունն է, Աքեմենյան արքայից արքայի Monumentum Ancyranum-ը, որի չուրջ հրատարակվել են պատմագիտական և բանասիրական բազմաթիվ ուսումնասիրություններ[26]։

Այս հսկայական արձանագրությունը (ավելի քան 300 տող) նվիրված է պարսկական տերության մեջ մ.թ.ա. 522–521 թթ. ծայր առած խռովահույզ անցքերին։ Օգտվելով Կյուրոս Մեծի հաջորդ կամբյուսեսի (529–522 թթ.) բացակայությունից (նա գտնվում էր Եգիպտոսում), մեղացի Գաուամատա մոգը իրեն հայտարարեց պարսից տերության թագավոր։ Սա իրեն ներկայացրել էր որպես Բարդիա՝ կամբյուսեսի եղբայրը, մինչդեռ իրական Բարդիային կամբյուսեսը սպանել էր տվել դեռևս եգիպտական

(26) Բեհիստունյան արձանագրությանը նվիրված ուսումնասիրությունների հանգամանալից վերլուծությունը տես М.А. Дандамаев, Иран при первых Ахеменидах, М., 1963 ուշագրավ աշխատության մեջ, որտեղ հրատարակված է նաև ամբողջ արձանագրության ռուսերեն թարգմանությունը։

արշավանքի չմեկնած։ Լսելով այս խռովության մասին, Կամբյուսեսը չսպասում է վերադառնալ Եգիպտոսից, սակայն ճանապարհին վախճանվում է։ Աքեմենյան տոհմից Վշտասպի որդի Դարեհը, իր վեց գինակիցների աջակցությամբ, տապալում է ինքնակոչ Գաումատային, սպանում նրան և իրեն հայտարարում թագավոր։ Նույն թվականին էլ Դարեհի դեմ, նրա տերության տարբեր ծայրերում, բունկվում են խոշոր ապստամբություններ, որոնց ընթացքը և ճնշումը նկարագրված են Բեհիստունյան արձանագրությունում։

Մեր նպատակադրումից դուրս է հանգամանորեն զբաղվել այս արձանագրության ամբողջ բովանդակությամբ։ Մենք, բնականաբար, կսահմանափակվենք արձանագրության սոսկ այն հատվածներին անդրադառնալով, որոնցում առանձնապես խոսք է լինում Արմենիայի մասին։ Ավելորդ չենք համարում ստորև տալ Դարեհի արձանագրության՝ մեզ հետաքրքրող հատվածների հայերեն թարգմանությունը, որը կատարել ենք Մ.Ա. Դանդամաևի հրատարակաց աշխատությունից[27]։

1ին սյունակ, տող 12-18

«Դարեհ թագավորն ասում է. — Ահա այն երկրները, որոնք շնորհվեցին ինձ Ահուրամազդայի ողորմածությամբ (և) ես նրանց թագավորն եմ — Պարսկաստան, Էլամ, Բաբելոնիա, Ասորեստան, Եգիպտոս, ծովափնյա (երկրներ), Լիդիա, Հոնիա, Մեդիա, Արմինիա, Կապադովկիա, Պարթիա, Դրանգիանա, Արեյա, Քորեզմ, Բակտրիա, Սոգդիանա, Գանդահար, Սկյութիա, Սատագիդիա, Արաքոսիա, Մակա — ընդամենը 23 երկիր: ... Ահուրամազդայի ողորմածությամբ (նրանք) ինձ են ենթարկված»։

2րդ սյունակ, տող 29-63

«Դարեհ թագավորն ասում է. — Դադարշիշ անունով հային, իմ ստրուկին, ես ուղարկեցի Արմինա։ Ես նրան այսպես

(27) *Մ.Ա. Դանդամաևը նշում է, որ ռուսերեն թարգմանությունը կատարված է* L.W. King and R.C. Thompson, The sculptures and inscriptions of Darius the Great on the rock of Behistun in Persia, London, 1907 *հրատարակության հիման վրա, միաժամանակ հաշվի են առնված* G. Cameron-*ի՝ տեղում կատարած վերջին ուսումնասիրության արդյունքները* (М.А. Дандамаев, *նշվ. աշխ.*, *էջ* 462)։

ասացի. —, «Գնա, կոտորիր ապստամբ զորքը, որն իրեն իմը չի համարում»։ Դրանից հետո Դադարշիշը մեկնեց։ Երբ նա եկավ Արմինա, ապստամբները համախմբվեցին (և) դուրս եկան Դադարշիշի դեմ ճակատամարտ տալու։ Արմինայի Զուզախիա վայրում նրանք ճակատամարտ տվեցին։ Ահուրամազդան ինձ օգնեց։ Շնորհիվ Ահուրամազդայի, իմ զորքը գլխովին ջախջախեց ապստամբ զորքին։ Թուրավահարա ամսի ութերորդ օրը (21 մայիս, 521 թ.)[28] *նրանք ճակատամարտ տվեցին»։*

«Դարեհ թագավորն ասում է. — Ապստամբները երկրորդ անգամ համախմբվեցին և դուրս եկան Դադարշիշի դեմ ճակատամարտ տալու։ Նրանք ճակատամարտ տվեցին Արմինայում Տիգրա բերդի մոտ։ Ահուրամազդան ինձ օգնեց։ Շնորհիվ Ահուրամազդայի, իմ զորքը գլխովին ջախջախեց ապստամբ զորքին։ Թուրավահարա ամսի տասնութերորդ օրը (31 մայիս 521 թ.) նրանք ճակատամարտ տվեցին»։

«Դարեհ թագավորն ասում է. — Ապստամբները երրորդ անգամ համախմբվեցին (և) դուրս եկան Դադարշիշի դեմ ճակատամարտ տալու։ Արմինայում Ուիյամա բերդի մոտ նրանք ճակատամարտ տվեցին։ Ահուրամազդան ինձ օգնեց։ Շնորհիվ Ահուրամազդայի, իմ զորքը գլխովին ջախջախեց ապստամբ զորքին։ Թայգարշիշ ամսի իններորդ օրը (21 հունիս, 521 թ.) նրանք ճակատամարտ տվեցին։ Հետո Դադարշիշը հնազանդվելով իմ հրամանին՝ մնաց Արմինայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի դեպի Մեդիա»։

«Դարեհ թագավորն ասում է. — Այնուհետև Արմինա ուղարկեցի Վահումիսա անունով մի պարսկի, իմ ստրուկին և ասացի նրան. — «Գնա, կոտորիր ապստամբ զորքին, որն իրեն իմը չի համարում»։ Դրանից հետո Վահումիսան մեկնեց։ Երբ նա հասավ Արմինա, ապստամբները համախմբվեցին (և) դուրս եկան Վահումիսայի դեմ ճակատամարտ տալու։ Իզալա երկրում, Ասորեստանում նրանք ճակատամարտ տվեցին։ Ահուրամազդան ինձ օգնեց։ Շնորհիվ Ահուրամազդայի, իմ զորքը գլխովին ջախջախեց ապստամբ զորքին։ Անամակա ամսի տասնհինգերորդ օրը (31 դեկտեմբեր, 522 թ.) նրանք ճակատամարտ տվեցին»։

«Դարեհ թագավորն ասում է՝ — Ապստամբները երկրորդ

(28) *Ամսաթվերը բերված են ըստ կյունիգի հաշվումների. տես* Fr. König, Relief und Inschrift des Königs Dareios I, Leiden, 1938, *էջ* 43-51։

անգամ համախմբվեցին (և) դուրս եկան Վահումիսայի դեմ ճակատամարտ տալու: Առստարա երկրում, Արմինայում, նրանք ճակատամարտ տվեցին: Ահուրամազդան ինձ օգնեց: Շնորհիվ Ահուրամազդայի, իմ զորքը գլխովին ջախջախեց ապստամբ զորքին: Թուրավահարա ամիսը վերջանում էր (Յունիս, 521), երբ նրանք ճակատամարտ տվեցին: Հետո Վահումիսան հնազանդվելով իմ հրամանին, մնաց Արմինայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի դեպի Մեդիա»:

Յրդ սյունակ, տող 77-83

«Արախա անունով մի մարդ, հայ, Խալդիտայի որդին, ապստամբեց Բաբելոնում: Դուրալա երկրից նա խաբում էր ժողովրդին այսպես. — «Ես Նաբուքոդոնոսորն եմ, Նաբոնիդի որդին»: Այդ ժամանակ բաբելոնացիները ապստամբություն բարձրացրին իմ դեմ և անցան այս Արախայի կողմը: Նա գրավեց Բաբելոնը և Բաբելոնում դարձավ թագավոր»:

Թե՛ արտասահմանյան և թե՛ սովետական բոլոր ուսումնասիրողները, սկսած Ց. Մարկվարտով և վերջացրած Մ.Ա. Դանդամաևով, անդրադառնալով արձանագրության այս հատվածներին, համամիտ են այն բանում, որ Արմենիայում Դարեհի տիրապետության դեմ ապստամբություն բարձրացնողները եղել են արմենական ցեղերը (ըստ ակադ. Գր. Ղափանցյանի՝ հայասական ցեղերը), որոնց, մինչ այդ, իրեն էր ենթարկել պարսից կյուրոս թագավորը[29]: Բացառություն է միայն ակադ. Վ.Վ. Ստրուվեն, որն այս հարցին նվիրված իր հատուկ հոդվածում փորձ է անում առաջին անգամ ժխտել վերոհիշյալ տեսակետը և հայտնում է այն ենթադրությունը, թե Հայաստանում Դարեհի դեմ ապստամբություն բարձրացրածները եղել են ոչ թե արմենական, այլ, հավանաբար, սակասարմաթական ցեղերը, որոնք VI

(29) J. Markwart, Die Chronologie des Kambyses und der Lüdenkönige und der altpersische Kalender, "Philologus", Suppl. X, 1905, s. 167; F.H. Weissbach, Zur neubabylonischen und achämenidischen Chronologie "Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft", Bd. 62, 1908, ss.638 f.f.; Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ....., հ. Ա, էջ 48-53: Гр. Капанцян, Хаяса-колыбель армян, Ереван, 1948, М.М. Дьяконов, История Мидии ..., стр. 359; М.А. Дандамаев, նշվ. աշխ. էջ 225, ծան. 424: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, 1971, էջ 447-450:

դարում մ.թ.ա. ներխուժել էին Հայկական լեռնաշխարհ և, ըստ երևույթին, երկրից դուրս էին քշել արմեն Դադարշիշին[30]:

Վ.Վ. Ստրուվեն այսպիսի ենթադրության հայտնում է, ելնելով մի շարք նկատառումներից, որոնցից կարևորագույնները հետևյալներն են. — 1) Բեհիստունյան արձանագրության այն հատվածում, որտեղ Դարեհ արքան թվարկում է իր դեմ ապստամբություն բարձրացրած երկրները, հիշատակված չէ Արմենիան: Այս առնչությամբ նշենք, որ արձանագրության այս հատվածը շատ է քայքայված և պահպանվել է միայն էլամերեն տարբերակում, որտեղ կարդացվում է Mysaria երկրի անունը: Այդ երկիրը Վ.Վ. Ստրուվեն նույնացնում է Եգիպտոսի հետ, մինչդեռ Ց. Մարկվարտը և Ֆր. Կյոնիգը այն նույնացնում են Արմենիայի հետ[31]: 2) Արձանագրության համապատասխան հատվածներում հիշատակություն չկա այն մասին, թե Արմենիայում ապստամբել են հատկապես արմենական ցեղերը, ինչպես նաև չի հիշատակված ապստամբների առաջնորդի անունը, այն ժամանակ, երբ մյուս բոլոր դեպքերում Դարեհը հիշատակում է տեղերում ծագած ապստամբության ղեկավարների անունները: Ֆ. Վեյսբախը, սակայն, ենթադրում է, որ Արմենիայում ապստամբածներին գլխավորում էր Արախան, որը հետագայում, ապստամբության ճնշումից հետո, փախավ Բաբելոն և այնտեղ գլխավորեց բաբելոնացիների նոր ապստամբությունը[32]: Վեյսբախի այս հետաքրքիր ենթադրությունը հավանական է համարում նաև Մ.Ա. Դանդամաևը[33]: 3) Ծագած ապստամբությունը ճնշելու համար Դարեհն ամեն անգամ ապստամբների դեմ ուղարկում է իր մերձավոր գինակիցներին՝ զորքի հետ միասին, մինչդեռ արմեն Դադարշիշին և, այնուհետև, պարսիկ Վահումիսային Արմենիայի ապստամբների դեմ ուղարկում է առանց զորքի: Հանգուցյալ ակադեմիկոսը, երևի, պատշաճ ուշադրություն չի դարձրել Դարեհի արձանագրության այն բառերին, թե «շնորհիվ Ահուրամազդայի իմ զորքերը (ընդգծումը մերն է – Մ.Կ.) գլխովին ջախջախեցին ապստամբ զորքին»: Մեր ընդգծած «իմ զորքերը»

(30) В.В. Струве, Новые данные истории Армении, засвидетельствованные Бехистунской надписью, Տեղ ՀԳԱՀԳ, 1946, Նո 8, էջ 31:
(31) J. Markwart, նշվ. աշխ., Fr. König, նշվ. աշխ.:
(32) F.H. Weissbach, նույն տեղում:
(33) М.А. Дандамаев, նույն տեղում:

արտահայտությունը չի կարելի հասկանալ այլ կերպ, քան որպես վկայություն այն մասին, թե Դարեհը և՛ Դադարշիշին և՛ Վահումիսային Արմենիա ուղակելով, նրանց տրամադրել էր «իր զորքերը»։ Ուստի կարծում ենք, որ Վ.Վ. Ստրուվեի վերոհիշյալ վերջին դիտողությունը հիմնավորված չէ։ Այս բոլորից բացի, ակադ. Վ.Վ. Ստրուվեի ենթադրության օգտին չի խոսում նաև Բեհիստունյան արձանագրության ամբողջ բնույթը։ Ինչպես հայտնի է, արձանագրությունը նվիրված է Դարեհի գահակալման առաջին տարում տերության զանազան մասերում նրա իշխանության դեմ ծայր առած ապստամբություններին և այդ ապստամբությունների ճնշմանը։ Իսկ Արմենիայում ծագած ապստամբությունը այդ ապստամբությունների կարևոր օղակներից մեկն էր և իր բնույթով, անշուշտ, հար և նման մյուսներին։

Այն, որ պարսկական տիրապետության դեմ Արմենիայում ծագած ապստամբությունն ուներ կազմակերպված բնույթ և ընդունել էր խոշոր չափեր, վեր է ամեն կասկածից։ Ուսումնասիրողները միանգամայն իրավացի կերպով կասկածում են Դարեհ արքայի հավաստիացումներին այն մասին, թե իր ուղարկած զորավարներն անընդմեջ հինգ անգամ ջարդել են ապստամբներին Արմենիայում։ Ընդհակառակը, այն հանգամանքը, որ Դարեհը ստիպված է եղել երկու տարբեր զորավարների հրամանատարության տակ հինգ անգամ զորք ուղարկել Արմենիայի ապստամբների դեմ, որոնք, դուրս մղելով իրենց երկրից «արքայից արքայի» զորքերին, նույնիսկ առաջ էին չարժվել մինչև Ասորեստան, անկասկած ցույց է տալիս, որ նրանք են եղել ճակատամարտում հաղթող կողմը և միայն վերջին՝ հինգերորդ արշավանքից հետո, պարսիկ Վահումիսային հաջողվում է ենթարկել ապստամբներին[34]։ Բեհիստունյան արձանագրության ամբողջ բովանդակությունից դժվար չէ հետևցնել, որ արմենների երկրում ծագած ապստամբությունը ուժեղագույններից է եղել, քանի որ այն ճնշելու համար անհրաժեշտ է եղել հինգ անգամ արշավել նրանց դեմ։ Արմենների ապստամբությունը ճնշելուն նպատակի չափով պետք է նպաստեր արմենական վերնախավի մի մասի (Դադարշիշ) անցումը պարսիկների կողմը։ Այնուամենայնիվ Մ.Մ. Դյակոնովը իրավացի է, երբ նշում է, որ Բեհիստունյան արձանագրությունը լուռ է Արմենիայի նկատմամբ պարսիկների տարած լրիվ հաղթանակի մասին և ավելացնում. «Ըստ երևույթին, այս երկիրը լրիվ չէր նվաճված Դարեհի թագավորության առաջին տարիներին[35]։

Դարեհի նախորդների օրոք Պարսկական պետությունը տուժում էր կենտրոնական իշխանության թուլությունից, միասնական վարչական կարգի բացակայությունից և հարկահանության անկանոնությունից։

Վերականգնելով և ընդարձակելով իր նախորդների թագավորությունը, հրով ու սրով իր դեմ ծագած ապստամբությունները ճնշելուց և իր իշխանությունը ամրապնդելուց հետո, Դարեհը անհրաժեշտ համարեց ձեռնարկելու մի շարք վարչա-տնտեսական ռեֆորմներ, Աքեմենյան նորաստեղծ տերության հետագա գոյությունը և հզորացումը ապահովելու նպատակով[36]։ «Արքայից Արքայի» կիրառած բարեփոխումներից կարևորագույնը, անկասկած, այն էր, որ նա մոցրեց ընդարձակածավալ թագավորության կառավարման նոր, կայուն սիստեմ, որի հիմքում ընկած էր ռազմական ուժով միավորված ամբողջ տերության բաժանումը վարչական խոշոր միավորների՝ սատրապությունների, սատրապների՝ փոխարքաների գլխավորությամբ[37]։

Վարչական տեսակետից Դարեհն իր տերությունը բաժանեց քսան մարզերի՝ սատրապությունների[38], ըստ որում այդ բաժանման ժամանակ հաշվի առնելով գլխավորապես բնական-աշխարհագրական սահմանները, ինչպես նաև էթնիկական սկզբունքը։

Սատրապներին նշանակում էր ինքը՝ արքայից արքան, որպես կանոն, պարսկական ազնվականության բարձր ներկայա-

(34) Հ.Հ. Մանանդյան, Նշվ. աշխ., էջ 51, Հ.Հ. Ժամկոչյան, Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և տոհմատիրության շրջանում, Երևան, 1961, էջ 143-145։

(35) М.М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, էջ 20։

(36) М.М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 91-92։

(37) Սատրապ (σατράπης) հին պրակ. xšatrapa բառի հունարեն ձևն է և նշանակում է տեղապահ, աշխարհապահ) հմմտ. Փավստոս Բուզանդ, «Հայոց Պատմություն», թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1947, էջ 322, ծանոթ. 73)։ М.М. Дьяконов, նշվ. աշխ. էջ 91-92։

(38) Herodot., III, 89-98։

ցուցիչների միջից, իր հավատարիմ մերձավորներին ու ազգակիցներին[39]: Նշանակովի սատրապի իշխանությունը, չատ դեպքերում, ժամանակի ընթացքում վերածվում էր ժառանգական իշխանության: Այսպես, Փոքր Ասիայում Դասկիլեյան (հետագայում՝ Բյութանիա) սատրապության գլուխ կանգնած էր ինքնակոչ Գաումատայի դեմ մղած պայքարում Դարեհի վեց զինակիցներից մեկի՝ Արտաբազոսի տոհմը: Աքեմենյանների փեսա Տիսափեռնեսը ստացել էր Փոքր Ասիայի ծովափնյա հունական քաղաքների սատրապությունը: Որպես սատրապի, Հայաստանում իրենց իշխանությունը ամրացրել էին Օրոնտեսյան (Երվանդունի) տոհմի ներկայացուցիչները, իսկ Միհրդատ Պոնտացին հետագայում պարծենում էր, որ ինքը սերում է յոթը պարսիկներից մեկի տոհմից: Նա պատասխանատու էր նաև սատրապության ներսում կարգ ու կանոնի պահպանման:

Իրեն ենթակա սատրապության սահմաններից ներս սատրապն ուներ ռազմական լիակատար իշխանություն, ընդհուպ մինչև իր համար զորքեր հավաքելը[40]: «Արքայից արքայի» ձեռնարկած ռազմական արշավանքների ժամանակ սատրապը գլխավորում էր իր սատրապությունից հավաքագրած զորքը[41]: Սատրապը պարտավոր էր նաև ապահովելու ամենամյա տուրքերի և կայուն հարկերի գանձումը հօգուտ արքայից արքայի և վարելու դատական գործերը սատրապության ներսում[42]: Բացի այդ, գերագույն այս պաշտոնյան իրավունք ուներ իր սատրապության ներքին չրջանառության կարիքների համար արծաթե և պղինձ դրամ հատել, մինչդեռ ամբողջ տերության մեջ ոսկի դրամ հատելու իրավունքը «արքայից արքան» վերապահում էր բացառապես իրեն[43]:

Աքեմենյան Պարսկաստանի սատրապները, «արքայից արքայի» այդ ամենակարող ծառաները, ինչպես նշում է պրոֆ. Ն. Ադոնցը, սովորական պաշտոնյաներ կամ կառավարիչներ չէին: Նրանք, ստանալով սատրապության կառավարումը, փաստորեն

(39) М.М. Дьяконов, նույն տեղում:
(40) Xenoph., Anab., I, 1,6-11: IV, 3,3-4: Անաբասիս, էջ 8 և 89:
(41) Diodor., XVII, 58, 1:
(42) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 445:
(43) М.М. Дьяконов, նույն տեղում:

այն ամրացնում էին իրենց, պաշտոնի հաջորդական ժառանգումով: Այս առումով սատրապությունն ուներ ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական գործոնի նշանակություն[44]:

Դարեհի կարևոր միջոցառումներից մեկն էլ այն էր, որ նա ավելի ևս ամրապնդեց պարսկական բանակը, որը դեռևս Կյուրոս Մեծի ժամանակ իշխանության ամենահուսալի հենարանն էր: Դարեհի թագավորության տարիներին երկրի ներսում կարգավորվեցին նաև հաղորդակցության ճանապարհները, կառուցվեց հայտնի «արքայական ճանապարհը», որը, սկսած Շուշ քաղաքից, արևմտյան ուղղությամբ կտրում-անցնում էր երկիրը մինչև փոքրասիական Սարդես սատրապանիստ քաղաքը, տերության կենտրոնական մարզերը անմիջականորեն կապելով առափնյա քաղաքներին[45]: Այդ ճանապարհի մի զգալի հատվածն անցնում էր հարավային Հայաստանի վրայով: Դարեհի մտցրած դրամական միասնական սիստեմը և ծավալած ճանապարհաշինությունը նկատելի չափով նպաստեցին առևտրի կարգավորմանը երկրում և տնտեսական առաջընթացին:

Աքեմենյանների տիրապետության նկատմամբ տեղական հպատակ բնակիչների հարաբերությունները որոշվում էին նրանով, որ վերջիններս պարտավոր էին հնազանդ մնալ, հարկ վճարել, զորահավաքի ժամանակ ներկայանալ զինվորական ծառայության և հոգալ սատրապի ու նրա պալատի, ինչպես նաև սատրապության սահմաններում տեղավորված «արքայից արքայի» կայազորների կարիքները[46]:

Իրանագետ Մ.Մ. Դյակոնովը նշում է, որ սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից Աքեմենյան Պարսկաստանին ենթակա բոլոր երկրները կարելի է բաժանել երկու խմբի: Մի խմբին պատկանում էին Իրանի, Միջին Ասիայի և Ծայրամասային մյուս մարզերի լայնարձակ տարածությունները, որտեղ դեռևս տիրապետող էր բնատնտեսությունը և կային նահապետական ու տոհմային կարգերի չատ մնացորդներ: Մյուս խմբին պատկանում էին տնտեսապես զարգացած և առավել կարևորություն ներկայացնող Առաջավոր Ասիայի սատրապությունները,

(44) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 437:
(45) М.М. Дьяконов, նույն տեղում, էջ 93: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, էջ 445:
(46) И.Г. Дройзен, История эллинизма, т. I, М., 1890, էջ 33:

որոնք տալիս էին Աքեմենյան թագավորների եկամուտների հիմնական զանգվածը և հանդիսանում էին պետության սիրտը: Այս սատրապություններից պարսից արքաներն ամեն տարի ստանում էին կրկնապատիկ և եռապատիկ ավելի հարկ, քան ամբողջ մնացած իրենց տիրույթներից: Մ.Մ. Դյակոնովը այս երկրորդ խմբին պատկանող առավել զարգացած սատրապություններից է համարում նաև Արմենիան[47]: Գերմանացի հելլենիստ Ց. Դրոյզենը ևս Արմենիան դասում է պարսկական տերության կարևոր սատրապությունների թվին[48]: Այն, որ Արմենիան Աքեմենյանների տերության կարևոր սատրապություններից մեկն էր, կարելի է եզրակացնել նաև այն բանից, որ Աքեմենյան վերջին արքայից արքա Դարեհ Գ Կոդոմանոսը, Հունաստանում վկայությամբ, թագավոր դառնալուց առաջ եղել էր Արմենիայի սատրապ[49]:

Այս տեսակետը պիտի համարել ընդունելի, քանի որ Քսենոփոնի նման հավատարիմ և լավատեղյակ հեղինակը վկայում է, որ «Արմենիան մեծ երկիր է ու հարուստ»[50]: Քսենոփոնի այս խոսքերը հաստատվում են Հայկական լեռնաշխարհի վրայով հելլեն վարձկանների նահանջը նկարագրող ամեն մի էջով: Ավելի քան 10 հազար զորք, իր բազմահազար բեռնակիրներով ու սպրուկներով հանդերձ, վերադարձի ճանապարհին, Արմենիայով անցնելիս, առատորեն գտնում է ամեն տեսակի բարիք ու բարեհաջող հասնում է Սև ծովի ափերը:

Ինչպես վերևում նշեցինք, Դարեհ Ա-ը սատրապներ նշանակեց իր մերձավոր զինակիցներին ու ազգականներին: Հետագայում այդ սատրապների սերունդներն էլ ժառանգաբար իրենց ձեռքում պահեցին սատրապի պաշտոնը: Աքեմենյանների տիրապետության շրջանում Արմենիայում սատրապի պաշտոնը, եթե բացառենք մեզ հայտնի Դարեհ Գ Կոդոմանոսին, թվում է, թե ժառանգաբար վարել են պարսկական Օրոնտեսների տոհմի ներկայացուցիչները, որոնց վերջին չառավիղները, օգտվելով քաղաքական բարենպաստ պայմաններից, մ.թ.ա. IV դարի վերջին

(47) М.М. Дьяконов, նշվ. աշխ. էջ 113-114:
(48) И.Г. Дройзен, նշվ. աշխ. էջ 1911
(49) M. Juniani Justini Epitoma historiarum Philipicarum Pompeii Trogi, Lipsiae, 5, 17: Քսենոփոն, Անաբասիս, էջ 81:
(50) Xenoph., Anabasis, III, 5, 17: Քսենոփոն, Անաբասիս, էջ 81:

տասնամյակներից սկսած, դառնում են հայկական առաջին անկախ պետության թագավորներ (Երվանդունիների թագավորություն): Այս հանգամանքը բավականաչափ պարզ կերպով արտացոլված է ինչպես հին հունական, այնպես էլ մեր ազգային մատենագրության մեջ: Համառոտակի անդրադառնանք մեզ հայտնի փաստերին:

Օրոնտեսը (Երվանդ) որպես Արմենիայի սատրապ առաջին անգամ հիշատակված է Քսենոփոնի «Անաբասիս» երկում: Հույն մատենագիրը հաղորդում է, թե Արմենիան, «որին իշխում էր Օրոնտասը, մեծ էր ու հարուստ»[51]: Սա մ.թ.ա. 401-400 թթ. էր: Այնուհետև մատենագրական տվյալներն այս մասին խզվում են մինչև մ.թ.ա. 330-ական թվականները, մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները:

Փոքրասիական Գրանիկոն գետի մոտ 334 թ. և Իսոսի հարթավայրում (Կիլիկիա) 333 թ. կրած իր պարտություններից հետո, Ալեքսանդրին դիմագրավելու համար Աքեմենյան վերջին արքայից արքան, Դարեհ Գ Կոդոմանոսը, 331 թ. Բաբելոնում կենտրոնացնում է հսկայական բանակ, հավաքագրված իր տերության բոլոր այն սատրապություններից, որոնք դեռևս մնացել էին իր իշխանության տակ: Ցուրաքանչյուր սատրապության զորք ներկայանում էր իր առանձին հրամանատարով: Արմենական զորքերը ներկայանում են Օրոնտեսի և Միթրաուստեսի գլխավորությամբ: Շուտով սկսած Գավգամելայի (Նինվեի ավերակների մոտակայքում) ճակատամարտում, որտեղ Դարեհ Գ-ի խառնիճաղանճ բանակը գլխովին ջախջախվեց, հայկական զորքերը, կապադովկիացիների հետ միասին, դասավորված էին ձախ թևում[52]:

Օրոնտեսը դարձյալ հիշատակվում է որպես Հայաստանի տիրակալ 317 թ.[53]: Այս Օրոնտեսը, ինչպես ճիշտ նկատել են Ց. Դրոյզենը և ակադ. Հ.Հ. Մանանդյանը, 331 թ. Գավգամելայի վերոհիշյալ ճակատամարտին մասնակցած Հայաստանի սատրապ Օրոնտեսն է, որը դրանից հետո ևս շարունակում էր իշխել Հայաստանում[54]:

(51) Xenoph., Anabasis, III, 5, 17: IV, 3,4:
(52) Arriani De expeditione Alexandri, Lipsiae, 1873, III, 8,1:
(53) Polyaeni Strategematicon IV, 8,6: Diodor., XIX, 23:
(54) И.Г. Дройзен, История эллинизма, т. II, М., 1893, էջ 75: Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 96-97:

Օրոնտեսների տոհմի վերջին ներկայացուցչի մասին կարևոր հիշատակության հանդիպում ենք Ստրաբոնի մոտ, որը, ի լրացումն մյուս հեղինակների, հաղորդում է, որ այս Օրոնտեսը հին պարսկական ամենահայտնի յոթը տոհմերից մեկի տոհմապետ Հյուդաոնեսի չառավիդն էր[55]:

Հայաստանի սատրապ Օրոնտեսները մեծ հեղինակություն են վայելել ոչ միայն Աքեմենյան Պարսկաստանի արքունիքում, այլև, հավանաբար, Աքեմենյանների պետության կործանումից հետո, հաղթանակած հունա-մակեդոնացիների զորահրամանատարների շրջանում, քանի որ, ինչպես վկայում է Դիոդորոսը, Ալեքսանդր Մակեդոնացու անձնական քարտուղար Եվմենեսը հրամանատարների զորաժողովում հրապարակում է մի նամակ, որն իբր ստացել էր Արմենիայի սատրապ Օրոնտեսից, դրանով իակ մեծ տպավորություն գործելով զորականների վրա[56]:

Օրոնտեսների կամ Երվանդունիների իշխանությունը, ըստ երեվույթին, ամուր արմատներ էր գցել Հայաստանում, քանի որ՝ 1) Աքեմենյանների իշխանության տապալումից հետո սատրապ Օրոնտեսը հռչակվում է Արմենիայի թագավոր. 2) Երվանդյան թագավորների մասին անհերքելի պատմական դեպքերի արձագանգը հանդիպացող մի շարք կարևոր զրույցներ մեզ հասել են Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» միջոցով[57]: 3) Հայաստանում Արտաշեսյան թագավորության հիմնադիրը իր արամեատառ արձանագրություններում իրեն անվանում է «Երվանդական», այսինքն՝ Երվանդունի[58]:

Հայաստանում Երվանդյանների տիրապետության մասին մենք, մատենագրական տվյալներից բացի, ունենք նաև վիմագրական մեծարժեք մի վկայություն: Մեր խոսքը Երվանդունիների թագավորության մայրաքաղաք Արմավիրում հայտնաբերված հունարեն արձանագրություններից մեկի մասին է, որտեղ ուղղակի հիշատակված է թագավոր Երվանդի անունը՝ Երրոնտես (ΒΑΣΙΛΕΥΣ Ε(Β)ΡΟΝΤΗΣ) ձևով: Այս Երվանդ-Երրոնտեսը, անկասկած, Մեծ Հայքի թագավորն է Օրոնտեսների տոհմից և ոչ թե Իբերիայի ինչ-որ թագավոր[59]:

Պակաս կարևոր փաստարկ չէ նաև այն, որ Արտաշես Ա-ից մեզ հասած արամեատառ արձանագրություններում հայոց թագավորն իրեն անվանում է «երվանդական», այն է՝ երվանդունի[60]:

Վերևում ամբողջ չարադրվածից պարզ է դառնում, որ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VI-IV դդ. հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումը հասել էր այնպիսի աստիճանի, երբ արդեն ստեղծվել էին բոլոր անհրաժեշտ նախադրյալները ինքնուրույն պետականության առաջացման համար[61]: Պատմական այդ պրոցեսի ավարտմանը, սակայն, մեծապես խոչընդոտում էր օտարերկրյա քաղաքական լուծը: Հայկական լեռնաշխարհի բնակիչները, ինչպես տեսանք, VI դարում, նույնիսկ երկու անգամ ապստամբել էին, քաղաքական ազատություն ձեռք բերելու նպատակով, սակայն նրանց փորձերը դաժանորեն ճնշվեցին և արմենները մոտ երկու հարյուրամյակ մնացին Աքեմենյան «արքայից արքայի» գերիշխանության տակ: Այնուամենայնիվ մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակներին ստեղծվեցին արտաքին և ներքին բարենպաստ պայմաններ հայկական ինքնուրույն պետականության առաջացման համար: IV դարի 30-ական թվականներին սկսվեց հունա-մակեդոնական էքսպանսիան դեպի Արևելք, Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորությամբ: Տաղանդավոր երիտասարդ զորավարին հաջողվեց երեք ճակատամարտում վերջնականապես ջախջախել վերջին Աքեմենյան Դարեհ Գ Կոտոմանոսի զորքերին: Դրանով վերջ տրվեց

(55) Strabo, XI, 14, 15:
(56) Diodor, XIX, 23:
(57) *Մովսես Խորենացի*, Բ, լէ-խը:
(58) Գ.Ա. Տիրացյան, *Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի Ն.մ.թ. 3-2րդ դարերի պատմության մասին*, ԲՄ, 1962, Նո 6: *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, Երևան, 1971, էջ 528-530:

(59) *Այսպիսի չհիմնավորված սխալ ենթադրություն է հայտնում Ա.Գ. Բոկչեանինը* (А.Г. Бокщанин, Парфия и Рим, ч. I, М., 1963, էջ 224):
(60) К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, т. I, М.-Л., 1953, էջ 162-174: Գ.Ա. Տիրացյան, *Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը*: Տես. ՀԳԱՀԳ, 1957, Նո. 10, էջ 108 և հաջ.: А.Г. Периханян, Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, Նո. 4:
(61) Տես նաև Գ.Ա. Տիրացյան, նշվ. աշխ.:

պարսկական քաղաքական տիրապետությանը Մերձավոր Արևելքում։ Առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդների հետ միասին հայերը ևս թոթափեցին Աքեմենյանների տիրապետության լուծը։ Մյուս կողմից՝ հաղթականորէն առաջ չարժվող Մակեդոնացին չմտավ Հայկական լեռնաշխարհ։ Ճիշտ է, նա, լսելով Սպերի ոսկու հանքերի մասին, այնտեղ զորքով ուղարկեց իր հրամանատարներից Մենոնին, բայց սա անհաջողության մատնվեց և, ինչպես հաղորդում է Ստրաբոնը, սպանվեց տեղաբնիկների կողմից[62]։ Այսպիսով, Հայաստանը մեխանիկորեն գտնվեց անկախ վիճակում և այնտեղ իրրև սատրապ իշխող Օրոնտես-Երվանդը իրեն հայտարարեց հայոց թագավոր։ Հայաստանում հաստատվում է Երվանդունիների թագավորությունը։ Այս առընչությամբ էլ անհրաժեշտ ենք համարում համառոտակի անդրադառնալ Երվանդունիների թագավորական հարստության առաջացման հարցին, քանի որ, մեր կարծիքով, այն իր ճիշտ լուծումը չի գտել հայագիտության մեջ։

(62) Strabo, XI, 14, 9 (c.529)։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐՎԱՆԴՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հակառակ արտաքին աղբյուրների հաղորդումներին, ինչպես նաև Հայաստանում վերջերս հայտնաբերված վիմական արձանագրությունների ավելի քան պարզորոշ տվյալներին, Մովսես Խորենացու «Հայոց Պատմությանը» հայտնի են Հայաստանում տիրած միայն երկու հարստություն.— 1) Հայկյան կամ Հայկազունի տոհմ, որն իբր իշխել է նախասկզբնական ժամանակներից մինչև վահէ Վահունին, որին պատմահայրը համարում է Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակից (մ.թ.ա. 330–320-ական թվականներ)։ 2) Արշակունի թագավորներ՝ սկսած Վաղարշակից մինչև Արտաշես վերջինը, երբ վերացավ Հայաստանում Արշակունիների թագավորությունը (428 թ.)։ Իսկ այս հարստությունների միջև ընկած շուրջ երկուհարյուրամյա ժամանակահատվածի համար Խորենացին խոստովանում է, որ իրեն հայտնի չէ, թե ո՞վքեր են իշխել Հայաստանում։ Ահա պատմահոր խոսքերը. «Սա (վահէ – Ս.Կ.) ընդվզեալ՝ մեռանի յԱղեքսանդրէ Մակեդոնացւոյ։ Յայսմ հետէ մինչև ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի չփոթի իմն ամբոխից լեալ՝ այր զարմր ելանէին տիրել աշխարհիս[1]։

Խորենացու մատյանի առաջին գիրքը գրեթե ամբողջապես նվիրված է Հայկազյան տոհմի պատմությանը, որտեղ գերագանցում են դիցաբանական-առասպելական տարրերը։ Այսուհանդերձ, պատմահոր մոտ հայկազյանների շարքում գտնված մի քանի թագավորներ (Տիգրան, Արտավազդ), պատմական անձնավորություններ են։

(1) Մովսես Խորենացի, Ա լբ։

Խորենացու մշակած այս սխեման հայագետների կողմից անվերապահորեն ընդունվում էր, ընդհուպ մինչև XIX դարը։ Նույնիսկ օտարազան սկզբնաղբյուրների այնպիսի գիտակ, ինչպիսին էր Միքայել Չամչյանը, իր «Պատմութիւն» մեջ համարյա նույնությամբ հետևում էր Խորենացու չարադրանքին[2]։ Ճիշտ է, նա իրավացիորեն մատնանշում է օտար, հատկապես հռոմեական աղբյուրների միտումնավորությունը, սակայն արտաքին պատմիչների նկատմամբ իր քննադատության ընթացքում Չամչյանն, ընկնելով հակառակ ծայրահեղության մեջ, օտարազան հեղինակներից մեր պատմությանը վերաբերող այն հատվածներն է վերցրել միայն, որոնք համաձայնվում էին հատկապես Խորենացու պատմության հետ, քանի որ վերջինիս նա համարում է ստուգագույնը բոլորից[3]։ ուստի Չամչյանը, հետևելով Խորենացուն, նշում է, որ Հայկից հետո մինչև վահե թագավորը Հայաստանում եղել է «Հայկազանց հարազատ իշխանութիւն», իսկ այնուհետև «ընդ կուսակալութեամբ այլոց՝ մինչ ցարշակունեաց տէրութիւն»[4]։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ պատմահայր Խորենացին Հայկազյան տոհմը չի համարում թագավորական, այլ Հայկին ու նրա հետնորդներին պարզապես անվանում է նահապետներ։ Սա, մեր կարծիքով, արտացոլում է պատմական այն ժամանակաշրջանը, երբ հայկական ցեղերը սկսում էին արդեն միավորվել և հասել էին սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման այն մակարդակին, որը պատմագիտության մեջ հայտնի է որպես ռազմական դեմոկրատիայի շրջան։ Ուստի մեզ բոլորովին պատահական չի թվում այն, որ, ըստ Խորենացու, Հայկի հետնորդներից Զարմայր նահապետը ժամանակակից է Տրոյական պատերազմին[5] և առնչվում է վաղ հելլենական աշխարհին այն ժամանակ, երբ հունական հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կազմակերպության ձևը հայտնի է որպես ռազմական դեմոկրատիա։

Խորենացու մոտ հայոց առաջին թագավորը Սկայորդի Պարույրն է, որից սերածների թվում են Երվանդ Սակավակյացը

(2) *Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784։*
(3) *Նույն տեղում, էջ 35–40։*
(4) *Նույն տեղում, էջ 31։*
(5) *Մովսես Խորենացի, Ա, լբ։*

և սրա որդի Տիգրան Երվանդյանը, որոնց պատմահայրը նույնպես հիշատակում է որպես հայոց թագավորների[6]։

Օտար, առանձնապես անտիկ, աղբյուրներին հանգամանորեն ծանոթանալը հայագետների առաջ անհետաձգելի հարց դրեց՝ ստուգել Խորենացու հաղորդած տվյալները այդ աղբյուրների վկայություններով և վերանայել նրա մատյանի հիման վրա կազմված Հայաստանում երբևէ իշխած հարստությունների սխեման, քանի որ անտիկ հեղինակները, որոնց մի զգալի մասը անմիջականորեն ժամանակակիցն են իրենց նկարագրած դեպքերին, բոլորովին այլ պատկեր են ուրվագծում, քան Խորենացին[7]։

Նախքան առաջ անցնելը նշենք, որ Հ. Գաթրճյանը հիշատակում է Արտաշեսին (նրա մոտ՝ Արտաշաս – Ս.Կ.) և Զարեհին, սակայն նրանց համարում է ոչ թե որևէ մեկ արքայատոհմի պատկանող թագավորներ, այլ Սելևկյան Անտիոքոս Մեծի՝ Մագնեսիայում կրած պարտությունից հետո և Վաղարշակի գահակալումից առաջ համապատասխանաբար Մեծ Հայքի և Փոքր Հայքի կուսակալներ[8]։

Ա.Մ. Գարագաշյանը թեպետև հանդես եկավ Խորենացու խստագույն քննադատությամբ, փորձելով ժխտել նրա հավաստիությունը, այսուհանդերձ վերոհիշյալ հարցում չկարողացավ հաղթահարել պատմահոր ազդեցությունը։ Եվ դա այն դեպքում, երբ նա ընդհանրապես նախապատվություն տալիս է օտարազան, հատկապես հունական աղբյուրների հաղորդած տեղեկություններին։ Ա.Մ. Գարագաշյանը հայ ժողովրդի պատմության հին շրջանը բաժանում է նախապատմական և պատմական ժամանակների, նշելով, որ առաջին շրջանում Հայաստանում առաջացել է Արարատյան թագավորությունը, որը գոյություն է

(6) *Մովսես Խորենացի, Ա, իբ-լբ։*
(7) *Լ.Փ. Շահինյանը Խորենացու ժամանակագրական համակարգին նվիրված իր ուսումնասիրություններում անվերապահորեն ընդունում է Խորենացու սխեման և պնդում, թե Հայաստանում չեն եղել ո՛չ Երվանդունիներ, ո՛չ էլ Արտաշեսյաններ, որ վերջիններս պատկանել են Արշակունի տոհմին (Լ.Փ. Շահինյան, Պարսիկ Արշակունիների հարստության հաստատման թվականը ըստ Խորենացու, ՊԲՀ, 1966 Նո 1, էջ 155–172։ Նույնի՝ Ինչպիսի՞ն է Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, ԲՄ, Նո 8, 1967, էջ 21–56 և այլ գործեր)։*
(8) *Յովսէփ Գաթըրճեանց, Տիեզերական պատմութիւն, Վիեննա, հ. Ա, 1849, էջ 581։*

ունեցել մինչև Աքեմենյան Դարեհ Ա-ի կողմից Հայաստանի նվաճվելը։ Ա.Մ. Գարագաշյանը այնուհետև գրում է, որ Սելևկյանների ժամանակ Հայաստանում «հարյավ արդարև նոր Արարատյան թագավորութիւն մը, ի մոխրո հին Արարատյան թագավորութեան, Արշակունյաց թագավորութիւն անվամբ»[9]։

Դժվար չէ նկատել, որ Ա.Մ. Գարագաշյանը չգիտե ո՛չ Երվանդունիներին, ո՛չ իսկ Արտաշեսյաններին որպես առանձին թագավորական հարստություն և մ.թ.ա. II դարի սկզբին Հայաստանում Արտաշեսի հաստատած տերությունը համարում է Արշակունյաց թագավորություն։ Նույն տեսակետն է նա կրկնում տարբեր առիթներով[10]։ Այնուամենայնիվ թվում է, թե Գարագաշյանը ինչ-որ տարբերություն դնում է Արտաշեսի և Տրդատ Ա. Արշակունու հետնորդների միջև, երբ խոսելով հայոց թագուհի Էրատոյի մասին, նրան համարում է «վերջինն ի ցեղն Արտաքսիասա, որով կմարի Արտաքսիասյան հարստութիւնը»[11]։ Ըստ երևույթին, Ա.Մ. Գարագաշյանը Արտաշեսին և Տրդատին համարում է միևնույն Արշակունի հարստության տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ։

Այն, որ վերոհիշյալ թագավորական երկու տոհմերի միևնույն՝ Արշակունի հարստության պատկանելը հիրավի կասկածներ է առաջացրել Ա. Գարագաշյանի մոտ, երևում է նաև նրա հետևյալ դատողություններից. «... Արշակունի կնշանակէ արքունի, թագավորական, հայերէն Արշակ անունէն, որ ... կնշանակէ արքա ...։ Դիտողության արժանի է, որ մեր պատմության մեջ ուրիշ մը Արշակ կոչված չենք գտներ։ Հայք արիական բառով արշակունի կոչեցին հին Արարատյան թագավորական ցեղը»[12]։ Այս դիտողությունը, սակայն, բավական չի եղել, որպեսզի Ա. Գարագաշյանը հանգեր Արտաշեսյան և Արշակունի թագավորների տարբեր արքայատոհմերի պատկանելու տեսակետին։

Ի դեպ, հետաքրքիր է նշել, որ վրաց պատմական ավանդությունը ևս Արտաշեսյաններին համարում է նույնպես Արշակունի թագավորներ։ Այդ մասին ակադ. Ս.Ց. Երեմյանը գրում է. «Արդեն վրացական թագավորության սկզբնավորության շրջանից իսկ (մ.թ.ա. III-II դդ.) վրացական Փառնավազյան («Փառնավազեանք») դինաստիան հաճախ էր խնամիական կապերով կապվել հայկական թագավորական տների հետ։ ... Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ.թ. 1-ին թվականից վրաց աշխարհի (Իբերիայի) թագավոր է հռչակվում Ադերկը (շուրջ 1-27 թթ.), որը Տիգրան Բ-ի ժամանակակից, Արտաշեսյան տոհմից սերված վրաց Արտակ թագավորի (66-65 թթ.) թոռնորդին էր։ Ադերկից սկսած վրացական գահի վրա վերստին բազմում են, հավանաբար, մոր կողմից, հայկական Երվանդունի-Արտաշեսյան դինաստիայի ներկայացուցիչները և նշանակալից է, որ հետևելով հայկական պատմական ավանդությանը, վրացական ավանդական պատմությունն այս դինաստիան անվանում է "Արշակունյան"»[13]։

Հայ պատմագիտության մեջ, ինչքան մեզ հայտնի է, առաջին անգամ Գ. Խալաթյանցն էր, որը որոշակիորեն տարանջատեց Արշակունիներին և Հայաստանում նրանց նախորդած գահակալներին։ Նա գրում է. «... Պարթև Արշակունիների հարստությունը, հակառակ Խորենացու և նրա աղբյուրի՝ կեղծ-Ագաթանգեղոսի կամ Մար-Աբասի հաղորդման, կարող էր Հայաստանում հաստատվել միայն Տիգրանից և Տիգրանյաններից հետո[14]»։ Իր այս տեսակետը առավել պարզ դարձնելու համար Գ. Խալաթյանցը նույն էջում տողատակի ծանոթագրության մեջ նշում է, որ Փավստոսի մոտ Տիգրանի՝ Արշակունի անվանվելը պետք է հասկանալ Հայաստանի թագավորական հարստության իմաստով, քանզի «արշակ» նշանակում է «թագավոր» և ոչ թե Տիգրանի՝ պարթև Արշակ Ա-ից սերած լինելու իմաստով։

Հայաստանում թագավորական երկու տարբեր հարստության առկայությունն առանձնապես չեշտված է Ն. Ադոնցի մոտ, որը Արշակունյաց հարստությանը նախորդած գահակալներին անվանում է Տիգրանյաններ՝ Տիգրան Մեծի անունից։ Նա գրում է. «Արշակունիների հանդես գալուն նախորդած շրջանը արտաքին տեսակետից կարելի է անվանել Աքեմենյան, իսկ ներքին

(9) Ա.Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մաս Բ, Թիֆլիս, 1895, էջ 190։
(10) Նույն տեղում, էջեր 1, 81, 83, 195 և այլ։
(11) Ա.Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մաս Բ, Թիֆլիս, 1895, էջ 190։
(12) Ա.Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մաս Ա, էջ 83։
(13) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 716։
(14) Г. Халатянц, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, ч. I, М., 1903, էջ 5։

տեսակետից՝ Տիգրանյան, այն հարստության անունով, որից սերում էին Արտաքսիասը և Զարիադրիսը և նրանց հուչակավոր հետնորդ Տիգրան Երկրորդը»[15]: Ն. Ադոնցը նույն այս պարբերությանը կցել է հետևյալ տողատակի ծանոթագրությունը, որն ունի բացառիկ նշանակություն : «Սովորաբար կարծում են, թե Հայաստանում մինչարշակունյան թագավորական հարստությունն իր սկիզբն առնում է Արտաքսիասից ու Զարիադրիսից: ... Ջենք կասկածում, որ Արտաքսիասի տոհմը ծագում է Աժդահակի ժամանակակից Տիգրանից: ... Տիգրանի հարստության առաջին հայտնի ներկայացուցչի անունով և հուչակավոր նվաճող Տիգրան Մեծի պատվին մինչարշակունյան շրջանը անվանում ենք Տիգրանյան»[16]:

Ն. Ադոնցը այս հարցին դարձյալ անդրադառնալով, ավելի որոշակի գրում է. «Մեր էրայի սկզբում, ավելի ճիշտ՝ 36 թվականին, Տիգրան Դ-ի մահվամբ հասվեց Հայաստանում Տիգրանյանների հարստությունը»: Այս տողերին կցած իր ծանոթագրության մեջ Ն. Ադոնցը տալիս է երկու հարստություններին՝ Տիգրանյաններին (իմա՝ Արտաշեսյաններին) և Արշակունիներին պատկանող գահակալների ցուցակը[17]:

Պրոֆ. Լեոն ևս իր «Հայոց Պատմության» մեջ պարզորոշ սահմանազատում է Արտաշեսյաններին ու Արշակունիներին և առանձին-առանձին փորձում է տալ դրանցից յուրաքանչյուրի պատմությունը: Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատ Ա-ին նա համարում է «չարունակող այն մեծ գործի, որ արտաշեսյան հարստության իսկական փառքն է կազմում»[18]:

Հունա-հռոմեական հեղինակների համապատասխան վկայություններից բացի, Արտաշեսյանների և Արշակունիների՝ տարբեր արքայատոհմերի պատկանած լինելու տեսակետի օգտին խոսում են նաև հետևյալ փաստարկները. — 1) Արտաշեսյանների թագավորության ժամանակ, Հայաստանում սահմանված էր գահակալման խիստ ժառանգական կարգ[19], այսինքն՝ թագավորի

(15) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 389-390:
(16) Նույն տեղում, էջ 390:
(17) Նույն տեղում, էջ 427-428:
(18) Լեո, երկեր 10 հատորով, հ. 1, Երևան, 1966, էջ 352:
(19) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, էջ 667:

մահից հետո գահն անցնում էր նրա ավագ որդուն. մինչդեռ Արշակունիների օրոք այն ժառանգական չէր առնվազն մինչև մ.թ. II դարի վերջը: 2) Արտաշեսյան թագավորներն, ընդհանրապես, հատել են իրենց սեփական դրամը[20], մինչդեռ Հայաստանի Արշակունի թագավորներից և ոչ մեկը չի դիմել այդ քայլին: 3) Արտաշեսյանները հաճախ ռազմական ընդհարումներ են ունեցել պարթև Արշակունիների հետ և այդ դարերում Հայաստանի և պարթևական Պարսկաստանի միջև դիվանագիտական-քաղաքական պայքարն անպակաս է եղել, մերթ խուլ, մերթ բացահայտ, մինչդեռ հայ և պարթև Արշակունիների միջև մղված պայքարի և հակամարտության ոչ մի հավաստիացում դեռևս հայտնի չէ:

Կարելի է նշել փաստարկները հաստատող նաև հետևյալ նկատառումները: Հիմքեր կան ենթադրելու, որ Արտաշեսյանները տոհմական ից են եղել Մոփքի հայ թագավորներին[21], իսկ այս վերջիններս բոլորովին էլ Արշակունիներ չէին: Այնուհետև՝ Խորենացու մոտ ևս I դարում նկատելի է հայկական դինաստիաների ինչ-որ խզում, անջատում, որը պատմահայրը արհեստականորեն միացրել է, բաց մնացած հատվածը լրացնելով Արգարի պատմությամբ[22]:

Վերևում ամբողջ չարադրվածից պարզ երևում է, որ նախախորհրդային հայագետներից և ոչ մեկը չի անդրադարձել հնագույն ժամանակներում Հայաստանում գահակալած մի երկրորդ, ոչ պակաս կարևոր արքայատոհմի, Երվանդունիների պատմությանը: Ն. Ադոնցի մոտ նկատելի է այն, որ նա Տիգրանյանների (նույնն է թե՝ Արտաշեսյանների) գահակալությունը ճիշտ կերպով բաժանում է երկու շրջանի, մ.թ.ա. VI դար և II-I դարեր, չանդրադառնալով, սակայն, IV-III դարերում Արտաշեսյաններին նախորդած Երվանդունիների թագավորության հարցին:

Մեկ այլ առիթով Ն. Ադոնցը նշում է, թե հայկական մարզերից Փոքր Հայքը առաջինն էր, որ Աքեմենյան տերության փլատակների վրա ձեռք բերեց քաղաքական անկախություն և կառավարվում էր իր հայրենի թագավորների կողմից, դեռևս Մոփքում՝ Զարեհի և Արաքսի հովտում՝ Արտաշեսի թագավորու-

(20) Նույն տեղում, էջ 693-698:
(21) Նույն տեղում, էջ 512-514 և 542-550
(22) Մովսես Խորենացի, Բ, իգ-լգ:

թյունների առաջացումից չատ առաջ[23]: Շարադրանքից դժվար չէ նկատել, որ Ն. Ադոնցը անգիտանում է Հայաստանում գահակալած Երվանդունի հարստությունը: Լեոն նույնպես չգիտի Երվանդունի արքայատոհմի մասին

Հետևաբար, խորհրդահայ պատմագրության նվաճումներից պիտի համարել այն, որ առկա սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա վեր հանվեց Աքեմենյան Պարսկաստանի լուծը թոթափելուց հետո Հայաստանում հաստատված Երվանդունիների թագավորության քաղաքական և, մասամբ, սոցիալ-տնտեսական պատմությունը: Այս հարցում առաջին երախտիքը պատկանում է ակադ. Հ.Հ. Մանանդյանին[24]: Այնուհետև Երվանդուններին անդրադարձել և անդրադառնում են սովետահայ և արտասահմանյան պատմաբաններ՝ ակադ. Ս.Տ. Երեմյանը, Կ.Վ. Տրեվերը, Գ.Խ. Սարգսյանը, Գ.Ա. Տիրացյանը, Կ. Թումանովը, Հ. Ժամկոչյանը և ուրիշներ[25]: Ի դեպ նշենք, որ նրանք Ուրար-

(23) Н. Адонц, նշվ. աշխ., էջ 66:

(24) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 104:

(25) С.Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, ИАНАОН, 1948, № 11, стр. 42; его же, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3, стр. ?; К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, т. I, М.-Л., 1953, стр. 120; Г.Х. Сарксян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, стр. 30-31; С.М. Кркяшарян, Возникновение городов в Армении во II веке до н. э. -III в. н. э., «Научные доклады высшей школы. Исторические науки», 1961, № 4, стр. 150-151.
Գ.Ա. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, Տեղ. ՀԳԱՀԳ, 1958, Նո, 4, էջ 61 և հաջ.: Նույնի՝ Հին հայկական պետության առաջացումը, ՊԲՀ, 1966, Նո 4, էջ 83 և հաջ.: Հ. Ժամկոչյան, Հայաստանը նախնադարյան համայնական հասարակության և տերկատիրության շրջանում, Երևան, 1961, էջ 174 և հաջ.: Գ.Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 71-82 և հաջ.: Ս.Մ. Կրկյաշարյան, Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, Տեղ, ՀԳԱՀԳ, 1963, Նո 9, էջ 55-60: Նույնի՝ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 62-66 և 122-129: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 435-442 և 503-520: Ժ.Գ. Էլչիբեկյան, Երվանդունիների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1971, Նո 2, էջ 107-115: C Toumanoff. The Orontids of Armenia (Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963.

տուի անկումից անմիջապես հետո, մ.թ.ա. VI դարի առաջին կեսում Հայաստանում իշխած տիրակալներին համարում են Երվանդունիներ. այս տեսակետին անցյալում տուրք ենք տվել նաև մենք[26]. մինչդեռ, ինչպես տեսանք, Ն. Ադոնցը նրանց անվանում է Տիգրանյաններ և այդ տարիները համարում է Արտաշեսյանների գահակալման առաջին շրջան: Մեր կարծիքով, առավել ճիշտ է Ն. Ադոնցի տեսակետը: Փորձենք հիմնավորել մեր այս կարծիքը:

Տեսնենք, թե վերոհիշյալ ուսումնասիրողները աղբյուրներից ի՞նչ տվյալ են ունեցել ենթադրելու, որ մ.թ.ա. VI դարի առաջին կեսին Հայաստանում հաստատվել է Երվանդունիների իշխանությունը: Ըստ էության միայն մեկ տվյալ՝ Երվանդ Սակավակյացի հիշատակությունը Խորենացու մատյանում մեջ բերված արքայացանկերից մեկում, իբրև մարաց Աժդահակ թագավորի ժամանակակից[27]: Այնուհետև այս Երվանդը ոչ մի տեղ չի հիշատակվում նույնիսկ Խորենացու մոտ, բացի Վարդգեսյանի հիմնադրման մասին զրույցից[28]: Խորենացու պատմելով, Երվանդ Սակավակյացին հաջորդել է Տիգրան Երվանդյանը: Հայագետները այն կարծիքին են, թե իրենց հաջողվել է Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկում գտնել Խորենացու այս հաղորդման հաստատումը: Իրոք, Քսենոփոնը, խոսելով այդ նույն ժամանակաշրջանի մասին, հաճախ է հիշատակում հայոց թագավորին, սակայն առանց նրա անունը տալու և նրա Տիգրան անունով որդուն: Եւ ահա, Քսենոփոնի թողած բացը հայագետները լրացնում են Խորենացու վկայության հիման վրա, որից էլ ելնելով, Քսենոփոնի տվյալների մեջ փոխադարձաբար տեսնում են Խորենացու վկայության հաստատումը և ենթադրում, որ այդ ժամանակից է Հայաստանում հաստատվում Երվանդունիների հարստությունը, որի ներկայացուցիչները հետագայում ևս, Աքեմենյանների տիրապետության շրջանում, շարունակում են իշխել Հայաստանում իբրև արքայից արքայի սատրապներ: Եթե այս տեսակետին են Ս. Երեմյանը, Հ. Ժամկոչյանը և, նրանց հետևելով, Ժ. Էլչիբեկ-

(26) Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 88:

(27) Մովսես Խորենացի, Ա, իբ:

(28) Նույն տեղում, Բ, կե:

յանը[29], ապա Գ. Տիրացյանը Երվանդունիներ համարելով VI դարի Հայաստանի տիրակալներին և թե՛ Աքեմենյան տիրապետության ժամանակ Հայաստանում իշխած սատրապներին, այնուամենայնիվ, առկա փաստերի մեջ իրավացիորեն հակասություններ տեսնելով, չի պնդում այդ երկու Երվանդյանների միևնույն հարստության պատկանելու տեսակետի վրա[30]:

VI դարի սկզբին Հայաստանում Երվանդունիների հարբստության գոյության մասին ենթադրությունը, մեր կարծիքով, լուրջ հարցականի տակ դնող փաստարկներն ավելի շատ են, քան դրա օգտին խոսողները:

1. Խորենացու մոտ Երվանդի «Սակավակյաց» մակդիրն ինքնին վկայում է այն մասին, թե նրա գահակալությունը կարճատև է եղել և կամ, ավելի ճիշտ, նա կարճ կյանք է ունեցել[31]: Մինչդեռ «Կյուրոպեդիա»-յում բազմիցս հիշատակված հայոց թագավորը բոլորովին էլ երիտասարդ չէ և արդեն ունի ամուսնացած որդի: Ուստի դժվար է «Սակավակյաց» Երվանդին նույնացնել ամուսնացած Տիգրանի տարեց հոր հետ:

2. Երվանդ-Օրոնտաս անունը քաջ հայտնի է Քսենոփոնին[32] և նա «Կյուրոպեդիա»-յում բազում անգամ խոսելով հայոց թագավորի մասին, գեթ մեկ անգամ կտար այդ անունը, եթե իրոք սա կրած լիներ Երվանդ անունը:

3. Խորենացու մոտ Երվանդ Սակավակյացը հիշատակվում է միայն արքայացանկում և թագավորական նոր, այն էլ երկրում առաջին, հարստության հիմնադրին արժանի ոչ մի գործ չի

(29) Հ. Ժամկոչյան, Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության շրջանում, Երևան, 1951 էջ 174 և հաջ.: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, էջ 435-441: Ժ. Էլչիբեկյան, Երվանդունիների ծագման հարցի շուրջը, էջ 107-115:

(30) Գ.Ա. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, էջ 69: Նույնի՝ «Անաբասիսը» և Հայաստանը (Անաբասիս գրքում), էջ 228-230:

(31) «Սակավակյաց» բառին մեր տված այս մեկնությունը փորձում է ժխտել Ե. Դանիելյանը իր հրատարակած հոդվածում (Հայաստանի մ.թ.ա. VII-VI դդ. պատմությունից. «Լրաբեր հաս. գիտ.» 1974, Նո 11, էջ 89 ծանոթ. 74), պնդելով, որ «սակավակյաց» Խորենացու մոտ այս դեպքում նշանակում է կյանքում քչով բավարարվող, սակավապետ: Այս բառնոբոսիկ բացատրության նպատակն է կասկածի տակ դնել մեր տեսակետը Երվանդյանների մասին:

(32) Անաբասիս, էջ 23, 24, 34, 47, 54, 75, 81 և այլն:

կատարում: Խորենացին իր չարադրանքի ընթացքում մոռանում է նրան, բացի Վարդգեսյանի առնչությամբ նկատված հիշատակումից: Դեռ ավելին, պատմահայրը իր մայրանի երկրորդ գրքում ամբողջ երեք գլուխ հատկացրել է հայոց թագավորներից Արտաշես Տիեզերակալի գործերը նկարագրելուն[33]: Ճիշտ է, Արտաշեսին վերագրված գործերի մի զգալի մասը իրականում կատարված են Կյուրոս Մեծի, Դարեհի և Քսերքսեսի կողմից. բայց մեզ համար այս դեպքում կարևորն այն է, որ Խորենացու Արտաշեսի գործունեությունը ծավալվում է Կյուրոս Մեծի (559-529 թթ.), Լյուդիայի թագավոր Կրեսոսի (560-546 թթ.) և աթենացի օրենսդիր Սոլոնի (638-559 թթ.) միջավայրում, VI դարի կեսերին, այն է՝ նույն այդ ժամանակ, երբ Հայաստանում, ըստ Խորենացու արքայացանկի, պետք է թագավորեր Երվանդ Սակավակյացը: Կյուրոսը, Սոլոնը և Կրեսոսը շատ հաստատուն նստած են VI դ. կեսերին, ուստի և նրանց ոչ մի կերպ հնարավոր չէ տեղաշարժել և մոտեցնել Խորենացու Արտաշես Տիեզերակալին. մնում է միակ տրամաբանական ելքը՝ Արտաշես Տիեզերակալին տանել VI դար և ենթադրել, որ այդ ժամանակ հայոց թագավորի և Տիգրանի հոր անունը եղել է ոչ թե Երվանդ, այլ Արտաշես. հիշեցնենք, որ Խորենացու մոտ այս Արտաշեսի որդին նույնպես կրում է Տիգրան անունը[34]: Այս դեպքում մնում է բացատրել Խորենացու մոտ Տիգրանի «Երվանդյան» մականունը, որն անպայման գալիս է հայոց վիպասանքից: Բացատրության բանալին մենք տեսնում ենք Արտաշես Ա-ի վերջերս հայտնաբերված արամեատառ արձանագրություններում, որոնցում Արտաշեսն իրեն անվանում է «Երվանդական» (իմա Երվանդունի): Այս երևույթին հայագետների տված մեկնաբանությունը մեզ թվում է միանգամայն համոզիչ[35]: Հելլենիստական մի շարք երկրների (Պոնտոս, Կապադովկիա, Կոմմագենե), միապետներ, իրենց թագավորական իշխանությանը առավել չուք և հեղինակություն հաղորդելու նպատակով, իրենց հայտարարում էին Աքեմենյաննե-

(33) Մովսես Խորենացի, Բ, ժա-ժգ:

(34) Նույն տեղում, ժա և ժգ:

(35) Գ.Ա. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի Ն.մ.թ. 3-2րդ դդ. պատմության մասին, ԲՄ, 1962, Նո 6: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 528-530:

րից սերած։ Այդ քայլին դիմել է նաև Արտաշեսը, որը իրեն անվանելով Երվանդական, դրանով իսկ ցանկացել է իր ծագումը բխեցնել Աքեմենյաններից, քանի որ, աղբյուրների վկայությամբ[36], Օրոնտեսը հետնորդն էր Հյուդառնեսի, որը Դարեհի գինակից վեց մեծատոհմիկ պարսիկներից մեկն էր։

Մեր կարծիքով, հիմնավորված չէ նաև այն տեսակետը, թե Արմենիան Աքեմենյանների տերության սատրապություններից մեկը դառնալուց հետո, այնտեղ իբրև սատրապ մնաց հայոց թագավոր Երվանդը։ Հավանական է, որ Արմենիայի սատրապ նշանակված լիներ պարսիկ Օրոնտեսների (Երվանդների) տոհմից։ Նույնքան հավանական է, որ նրա կողքին երկրում չարունակում էր բարձր իշխանություն ունենալ նախկին թագավորը, իսկ հետագայում, նրա հետնորդը։ Թվում է, թե հնարավոր է հունական աղբյուրներում տեսնել այս վերջիններիս «Արտաշես» անունը։

Այսպես, Քսենոփոնի «Անաբասիս»ում Հայաստանի սատրապ Օրոնտասի կողքին հիշատակվում է նաև Արտուխասը (Ἀρτούχας), որը, հավանաբար, զորավար էր[37]։ Մեր կարծիքով, Արտուխաս անունը նույնն է՝ ինչ Արտաշեսը։ Տվյալ ժամանակի հատուկ անունների մեջ սովորական է ու – ա հնչյունափոխությունը (Ուրմե–Արմե, Ուրարտու–Արարատ, Երերունի–Երևան)։ Հույները X (χ) տառը արտասանում են հայերեն շ-ի մոտ և պատահական չէ, որ եվրոպական լեզուներում այդ տառը տառադարձվել է ch-ով։ Ինչ վերաբերում է Արտուխաս անվան -աս (ας) վերջավորությանը, ապա այն հունարենում բացարձակապես նույնական է -ես (-ης) վերջավորության հետ։ Այսպիսով, Արտուխաս անունը լրիվ նույնանում է Արտաշես անվան հետ։

Եվս մի փաստարկ։ Հերոդոտոսի վկայությամբ, Քսերքսեսի պարսկական բանակում գտնվող «արմենները զինված էին փյուգացիների նման։ ... Սրանց երկուսի առաջնորդն էր Արտոքմեսը (ΑΡΤΟΧΜΗΣ), որն ամուսնացած էր Դարեհի դստեր հետ»[38]։ Մեզ հավանական է թվում, թե ΑΡΤΟΧΜΗΣ անվան M (Μ) տառը պետք է լինի Σ (Σ)։ Այս երկու տառերի տարբերությունը, ինչպես հեշտ է նկատել, հորիզոնական կամ ուղղահայաց լինելու մեջ է, ուստի և ձեռագրերում դրանք կարող էին

(36) Strabo, XI, 14, 15։
(37) Xenoph., Anabasis, IV, 3,4.
(38) Herodot., VII, 73.

հեշտությամբ չփոթվել արտագրողների կողմից, մանավանդ, որ Σ տառը շատ հնում գրվել է նաև M ձեվով[39]։ Եթե այդպես է, ապա կարելի է կարդալ ΑΡΤΟΧΣΗΣ –Արտոքսես–Արտաշես։

Այս ամենը նշելուց հետո, մեզ թվում է, թե V-IV դդ. Արմենիայի սատրապ Օրոնտեսները տոհմակցական ոչ մի կապ չունեն նախապես Հայաստանում տիրած հարստության հետ։ Հետևաբար, Երվանդունիների թագավորական հարստությունը առաջացել է ոչ թե մ.թ.ա. V դարում, այլ Աքեմենյանների լուծը թոթափելուց հետո IV դարի վերջին քառորդում, իսկ մ.թ.ա. VI դ. Հայաստանում եղել է մեկ այլ հարստություն, որը կարելի է անվանել Արտաշեսյան (կամ Տիգրանյան՝ ըստ Ն. Ադոնցի)։ Այս հարստությունն ընդհատվում է Աքեմենյանների տիրապետության ու Երվանդունիների թագավորության (շուրջ 320–190 թթ.) ժամանակ։ Արտաշես Ա–ը, մեր կարծիքով, տապալելով Երվանդ վերջինին, վերականգնում է VI դարի հայկական հարստությունը։

(39) Տես Μεγάλη Ἑλληνική ἐγκυκλοπαιδεία Παύλου Δρανδάκη, τόμος IV, Ἀθῆναι, «Ἀλφάβητος» բառի տակ, էջ 108–111, պյուռակ 1 և 4։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՒՆԱ-ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԷՔՍՊԱՆՍԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արևելյան Միջերկրականում և Փոքր Ասիայում գերիշխանություն հաստատելու ուղղությամբ հելլենական աշխարհի և Աքեմենյան Պարսկաստանի միջև փոփոխական հաջողություններով չուրջ 170 տարի մղված պայքարն իվերջո ավարտվեց հելլենական աշխարհի հաղթանակով։

Հունական մայր ցամաքի քաղաք-պետությունները, պոլիսները, իր իշխանության տակ միավորելուց հետո, մ.թ.ա. 334 թվականին իր ոչ մեծաթիվ, բայց լավ կազմակերպված բանակով Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան ափը դուրս գալով, երիտասարդ Ալեքսանդր Մակեդոնացին դեռևս չէր նպատակադրվել մինչև հեռավոր Հնդկաստան արշավելու։ Նրա սկզբնական նպատակը, անկասկած, շատ ավելի համեստ էր։ Նա ծրագրել էր պարսկական տիրապետությունից ազատագրել Փոքր Ասիայի հունական գաղութ-քաղաքները և դրանք մայր Հունաստանի հետ միավորել մեկ միասնական ֆեդերացիայի մեջ՝ իր գլխավորությամբ։ Սակայն, դեպքերը բոլորովին չնախատեսված ընթացք ստացան։ Աքեմենյանների ավելի քան երկուհարյուրամյա հսկայածավալ տերության անսպասելի արագ փլուզումը գլխապտույտ հաջողություններից ոգևորված Ալեքսանդրի մտքում ծնեց ամբողջ Արևելքը նվաճելու գաղափարը։ Եվ նախանձելի ինքնավստահությամբ նա ձեռնամուխ եղավ այդ գաղափարի կենսագործմանը։ Կարճ ժամանակում Աքեմենյանների տերության նախկին սատրապությունները, մեկը մյուսի ետևից, նվաճվեցին Մակեդոնացու կողմից և 331 թվականին արդեն պարսկական տիրապետությունը Առաջավոր Ասիայում փոխարինվել էր հունա-մակեդոնական տիրապետությամբ։

Ստեղծվեց Ալեքսանդր Մակեդոնացու նույնքան լայնածա-

վալ կայսրությունը, որը տարածվում էր Հոնիական ծովի ափերից մինչև Փեննջաբ և Բալկաններից ու Սև Ծովի հարավային ափերից մինչև Եգիպտոս ու Կարմիր ծով: Այս կայսրությունը, սակայն, գոյություն ունեցավ շատ կարճ ժամանակ և այն սկսեց քայքայվել ու մասնատվել իր հիմնադրի մեռնելու առաջին իսկ օրից, նույն արագությամբ, ինչ ստեղծվել էր: Մակեդոնացի երիտասարդ աշխարհակալը ժամանակ չէր ունեցել իր հաջորդների մասին մտածելու, երբ վրա հասավ նրա հանկարծակի մահը Բաբելոնում (323 թ.), որից հետո, մինչև 301 թ., նրա զորապետների, այսպես կոչված դիադոխների, այսինքն՝ ժառանգորդների միջև սկսվեց երկարատև պատերազմների շարանը կայսրության ժառանգության շուրջ, որն ավարտվեց Իպսոսի ճակատամարտով ու նորաստեղծ տերության մասնատումով:

Ավելի քան երկու տասնամյակի այս ժամանակահատվածում մղված մի շարք պատերազմների հետևանքով Մակեդոնացու կայսրության սատրապությունները մի քանի անգամ բաժանվեցին ու վերաբաժանվեցին նրա զորահրամանատարների միջև ու ձեռքից ձեռք անցան: Առավել հայտնի են Բաբելոնում (323 թ.), Տրիպարադիսոսում (321 թ.) և Իպսոսի ճակատամարտից հետո (301 թ.) սատրապությունների տեղի ունեցած բաժանումները, որոնց մասին կան արժանահավատ տեղեկություններ մեզ հասած սկզբնաղբյուրներում: Տրիպարադիսոսում զորահրամանատարների միջև գոյացած համաձայնությամբ, կայսրության արևելյան սատրապությունները բաժին էին ընկնում Սելևկոս Նիկատորին: Բայց Սելևկյան տերության ապագա հիմնադիրը միայն քսան տարի անց, Իպսոսի վճռական ճակատամարտից հետո, որի ժամանակ սպանվեց Արևելքում միահեծան իշխանության ճգտող Անտիգոնոս Միականին, կարողացավ վերջնականապես հաստատվել իրեն բաժին ընկած երկրամասերում:

Քաղաքական ու սոցիալ-տնտեսական ցնցումներով հարուստ Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հետնորդների ժամանակաշրջանի պատմությունը լայնորեն արտացոլվել է ինչպես ժամանակակից, այնպես էլ հետագա պատմիչների երկերում: Դրանցում տրված է ոչ միայն հունամակեդոնական էքսպանսիայի, այլև այդ ընթացքում նվաճման առարկա դարձած երկրների պատմությունը: Այդ պատմիչների երկերում պահպանված տվյալները հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու նաև այդ ժամանակաշրջանի Հայաստանի պատմության մասին:

Արդ, ինչպիսի՞ն էր Հայաստանի քաղաքական դրությունը այս փոթորկալից տասնամյակների ընթացքում:

Ակադ. Հ.Հ. Մանանդյանը միանգամայն իրավացի կերպով նշում է, որ Մակեդոնացու մահից հետո, նրա զորահրամանատարների միջև բաժանված սատրապությունների մեզ հասած ցուցակներից «և ոչ մեկում չի հիշատակված Արմենիան՝ ոչ Մեծ Հայքը, ոչ էլ Փոքր Հայքը»[1]

Այս առիթով անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Դիոդորոսի համապատասխան վկայությունները. «Պերդիկկասը վերցնելով գերագույն հրամանատարությունը և խորհրդի նստելով մյուս հրամանատարների հետ, Լագոսի որդի Պտղոմեոսին տվեց Եգիպտոսը, Լաոմեդոն Միտիլենացուն՝ Սիրիան, Փիլոտասին՝ Կիլիկիան և Պիթոնին՝ Մեդիան, իսկ Եվմենեսին՝ Պափլագոնիան և Կապադովկիան և սրանց սահմանակից բոլոր երկրները, որոնցով Ալեքսանդրը, ժամանակի բացառման պատճառով, չկարողացավ անցնել Դարեհի դեմ պատերազմելիս. Անդիգոնոսին տվեց Պամֆյուլիան և Լյուկիան և մեծ կոչված Փռյուգիան. այնուհետև, Ասանդրոսին տվեց Կարիան, Մենանդրոսին՝ Լյուդիան, Լեոննատոսին՝ Հելլեսպոնտոսյան Փռյուգիան: ... Նույնպես որոշվեց Ասիայի մյուս սատրապություններին ձեռք չտալ, այլ դրանք թողնել նախկին կառավարիչների իշխանության տակ. նույնպես թույլ տվեց, որ Տաքսիլեսը և Պորոսը տեր մնան իրենց թագավորություններում, ինչպես կարգադրել էր դեռևս Ալեքսանդրը: Պիթոնին նա տվեց Տաքսիլեսի և մյուս թագավորների (տիրույթներին) սահմանակից սատրապությունը. իսկ ... Պարոպանիսադե երկիրը հանձնեց Օքսյուարտես Բակտրիացուն, որի դստեր՝ Հռոքսանեին ամուսնացել էր Ալեքսանդրը: Սիբյուրտիոսին տվեց Արաքոսիան և Կեդրոսիան, Ստասանոր Սոլիացուն՝ Արիան և Դրանգինեն, Փրատափեռնեսին՝ Պարթյուեան և Հյուրկանիան, Պևկեստեսին՝ Պերսիսը, Տլեպոլեմոսին՝ Կարմանիան, Ատրոպատեսին՝ Մեդիան, Արքոնին՝ Բաբելոնիան, Արկեսիլաոսին՝ Միջագետքը»[2]:

Այս ցուցակից հետևում է, որ Հայաստանը նվաճված չի եղել մակեդոնացիների կողմից: Այս տեսակետը ավելի հիմնավո-

(1) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 93:
(2) Diodor., XVIII, 3, 1-3: Համմ. Diodor., XVIII, 39, 5-7:

րելու համար, Հ.Հ. Մանանդյանը վկայակոչում է Միհրդատ VI Պոնտացուն վերագրված հետևյալ ճառը, որը պահպանված է Հուստինոսի մոտ:

«Ինքը, – ասում է իր ճառում Միհրդատը, – թագավոր է այնպիսի երկրների, որոնք ոչ միայն հավասար են Հռոմեական պետությանը, այլև կարող են դեմ հանդիման կանգնել նույնիսկ Մակեդոնական պետությանը: Իր հպատակ ժողովուրդներից և ոչ մեկը չի կրել օտար իշխանություն. Նրանք միշտ հնազանդվել են միայն իրենց տեղական թագավորներին: Եթե ցանկանում են, թող քննության առնեն Կապադովկիան կամ Պափլագոնիան, Պոնտոսը կամ Բյութինիան, նմանապես և Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը: Այդ ժողովուրդներից և ոչ մեկին ձեռք չէին տվել ոչ ինքը Ալեքսանդրը, որ նվաճել էր ամբողջ Ասիան, ոչ էլ որևէ մեկը նրա հաջորդներից կամ հետնորդներից»[3]:

Որ Միհրդատ Պոնտացու այս խօսքերը համապատասխանում էին պատմական իրականությանը, հետևում է նաև Ստրաբոնի մի հետաքրքիր վկայությունից այն մասին, թե Փոքր Հայքը, Ծոփքի նման, «միշտ ունեցել է իր բնիկ իշխաններին, որոնք մերթ Մեծ Հայքին են բարեկամ եղել, մերթ ինքնուրույն ...»[4]:

Աղբյուրներում կան նաև այնպիսի վկայություններ, որոնց հիման վրա կարելի էր, ընհակառակը, կարծել, որ Հայաստանը նվաճված եղել է Ալեքսանդրի կողմից: Այսպես, վկայություն է պահպանվել, թե Մակեդոնացին Միթրինեսին նշանակել է Արմենիայի սատրապ: Պլինիոս Ավագն, իր հերթին, հաղորդում է, թե մակեդոնացիները իրենց արշավանքի ժամանակ անցել են «նաև Արմենիայի, Իբերիայի, Ալբանիայի վրայով, հաղթահարելով Տավրոսից բացի, նաև Կովկասի լեռնաշղթան»[5]: Միթրինեսի մասին եղած վկայության մենք կանդրադառնանք քիչ հետո. ինչ վերաբերում է Պլինիոս Ավագի հաղորդման, ապա գիտության մեջ իրավացիորէն նշված է, որ Հռոմայեցի մատենագիրը «Կովկասը պարզապես չփոթում է Պամիրի (Պարոպամիս-Կովկասի) հետ»[6]:

(3) Justini Epitoma historiarium Philipicarum Pompeii Trogi, XXXVIII, 7.
(4) Strabo, XII 3, 28: Հմմտ նաև՝ Strabo, XI, 14, 15:
(5) C. Plinii Naturalis Historiae, IV, 10.
(6) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 502:

Գավգամելայի ճակատամարտում (331 թ.) հունա-մակեդոնական զորքերի տարած հաղթանակով վերջնականապես վճռվեց Աքեմենյանների երկուհարյուրամյա տերության բախտը: Այդ ճակատամարտը նոր էր ավարտվել, երբ պարսիկ Միթրինեսը, Փոքր Ասիայի պարսկական սատրապության կենտրոն Սարդես բերդաքաղաքի կայազորի նախկին պետը, Ալեքսանդր Մակեդոնացուց ստացավ Հայաստանի սատրապությունը որպես հատուցում այն բանի համար, որ նա, առանց մարտի, վերջինիս հանձնել էր Սարդես բերդաքաղաքը[7]: Բայց, քանի որ սկզբնաղբյուրները ոչինչ չեն հիշատակում Ալեքսանդրի կողմից Հայաստանի նվաճման մասին, ապա հիրավի պիտի ենթադրել, որ հիշյալ Միթրինեսի նշանակումը որպես Հայաստանի սատրապ, կրում էր զուտ ձևական բնույթ:

Մակեդոնացու այս ակտն, անկասկած, հետապնդում էր առավելապես պրոպագանդիստական-քաղաքական նպատակ, պարսկական սատրապներին և տեղական իշխաններին իր կողմը գրավելու համար: Այս առնչությամբ Ի. Դրոյզենը նկատել է տալիս, որ «Ալեքսանդրի կողմն անցնողների թիվն աճում է հատկապես այն ժամանակից, երբ Միթրինեսն ստացավ միշտ կարևոր համարվող Արմենիայի սատրապությունը»[8]:

Հ. Մանանդյանը նշելով, որ Միթրինեսի մասին անտիկ պատմագիրների երկերում պահպանված «այս անորոշ վկայությունը հիմք է ծառայել բանասերներին ու պատմագիրներին ենթադրելու, որ արդեն Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ արմենական երկրները ենթարկվել են մակեդոնական իշխանության և կառավարվում էին նրա կուսակալների ձեռքով: Գիտնականներից ոմանք էլ ... ենթադրում են, որ Միթրինեսը կուսակալ էր նշանակվել միայն Փոքր Հայքին», նկատում է, որ «այս ենթադրությունները պարզապես չհիմնավորված կռահումներ են, որ չեն կարող հաստատուն համարվել: Ավելի հավանական է գերմանական գիտնական Բելոխի կարծիքը, ... որ Միթրինեսին չէր հաջողվել, ըստ երևույթին, տիրել Հայաստանին, որովհետև 317 թվին, իբրև բուն Հայաստանի կառավարիչ, հիշատակվում է աղբյուրների մեջ Օրոնտաս երվանդը»[9]:

(7) Տես Arrian., III, 16,5; Curtius Rufus, V, 1, 44; Diodor., XVII, 64,6.
(8) И.Г. Дройзен, История эллинизма, т. I, М., 1890, էջ 191.
(9) Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 92-93:

Հ. Մանանդյանը անհավաստի է համարում նաև Կուրտիոս Ռուֆոսի (VI, 3, 3) մեջ բերած Ալեքսանդր Մակեդոնացուն վերագրված ճառը, որ իբր նա արտասանել է Պարթևաստանում և «որի մեջ Մերձավոր Արևելքի հյուսիսային չրջանները՝ Կապպադովկիան, Պափլագոնիան և Արմենիան՝ մառնացուց են արված որպես նվաճված երկրներ»[10]:

323 թ. Ալեքսանդրի մահից անմիջապես հետո, Բաբելոնում տեղի ունեցած նրա տերության առաջին բաժանման ժամանակ ոչինչ չէր հասել Մակեդոնացու հավատարիմ քարտուղար Եվմենես Կարդիացուն: Այդ իսկ պատճառով, զորահրամանատարների ժողովում որոշվեց նվաճել Կապպադովկիան, Պափլագոնիան և Սև Ծովի հարավ-արևմտյան ափերը և դրանք, որպես առանձին սատրապություն, հանձնել Եվմենեսին[11]:

Այս որոշումը իրագործելու նպատակով, 322 թ. մակեդոնացիները, արշավելով Կապպադովկիա, նվաճեցին այն և, գերի վերցնելով, մահապատժի ենթարկեցին երկրի տիրակալ, արդէն ծերունի Արիարաթեսին, որը նախկինում Աքեմենյանների սատրապն էր այնտեղ: Այժմ Կապպադովկիայում սատրապ հաստատվեց Եվմենեսը:

Այս իրադարձությունների ժամանակ էլ, որպես սատրապ, Արմենիա ուղարկվում է իրեն Աքիլլեսի տոհմից սերած համարող Նեոպտոլեմոսը[12]: Ի. Դրոյզենը ենթադրում է, որ Նեոպտոլեմոսը հաջորդել է Միթրինեսին, բայց ըստ երևույթին, նա իշխել է Հայաստանի միայն մի մասի վրա[13]: Մեր կարծիքով, սակայն, ավելի հիմնավոր է Հ.Հ. Մանանդյանի տեսակետը, թե Նեոպտոլեմոսը ուղարկված է եղել տիրելու Փոքր Հայքին, որը «ոչ թե առանձին սատրապություն էր, ... այլ արևելյան մասն էր Եվմենեսին տրված կապպադովկյան սատրապության, և Նեոպտոլեմոսին էին հանձնարարել գրավել այդ չրջանը»[14]:

Մեկ այլ առիթով Ի. Դրոյզենը այս Նեոպտոլեմոսին համարում է «Կապպադովկիային սահմանակից Հայաստանի սատրապ[15]»: Այս դեպքում եթե Կապպադովկիային սահմանակից Հայաստան ասելով հասկանանք Փոքր Հայքը, ապա միանգամայն պարզ է, որ երկու գիտնականների տեսակետները համընկնում են: Սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունից դժվար չէ եզրակացնել, որ Նեոպտոլեմոսը չէր կարող բուն Հայաստանի սատրապը եղած լինել:

Այսպես, Դիոդորոս Սիկիլիացին վկայում է, որ երբ մ.թ.ա. 322 թ. սկզբին մակեդոնական զորքերը արշավեցին Կապպադովկիա, երկրի ծերունազարդ թագավոր Արիարաթեսը նրանց դեմ դուրս եկավ 30 հազար հետևակով և 15 հազար հեծյալներով, սակայն պարտվելով, գերի ընկավ և մահապատիժ ենթարկվեց[16]: Նրա որդին, որը նույնպես կոչվում էր Արիարաթես, փախավ Հայաստան և որոշ ժամանակ հետո «վերցնելով արմենների Արդոատես թագավորից զորք, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերագրավեց իր հայրենի իշխանությունը»[17]:

Հ.Հ. Մանանդյանը միանգամայն իրավացի կերպով նկատում է, որ «Դիոդորոսի այս վկայության մեջ հիշատակված «արմենների թագավոր Արդոատեսը» համարվելու է, ամենայն հավանականությամբ, ոչ թե Փոքր Հայքի թագավոր, ինչպես ենթադրում են Ռեյնաքը և ուրիշները, այլ Մեծ Հայքի»[18]: Հիշյալ Արդոատեսը (Ἀρδοάτης)[19], որը առանց վախենալու հունա-

(10) Նույն տեղում:
(11) Plutarchi Eumenes, III, 3.
(12) Plut., Eumenes, IV.
(13) И.Г. Дройзен, История эллинизма, т. II, М., 1893, стр. 11/ примеч. 64:
(14) Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 94:

(15) И.Г. Дройзен, նշվ. աշխ., էջ 49:
(16) Diodor., XVIII, 10, 1–5:
(17) Նույն տեղում, 19, 4–5:
(18) Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 97–98:
(19) Զեռագրերի Ἀρδοάτης անունը բանասերները համարում են աղճատված: Թ. Ռեյնաքը (T. Reinach, Mitridate Eupator, Paris, 1890, էջ 31, ծան. 8) այն ուղղելով կարդում է Ἀρταουάσδης (Արտավազդ), իսկ Ց. Մարկվարտը (J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Heft I, Göttingen, 1896, էջ 27, ծան. 123) և Հ. Մանանդյանը (նշվ. աշխ., էջ 98) առաջարկում են այն կարդալ Ἀρτοάνδης (Ὀρόντης - Երուանդ), նրան իրավացիորեն համարելով Մեծ Հայքի թագավոր: Ի. Դրոյզենը և Գավգամելայում արմենական զորքերի հրամանատար՝ սատրապ Օրոնտեսին նույնացնում է Դիոդորոսի հիշատակած արմենների թագավոր Արդոատեսի հետ (И.Г. Дройзен, История эллинизма, т. II, М., 1893, стр. 11/ примеч. 64: 1893, էջ 311): Մեր կարծիքով, բացառված չէ, որ Ἀδοάτης գրությունը Ὀρόντης-ի աղավաղված ձևն է, եթե

մակեդոնացիների թշնամությունից, ապաստան էր չնորհել Արիարաթեսին, չէր կարող կապադովկիայի անմիջական հարևան Փոքր Հայքի թագավոր եղած լիներ։ Պարզ է, որ նա պիտի եղած լիներ ավելի հեռավոր և հզոր երկրի թագավոր և պետք է ունենար բավական պատկառելի զորք[20], որով կարող լիներ ապահովել իր մոտ ապաստանած Արիարաթեսի անվտանգությունը և հետագայում օգնել նրան վերանվաճելու իր հայրենի թագավորությունը։

Եվս մի փաստարկ հոգուտ այն բանի, որ Նեոպտոլեմոսը ուղարկվել էր որպես սատրապ միայն Փոքր Հայքի, պիտի համարել այն, որ Դիոդորոսը և Պոլիենոսը, նկարագրելով մի քանի տարի անց (317 թ.) տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, որպես բուն Հայաստանի սատրապ հիշատակում են Օրոնտեսին, որը հանդիսանում էր Պարսկաստանի Պերսիս նահանգի մակեդոնացի սատրապ Պևկեստոսի բարեկամը[21]։

Այս Օրոնտեսը, ամենայն հավանականությամբ, մեծ հեղինակություն էր վայելում մակեդոնացի զորապետների շրջանում, քանի որ կապադովկիայի սատրապ Եվմենեսը զորապետների ժողովի ժամանակ, վերջիններիս համոզելու նպատակով, նրանց ցույց է տալիս սատրական գրերով (συρίοις γράμμασι) գրված մի նամակ, որն ինքն իրը ստացել էր Արմենիայի սատրապ

նկատի առնենք մանավանդ, որ Դիոդորոսի այս հատվածը մեզ հասել է ոչ թե ուղղակի, այլ միջնորդաբար, բյուզանդական Փոտիոս պատրիարքի «Գրադարան»-ում։ Միաժամանակ, սակայն, դժվար կլիներ Գավամելայում արմենական զորքերի հրամանատար սատրապ Օրոնտեսին նույնացնել այս Արդոատեսի հետ, քանի որ առաջինը հիշատակվում է նույնացնել այս Արդոատեսի հետ, քանի որ առաջինը հիշատակվում է 331 թ., իսկ երկրորդը՝ 250-ական թթ. դեպքերի առնչությամբ (տես Beloch, Griechische Geschichte. Dritte Band, erste Abteilung, Strassburg, 1904, էջ 166-168; H. Bengston, Die Strategie der hellenistischen Zeit, II, München, 1944, էջ 77-78։ Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 98-99), դեպքեր, որոնք իրարից անջատված են ավելի քան 70 տարով։

(20) J. Sandalgian, Histoire documentaire de l'Arménie, II, Rome, 1907, էջ 409։

(21) Diodor., XIX, 23։ Polyaeni Strategematicon, IV, 8, 3.

Օրոնտեսից[22]։

Հունա-մակեդոնական էքսպանսիայի տարիների Հայաստանին վերաբերող սկզբնաղբյուրների տարաբնույթ վկայություններին ծանոթանալիս, աչքի է զարկում այն, որ անտիկ պատմագիրները հաճախ չփոթել են Փոքր Հայքը, Մոփքը և Մեծ Հայքը, դրանք բոլոր դեպքերում անվանելով «Արմենիա» ընդհանուր անունով։ Դա, մեր կարծիքով, պիտի դիտել իրրև հետևանք այն բանի, որ հելլեններին հայտնի «Արմենիա» սատրապությունը, որն ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը, Աքեմենյան տերության կործանումից հետո վերածվեց հայկական անկախ թագավորության, որտեղ գահակալեց Օրոնտես-Երվանդը իրրև թագավոր։ Հայկական անկախ պետության կազմավորումը կարևորագույն երևույթ էր հայ ժողովրդի պատմական զարգացման դարավոր ճանապարհին։ Այն արդյունք էր, մասամբ, երկրի բնականոն զարգացմանը խոչընդոտող Աքեմենյանների գերիշխանության տապալման, բայց առավել ևս՝ Հայաստանի հասարակության արդեն ներքին հասունացման։ Երևույթ, որն օրինաչափ էր և ընդհանուր առաջավոր Ասիայի համար, քանի որ այստեղ ևս նույն այդ ժամանակշրջանում ձևավորվում են մի շարք անկախ պետություններ[23]։

Երվանդունիների հայկական թագավորության էթնիկական հիմքը հայ ժողովուրդն էր, որի կազմավորման հազարամյա պատմաշրջանն արդեն իր ավարտին էր հասել։ Երվանդունիների պետության առաջացումը պատմագրության մեջ հիրավի դիտվում է որպես հայ ժողովրդի կազմավորման «ավարտված պրո-

(22) Diodor., XIX, 23. նույն Դիոդորոսը մեկ այլ առիթով խոսում է սատրեն գրերով (συρίοις γράμμασι) կատարված մի արձանագրության մասին։ Նա պատմում է, որ Բեհիստունյան ժայռի վրա (τό Βαγίστανον ὄρος) Շամիրամը պատրաստել տվեց իր քանդակը, որի տակ փորագրեց սատրերեն գրերով արված արձանագրություն (Diodor., II, 13, 102)։ Պարզ է, որ այստեղ խոսքը վերաբերում է Դարեհ Ա-ի Բեհիստունյան հայտնի արձանագրությանը (համմ. М.А. Дандамаев, Иран при первых Ахеменидах, էջ 18), և Դիոդորոսը սեպագրերը համարում է սատրերեն գրեր։ Այս առիթով հետաքրքիր է նշել, որ Մովսես Խորենացին ևս (Ա, ժգ) վանում պահպանված ուրարտական սեպագիր արձանագրությունները սխալմամբ վերագրում է Շամիրամին։ Այդ նշանակում է, որ արդեն վաղուց մոռացված սեպագրերը համարվում էին սատրական գրեր։

(23) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, էջ 503։

ցեսի քաղաքական ձևավորման մի նոր փուլ»։ Այդ պետության տնտեսական հիմքը երկրագործության, անասնապահության և արհեստագործության զարգացման համեմատաբար բարձր այն մակարդակն էր, որին հասել էր հայկական սատրապությունը և որի մասին վկայում են հնագիտական նորահայտ նյութերով հաստատվող Քսենոփոնի «Անաբասիսի» տվյալները։ Ինչ վերաբերում է այդ պետության տարածքային հիմքին, ապա այն, հիմնականում, դարձյալ համընկնում էր սատրապության սահմաններին։ Երվանդունիների հայկական պետությունն իր կազմավորման սկզբնական շրջանում ընդգրկում էր Մեծ Հայքը, Աղձնիքը, Մոփքը և Կոմմագենեն[24]։

Սակայն չուտով, ներքին (հայկական լեռնաշխարհի տարբեր մասերի տնտեսական անհավասարաչափ զարգացումը) և արտաքին (Սելևկյան թագավորների չդադարող ոտնձգությունները) անդարեներպատ հանգամանքների պատճառով, Երվանդունիների միասնական պետությունը տրոհվեց և III դարում առաջացան հայկական առանձին իշխանություններ Մեծ Հայքում, Մոփքում և Փոքր Հայքում, որոնց անջատ-անջատ գոյատևումը շարունակվեց մինչև մ.թ.ա. I դարի սկիզբը, մինչև հայկական միասնական թագավորության առաջացումը Տիգրան Բ-ի ժամանակ։

Այս երեք իշխանություններից ամենակարևորը, անշուշտ, և ամենաուժեղը պիտի որ Մեծ Հայքը լիներ, որը հետագայում դարձավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը և երկար ժամանակ, խուսանավելով երկու հզոր հակառակորդների՝ Հռոմի և Պարթև Արշակունիների միջև, հանդիսացավ այդ շրջանի քաղաքական կարևորագույն գործոններից մեկը։

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների, ինչպես նաև նրա մահից հետո նորաստեղծ կայսրության ասիական մեծագույն մասը ժառանգողների՝ Սելևկյանների պատմությունն ուսումնասիրողները հիրավի նշում են, որ արմենական վերոհիշյալ երեք իշխանությունները համեմատաբար անկախ են եղել քաղաքականապես և երբեք լիովին չեն ենթարկվել հունա-մակեդոնացիներին։

Ճիշտ է, Ստրաբոնը նշում է, որ «Արմենիային տիրել էին

(24) Նույն տեղում, էջ 507-508։

պարսիկները և նրանցից հետո մակեդոնացիները»[25], իսկ Ապպիանոսն էլ իր հերթին հաղորդում է, որ Սելևկոսը, «տիրել էր Միջագետքին, Արմենիային, Կապպադովկիային» և այլն[26], բայց պիտի ենթադրել, որ արմենական երկրները միայն ձևականորեն ընդունել էին Սելևկյան թագավորների գերիշխանությունը։

Այսպիսի ենթադրությունը հիմնված է մի շարք փաստերի վրա։ Բավարարվենք նշելով այդ փաստերից մի քանիսը միայն։ Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ երբ հունա-մակեդոնացիները նվաճեցին Կապպադովկիան, այդ երկրի թագաժառանգ Արիարաթեսը չի վարանում Հայաստան փախչելու և ռազմական օգնություն հայցելու հայոց Արդոատես թագավորից։ Այնուհետև, Մեմնոն Հերակլեացին ևս հաղորդում է, որ Բյութանիայում ծայր առած գահակալական կռիվների պատճառով, մահացած Նիկոմեդես թագավորի որդիներից Զիաելասը, մոտավորապես մ.թ.ա. 260 թվականին, ապաստան է գտնում արմենների թագավորի մոտ, որի անունը, դժբախտաբար, չի հիշատակում պատմագիրը[27]։ Նույնպիսի մի դեպք հիշատակում է նաև Պոլիենոսը։ Նա գրում է, որ Անտիոքոս Հիերաքսը, ապաստանելով իր գահ բարձրացած եղբոր՝ Սելևկոս Կալլինիկոս թագավորի դեմ (չուրջ 240 թ.), պարտվում է և Միջագետքի վրայով փախչում է Արմենիա, ապաստանելով Արսաբեսի (Ἀρσάβης = Արշա՞մ կամ Արշա՞կ) մոտ[28]։

Վերջապես, ինչպես մեկ այլ առնչությամբ նշել ենք մեր նախորդ ուսումնասիրություններից մեկում, «Հայաստանում քաղաքների առաջացման ընդհանուր պրոցեսի ուսումնասիրությունը առավել ևս մեզ համոզում է այն բանում, որ Հայաստանը չէր նվաճվել Սելևկյանների կողմից։ Հայաստանում չի հանդիպում և ոչ մի քաղաք, որը կառուցված լիներ Ալեքսանդր Մակեդոնացու կամ նրա հետնորդների կողմից, այն դեպքում, երբ նրանք ձգտում էին ծավալուն քաղաքաշինության միջոցով

(25) Strabo, XI, 14, 15 (c.531).

(26) Appian, Syr., 55.

(27) Memnonis Historiae Heracleae Ponti, Lipsiae, 1816, XXII. Այստեղ նշենք, որ պատմագրության մեջ փորձ չի արվել որոշելու Մեմնոնի հիշատակած արմենների թագավորի անունը։ Մեր կարծիքով, նա նույն Արդոատեսն է, որի մասին խոսք եղավ վերևում։

(28) Polyaen., 17.

իրենց համար սոցիալ-տնտեսական ամուր հենարան ստեղծել նվաճված երկրներում»[29]:

Միանգամայն իրավացի է Հ.Հ. Մանդյանը, երբ գրում է. «Պետք է ասել, որ Սելևկյանների իշխանությունը չէր կարողացել հիմնավորապես հաստատվել նաև արմենական այսրեփրատյան երկրներում: Նրանց գերիշխանությունն այս լեռնային ու դժվարամատչելի երկրում, ընդհանրապես, ավելի անվանական էր, քան իրական: Ճանաչելով Սելևկյան թագավորներին իբրև գերագույն պետ՝ Մեծ Հայքը, ըստ երևույթին նաև Մոփքը՝ պահպանել էին իրենց ներքին ինքնուրույնությունը և կառավարվում էին բնիկ իշխանների ձեռքով, որոնք սկզբնաղբյուրների մեջ անվանվում են երբեմն թագավորներ»[30]: Այսուհանդերձ, չի կարելի ժխտել Սելևկյան պետության ուժեղ ազդեցությունը նորաստեղծ հայկական թագավորությունների պատմական զարգացման վրա, քանի որ, այնուամենայնիվ, III դ. վերջին, Անտիոքոս Գ-ի արևելյան արշավանքի հետևանքով, Հայաստանը, թեև կարճ ժամանակով, հպատակվեց Սելևկյաններին[31]:

Սկզբնաղբյուրներում պահպանված ծայր աստիճան կցկտուր վկայությունների հիման վրա փորձենք, շատ ընդհանուր գծերով, ուրվանկարել Հայկական լեռնաշխարհում առաջացած վերոհիշյալ երեք իշխանությունների քաղաքական պատմությունը մինչև այն ժամանակը, երբ Տիգրան Բ-ին հաջողվեց առավելագույն չափով միավորել հայկական էթնիկական տարրերով բնակեցված հողերը:

Մենք նկատեցինք, որ Ալեքսանդր Մակեդոնացու դեպի Արևելք կատարած հաղթական արշավանքների անմիջական, մերձավորագույն հետևանքը Հայաստանի համար եղավ օտարերկրյա՝ Աքեմենյան Պարսկաստանի երկդարյա լծի տապալումը: Մյուս կողմից, սակայն, Ալեքսանդրի հունա-մակեդոնական զորքերը չհասան Հայաստան: Ուստի և երկիրը, թոթափելով օտար տիրապետությունը, մեխանիկորեն գտնվեց քաղաքական անկախ վիճակում: Կասկածից վեր է, որ Ալեքսանդրը փորձեց նվաճել Հայկական լեռնաշխարհը ևս, բայց այդ բանը նրան չհաջողվեց,

(29) Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 106:
(30) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 102:
(31) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 519:

քանի որ Ստրաբոնը վկայում է, թե լսելով Սպերի (Συσπιρίτις) ոսկու հանքերի մասին, «Ալեքսանդրը այնտեղ ուղարկեց Մենոնին զորքով, բայց սա խեղդամահ արվեց տեղացիների կողմից»[32]:

Այս հարցի շուրջ մեր պատկերացումները չի կարող փոխել Պլինիոս Ավագի այն հաղորդումը, որ իբր Ալեքսանդր Մակեդոնացին հաղթահարել է նաև Կովկասի լեռնաշղթան: Պարզ է, որ տվյալ դեպքում Պլինիոսը Կովկասը չփոթում է Պարոպամիս-Կովկասի (այժմ՝ Պամիր) հետ: Նույնը պիտի ասել նաև Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մեջ հանդիպող այն հաղորդման մասին, թե Ալեքսանդր Մակեդոնացին մի շարք ցեղերի (գարգարներ, կամիճիքներ, հեփթաղներ) գերեվարելով, բերում և բնակեցնում է Կովկասի մեծ լեռան շուրջը[33]:

Մենք դեռևս քիչ բան գիտենք մ.թ.ա. III դարի Փոքր Հայքի թեկուզ և քաղաքական պատմության մասին: Դեռևս Աքեմենյանների տիրապետության ժամանակ Փոքր Հայքը, հնագույն ժամանակներից հայկական ցեղերով բնակեցված այդ երկրամասը, որը Եփրատ գետով բաժանված էր Մեծ Հայքից, հավանաբար կազմելիս է եղել Մեծ Հայքից անջատ վարչական առանձին միավոր: Եզրահանգում, որը բխում է Կուրտիոս Ռուֆոսի մի վկայությունից: Գավգամելայի ճակատամարտը նկարագրելիս նա, խոսում է նաև հայերի մասնակցության մասին և Մեծ Հայքի կողքին հիշատակում է նաև Փոքր Հայքը[34]: Ուսումնասիրողներն այն կարծիքին են, որ Ռուֆոսի այս վկայությունն իր հաստատումը գտնում է Արրիանոսի այն հաղորդման մեջ, թե հայերի առաջնորդներն էին Օրոնտեսը և Միթրաուստեսը[35]. այստեղից էլ ենթադրում են, թե Օրոնտեսը եղել է Մեծ Հայքի

(32) Strabo, XI, 14, 9 (C.529).
(33) C. Plinii Naturalis Historias, VI, 10: Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ա, իե:
(34) Curtius Rufus, Historiae Alexandri Magni, Lipsiae, 1816, IV, 12.
(35) Arrian, III, 8,5.

կառավարիչը, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքի[36]։ Ջբացառելով այսպիսի ենթադրության հավանականությունը, մենք ուզում ենք այն միտքը արտահայտել, որ հիշյալ զորահրամանատարներից մեկը առաջնորդում էր հայկական յոթհազարանոց հեծելազորը, իսկ մյուսը՝ հայկական 40 հազարանոց հետևակը։

Փոքր Հայքը, դառնվելով կապադովկիայի հետ անմիջական հարևանության մեջ, շատ ավելի կանուխ ընդգրկվեց Ալեքսանդր Մակեդոնացու հաղորդների՝ դիադոխների շահագրգռությունների ոլորտի մեջ։ Մ.թ.ա. 322 թ., կապադովկիան նվաճելուց հետո, հունա-մակեդոնացիները փորձեցին տիրանալ նաև Փոքր Հայքին։ Այդ նպատակով Նեոպտոլեմոսը նույն թվականին մի զորամասով ուղարկվում է Փոքր Հայք, բայց հաջողություն չի ունենում։ Ի վերջո, Եվմենեսին հաջողվում է նվաճել այս երկրամասը։ Սակայն մեզ հասած կցկտուր տեղեկություններից կարելի է հետևցնել, թե մակեդոնացիների իշխանությունն այստեղ այնքան էլ հաստատուն չի եղել։ Բացառված չենք համարում, որ Աքեմենյան տերության վերացման վրա, օգտվելով մակեդոնացի զորահրամանատարների միջև ծագած երկարատև երկպառակություններից, Փոքր Հայքը իր հարևանների՝ կապադովկիայի և Պոնտոսի նման, մ.թ.ա. III դարում ձեռք էր բերել քաղաքական անկախություն։ Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ միանգամայն իրավացի է ակադ. Հ.Հ. Մանանդյանը, երբ գրում է. «Ի նկատի ունենալով, որ Փոքր Հայքը գտնվում էր կապադովկիայի ու Պոնտոսի միջև՝ կարելի է վստահորեն հետևցնել՝ որ տեղական թագավորությունների հաստատումից հետո այս երկրներում՝ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ինքնաբերաբար նաև Փոքր Հայքի քաղաքական ազատագրման և հետագա ինքնուրույն զարգացման համար»[37]։

Փոքր Հայքի քաղաքական պատմությանը վերաբերող առաջին հավաստի տեղեկության համար մենք պարտական ենք

(36) Վերջերս իր մի հոդվածում Լ.Փ. Շահինյանը փորձում է հիմնավորել հակառակը, թե՝ Օրոնտեսը Փոքր Հայքի կառավարիչն էր եղել, իսկ Միթրաուստեսը, որին Լ. Շահինյանը նույնացնում է Խորենացու մոտ հիշատակված Վահեի հետ, Մեծ Հայքի (Լ.Փ. Շահինյան, Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Վահեի մասին, ՊԲՀ, 1973, Նո 4, էջ 172–178)։

(37) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 99։

մ.թ.ա. II դարի հույն խոշորագույն մատենագիր Պոլիբիոսին։ Նրա հաղորդած տեղեկությունը վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ Հռոմը և նրա դաշնակից ու կամակատար Պերգամոնի թագավոր Եվմենես Բ–ը Մագնեսիայի ճակատամարտում (190 թ.) և դրան հետևած Ապամեայի հաշտության պայմանագրով (189 թ.) խորտակիչ հարված հասցրին Առաջավոր Ասիայի խոշորագույն հելլենիստական տերության, Սելևկյան թագավորության, որը մինչ այդ դարձել էր Հռոմի գլխավոր սխոյանը։ Դրանից հետո Սելևկյան թագավորները դադարեցին փոքրասիական գործերում որևէ չափով կարևոր դեր խաղալուց։ Մյուս կողմից, սակայն, դեռևս Արևմուտքում կարթագենի դեմ զբաղված Հռոմը չէր կարողացել հաստատուն ոտքերով կանգնել Փոքր Ասիայում և, ընդհանրապես, Արևելքում։Ստեղծված բարենպաստ իրադրությունից, բնականաբար, չտապեցին օգուտ քաղել Պերգամոնի, Բյութանիայի, Պոնտոսի, Հայաստանի և Կապադովկիայի տիրակալները և փորձեցին ընդարձակել իրենց տերության սահմանները հարևան երկրամասերի, առաջին հերթին, Սելևկյանների տիրույթների հաշվին։ Նրանց այսօրինակ ձգտումները չէին կարող փոխադարձ թշնամություն չառաջացնել փոքրասիական վերոհիշյալ պետությունների միջև։ Քաղաքական հակասությունների այս հողի վրա Փոքր Ասիայում առաջանում են երկու հակադիր կոալիցիա, որոնց միջև ի վերջո պատերազմը դառնում է անխուսափելի։ Պատերազմն սկսեց Պոնտոսի թագավոր Փառնակեսը (190–169 թթ.), դաշնակցելով Միհրդատի հետ, որը Պոլիբիոսի մոտ անվանված է σατράπης τῆς Ἀρμενίας (Արմենիայի սատրապ)։ Այստեղ, անկասկած, խոսքը վերաբերում էՓոքր Հայքին, քանի որ Պոլիբիոսի հետագա շարադրանքի ընթացքում հիշատակվում է Ἀρταξίας ὁ τῆς πλείστης Ἀρμενίας ἄρχων (Արտաքսիասը՝ Արմենիայի մեծագույն մասի տիրակալը)։ Փառնակես Պոնտացին և Փոքր Հայքի սատրապ Միհրդատը փորձում են գրավել իրենց հարևանների՝ կապադովկիայի և Պափլագոնիայի հողերը, բայց հաջողություն չեն ունենում։ Մի կողմից միացյալ ուժերով նրանց դեմ դուրս են գալիս կապադովկիայի Արիարաթես Դ և Պերգամոնի Եվմենես Բ թագավորները, մյուս կողմից՝ Հռոմը, չցանկալանալով կոալիցիաներից մեկի կամ մյուսի ուժեղացումը, միջամտում է գործին և ստիպում կողմերին դադարեցնել սկսված պատերազմը և կնքել հաշտություն (179 թ.), որին մասնակից են դարձվում

նաև Փոքր Հայքի սատրապ Միհրդատը և Մեծ Հայքի տիրակալ Արտաշեսը: Ահա թե այդ մասին ինչ ենք կարդում Պոլիբիոսի մոտ.

«Հանկարծակի և դաժան հարձակման ենթարկված լինելով, Փառնակեսը պատրաստ էր ընդունելու ամեն մի առաջարկ. ուստի նա դեսպաններ ուղարկեց Եվմենեսի ու Արիարաթեսի մոտ: Եվմենեսն ու Արիարաթեսը լսելով նրանց, իրենք ևս իսկույն իրենց դեսպաններին ուղարկեցին Փառնակեսի մոտ, և այս բանը երկուստեք բազմիցս կրկնվելով, հաշտություն կնքվեց հետևյալ պայմաններով. թող մշտական խաղաղություն լինի մի կողմից՝ Եվմենեսի, Պրուսիասի (Բյութինիայի թագավոր – Ս.Կ.) և Արիարաթեսի, մյուս կողմից՝ Փառնակեսի և Միհրդատի միջև: Փառնակեսը և ոչ մի ձևով չպետք է արշավի Գալատիայի վրա և գալատների հետ նախկինում նրա կնքած բոլոր պայմանագրերը պետք է համարվեն անվավեր: Նմանապես նա պետք է հեռանա Պոփլագոնիայից, այնտեղից գաղթեցրած բնակիչներին ետ վերադարձնելով: Նրանց հետ միասին նա պետք է ետ վերադարձնի նաև զենքերը, նետողական մեքենաները և ռազմական այլ գործիքներ: Նա պետք է ետ վերադարձնի Արիարաթեսին՝ նրանից գրաված հողերը կառույցներով հանդերձ և պատանդներին...: Որոշվեց նաև, որ Փառնակեսը պետք է առանց փրկագնի վերադարձնի ռազմագերիներին և փախստականներին: Բացի այն փոքրից ու գանձերից, որ հափշտակել էր (Պափլագոնիայի թագավոր) Մորզիոսից և Արիարաթեսից, նա պետք է հիշյալ թագավորներին վճարի նաև 900 տաղանդ, 300 տաղանդ էլ Եվմենեսին իբրև պատերազմական ծախսերի հատուցում: Որոշվեց նաև, որ Արմենիայի սատրապ Միհրդատը պետք է վճարի 300 տաղանդ, որովհետև սա, դրժելով Եվմենեսի հետ կնքած դաշինքը, պատերազմեց Արիարաթեսի դեմ: Այդ դաշինքին մասնակից դարձվեցին Ասիայի իշխաններից (δυναστῶν) Արտաշեսը, Արմենիայի մեծագույն մասի տիրակալը և Ակուսիլոքոսը ...»[38]:

Անդրադառնալով այս հատվածում հիշված դեպքերին, Հ.Հ. Մանանդյանը նկատում է, որ «Պոլիբիոսի մոտ Փոքր Հայքի այս Միհրդատը, ինչպես տեսնում ենք, անվանված է սատրապ, այ-

(38) Polyb., XXVI, 6՝ 1-12.

սինքն՝ կուսակալ: Այս վկայությունից կարելի է թերևս հետևցնել, որ Միհրդատը 180 թվականի պատերազմի ժամանակ չէ եղել անկախ թագավոր, այլ հպատակված է եղել, հավանորեն, Պոնտոսի կամ գուցե մի այլ հարևան թագավորի գերագույն իշխանությանը»[39]: Մեր կարծիքով, այս Միհրդատը չէր կարող Պոնտոսի Փառնակես թագավորին հպատակ սատրապներից եղած լինել, եթե ի նկատի ունենանք այն, որ Պոլիբիոսի վերոհիշյալ վկայության մեջ նա, որպես առանձին կողմ, հիշատակված է Փառնակեսի հետ միասին: Առավել հավանական է, որ նա պետք է ենթակա լիներ Պերգամոնի Եվմենես թագավորի օրերիմ Թշնամի Սելևկյանների գերագույն իշխանությանը: Նա պատերազմին մասնակցել է, ըստ երևույթին, Սելևկյան թագավորի անմիջական թելադրանքով և օժանդակությամբ:

Վերջերս, ոչ առանց հիմքի, նույնիսկ այն տեսակետն է հայտնվել, թե այս Միհրդատը Անտիոքոս Գ-ի քրոջ՝ Անտիոքիսի որդին էր, որի մասին նույն Պոլիբիոսը (VIII, 25) խոսում է Մոփքի կապակցությամբ. սրա հայրը, հավանաբար, երիտասարդ էր, ուստի և դեռ մոտիկ անցյալում Սելևկյան արքունիքը նրան հարմար թեկնածու էր համարում Մոփքի հայկական թագավորության գահի համար[40]:

Միհրդատի հպատակությունը Սելևկյաններին (կամ մեկ ուրիշ թագավորի) իրրև սատրապի, կրում էր համարյա անվանական բնույթ, որքանով որ Փոքր Հայքի կուսակալներն իրենց հերթին տիրապետում էին հարևան մի շարք ցեղերի վրա և հանդիսանում էին տեղական իշխանավորներ: Այսպիսի եզրակացությունն անմիջականորեն բխում է Ստրաբոնի հետևյալ ուշագրավ հաղորդումից. «Փոքր Հայքը բավականին բարեբեր երկիր է: Ինչպես Մոփքում, այստեղ ևս իշխել են բնիկ դինաստներ, որոնք մյուս հայերին մերթ բարեկամ էին, մերթ նրանցից անկախ: Նրանց տիրապետության տակ էին նաև տիրարեները և խաղայները, այնպես որ նրանց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապեզունտ»[41]:

Ինչքան մեզ հայտնի է, անտիկ հեղինակներից առաջինը Ստրաբոնն է, որ իր «Աշխարհագրության» մեջ տարբեր առիթ-

(39) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 123, ծան. 1:
(40) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 522:
(41) Strabo, XII, 3, 28 (C. 555).

ներով խոսում է առանձին-առանձին հայկական երեք իշխանությունների՝ Ծոփքի (Σωφηνή), Մեծ Հայքի և Փոքր Հայքի մասին, և առաջին անգամ օգտագործում է Փոքր Հայք (Μικρὰ Ἀρμενία) արտահայտությունը։ Սակայն ցավոք պիտի նշել, որ Փոքր Հայքի մասին հուշն աշխարհագետի հաղորդած վկայությունները գերազանցապես վերաբերում են իր իսկ հեղինակի ապրած ժամանակահատվածին և անմիջապես դրան նախորդած տասնամյակներին։ Այդ իսկ պատճառով դրանք համարյա ոչինչ չեն տալիս մեր ուսումնասիրած շրջանում այս երկրի քաղաքական պատմությունը չորագրելու համար։ Այս տեսակետից միակ արժեքավոր տեղեկությունը մնում է դարձյալ Պոլիբիոսի վերոհիշյալ հատվածը, որի հիման վրա կարելի է եզրակացնել, թե Փոքր Հայքի տիրակալները ձգտել են, օգտվելով հարևան երկրների՝ Պոնտոսի ու Կապադովկիայի թագավորների մշտական հակամարտություններից, պահպանել իրենց քաղաքական ինքնուրույնությունը։ Մ.թ.ա. II դարի վերջին Փոքր Հայքը դադարեց գոյություն ունենալուց որպես ինքնուրույն պետություն այն բանից հետո, երբ Միհրդատ Զ Պոնտացին, օգտվելով իր համար ստեղծված միջազգային բարենպաստ պայմաններից, այն միացրեց իր թագավորությանը (չուրջ 115 թ.)։ Իսկ մ.թ.ա. 66 թվականին հռոմեական զորավար Պոմպեոսը, Տիգրան Բ-ին և Միհրդատ Պոնտացուն հաղթելուց հետո, Փոքր Հայքը վերածեց Հռոմին ենթակա իշխանության, այն հանձնելով Գալատիայի թագավոր Դեյոտարոսին։ Պատմական հանգամանքների բերումով, հայկական ցեղերով բնակեցված այս երկիրը չմտավ հայկական միացյալ թագավորության կազմի մեջ։

* * *

Հայկական բարձրավանդակի մեկ ուրիշ՝ հարավ-արևմտյան ծայրամասում ևս, որը հունական աղբյուրներից հայտնի է (Σωφηνή) (Սոփենե), իսկ հայ մատենագիրներու մոտ՝ Ծոփք (Ծոփաց աշխարհ) անունով, ամենաուշը մ.թ.ա. III դարի կեսերին, առաջացել էր ոչ մեծ հայկական թագավորություն։

Նորագույն ուսումնասիրությունները պարզել են, որ Երվանդունիների հայկական թագավորությունից մ.թ.ա. III դարի 60-ական թվականներին անջատվում են նրա արևմտյան մարզերից կոմմագենեն ու Ծոփքը, կազմելով առանձին մի պետու-

թյուն, որտեղ թագավորում են նույնպես Երվանդունի տոհմի ներկայացուցիչները[42]։ Պատմական անժխտելի այդ փաստի լավագույն վկայություններն են Անտիոքոս Ա. Կոմմագենացու՝ Նեմրուդ լեռան հունարեն արձանագրությունները[43]. դրանք որոշակի տվյալներ են հաղորդում նաև Երվանդունի թագավորների հերթականության մասին[44]։ Ծոփք-կոմմագենեի այդ միացյալ թագավորությունից, իր հերթին, չուտով անջատվում է կոմմագենեն, ըստ երևույթին ենթարկվելով Սելեվկյաններին, և այդ պետության կազմում մնում է միայն Ծոփքը։ Այս անջատումը, թերևս, տեղի է ունեցել Ծոփք-կոմմագենեի Արշամ (Ἀρσάμης) թագավորի մահից հետո, չուրջ 220 թ.[45]։

Ծովաց աշխարհը «գտնվում էր Եփրատ գետի ձախ ափին և պարունակում էր իր մեջ վերին Տիգրիսի և ստորին Արածանիի վրայ գտնվող երկրամասերը»[46]։ Սկզբնաղբյուրներում խոսնակիսներ են Ծոփքի մասին մեզ հասած, առանց այն էլ չափազանց աղքատիկ, տեղեկությունները։ Հ.Հ. Մանանդյանն, անշուշտ, իրավացի է նկատելով, որ Արմենիայի մասին «երրորդ դարից սկսած (մեր թվ. առաջ) աղբյուրների վկայությունները վերաբերում են ... բացի Փոքր Հայքից ու Մեծ Հայքից, նաև Ծոփքին»[47]։

Ինչպես հետևում է աղբյուրների ուսումնասիրությունից, Ծոփքում նույնպես, Հայկական լեռնաշխարհի մյուս հատվածների նման, իշխանությունը գտնվել է տեղական իշխանների ձեռքին, որոնք միայն ձևականորեն են ճանաչել Սելևկյան թագավորների գերիշխանությունը։ Նրանց հպատակությունը Սելևկյաններին, հավանաբար, արտահայտվում էր տարեկան որոշ հարկ վճարելու և պատերազմական գործողությունների ժամանակ օժանդակ զորքեր տրամադրելու մեջ։ Սելևկյանների նկատմամբ

(42) Г.А. Тирацян, Страна Коммагена и Армения, *Տեղ ՀԳԱՀԳ*, 1956, Նո 3։ *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, Երևան, 1971, էջ 510-515։

(43) Humann und O, Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890.

(44) Г.А. Тирацян, *Նույն տեղում*։ Ժ.Գ. Էլչիբեկյան, Երվանդունիների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1971, Նո 2, էջ 100-110։ *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, Երևան, 1971, էջ 510-513։

(45) *Նույն տեղում*։

(46) Հ.Հ. Մանանդյան, *Քննական տեսություն ...*, հ. Ա, էջ 103։

(47) *Նույն տեղում*։

հպատակության նույնպիսի հարաբերություններ պետք է որ ունեցած լինեին նաև հայկական մյուս երկու իշխանությունները՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը։

Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության ասիական տիրույթների մեծագույն մասը ժառանգած Սելևկյանների թագավորությունը մ.թ.ա. III դ. կեսերին ապրում էր քաղաքական որոշակի ճգնաժամ, որն, ի դեպ, շարունակվեց մինչև այդ տերության վերջնական անկումը։ Իրենց տերության արևելյան մարզերում Սելևկյանները, իրենց պետության կազմավորման սկիզբից ևեթ, տարածքային նշանակալից կորուստներ ունեցան։ Այսպես, շուրջ 250 թվականին, անջատվելով, նրանց տիրապետությունից դուրս եկավ Բակտրիան, որտեղ մակեդոնացի փոխարքա Դիոդոտոսը իրեն հայտարարեց անկախ թագավոր։ Նույն ժամանակ, Պարթևաստանում ապստամբել էին պարթևական ցեղերը ապարն թափառական ցեղի առաջնորդ Արշակի գլխավորությամբ։ Սրանք՝ պարտության մատնելով Սելևկոս Բ Կալլինիկոսի զորքերին, 248/7 թվականին հիմք դրեցին պարթև Արշակունիների հզոր թագավորությանը, որը հետագա դարերում կարևոր դեր խաղաց Մերձավոր Արևելքի երկրների, այդ թվում նաև Հայաստանի, քաղաքական կյանքում։ Մինչև այդ, արդեն Սելևկյանները կորցրել էին իրենց փոքր-ասիական տիրույթները՝ Բյութանիան, Պերգամոնը, Պոնտոսը և Կապադովկիան, որտեղ կազմվել էին առանձին թագավորություններ, իսկ Փռյուգիայում հաստատվել էին Եվրոպայից Դարդանելի նեղուցների վրայով Փոքր Ասիա անցած գալլական ցեղերը՝ գալատները և հիմնել Գալատիայի թագավորությունը։ Այնուհետև՝ շուրջ 240 թվականին, Սելևկյանների արքունիքում ծայր է առնում գահակալական կռիվ մահացած Անտիոքոս Բ-ի երկու որդիների՝ արդեն թագավոր հռչակված Սելևկոս Բ Կալլինիկոսի և վերջինիս դեմ ապստամբած Անտիոքոս Հիերաքսի միջև։ Այս վերջինս էլ, ինչպես հաղորդում է Պոլիենոսը, ճակատամարտում պարտություն կրելուց հետո, Միջագետքի վրայով անցնում է Արմենիա (հավանաբար Մոփք) և ապաստան գտնում թագավոր Արշամի (Ἀρσάβης) մոտ[48]։

Ամենայն հավանականությամբ, այդ նույն տարիներին է, որ օգտվելով Սելևկյանների թագավորության մեջ հետզհետե

(48) Polyaen., IV, 17.

խորացող քաղաքական ճգնաժամից, վերոհիշյալ Արշամը, որը մինչ այդ հանդիսանում էր Մոփք-Կոմմագենեի տիրակալ, հրաժարվում է Սելևկյանների հպատակությունից և իրեն հայտարարում է անկախ թագավոր։ Կարևորագույն այդ դեպքերի արտացոլումը մենք տեսնում ենք այն փաստի մեջ, որ հիշյալ Արշամը հատել է դրամ՝ «թագավորի Արշամի» (Βασιλέως Ἀρσάμου) վերտառությամբ[49]։ Հավանաբար, նույն այս Արշամն է, որ հելլենիստական մյուս թագավորների օրինակին հետևելով, իր համար կառուցել է թագավորանիստ Արշամաշատ (Ἀρσαμόσατα, Arsamosata)[50] քաղաքը։ Պոլիբիոսի հաղորդման համաձայն, Արշամի հաջորդ Քսերքսեսը (Շավարշ?) նույնպես համարվել է թագավոր, քանի որ հելլեն մատենագիրը, խոսելով այդ մասին, օգտագործում է «Քսերքսեսի թագավորության ժամանակ» (βασιλεύοντος Ξέρξου) արտահայտությունը։ Պոլիբիոսի այս հաղորդման բացառիկ չահեկանությունից ելնելով, անհրաժեշտ ենք համարում այն թարգմանաբար մեջ բերել ամբողջությամբ, քանի որ այն որոշ չափով լույս է սփռում Մոփքի քաղաքական պատմության վրա։

«Քսերքսեսի թագավորության ժամանակ, — գրում է Պոլիբիոսը, — Արմոսատա քաղաքում, որը գտնվում է այսպես կոչված Գեղեցիկ դաշտում Եփրատի և Տիգրիսի միջև, Անտիոքոս թագավորը քաղաքը պաշարելով վերցնելու մտադրությամբ բանակել էր նրա մոտ։ Տեսնելով (Անտիոքոս) թագավորի պատրաստությունները, Քսերքսեսը նախ փորձեց փախուստի միջոցով փրկվել, բայց քիչ ժամանակ անց նա զղջաց, վախենալով, որ մայրաքաղաքը թշնամու ձեռքն ընկնելու դեպքում ինքը կարող է կորցնել ամբողջ թագավորությունը։ Ուստի, դեսպաններ ուղարկելով Անտիոքոսի մոտ, հայտնեց, որ ցանկանում է բանակցության մեջ մտնել նրա հետ։ Անտիոքոսի հավատարիմ ընկերները խորհուրդ չէին տալիս թագավորին ձեռքից բաց թողնել պատանուն, այլ համոզում էին, որ քաղաքը գրավելով, իշխանությունը հանձնի Միհրդատին, որը նրա քեռորդին էր։ Բայց

(49) M. Ernest Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890, p. CXCIII.

(50) Արշամաշատ քաղաքի մասին տես՝ Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 100-111։

թագավորը չլսեց նրանցից ոչ մեկին, իր մոտ հրավիրեց պատանուն, հաշտվեց նրա հետ և նույնիսկ զիջեց նրան հարկի մեծագույն մասը, որը պարտավոր էր իրեն վճարել (Քսերքսեսի) հայրը։ Այնուհետև, ստանալով Քսերքսեսից 300 տաղանդ և հազար ձի և հազար ջորի լծասարքով, նա վերադարձրեց նրան ամբողջ իշխանությունը և նրան ամուսնացրեց իր Անտիոքիա քրոջ հետ»[51]։

Ինչպես դժվար չէ նկատել, Պոլիբիոսի այս հաղորդումը վերաբերվում է Անտիոքոս Գ-ի (223–187 թթ.) արևելյան արշավանքի ժամանակին, որի անմիջական նպատակն էր՝ վերականգնել Արևելքում Սելևկյանների խախտված հեղինակությունը։ Պոլիբիոսի վկայությունից ավելի քան պարզորոշ երևում է, որ Մոփքի թագավոր Քսերքսեսի նախորդը՝ Արշամը, հրաժարվել էր Սելևկյաններին տուրք վճարելուց, նշանակում է՝ դուրս էր եկել նրանց գերիշխանության տակից։ Ուստի և Անտիոքոս Գ-ը ստիպված է լինում մեծ զորքով արշավելու Մոփք և կրկին իրեն հպատակեցնելու այդ երկիրը[52]։

Անտիոքոսի այս արշավանքը Սելևկյանների համար ունեցավ բավականին բարեհաջող վախճան։ Հետևաբար, բացառված չէ, որ հենց այդ ժամանակ էլ Սելևկյան թագավորին հաջողվեց ժամանակավորապես իրեն ենթարկել Հայկական լեռնաշխարհի մի զգալի հատվածը և այն բաժանելով երկու մասի, դրանցից մեկի, Մոփքի վրա որպես ստրատեգոս (στρατηγός), այսինքն՝ ռազմավարչական իշխանությամբ օժտված կառավարիչ, կարգեց Զարեհին (Ζαριάδρις – Զարիադրիս) և մյուսի՝ Մեծ Հայքի վրա՝ Արտաշեսին (Ἀρταξίας – Արտաքսիաս)։ Այս երկու կառավարիչները էլ, հավանաբար, հանդիսանում էին տեղական իշխաններ և Անտիոքոսը իր այս ակտով սոսկ հաստատում էր իրերի արդեն իսկ ստեղծված դրությունը։

Պատմելով այս դեպքերի մասին, լավատեղյակ Ստրաբոնը վկայում է, որ «Հայաստանին նախ տիրեցին պարսիկները, հետո մակեդոնացիները (Սելևկյանները – Մ.Կ.), որոնք նվաճել էին

(51) (Polyb., VIII, 25, 1–6.

(52) Այս նույն դեպքերի մասին հիշատակում է նաև մ.թ. VI դարի բյուզանդական պատմիչ Հովհաննես Անտիոքացին, որը հնագույն աղբյուրների հիման վրա գրել է տիեզերական պատմություն մինչև իր օրերը. այն մեզ հասել է հատվածաբար (տես Joh. Antioch., frag. 53, հրատ. K. Müller, Fragmenta historicorum graecorum, IV S. 557.

Ասորիքը և Մեդիան։ (Հայաստանում) վերջին իշխողն էր Օրոնտեսը, չառավիղը յոթը պարսիկներից մեկի՝ Հյուդարնեսի։ Այնուհետև երկիրը բաժանվեց երկու մասի՝ հռոմայեցիների դեմ պատերազմ մղած Անտիոքոս Մեծի ստրատեգոսների՝ Արտաքսիասի և Զարիադրիսի կողմից և իշխում էին սրանք թագավորի հանձնարարությամբ[53]։

Հպատակության այս դրությունը, սակայն, երկար չի տևում։ Արմենական այս երկու իշխանները, օգտվելով այն հանգամանքից, որ Անտիոքոս Մեծը 190 թվականին Մագնեսիայի վճռական ճակատամարտում ծանր պարտություն կրեց հռոմայեցիներից, իրենց հայտարարեցին անկախ և վերականգնեցին՝ մեկը Մոփքի, մյուսը Մեծ Հայքի թագավորությունը։ Ամենայն հավանականությամբ, Զարեհն ու Արտաշեսը իրար բարեկամ և դաշնակից են եղել և միասնական ուժերով նրանց աստիճանաբար հաջողվել է ընդարձակել իրենց թագավորության սահմանները, քանի որ Ստրաբոնը, խոսելով նրանց նվաճումների մասին, չի առանձնացնում, այլ միացնում է դրանք և դիտում որպես միասնական մի երևույթ։ «Պատմում են, թե, – գրում է Ստրաբոնը, – Արմենիան, որը նախապես փոքր էր, ածեց Արտաքսիասի և Զարիադրիսի ձեռքով, որոնք նախկինում Անտիոքոս Մեծի ստրատեգոսներն էին, իսկ հետագայում, նրա պարտությունից հետո, թագավորեցին սա՝ Մոփքի, Ակիսենեսի և Օղոմանտիսի[54] և մի քանի այլ գավառների վրա, նա էլ՝ Արտաշատի չրջակայքին։ Երկուսն էլ ածեցին, չրջակա ազգերից հողեր նվաճելով։ Մարերից՝ կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեզան, Իբերներից՝ Պարիադրես լեռան ստորոտները և Խորզենեն և Գոգարենեն, որ ընկած է Կուրի մյուս կողմը, Խալիբներից ու Մոսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք Փոքր Հայքի սահմանակից են կամ նույնիսկ նրա մասն են կազմում, կատաոններից Ակիլիսենեն

(53) Strabo, XI, 14, 15 (C. 531).

(54) Հ. Աճառյանը (Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմի, Վենետիկ, 1912, էջ 19) գտնում է, որ Acisene = Հանձիթ։ Ակադ. Հր. Աճառյանը առաջարկում է Ἀκισυνῆς ուղղել Ἀνθισυνῆς իսկ Ὀδομαντίδος ուղղել Ὀρομανδίτιδος, վկայակոչելով Պտղոմեոս Կլավդիոսին, որը Հայաստանի գավառներից մեկը կոչում է Ὀρόμανδος (տես՝ Օտար աղբյուրները հայերի մասին. Ստրաբոն. քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 57)։

և Անտիտավրոսի շրջանը, Ասորիներից՝ Տամոնիտիսը[55], այնպես որ բոլորը միալեզու դարձան»[56]: Ստրաբոնի այս վկայությունը պարզ կերպով ցույց է տալիս նաև այն, որ դեռևս նախորդ դարերում սկսած հայկական էթնիկական տարրերի համախմբման և հայ ժողովրդի կազմավորման պատմական պրոցեսը Արտաշեսի և Զարեհի ժամանակ թևակոխել էր իր եռուն շրջանը և հանգել վերջնական ավարտին:

Ա. Ի. Բոլտունովայի կարծիքով, չի կարելի հայկական հողերի միավորումը վերագրել միայն Արտաշեսին ու Զարեհին: «Չի կարելի վստահ լինել, – գրում է նա, – որ Ստրաբոնի թվարկած բոլոր մարզերը ... միավորված լինեին Արտաքսիասի և Զարիադրիսի օրով: Ըստ երևույթին, այդ մարզերի մի մասի միացումը պետք է վերագրել նրանց հետնորդներին»[57]: Դժվար է, սակայն, համաձայնվել հեղինակի այս տեսակետի հետ, քանի որ մեզ հասած սկզբնաղբյուրներում ոչ մի ակնարկ չկա այդ մասին: Ընդհակառակը, Ստրաբոնի ամբողջ պատմածը Արտաքսիասի մասին հաստատում է Արտաշեսի շուրջ ստեղծված հայկական ավանդության տվյալներով, որոնք պահպանվել են Մովսես Խորենացու մատյանում: Պատմահոր մոտ Արտաշեսը պատկերված է որպես մեծ աշխարհակալ («Վկայությունք տիեզերակալութեանն Արտաշիսի ...»)[58]: Դրանից բացի, միայն Արտաշեսի ժամանակ միջազգային քաղաքական իրադրությունը Մերձավոր

(55) Ն. Ադոնցը իրավացի կերպով մերժում է Ταρωνῖτις (Տարոն) ընթերցումը. «Քսենոփոնի նկարագրությունից երևում է, որ այս շրջանը հայերի ձեռքին էր արդեն հույների նահանջի ժամանակ 400 թ.: Ավելի ճիշտ է կարդալ Ταμωῖτις = Տմորիք,» (Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, էջ 395, ծան. 2): Նման կարծիքի են եղել նաև Վ. Տոմաշեկը (Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, թարգմ. Հ.Բ. Պիեզիկճյանի, Վիեննա, 1896, էջ 11-12) և Յ. Մարկվարտը (J. Markwart, Eranšahr, էջ 170) և Հ. Աստուրյանը (տես Հ. Աստուրյան, նշվ. աշխ., էջ 20): Սակայն մեզ ավելի հավանական է թվում Ս.Տ. Երեմյանի ենթադրությունը, թե դա պետք է լինի Ταμωνῖτις = Թման, Կորդվաց աշխարհում (Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 53):

(56) Strabo, XI, 14, 5 (C. 528):

(57) А.И. Болтунова, Греческие надписи Армавира, «Արմֆանի տեղեկագիր», 1942, Նո 1-2, էջ 49:

(58) Մովսես Խորենացի, Բ, ժա-ժգ:

Արևելքում եղել է առանձնապես բարենպաստ հայկական ցեղերով բնակեցված երկրամասերի միավորման համար:

Հայկական ցեղերով բնակեցված մարզերի միավորումը մեկ տիրակալի իշխանության տակ այդ ժամանակաշրջանում առավել ևս նպաստում էր տնտեսական և մշակութային կապերի ամրապնդմանը երկրի ներսում, իսկ քաղաքական միավորումն էլ իր հերթին արագացնում էր հայկական էթնիկական տարրերի կոնսոլիդացումը: Այս տեսանկյունից նայելով, Ստրաբոնի վերոհիշյալ վկայության մեջ մեզ համար առանձնապես արժեքավոր է նրա այն հաղորդումը, թե Արտաշեսի և Զարեհի նվաճումներից հետո այդ երկրները «բոլորը միալեզու դարձան» (ὥστε πάντας ὁμογλώττους εἶναι):

Հատկանշական է, որ այսպիսի ընդհանրացնող բնորոշման մենք չենք հանդիպում ոչ մեկ ուրիշ երկրի մասին ոչ իր՝ Ստրաբոնի, ոչ էլ մեկ այլ հեղինակի մոտ:

Որպեսզի ճիշտ հասկանանք, թե հույն աշխարհագրագետի մոտ ի՞նչ առումով է օգտագործված մեզ համար բացառիկ կարևորություն ունեցող «միալեզու դարձան» արտահայտությունը, տիպված ենք նորից դիմելու հենց իրեն՝ Ստրաբոնին: Խոսելով Հայաստանին հարևան Աղվանքում ապրող 26 ցեղերի մասին, որոնցից ամեն մեկն ուներ իր լեզուն, նա չի օգտագործում «ցեղ» կամ «ժողովուրդ» և կամ «թագավորություն» նշանակող որևէ բնորոշում, այլ ուղղակի գրում է. «Նախապես ամեն մի լեզուն ուներ իր թագավորը, իսկ լեզուները 26 էին»[59]: Կասկածից վեր է, որ այս դեպքում Ստրաբոնի մոտ «լեզու» (γλῶττα) տերմինը համանիշ է էթնիկական միավորի հասկացողության:

Նույնպիսի եզրակացության կարելի է հանգել վրացական տարեգիր Լեոնտի Մուռվելու մի հաղորդումից: Պատմելով Բաբելոնի աշտարակաշինության մասին, նա նշում է, որ «աշխարհը բաժանվեց յոթանասուն լեզուների և յոթանասուն իշխանավորների և յուրաքանչյուր լեզվի վրա կարգեցին իրենց թագավո-

(59) «Πρότερόν δέ καί καθ' ἑκάστην γλῶτταν ἰδία ἐβασιλεύοντο ἕκαστοι. Γλῶτται δ'εἰσίν ἓξ καί εἴκοσιν» (Strabo, XI, 4, 6, C. 503). К.В. Тревер, Очерки по истории и культуры Кавказской Альбании, М.-Л., 1959, стр. 59.

րին»[60]: Այստեղ ևս, մեր կարծիքով, «լեզու» բնորոշումը վերաբերում է էթնիկական միավորին:

Նկատենք, որ նույնպիսի առումով է օգտագործված նաև «խօսք» բառը Մովսես Խորենացու հետևյալ հատվածներում.

«Քանզի այս Բագարատ նախաձեռն ընծայ ըստ կամաց մատոյց գինքն վաղարշակայ յառաջ քան զպատերազմունն Արշակայ ընդ Մակեդոնացիսն, և սա ի դրան արքունի: Իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ իշխան բիւրոց և հազարաց յարևմտից կուսէ»[61]:

«Եւ յարևելից կողմանէ, գեղերը հայկական խօսից, կողմնակալս բիւրաւորս գերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանսդ և որ ի կաղմեայ տանէն ...»[62]:

Աղվանքի ցեղերին վերաբերող Ստրաբոնի վերոհիշյալ հաղորդման, Լեոնտի Մռովելու, ինչպես նաև Խորենացու այս վկայությունների ուշադիր քննարկումից հետո դժվար չէ եզրակացնել, թե «միալեզու դարձան» ասելով աշխարհագետ Ստրաբոնը հասկանում է այն, որ բոլորը արդեն դարձել էին մի ժողովուրդ: Հետևաբար կարելի է վստահորեն ասել, որ հայ ժողովրդի կազմավորման երկարամյա պրոցեսն արդեն հիմնականում իր ավարտին էր հասել Արտաշեսի և Զարեհի թագավորության ժամանակ:

Ի դեպ նշենք, որ Հրանդ Ամատունին իր «Մեծն Տիգրան» գրքում, անդրադառնալով Ստրաբոնի վերոհիշյալ վկայությանը, գրում է. «Արտաշեսի օրով ազգային գաղափարը կսկսեր ձև և գույն ստանալ: ... Արտաշես կուզեր ... բաժան-բաժան հայ խումբերե կամ ցեղերե կուռ ամբողջություն մը կազմել: Այս գերակշիռ մտածումն էր, որ տուն տված ըլլալու էր թագավորի լեզվական բարեկարգության հռչակավոր հրովարտակին, որով հայերեն լեզուն պարտադիր կըլլար ամենուն, և պետք էր տարածվեր բոլոր մյուս գավառաբարբառներու և լեզուներու տեղ»[63]:

Ստրաբոնի «միալեզու դարձան» արտահայտության վերաբերյալ մեր կատարած դիտողություններից հետո, դժվար չէ

(60) Վկայությունը մեջ է բերված И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, СПб., 1905 գրքից, էջ 23:

(61) Մովսես Խորենացի, Բ, գ:

(62) Նույն տեղում, Բ, ը:

(63) Հրանդ Ամատեն, Մեծն Տիգրան, Կահիրե, 1957, էջ 16:

տեսնել, որ Հրանդ Ամատենի դատողությունները Արտաշեսի «լեզվական բարեկարգության հռչակավոր հրովարտակի» մասին առարկայազուրկ են, արդյունք հեղինակի վատ երևակայության և չունեն պատմական որևէ հիմք: Ավելացնենք, որ հրովարտակով հնարավոր չէ լեզու ստեղծել ու պարտադրել: Արտաշեսի թագավորության մեջ ընդգրկված բնակչությունը միալեզու դարձել էր պարզապես այն պատճառով, որ երկրի բոլոր մարզերում բնակչության էթնիկական հիմքը միատարր էր, բաղկացած հայերից:

Ինչպես դժվար չէ նկատել, Մեծ Հայքի և Մոփքի թագավորությունների սահմանների ընդարձակման ընթացքը նկարագրելիս, Ստրաբոնը ոչ միայն չի տարանջատում հայկական էթնիկական տարրերով բնակեցված մարզերի միավորման ուղղությամբ Արտաշեսի և Զարեհի ունեցած հաջողությունները, այլ ընդհակառակը, դրանք դիտում է որպես մեկ միասնական պատմական երևույթ: Նկատի ունենալով այս կարևոր հանգամանքը, մենք հակված ենք ենթադրելու, որ Մեծ Հայքի թագավոր Արտաշեսի և Մոփքի թագավոր Զարեհի հարաբերությունները եղել են դաշնակցային[64] և նրանք գործել են փոխադարձ համաձայնությամբ՝ հավանաբար մինչև վերջինիս մահը (շուրջ 163 թ.), որից հետո Արտաշեսը փորձում է իր արդեն ընդարձակված թագավորությանը միացնել նաև Մոփքաց երկիրը:

Հայաստանի բաժանումը երկու մասի չէր բխում երկրի տնտեսական ու քաղաքական շահերից: Այդ բանը ձեռնտու էր միայն օտարերկրյա տիրապետողներին: Իրենց գերիշխանության տակ գտնվող երկրները մասնատելու և դրանց ներքին ուժեղացումը խոչընդոտելու համար, դեռևս Աքեմենյանները Ամենիան բաժանել էին երկու սատրապության: Նրանց օրինակին հետևեցին նաև Սելևկյան թագավորները: Այդպիսի բաժանումը, սակայն, բոլորովին էլ չէր համապատասխանում արդեն քաղաքական անկախություն ձեռք բերած երկրի շահերին: Մոփքը և Մեծ Հայքը միացնելու անհրաժեշտությունը քաջ գիտակցում էր Արտաշեսը՝ «Հայաստանի մեծագույն մասի տիրակալը»: Մոփքի թագավոր Զարեհի մահվամբ Արտաշեսի համար հարմար առիթ էր ներկայանում պատմական խոշոր նշանակություն ունեցող

(64) Տես նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 542-544:

այդ ակտը իրականացնելու համար։ Զարեհի որդի Մերուժանը չկարողանալով պաշտպանել իր հայրենի Մոփքի թագավորությունը Արտաշեսի կատարած արշավանքից, ստիպված է լինում փախչել Կապադովկիա և խնդրել թագավոր Արիարաթես Ե-ի (163–130 թթ.) միջամտությունը։ Վերջինս, անհանգստանալով Մեծ Հայքի հզորացումից, այն կանխելու նպատակով, օգնում է Մերուժանին վերագրավելու իր գահը[65]։ Այսպիսով, առժամանակ խափանվում է Հայաստանի երկու հատվածները միավորելու ուղղությամբ Արտաշեսի կատարած այս փորձը։

Որպես Մոփքի վերջին թագավոր, աղբյուրներում հիշատակվում է Զարեհի տոհմից Արտաննեսը, որին հաղթելուց հետո, Տիգրան Բ-ը իր թագավորությանը միացնում է նաև Մոփքը։ «Իսկ Զարիադրեսի չառավիղն էր, – գրում է Ստրաբոնը, – Արտաննես Մոփացին, որն իշխում էր (Արմենիայի) հարավային և մանավանդ հարավ-արևմտյան մասերում։ Սրան տապալեց Տիգրանը և ինքը դարձավ բոլոր այդ երկրների տերը»[66]։

* * *

Աքեմենյանների կործանումից հետո, Հայկական լեռնաշխարհում առաջացած երեք տերություններից ամենանշանակալից եղել է Մեծ Հայքի թագավորությունը, որի հիմնական կորիզը հանդիսանում էր Արարատյան դաշտավայրը։ Ինչպես նշել ենք, Մեծ Հայքում իշխանությունը ժառանգաբար գտնվում էր Երվանդունիների ձեռքին, որոնք, Փոքր Հայքի ու Մոփքի իշխանների նման, միայն ձևականորեն էին ճանաչում Սելևկյան թագավորների գերիշխանությունը։ Սկզբնաղբյուրների առկա վիճակը ծայր աստիճան անբավարար է մ.թ.ա. III դարի Մեծ Հայքի քաղաքական պատմության մասին հաստատ որևէ բան ասելու համար։ Բացառված չէ, սակայն որ III դարի երկրորդ կեսին Երվանդունիները Հայաստանում զգալի չափով թուլացել էին։ Օգտվելով նրանց թուլացումից, հավանաբար հարևան իբերները և Ատրպատականի թագավորը նվաճել էին Հայաստանի մի

(65) Համմ. Polyb., XXXI, 15 a; Diodor., XXXXI, 22.
(66) Strabo, XI, 14, 15 (C. 531).

շարք գավառներ[67], քանի որ, ինչպես տեսանք, Արտաշեսն, իրեն թագավոր հռչակելուց հետո, ստիպված էր վերանվաճելու այդ երկրամասերը։

Շատ հավանական է, որ Անտիոքոս Գ-ը, Մոփքի Քսերքսես թագավորին հնազանդեցնելուց հետո, օգնել էր իր սատրապներից արմեն Արտաքսիաս-Արտաշեսին, տապալելու Երվանդ Վերջինին և որպես Սելեվկյանների սատրապ, իշխելու Հայաստանի այս հատվածում։ Այդ մասին արժեքավոր ցուցումներ կան Ստրաբոնի և Մովսես Խորենացու մոտ։

«Վերջին իշխողը, – գրում է Ստրաբոնը, – Օրոնտեսն էր, չառավիղը յոթը պարսիկներից մեկի՝ Հյուդարնեսի։ Այնուհետև երկիրը բաժանվեց երկու մասի ... Անտիոքոս Մեծի սատրապների՝ Արտաքսիասի և Զարիադրեսի կողմից և իշխում էին սրանք թագավորի հանձնարարությամբ ...»[68]։ Իսկ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի մի շարք գլուխներ նվիրված են Երվանդի դեմ Արտաշեսի մղած պայքարին և նրա կործանմանը Արտաշեսի կողմից[69]։

Այս առնչությամբ Հ.Հ. Մանանդյանը ճիշտ կերպով նկատում է, թե Խորենացու մոտ պահպանված «զրույցների և երգերի մեջ, ըստ երևույթին, պատմվում էին Արտաշեսի այն պատերազմները, որոնց միջոցով նա վերջ էր դրել Երվանդյանների իշխանությանը և նվաճել էր Արարատյան դաշտը ու նրանց աթոռանիստ կենտրոն Երվանդաշատը։ ... Խորենացին մեզ միջոց է տալիս կռահելու, որ Երվանդյանների դինաստիայի փոխանակումն Արտաշեսյան նոր դինաստիայով տեղի է ունեցել համառ կռիվներից հետո»[70]։

Դժվար է գերագնահատել Արտաշեսի արժանիքները որպես պետական գործչի։ Հայոց թագավորներից և ոչ մեկի գործունեությունը այնպիսի խոշոր նշանակություն և դրական հետևանքներ չի ունեցել հայ ժողովրդի պատմության համար հետագա դարերում, ինչքան Արտաշեսի գործունեությունը։ Հ.Հ. Մանանդյանը իրավացիորեն նշում է, որ «Արտաշեսյան անկախ և հզոր

(67) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 513 և 532։
(68) Strabo, նույն տեղում։
(69) Մովսես Խորենացի, Բ, լէ-կբ։
(70) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 126։

Հայաստանի կազմակերպումը սկիզբն էր հին Հայաստանի պատմության նոր դարաշրջանի։ Միանգամայն բնական է ու հասկանալի, որ Արտաշեսյան այս շրջանի պատմական մեծ անցքերը նյութ էին դառել երգերի ու ավանդությունների, որոնցից օգտվել էր Մովսես Խորենացին»[71]։

Այսպես, Արտաշեսը միջազգային քաղաքական ամենաբարդ իրադրության պայմաններում կարողացավ ընտրել հարմարագույն պահը, Սելեվկյանների գերիշխանությունը վերջնականապես թոթափելու համար։ Դա այն ժամանակն էր, երբ Մագնեսիայի մոտ 190 թվականին պարտություն կրելով հռոմայեցիներից, Անտիոքոսը զգաստացավ որևէ լուրջ դեր խաղալուց Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում, իսկ Հռոմը դեռևս ի վիճակի չէր հաստատուն ոտքերով կանգնելու Արևելքում։

Այնուհետև, իրեն Մեծ Հայքի թագավոր հայտարարելով, Արտաշեսը լայն գործունեություն ծավալեց հայաբնակ բոլոր երկրամասերը իր թագավորությանը միացնելու և միակուռ պետականություն ստեղծելու ուղղությամբ։ Այն բանից հետո, երբ նա, միավորելով Արարատյան դաշտի հարևան մարզերը, գրավել էր Հայաստանի մեծագույն մասի տիրակալը[72], փորձեց իր նորաստեղծ թագավորությանը միացնել նաև հայկական մյուս իշխանությունները՝ Փոքր Հայքն ու Ծոփքը, դրանով իսկ ավարտելու հայկական ցեղերով բնակեցված բոլոր մարզերի միավորումը։ Բայց, ինչպես տեսանք, նրա կարևոր այս մտադրությունն անհաջողության մատնվեց, որովհետև Պոնտոսի թագավոր Փառնակեսը, ինչպես և, հավանաբար, Սելևկոս Դ-ը, խանգարեցին նրան, օգնելով Փոքր Հայքի սատրապ Միհրդատին[73], մինչդեռ Կապադովկիայի թագավոր Արիարաթես Ե-ը ամեն կերպ օժանդակում էր Ծոփքի թագավոր Մերուժանին՝ Զարեհի որդուն[74]։ Այնուամենայնիվ, Արտաշեսի ժամանակ զգալի չափով ուժեղանում է Մեծ Հայքի թագավորությունը, որն արդեն սկսում է լուրջ դեր խաղալ Փոքր Ասիայի պետությունների փոխհարաբե-

(71) Նույն տեղում, էջ 124։

(72) Արտաշեսի գործունեության լավագույն չարադրանքը տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 526-534։

(73) Polyb., XXVI, 6, 11.

(74) Diodor., XXXI, 22.

րություններում[75]։

Վերջապես, Արտաշեսի մատուցած պատմական խոշորագույն ժառանգություններից մեկն էլ այն է, որ նա Արտքսի ձախ ափին, Այրարատյան դաշտում, կառուցեց իր նոր մայրաքաղաքը՝ Արտաշատը, որը շուրջ հինգ դար պահպանեց իր չքեղությունը և կարևորությունը որպես քաղաքական և տնտեսական կենտրոնը ոչ միայն Արտաշեսյանների թագավորության, այլև Արշակունյաց Հայաստանի։ Հ.Հ. Մանանդյանը Արտաշատի կառուցումը Այրարատյան դաշտում համարում է «Արտաշես Ա-ի կարևորագույն գործերից մեկը։ Այդ դաշտն այնուհետև դառավ Հայաստանի քաղաքական ու մշակութային միավորման կենտրոնը»[76]։

Մեծ Հայքի թագավորության բարձրացումն ու հզորացումը, անկասկած, հաճելի չէր ոչ միայն հարևան Կապադովկիային ու Պոնտոսին, որոնք, ինչպես տեսանք, ամեն կերպ խափանեցին հայկական երեք իշխանությունների միավորումը, այլև Հայաստանի նախկին գերագույն տեր Սելևկյաններին ու նոր բարձրացող Պարթևական թագավորությանը։ Դիոդորոս Սիկիլիացին և Ապպիանոսը[77] վկայում են, որ Անտիոքոս Դ Եպիփանեսը (175-164 թթ.) իր գահակալության վերջին տարիներին արշավել էր Հայաստան, պարտության մատնել Արտաշեսին, բայց չէր կարողացել իր գերիշխանությունը վերահաստատել այնտեղ։ Դեռ ավելին. Դիոդորոսը վկայում է, որ Արտաշեսը դաշն էր կնքել Սելևկյանների նախկին սատրապ Տիմարքոսի հետ, որը իրեն հայտարարել էր Մեդիայի թագավոր, և օգնել նրան ընդարձակելու իր տերության սահմանները ի հաշիվ Սելևկյանների[78]։

Այդ նույն տարիներին էր, որ պարթևական աշխարհակալության հիմնադիր Միհրդատ Ա թագավորը (171-138 թթ.), օգտվելով Սելևկյանների թուլացումից, նվաճեց նախկինում սրանց գերիշխանության տակ գտնված երկրները մինչև Հյուսիսային Միջագետք և Եփրատ գետը։ Հետագայում պարթևները

(75) Տես Polyb., XXVI, 6.

(76) Հ.Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 24։

(77) Diodor., XXXI, 27a : Appian., Sur., 45-46։ Համմ. Գ.Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 242-247։

(78) Diodor., Նույն տեղում։

Միհրդատ Բ-ի ժամանակ (123-88 թթ.), նվաճելով մի շարք մարզեր ևս, փորձում են տիրել նաև Հայաստանին, բայց այդ նրանց չի հաջողվում: Այս դրությունը արձանագրված է Ստրաբոնի մոտ: «Պարթևները, — գրում է հույն աշխարհագետը, — իշխում են մեդացիներին ու բարելոնացիներին: Իսկ հայերին ոչ մի անգամ: Թեև բազմիցս արշավանքներ եղան, սակայն չկարողացան ուժով նվաճել»[79]:

Արտաշես Ա-ի մահից հետո (շուրջ 160 թ.), մինչև Տիգրան Բ-ի գահակալումը (95 թ.) ընկած ժամանակամիջոցը հայ ժողովրդի պատմության ամենաթույլ լուսաբանված հատվածներից է, քանի որ սկզբնաղբյուրները համարյա ոչինչ չեն հաղորդում այդ ժամանակաշրջանի Հայաստանի մասին: Մեզ հասած սկզբնաղբյուրներում պահպանված ավելի քան պատահական տվյալների հիման վրա Հ.Հ. Մանանդյանը հավանական է համարում, «որ Արտաշես Ա-ին հաջորդել էր նրա որդին, Արտավազդ Ա-ը, և ապա սրա եղբայրը՝ Տիգրան Ա-ը, որից հետո թագավորել էր այս վերջինի որդին՝ Տիգրան Բ-ը»[80]:

Մենք այստեղ ընդհատում ենք այդ դարաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության մեր համառոտ չարադրանքը, քանի որ այդ լավագույն կերպով արված է ակադ. Հ.Հ. Մանանդյանի «Տիգրան Երկրորդը և Հռոմը» և «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա», ինչպես նաև վերջերս ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն, հ. 1» կապիտալ աշխատություններում և անցնում ենք հայկական թագավորության պետական կառուցվածքի ուսումնասիրությանը հելլենիստական ժամանակաշրջանում, նկատի ունենալով, որ հին Հայաստանի պետական հաստատությունները, նախկինում սաղմնային վիճակում, գոյություն ունենալով հանդերձ, հիմնականում առաջացել և ձևավորվել են Արտաշեսյանների, առանձնապես Տիգրան Բ-ի թագավորության տարիներին:

(79) Strabo, XVI, 1, 19.

(80) Հ.Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը ..., էջ 27: Նույնի, Քննական տեսություն, հ. Ա, էջ 135:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1.- Գերագույն իշխանությունը Աքեմենյանների տիրապետության շրջանում

Սույն աշխատության առաջին գլխում, հենվելով Քսենոփոնի հայտնի երկերի վրա, մենք փորձեցինք ցույց տալ, որ «Կյուրոպեդիայի» տվյալներով, Արմենիան մ.թ.ա. VI դարի կեսերին ունեցել է իր առաջնորդ-բասիլևսը (βασιλεύς), իսկ ըստ նույն հեղինակի «Անաբասիսի»՝ Արմենիան մ.թ.ա. V-IV դարերի սահմանաեզրին կառավարվել է պարսկական «արքայից արքայի» նշանակած սատրապի միջոցով: Այս երկու տեղեկությունների թվացող հակասությունը միանգամայն բացատրելի է: «Կյուրոպեդիա»-յում նկարագրված պատմական դեպքերը վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Հայկական լեռնաշխարհում բնակվող արմենական ցեղերը դեռևս համեմատաբար անկախ էին. դեռ ավելին, նրանք նույնիսկ դաշնակից էին համարվում մարերին և լրիվ չէին ենթարկվել Մեդական թագավորների իշխանությանը: Մինչդեռ ավելի ուշ շրջանի դեպքերը նկարագրող «Անաբասիս»-ում, ինչպես և Հերոդոտոսի մոտ, Արմենիան արդեն հպատակ է և հարկատու Աքեմենյան «արքայից արքային» որպես նրա սատրապությունը:

Պատահական չէ, որ մ.թ.ա. V-IV դդ. լավատեղյակ մատենագիր Քսենոփոնը, Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VI դարի կեսերին կատարված դեպքերը նկարագրելիս, արմենական ցեղերի առաջնորդին բնութագրելու համար օգտագործում է հին Հունաստանի հասարակությունից իրեն շատ լավ հայտնի բասիլևս (βασιλεύς) տերմինը, դրանով իսկ, հավանաբար, ցան-

կանալով ընդգծել, որ արմենական ցեղերի այս առաջնորդի դիրքն ու դերը Հին Հայաստանի հասարակության մեջ նունն էր, ինչ հունական բասիլևսների ֆունկցիան հին Հունաստանի հասարակական կյանքում:

Հելլենիստական ժամանակաշրջանում առաջացած ու ծաղկում ապրած Ալեքսանդրյան դպրոցի քերականների բացատրությամբ, βασιλεύς բառը կազմված է եղել βάσις (հիմք) և λεώς (ժողովուրդ) բառերից, հետևապես նշանակել է՝ «ժողովրդի հիմք»: Առավել հավանական է, սակայն, որ βασιλεύς բառը ծագած լինի βαίνω (քայլել, առաջանալ) բայից կազմված βάσις (քայլք, ընթացք) և λαός (ժողովուրդ) բառի իոնիական λεύς ձևից, դրանով իսկ նշանակելով «ժողովրդի առաջնորդ»:

Հոմերոսյան դյուցազներգություններում βασιλεύς բառի տակ հասկացվում է ոչ միայն ամյալ ցեղի գերագույն պետը, այլև ամեն մի առաջնորդ ընդհանրապես, քանի որ Հոմերոսն այդ հորջորջումը միշտ գերագույն առաջնորդին չէ միայն, որ տալիս է: Այսպես, անհայտ կորած Ոդիսևսի կնոջ՝ Պենելոպեի փեսացուները ևս նրա մոտ կոչվում են բասիլևսներ[1]: Իսկ փեակների երկրում բասիլևս Ալկինոոսի հետ միասին կային նաև ուրիշ տասներկու բասիլևսներ ևս[2]:

Հին Հունաստանի պատմության, այսպես կոչված, հերոսական շրջանի բասիլևսի հասարակական դիրքն ու դերը լավագույնս բնորոշել է մ.թ.ա. IV դարի խոշորագույն մտածող, փիլիսոփա Արիստոտելը, նշելով, որ բասիլևսը հանդիսանում է զորքի առաջնորդ, միաժամանակ նաև դատավոր ու կրոնապետ[3]: Արիստոտելի այս դիպուկ, բնորոշումը իրենց ժամանակ ընդունել են մարքսիզմի դասականները: Այսպես՝ Ֆ. Էնգելսը գրում է. «Բասիլևսը, բացի զինվորական իրավունքներից, ուներ նաև քրմական և դատական իրավունքներ: ... Թուկիդիդեսը հին basileia-ն (թագավորական իշխանություն — Ս.Կ.) որոշակի կերպով patrikê է անվանում, այսինքն՝ տոհմերից առաջացած, և ասում է, թե նա հաստատուն որոշված, ուրեմն, սահմանափակ, իրավունքներ ուներ: Իսկ Արիստոտելն ասում է, թե հերոսական դարաշրջանի basileia-ն

(1) Ὁμήρου Ὀδύσσεια, I, 394–395.
(2) Նույն տեղում, VIII, 390–391.
(3) «Στρατηγός γάρ ἦν καί δικαστής ὁ βασιλεύς καί τῶν πρός τούς θεούς κύριος» (Aristot. Polit., III, 10)

մի դեկավարություն էր ազատանիների վերաբերմամբ, իսկ բասիլևսը զորահրամանատար, դատավոր ու քրմապետ էր ...»[4]:

Եթե հին Հունաստանում քաղաք-պետությունների՝ պոլիսների առաջացումով, որտեղ հաղթանակեց ստրկատիրական դեմոկրատիան, պետք է վերացվեր բասիլևսների ինստիտուտը և այդ հիման վրա քաղաքական և ռազմական իշխանությունը պետք է անջատվեր կրոնական ու դատական իշխանություններից, ապա հին Հայաստանում, որտեղ հասարակության զարգացումն ընթացավ սոցիալ-տնտեսական և քաղաքական այլ պայմաններում, հետագայում կազմավորված անկախ թագավորության հողի վրա, շարունակվեց նույն անձի՝ բասիլևս-թագավորի ձեռքում մնալ ռազմաքաղաքական ու կրոնական գերագույն իշխանությունը:

Ս.Տ. Երեմյանը իր հոդվածներից մեկում, անդրադառնալով Քսենոփոնի նկարագրած Հայաստանի հասարակությանը, գտնում է, որ «բազմաթիվ ցեղերն ունեին իրենց առաջնորդները, «բասիլևսները», որոնք ենթարկվում էին սատրապին: Նրանցից յուրաքանչյուրը կրում էր իր տոհմական տիտղոսը, որը համապատասխան լեզվով նշանակում էր «տոհմապետ»[5]: Մեր կարծիքով, սակայն, Քսենոփոնը խոսում է Հայաստանի ոչ թե բասիլևսների, այլ սոսկ մեկ բասիլևսի մասին, իսկ տոհմապետներին անվանում է «պատվավոր արմեններ»:

Այսուհանդերձ, Քսենոփոնի այդ հաղորդման հիման վրա Ս.Տ. Երեմյանը իրավացի կերպով նշում է, որ այդ ժամանակ, «բնակչության զանգվածից աստիճանաբար առանձնանում է ռազմա-քրմական ավագանին, որին Քսենոփոնը ... անվանում է «պատվավոր արմեններ»: Նրանց թվին էին պատկանում սատրապները, որոնք դարձան ժառանգական իշխաններ, քրմերը և ցեղերի ու համայնքների պետերը»[6]:

(4) Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1953, էջ 149–150:
(5) С.Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, Տեղ. ՀԳԱՀԳ 1948, No 11, էջ 11:
(6) Նույն տեղում, էջ 40: Այնուամենայնիվ, պիտի նշել, որ Քսենոփոնն այս դեպքում չէր կարող նկատի ունենալ սատրապներին, քանի որ «Կյուրոպեդիա»-յում նկարագրված է նախասատրապյան Հայաստանի հասարակությունը:

«Կյուրոպեդիա»-յում Քսենոփոնի հիշատակած արմենների բասիլևսի իշխանությունը իր ցեղակիցների վրա նույնպես բացարձակ չէր, ինչպես և հոմերոսյան Հունաստանում, որտեղ բասիլևսի կողքին գոյություն են ունեցել նրա իշխանությունը սահմանափակող ավագների խորհուրդը՝ բուլեն (βουλή) և ժողովրդական ժողովը՝ էկկլեսիան (ἐκκλησία)։ Այդ երևում է թեկուզ այն բանից, որ հույն մատենագրի վկայությամբ, Կյուրոսը արմենների բասիլևսին գերի վերցնելուց հետո, նրա հետ դատաստան տեսնելիս, «անհապաղ կանչեց պարսիկների և մեդացիների զորապետներին, հրավիրեց նաև պատվավոր արմեններին, որոնք ներկա էին»[7]։ Այս «պատվավոր արմենները», հավանաբար, նոր կազմավորվող արմենական ավագանու ներկայացուցիչներն էին։ Արմենների բասիլևսը, ըստ Քսենոփոնի, ունեցել է իր նստավայրը, որը եղել է ապարանք-ամրոց[8]։ Պետք ենթադրել, որ արմենների բասիլևսը չի ունեցել իր մշտական բանակը։ Պատերազմի ժամանակ զենք կրելու ընդունակ բոլոր ցեղակիցները, «գեղջավագ»-ների (Քսենոփոնի մոտ՝ κωμάρχης, ἄρχων τῆς κώμης) գլխավորությամբ, ներկայանում էին, համալրելու համար բանակը։ Այդպես է եղել նաև Աքեմենյան Պարսկաստանում, որտեղ զորքը կոչվել է «kara», այսինքն՝ ժողովուրդ։ Հոմերոսի մոտ ևս հունական ամբողջ զորքը կոչվում է ժողովուրդ (հուն. λαός)։ Արմենների բասիլևսը մոտիկ հարաբերությունների մեջ է եղել պարսկա-մարական արքունիքի հետ։ Նրա անդրանիկ որդին, Տիգրանը, եղել է Կյուրոսի որսի ընկերը[9]։

Դարեհ Ա-ի թողած Բեհիստունյան արձանագրության մեջ հիշատակված են նաև երկու արմեններ, Դադարշիշը և Արախան, ավագանու խոշորագույն ներկայացուցիչներ, հավանաբար ցեղապետներ, որոնք Աքեմենյան տիրության մեջ տեղի ունեցող պատմական այդ բուռն իրադարձությունների ժամանակ խաղացել են առաջնակարգ դեր։ Այսպես, Դադարշիշը երեք անգամ գլխավորել է ապստամբություն բարձրացրած Արմենիայի դեմ՝ Դարեհի կողմից ուղարկված պարսկական զորքերը, իսկ Արախան, Խալդիտայի որդին, Բաբելոնում ապստամբելով պարսկական տիրապետության դեմ, իրեն հայտարարում է թագավոր՝ Նաբուգոդոնոսոր անունով[10]։

(7) Xenoph., Cyropae., III, 1, 8.
(8) Նույն տեղում, II, 4, 24.
(9) Նույն տեղում, III, :, 7։

Արմենիայի մասին Քսենոփոնի և Հերոդոտոսի հաղորդած վկայությունները և Բեհիստունի արձանագրության տվյալները պարզորեն ցույց են տալիս, որ Արմենիան, մինչև Աքեմենյանների կողմից վերջնականապես նվաճվելը (521 թ.), ունեցել է իր բասիլևսը։ Իսկ այն բանից հետո, երբ Դարեհ Ա-ը իր իշխանության տակ գտնվող երկրները, որոնց թվում նաև Արմենիան, բաժանում է առանձին վարչական միավորների՝ սատրապությունների, կառավարվել է «արքայից արքայի» նշանակած հատուկ կառավարչի՝ սատրապի միջոցով։

Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող մի շարք երկրամասերում ծագած ապստամբությունները դաժանորեն ճնշելուց հետո, Դարեհ Ա. վչտասպյանը ձեռնարկեց վարչական մի շարք ռեֆորմներ, որոնցից ամենակարևորը ամբողջ երկիրը սատրապությունների բաժանելն էր։

Արմենիան ևս այդ ռեֆորմով վերածվեց վարչական առանձին միավորի, սատրապության, որի կառավարումը հանձնարարվեց Աքեմենյան արքունիքի մերձավորներից՝ Օրոնտեսին (Երվանդին)։ Ստրաբոնի հետաքրքիր մի վկայությունից մեզ հայտնի է, որ Օրոնտես Վերջինը իրեն համարում էր չառավիղը Հյուդարնեսի, որը հանդիսանում էր իրեն Պարսկաստանի թագավոր հայտարարած Գաումատա մոգին տապալելու գործում Դարեհին օգնած պարսից ավագանու վեց ներկայացուցիչներից մեկը[11]։

Դարեհի ռեֆորմներից հետո Աքեմենյան Պարսկաստանում սատրապների ձեռքին է եղել քաղաքական ու դատական գերագույն իշխանությունը սատրապության սահմաններից ներս։ Իրենց գործունեության համար նրանք հաշվետու են եղել միայն «արքայից արքայի» առաջ։ Նրանք յուրատեսակ թագավորներ են եղել իրենց վստահված երկրամասերում և նույնիսկ իրավունք են ունեցել արծաթ և պղինձ դրամ հատելու, իրենց սատրապության ներքին առևտրի կարիքները բավարարելու համար, մինչդեռ ոսկի դրամ հատելու իրավունքը բացառապես վերապահված էր իրեն՝ «արքայից արքային»։ Առանձին սատրապների հնարա-

(10) М.А. Дандамаев, Иран при первых Ахеменидах, М., 1963, էջ 262 և հաջ.։
(11) Strabo, XI, 14, 15։

վոր ուժեղացումը և այդ ուժեղացման հողի վրայ նրանց անջատողական ձգտումները կանխելու նպատակով Դարեհը կիրառեց նոր միջոցառում. յուրաքանչյուր սատրապության ներսում գտնվող բոլոր զորքերը նա ենթարկեց հատուկ զորահրամանատարների, որոնք ենթակա չէին սատրապներին: Դրանով իսկ «արքայից արքան» առեղծեց կենտրոնական իշխանության համար այնքան անհրաժեշտ եղող փոխադարձ հսկողության մի համակարգ սատրապության ներսում, տեղի քաղաքական և զինվորական իշխանությունների միջև: Այս կարևոր երևույթի մասին Քսենոփոնը հաղորդում է հետևյալը. «Եթե զորահրամանատարը անբավարար չափով է երկիրը պաշտպանում, ապա (խաղաղ) բնակչության կառավարիչը և հողերի մշակման դեկավարը հայտնում է, թե պաշտպանության բացակայության հետևանքով աշխատել հնարավոր չէ: Իսկ եթե զորահրամանատարը ապահովում է խաղաղությունը, իսկ կառավարիչի մոտ մշակելի հողը քիչ է բնակեցված և չի մշակված, ապա վերջինիս մասին հայտնում է զորահրամանատարը»[12]:

Վարչական վերահսկողության այսպիսի համակարգ հաստատել են Աքեմենյանները փոքրասիական, միջերկրածովյան ափերի, Բաբելոնի և Եգիպտոսի սատրապություններում: Ըստ երևույթին Արմենիայի սատրապի իրավունքները որոշ չափով տարբեր են եղել: Օրոնտեսը, հավանաբար, ունեցել է ոչ միայն քաղաքական ու դատական, այլև զինվորական իշխանություն, քանի որ պատերազմի ժամանակ ինքն էր առաջնորդում արմենական զորքերին[13]:

Հնարավոր է, սակայն, որ Արմենիայի սատրապը իրավունք չի ունեցել դրամ հատելու: Ասենք, նա հազիվ թե դրա կարիքն ունենար, քանի որ բնատնտեսության տիրապետության պայմաններում առևտուրը երկրի ներսում թույլ էր զարգացած, իսկ արտաքին առևտուրը, ինչպես հետևում է Հերոդոտոսի վկայություններից, այդ ժամանակ գտնվում էր օտարականների՝

(12) Xenophontis Oeconomicus, Berlin, 1910, IV, 10.
(13) Arriani de expeditione Alexandri, III, 11, 7: Համմ. նաև՝ Xenoph., Anabasis, IV, 3, 4:

սատրեստանցիների ձեռքին[14]:

Ճիշտ է, մեզ հասել են Օրոնտեսի և Տիրիբազոսի (առաջինը մի ժամանակ եղել էր Արմենիայի սատրապ, իսկ երկրորդը՝ նրա հյուպարքոսը) նկարներով դրամներ. սակայն այդ դրամները, մեր կարծիքով, հատված են այն ժամանակ, երբ Օրոնտեսն ու Տիրիբազոսը արդեն առնչություն չունեին Արմենիայի հետ, այլ նշանակված էին Փոքր Ասիայի առափնյա քաղաքների կառավարիչներ[15]:

Աքեմենյանների չքեղ արքունիքը, վարչական ապարատը և հսկայական բանակը, ինչպես նաև սատրապի արքունիքը ու նրա մերձավորներին հնարավոր էր պահել միայն սատրապություններում ապրող հպատակ ժողովուրդներից գանձվող դրամական ու նատուրալ ծանր հարկերի հաշվին: Այսպես, բացի դրամական խոշոր գումարից — Հերոդոտոսը (գիրք III, գլխ. 93) վկայում է, որ 13րդ սատրապության մեջ մտնող արմենները և նրանց հարևան ցեղերը պարսից թագավորին վճարում էին 400 տաղանդ ամենամյա հարկ —, Արմենիայի սատրապը, «արքայից արքային» ուղարկում էր տարեկան 20 հազար մարուկ Միթրայի տոնի համար[16]:

Սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունների հիման վրա մենք փորձեցինք ցույց տալ, որ պատմական այդ ժամանակաշրջանում արդեն առկա էին մի շարք կարևոր նախադրյալներ, որպեսզի Հայկական լեռնաշխարհը դառնար պետական անկախ միավոր: Մ.թ.ա. VI-IV դարերում Հայաստանը հաստատորեն կանգնած էր ինքնուրույն պետականության ստեղծման շեմին[17]: Դրա իրականացմանը, սակայն, խանգարում էր օտարերկրյա քաղաքական լուծը: Հարկավոր էր մի նոր ուժ,

(14) Я.А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён, 2րդ հրատ. Ереван, 1954, էջ 10-11: Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 59-61: Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 159-164:
(15) Diodor., XV, 2, 2.
(16) Strabo, XI, 14, 9.
(17) Սույն աշխատության առաջին գլխում մենք քննության ենք առել նաև հակառակ տեսակետը, որի համաձայն մ.թ.ա. VI դ. արդեն ստեղծվել էր հայկական անկախ պետություն: Կրկնությունից խուսափելու համար այստեղ չենք անդրադառնում այդ հարցին:

արտաքին մի նոր ազդակ, օտար քաղաքական տիրապետությունը վերացնելու և երկրի զարգացումը իր բնականոն հունի մեջ դնելու համար: Ճիշտ է, այդ ազդակն սկզբում շատ էր կողմնակի, բայց ունեցավ ուղղակի, անմիջական նշանակություն հայերի և Հայաստանի պատմական հետագա զարգացման համար: Այդպիսի ազդակ հանդիսացավ Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորած հունա-մակեդոնական ռազմա-քաղաքական էքսպանսիան դեպի արևելք[18]: Դրա մերձավորագույն հետևանքը Հայաստանի համար եղավ Աքեմենյանների լծի տապալումը, որից հետո, ազատություն ձեռք բերած երկիրը, ավելի քան յոթը դար տևած ժամանակաշրջանում պահպանեց իր անկախ կամ կիսանկախ քաղաքական դրությունը:

Տեսնենք, թե սատրապական իշխանությունից սոցիալ-տնտեսական ու քաղաքական ինչպիսի ժառանգություն ստացավ Հայաստանի առաջին թագակիրը:

Ինչպես նշել ենք, սատրապության սահմաններից ներս Աքեմենյան սատրապն, ընդհանրապես, ուներ ռազմական ու քաղաքական լիակատար իշխանություն: Վարչական առումով նա իր սատրապության համար յուրատեսակ փոքր արքա էր, ուներ իր արքունիքը, որը մանրակերտային ձևով պետք է հիշեցներ պարսից «արքայից արքայի» արքունիքը: Սատրապը պետք է ապահովեր ամենամյա կանոնավոր հարկերի գանձումը և դրանց առաքումը մեծ արքային: Դրանից բացի, նա իր մերձավորների պահանջները բավարարելու համար ուներ ընդարձակ հողային տիրույթներ, որոնք կառավարվում էին հատուկ պաշտոնյաների միջոցով. այդ տիրույթներում անմիջական արտադրողները ստրուկ ռազմագերիներն էին կամ աղքատացած համայնականները:

Այս առնչությամբ մասնավորելով խոսքը Հայաստանի սատրապության մասին, Գ.Ա. Տիրացյանը իրավացիորեն գրում է. «Բացառված չէ, որ Հայաստանի սատրապները ... Հայաստանում իրենց տիրույթներն ունեին: Քսենոփոնը հիշատակում է գյուղերով շրջապատված կամ առանձին գյուղում կանգնած երկու ապարանք-ամրոց (βασίλεια), որոնք պատկանել են սատրապին կամ նրա ենթակային (Անաբասիս, IV, 4,2,7): Մյուս սատրապությունների օրինակով (որտեղ, որպես կանոն, ապարանքի շրջակայքը պատկանում էր ապարանքի տիրոջը՝ հենց իրեն սատրապին կամ մեկ այլ մեծամեծի) կարելի է ենթադրել, որ Հայաստանում հիշատակված ապարանք-ամրոցների շուրջը գտնվող գյուղերը իրենց հողերով հանդերձ պատկանում էին Հայաստանի սատրապին[19]:

Սատրապության շրջանում Հայաստանի հասարակության կազմակերպության ձևը, ինչպես բխում է Քսենոփոնի արժանահավատ տվյալներից, եղել է գյուղական համայնքը իր գյուղապետով՝ գեղջավագով (κωμάρχης, ἄρχων τῆς κώμης): Ն. Ադոնցի կարծիքով, Քսենոփոնի նկարագրած հայկական գյուղերը եղել են տոհմային համայնքներ, իսկ կոմարխները՝ տոհմապետեր[20]: Մ.Տ. Երեմյանը, սակայն, վերանայելով այդ տեսակետը, ենթադրում է, որ դրանք եղել են տերիտորիալ գյուղական համայնքներ, որոնք իրար հետ կապված էին տնտեսական կապերով[21]:

Հայաստանի սատրապն իր երկիրը կառավարելու համար ուներ իրեն ստորադրյալ պաշտոնյաներ: Այսպես, «Անաբասիս»-ում հիշատակվում է հյուպարքոս Տիրիբազոսը, որն իր հերթին ուներ իր ծառայողներին՝ հացարարներ և մատուակներ[22]: Օրոնտասի կողքին տեսնում ենք Արտուխասին իր գոլոզոկատի հետ[23]:

Բնակչությունից ամենամյա հարկերը կանոնավոր կերպով հավաքելու համար Հայաստանի սատրապը, անկասկած, պետք է ունենար հարկահավաքների հատուկ մի հաստատություն, որի մասին, սակայն, աղբյուրներում մենք որևէ հիշատակության չենք հանդիպել:

Համանաբար սատրապի արքունիքում կար նաև հատուկ դիվան իր դպիրով, որը վարում էր պետական գրագրությունը: Այդպիսի ենթադրությունը բխում է Եվմենեսին ուղղված Օրոն-

(18) Համմ. С.Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, էջ 42:

(19) Գ.Ա. Տիրացյան, Հին Հայկական պետության առաջացումը, ՊԲՀ, 1966, Նո 4, էջ 85:

(20) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 390-391.

(21) С.Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, էջ 37-38:

(22) Xenoph., Anabasis, IV, 4,4: IV, 4, 21.

(23) Նույն տեղում, IV, 3, 4.

տեսի նամակի մասին Դիոդորոսի մեզ հայտնի հաղորդումից, որի մասին արդեն խոսել ենք վերևում[24]: Վերջապես, Հերոդոտոսի, Քսենոփոնի, ինչպես նաև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների պատմությունն անող հեղինակների հաղորդումներից կարելի է եզրակացնել, թե Հայաստանի սատրապն ուներ իր զորքը, բաղկացած հայերից հավաքագրված, ինչպես նաև հարևան ցեղերից կազմված վարձկան զինվորներից:

2.- Սատրապական իշխանության փոխակերպումը թագավորական իշխանության

Աքեմենյան տերության վերջնական փլուզումից հետո, ինչպես արդեն նշել ենք, արմենական ցեղերով բնակեցված երկրները մեխանիկորեն ձեռք բերեցին քաղաքական անկախություն: Սուլն ուսումնասիրության նախորդ գլխում մենք, ընդհանուր գծերով, փորձեցինք տալ պատմական այդ ժամանակաշրջանում Հայկական բարձրավանդակում առաջացած երեք պետական միավորումների, Մոփքի, Փոքր Հայքի և Մեծ Հայքի թագավորությունների քաղաքական պատմությունը:

Քաղաքական անկախություն ձեռք բերելուն զուգընթաց, սատրապական իշխանությունը Հայաստանում պետք է վերածվեր թագավորական իշխանության: Սակայն, ինչպես հետևում է աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունից, կարևորագույն այդ փոփոխությունը միանգամից տեղի չի ունեցել:

Ալեքսանդր Մակեդոնացին, նվաճելով Աքեմենյանների տերության համարյա ամբողջ տարածքը, չվերացրեց նախկինում գոյություն ունեցող երկրի բաժանումը սատրապությունների: Այնուամենայնիվ, Ալեքսանդրի ժամանակ արդեն նրա նշանակած սատրապների իրավասությունները զգալի չափով սահմանափակվեցին: «Թե նրանք, — գրում է Ի.Գ. Դրոյզենը, — նշանակվում էին իրենց տերիտորիայում ոչ որպես տիրակալներ, այլ որպես պաշտոնյաներ, երևում է այն հանգամանքից, որ մինչև 306 թվա-

(24) Այս մասին մանրամասն տես՝ Գ.Ա. Տիրացյան, նույն տեղում: Г.А. Тирацян, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, ՊՐՀ, 1972, Նո 2:

կանը մենք չունենք Ալեքսանդրի թագավորության սատրապների դրամներ»[25]:

Մակեդոնացու մահից հետո (323 թ.) նրա գլխավոր զորահրամանատարները նվաճված բոլոր երկրները բաժանեցին իրար միջև, իրենց բաժին ընկած երկրամասերում իշխելով որպես սատրապներ: Նրանցից և ոչ մեկը դեռևս չէր համարձակվում իրեն թագավոր հռչակել, քանի որ Մակեդոնացու չառավիղը դեռ ապրում էր և իշխանության գլուխ անցած մակեդոնացի սատրապները ձևականորեն չէին կարող իրենց թագավոր հայտարարել: Վերջապես, Մակեդոնիայի կառավարիչ Կասսանդրոսը 310 թվականին, սպանելով թագավորական տան վերջին ներկայացուցչին՝ Ռոքսանայից ծնված Ալեքսանդրի որդի Ալեքսանդրին, վերացրեց այդ ձևական խոչընդոտը: Ահա դրանից հետո միայն գլխավոր սատրապությունների կառավարիչներն սկսեցին իրենց թագավոր հայտարարել:

Սատրապներից Անտիգոնոս Միականին առաջինն էր, որ 306 թվականին իրեն թագավոր հռչակեց: Նրան արդեն հաջողվել էր իր որդու, Դեմետրիոս Պոլիորկետեսի հետ համատեղ, իր իշխանությունը տարածել հարավային Հունաստանի, Էգեյան ծովի կղզիների, ինչպես նաև Փոքր Ասիայի մեծագույն մասի վրա: Սկիզբն արդեն դրված էր: 304 թվականին նրա օրինակին հետևեց վերջնականապես փարավոնների երկրում հաստատված Պտղոմեոս Լագոսը: Շուտով իրենց թագավորներ հայտարարեցին նաև մինչ այդ սատրապներ համարվող Լիսիմաքոսը՝ Թրակիայում, Կասսանդրոսը՝ Մակեդոնիայում և Թեսսալիայում, իսկ Սելևկոս Նիկատորը՝ Բաբելոնում և Ասորիքում: Դրանից հետո է միայն, որ նրանք սկսում են դրամ հատել իրենց անուններով:

Ըստ երևույթին, արդեն քաղաքական անկախություն ձեռք բերած Հայաստանում դեպքերն ուրիշ ընթացք ստացան: Չնայած, որ դեռևս Ալեքսանդրը Սարդես քաղաքի կայազորի պետ պարսիկ Միթրինեսին վարձահատույց լինելու նպատակով (այն բանի համար, որ վերջինս առանց դիմադրության իրեն էր հանձնել կարևորագույն այդ քաղաքի միջնաբերդը), նրան նշանակել էր դեռևս չնվաճված Հայաստանի սատրապ, իսկ Մակեդոնացու մահից հետո նրա զորահրամանատարները որպես Հայաս-

(25) И.Г. Дройзен, История эллинизма, т. I, М., 1890, էջ 129:

տանի սատրապ ճանաչում են մակեդոնացի Նեոպտոլեմոսին, այնուամենայնիվ, ինչպես արդեն նշել ենք, երկիրը փաստորեն չէր նվաճվել հունա-մակեդոնացիների կողմից: Հետևաբար, և՛ Միթրինեսի, և՛ Նեոպտոլեմոսի՝ Հայաստանի սատրապ նշանակվելը կրում էր սոսկ ձևական բնույթ: Սկզբնաղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, թե իշխանությունը Հայաստանում մնացել էր տեղական նախկին սատրապի՝ Օրոնտես-Երվանդի ձեռքին:

Դիոդորոսի մոտ պահպանված երկու տարբեր բնույթի վկայություն հիմք են տալիս մեզ ենթադրելու, որ Արմենիայի կառավարիչը, որը Երվանդունիների տոհմից էր, Աքեմենյանների վերջնական վտարումից հետո իրեն հայտարարել էր թագավոր (βασιλεύς – բասիլևս), մինչդեռ հունա-մակեդոնացի զորահրամանատարների համար նա մնում էր սոսկ Արմենիայի սատրապ: Այսպես, Դիոդորոսը պատմում է, թե մ.թ.ա. 322 թվականի սկզբներին մակեդոնացիները ներխուժում են Կապադովկիա: Երկրի ծերունի սատրապ Արիարաթեսը դիմադրում է նրանց, սակայն պարտություն է կրում և գերվում: Նրա Արիարաթես որդին փոքրիկ զորախմբով փախչում է Հայաստան և «ոչ շատ ժամանակ անց ... արմենների Արդոատես թագավորից զորք ստանալով, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին և շուտով մակեդոնացիներին դուրս վտարեց երկրից ու վերագրավեց իր հայրենի իշխանությունը»[26]*:*

Մեկ ուրիշ անգամ նույն Դիոդորոսը, պատմելով 317 թվականի դեպքերի մասին, հաղորդում է, որ նախկինում Ալեքսանդր Մակեդոնացու անձնական քարտուղար, իսկ այդ ժամանակ արդեն Կապադովկիայի սատրապ, Եվմենեսը մակեդոնացի զորահրամանատարների ժողովում, վերջիններիս համոզելու նպատակով, հրապարակում է սատրեներեն գրերով (συρίοις γράμμασι) գրված մի նամակ, որն ինքն իրը ստացել էր «Արմենիայի սատրապ Օրոնտեսից»[27]*: Այս ամենի մասին մենք արդեն հանգամանորեն խոսել ենք նախորդ գլխում:*

Ուսումնասիրողն արդեն իր տրամադրության տակ ունի արժանահավատ երկու վավերագիր, որոնցից մեկում՝ Մեծ Հայքի և մյուսում՝ Ծոփքի տերերը մ.թ.ա. III դարում կրում են թագա-

(26) Diodor., XXXI, 19, 5.

(27) Նույն տեղում, XIX, 2[illegible].

վոր (βασιλεύς) տիտղոսը: Դրանցից առաջինը 1927 թվականին Արմավիրի բլրում հայտնաբերված հունարեն արձանագրություններից մեկն է (երկրորդ քարի առաջին արձանագրությունը), որում երկու անգամ հանդիպում է βασιλεύς (թագավոր) տիտղոսը: Հ.Հ. Մանանդյանը իր հատուկ ուսումնասիրության մեջ այս արձանագրությունը իրավամբ դիտում է որպես Արմավիրի տաճարի քրմապետ Միթրասի, որն իրեն անվանում է նույնպես (βασιλεύς), նամակը ուղղված եբրոնտես-երվանդ թագավորին[28]*: Այս արձանագրության առաջին հրատարակիչ Ա.Ի. Բոլտունովան ճիշտ կերպով այն մեկնաբանում է որպես «հելլենիստական նամակի սովորական ձև»: Իրոք, այդ արձանագրության բովանդակությունն ու ոճը շատ նման են թագավորների այն բազմաթիվ նամակներին, որոնք հայտնաբերվել են արձանագրությունների ձևով հելլենիստական Արևելքի երկրներում: Նշենք, սակայն, որ Ա.Ի. Բոլտունովան սխալմամբ այդ նամակի հեղինակ համարում է ոչ թե Արմավիրի քրմապետ Միթրասին, այլ թագավոր Արտաքսիասին (Արտաշեսին)*[29]*: Նրա ոչ ճիշտ մեկնաբանումը հիմք է ծառայել Ա.Գ. Բոկչյանինին հանգելու այն սխալ ենթադրության, թե այս արձանագրության մեջ հիշատակված եբրոնտեսը հանդիսանում էր Կոլխիդայի թագավոր, որի հետ Արտաքսիասը իբր «մտել էր քաղաքական սերտ հարաբերության մեջ»*[30]*: Մեր նախորդ աշխատություններից մեկում Արմավիրի վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակված Միթրաս անունը համադրելով Գառնիի հունարեն արձանագրության ΗΛΙΟΣ անվան, ինչպես նաև կոմմագենեի Անտիոքոս թագավորի՝ Նեմրուդ-լեռան վրա կառուցած հուշարձանի տվյալների հետ, ցույց ենք տվել, որ Միթրասը եղել է Արմավիրի*

(28) *Հ.Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946:*

(29) *А.И. Болтунова, Греческие надписи Армавира, «Արմֆանի տեղեկագիր», 1942, Նո 1-2: Ա.Ի. Բոլտունովայի վերծանության սխալը մանրամասն ցույց ենք տվել մեր նախորդ ուսումնասիրություններում (Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, Տես. ՀԳԱՀԳ, 1963, Նո 9, էջ 57: Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 134-135): Այստեղ նկատենք, որ տվյալ արձանագրության մեջ Արտաքսիասի անունը չէ հիշատակված:*

(30) *А.Г. Бокшанин, Парфия и Рим, ч. I, М., 1963, էջ 224)*

տաճարի քրմապետի անունը[31]։

Երկրորդ վավերագիրը պղնձե այն դրամն է, որի երեսին դրոշմված է Մոփքի թագավոր Արշամի պատկերը, գլխին կոնաձև տիարան։ Դրամի հակառակ երեսին կարդացվում է՝ «ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΜΟΥ» (թագավորի Արշամի) վերտառությունը[32]։ Այդ՝ հայ թագավորի պատկերը կրող մեզ հայտնի դրամներից ամենահինն է։ Մ.թ.ա. III դարի կեսերին Մոփքում դրամ հատելու այս փաստը վկայում է այն մասին, որ հայկական ոչ մեծ այս թագավորությունը միջազգային առևտրական հարաբերություններ էր հաստատել հարևան երկրների հետ՝ մի հանգամանք, որը պայմանավորված էր առաջին հերթին այն բանով, որ Մոփքը աշխարհագրական տեսակետից առավել մոտ էր գտնվում հելլենիստական աշխարհին, քան Հայաստանի մյուս հատվածները։ Ապա և այն բանով, որ Մոփքի միջով էր անցնում Փոքր Ասիայի ծովափնյա վաճառաշահ քաղաքները Արևելքին միացնող «արքունի ճանապարհի» մի զգալի մասը[33]։ Բացի այդ, իր անունով դրամ հատելն, անպայման, նշանակում էր նաև, որ Արշամը արդեն իրեն հայտարարել էր անկախ թագավոր։ Հիրավի, նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիշյալ Արշամը (Ἀρσάμης) ոչ միայն Մոփքի թագավորն էր, այլև Կոմմագենեի, քանի որ այդ ժամանակ, Մոփքն ու Կոմմագենեն կազմում էին մեկ միասնական թագավորություն։ Այս կարծիքը հաստատվում է ոչ միայն Կոմմագենեի հայտնի արձանագրությամբ, այլև Կոմմագենեում այս թագավորի անունը կրող զույգ Արտամեյա քաղաքների առկայությամբ։ Հիշյալ արձանագրություններում այս Արշամի հայրը՝ Սամեսը (Σάμης)

(31) Ս.Մ. Կրկյաշարյան, Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, էջ 57-59։ Տես նաև՝ Հ.Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946։ Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 136-139։

(32) E. Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890, p. CXCIII.

(33) Я.А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён, 2րդ հրատ. Ереван, 1954, էջ 31։

նաև հիշատակվում է որպես թագավոր[34]։ Արշամ թագավորի անունը մատենագրության մեջ հիշատակված է միայն Պոլիենոսի մոտ (II դար մ.թ.) «Ռազմարվեստ» ձեռով։ Պոլիենոսը նրան ընութագրում է որպես ընկեր (φίλος Ἀρσάβης)[35] Անտիոքոս Հիերաքսի, որն ապստամբելով իր եղբոր՝ թագավոր Սելևկոս Բ Կալլինիկոսի դեմ, ապաստանել էր Արշամի մոտ։ Հույն պատմիչը, դժբախտաբար, չի հիշատակում, թե այս Արշամը Հայաստանի ո՞ր հատվածում է իշխել։ Վ. Լանգլուան[36] իրավացի կերպով ենթադրում է, որ նրա նստավայրը եղել է Մոփքում գտնվող Արշամաշատ քաղաքը[37], որը հիշատակված է Պոլիբիոսի, Պլինիոսի և Տակիտոսի երկերում[38]։ Այս ենթադրությունը հավանական է համարում նաև է. Բաբելոնը[39]։

Այն, որ Մոփքի տերերը արդեն մ.թ.ա. III դարում յուրացրել էին թագավորական տիտղոսը, հետևում է նաև Անտիոքոս Գ-ի այսպես կոչված արևելյան արշավանքին վերաբերող Պոլիբիոսի հայտնի վկայությունից։ Նա գրում է. «Քսերքսեսի թագավորության ժամանակ (βασιλεύοντος Ξέρξου) Արմոսատա քաղաքում, որը գտնվում է այսպես կոչված Գեղեցիկ դաշտում Եփրատի և Տիգրիսի միջև, Անտիոքոս թագավորը, քաղաքը պաշարելով վերցնելու մտադրությամբ, բանակել էր նրա մոտ»[40], Հույն պատմագրի գործածած βασιλεύοντος դերբայը (βασιλεύω = «թագավորել» բայից) անկասկած է դարձնում այն, որ Արշամաշատ քաղաքում նստած Քսերքսեսին նույնիսկ Պոլիբիոսը, որը գրեթե ժամանակակից էր նկարագրվող դեպքերին, համարում է թագավոր։

(34) K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien. Textband, Berlin, 1890; K.F. Dörner, T. Goell, Arsameia am Nymphaios, "Istanbuler Forschungen", Bd. 23, 1963; Գ.Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 31-33։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 512-519։

(35) Polyaen., IV, 17.

(36) Langlois, Numismatique générale de l'Arménie, Paris, 1859, p. 11.

(37) Արշամաշատ քաղաքի մասին մանրամասն տես՝ Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 108-111։

(38) Polyb., VIII, 25, 1; C. Plinii Nat. Hist., VI, 10; Taciti Annales, XV, 10.

(39) Babelon, Նույն տեղում։

(40) Polyb., Նույն տեղում։

Այս Քսերքսեսը, հավանաբար, որդին է Մոփքի Արշամ թագավորի, որի մասին խոսք եղավ վերևում[41] և, ինչպես հետևում է Պոլիբիոսի հետագա վկայությունից, նա ժառանգել էր ոչ միայն իր հոր թագավորությունը և նրա թագավորական տիտղոսը, այլև պատկառելի գումարի հասնող մի պարտք, որը իրրև հարկ Սելևկյան թագավորին վճարելուց հրաժարվել էր իրեն անկախ թագավոր հայտարարած Արշամը։ Այն հանգամանքը, որ Քսերքսեսի անձնատուր լինելուց հետո Անտիոքոսը վերցնում է նրանից երեք հարյուր տաղանդ և հազար ձի ու նույնչափ ջորի իրենց լծասարքով[42], ցույց է տալիս, որ Մոփքի թագավորը բավական խոշոր միջոցների տեր էր։

Մոփքի Քսերքսես թագավորի մասին մ.թ. VI դարի բյուզանդական պատմիչ Հովհաննես Անտիոքացու ժամանակագրության մեջ պահպանված մի վկայությունից հետևում է, որ նա, հետագայում, զոհ էր գնացել նույն Անտիոքոս Գ–ի մեքենայություններին և սպանվել Սելևկյան թագավորի քրոջ՝ Անտիոքիսի միջոցով, որին կնության էր առել Քսերքսեսը[43]։ Քսերքսեսի մահով ժամանակավորապես վերանում է թագավորական իշխանությունը Մոփքից, որտեղ, որպես Սելևկյան թագավորի սատրապ-կառավարիչ հաստատվում է Մոփքի ապագա թագավոր Զարեհը (Ζαρίαδρις)։

Մոփքի թագավորությունը վերացնելուց հետո Անտիոքոս Գ–ը մտածեց հայկական մյուս պետականությունը՝ Երվանդունիների Արտաշատյան թագավորությունը ևս վերացնելու մասին։ Այդ նրան խիստ անհրաժեշտ էր դեպի արևելք կատարելիք արշավանքի ժամանակ իր թիկունքն ապահովելու համար։ Իր այս մտադրությունը իրագործելու նպատակով նա օգտագործեց հայկական ավագանու ներկայացուցիչներից Արտաշեսին (Ἀρταξίας), որը գուցե և Մոփքի Զարեհին ազգակից էր։ Սա, հավանաբար Անտիոքոս Գ–ի տրամադրած զորքերի օգնությամբ, երկարատև կռիվներից հետո, որոնց մասին վկայում են Ստրաբոնն ու

(41) *Համմ.* K.J. Beloch, Griechische Geschichte, III Band, II Abteilung, Strassburg, 1904, s. 295; J. Sandalgian, Histoire documentaire de l'Arménie, II, Rome, 1917.

(42) Polyb., *Նույն տեղում*։

(43) Joh. Antioch., fr. 53, K. Müller, Fragmenta historicorum graecorum, IV, s. 557.

Մովսես Խորենացին[44], տապալում է Արմավիրում կամ Նորակառույց Երվանդաշատում թագավորող Երվանդ Վերջինին և հաստատվում այնտեղ որպես Սելևկյաններին հպատակ սատրապ-կառավարիչ։ Այսպիսով, մ.թ.ա. III դարի վերջին հայկական այս երկու երկրամասերում թագավորական իշխանությունը ժամանակավորապես վերանում է։

Հունարենում սատրապոս (σατράπης) բառը նշանակում է՝ «զորավար, զորքի առաջնորդ»։ Եվ իրոք, Սելևկյանների տերության մեջ, ինչպես նշում է Գ.Ա. Տիրացյանը, մինչև մ.թ.ա. III դարի կեսերը սատրապները եղել են գերազանցապես զորավարներ[45]։ Հետագայում, Անտիոքոս Գ–ի ժամանակ, սատրապոսի պաշտոնն արդեն «զինվորական աստիճանից վեր է ածվում պետական, քաղաքացիական պաշտոնի, մարզի կառավարչի, որը որպես այդպիսին սատրապին ետ է մղում պետական վարչությունից, կառավարչությունից»[46]։ Անտիոքոս Գ–ի վարչական այս միջոցառման հիմնական նպատակը եղել է «երկրին տալ միատարր, միասնական կառավարչական կազմվածք։ Այդ պատճառով էլ սատրապոս տերմինն սկսում է չնորհվել անկախ այն հանգամանքից, թե տվյալ անձնավորությունը ռեալ կապ ունի՞ կայսրության զորքի հետ, և անտեսելով նրա հույն, մակեդոնացի կամ բնիկ լինելը»[47]։ Այս երևույթն իր արտահայտությունն է գտել այն փաստում, որ Ստրաբոնը Հայաստանի երկու մարզերի կառավարիչներ Արտաքսիասին և Զարիադրիսին անվանում է ոչ թե հիպարքոս կամ սատրապ, այլ Անտիոքոս Գ–ի սատրապոսներ[48]։

Ինչպես հետագայում կտեսնենք, մ.թ.ա. I դարում Տիգրան Բ–ը, հետևելով Սելևկյանների օրինակին, իր նվաճած երկրներում հայ ազնվականության ներկայացուցիչներին (Բագարատ, Գուրաս) նշանակում է սատրապոս-կառավարիչ[49]։ Ըստ երևույթին, Սելևկյանների այս քաղաքականությունը որդեգրեցին նաև

(44) Strabo, XI 14, 15 (C. 531)։ *Մովսես Խորենացի, Բ, լէ-կը*։

(45) *Գ.Ա. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի Ն.մ.թ. 3–2րդ դարերի պատմության մասին, ԲՄ, Նո 6, 1962, էջ 22*։

(46) *Նույն տեղում*։

(47) *Նույն տեղում*։

(48) Strabo, XI, 14, 15 (C. 531).

(49) Appian Syr., 48; Plut. Lucull., XXXII.

իրենց տերության սահմաններն ընդարձակած Պոնտոսի թագավորները, որոնք իրենց ենթակա մարզերում նշանակում էին սատրապեզոս-կառավարիչներ։ Այսպես, Ստրաբոնը, խոսելով իր արիստոկրատական ծագման մասին, իր նախնիների թվում հիշատակում է պոնտական թագավորության ամենահայտնի մարդկանց, որոնք Միհրդատ Եվպատորի ժամանակ գլխավորել են պետական բարձրագույն պաշտոններ, եղել են սատրապեզոսներ, սատրապներ և քրմապետներ[50]։

Արդեն նշել ենք, որ Մոփքում՝ Զարեհի և Մեծ Հայքում՝ Արտաշեսի սատրապեզոսի պաշտոնում նշանակվելու ակտով Հայկական լեռնաշխարհում ժամանակավորապես վերացավ թագավորական իշխանությունը։ Բայց շուտով, 190 թվականին, Մագնեսիայի մոտ հռոմայեցիների դեմ մղած վճռական ճակատամարտում, Անտիոքոս Գ-ի կրած ծանր պարտությունից հետո, նույն Արտաշեսն ու Զարեհը, օգտվելով արդեն ստեղծված բարենպաստ պայմաններից, իրենց հայտարարեցին անկախ թագավորներ այն երկրամասերում իսկ, որտեղ մինչև այդ իշխել էին որպես Սելևկյան թագավորի կողմից նշանակված սատրապեզոսներ։

Ստրաբոնի վկայությունից պարզ կերպով հետևում է, թե նոր կազմավորված այս երկու — Մեծ Հայքի ու Մոփքի — հայկական թագավորություններից առանձնապես ուժեղանում ու բարգավաճում է առաջինը, որի թագավոր Արտաշեսը դառնում է հիմնադիրը նոր՝ Արտաշեսյան արքայատոհմի[51], որի ներկայացուցիչները քիչ փառավոր էջեր չգրեցին հայ ժողովրդի պատմության տարեգրքում։ Ստրաբոնի վկայությունը հաստատվում է տեղի ունեցած դեպքերին ժամանակակից ամենահավաստի մատենագիրներից մեկի՝ Պոլիբիոսի մեզ արդեն հայտնի հաղորդման այն հատվածով, որտեղ Արտաշեսն անվանված է «Հայաստանի մեծագույն մասի տիրակալ» (ὁ τῆς πλείστης Ἀρμενίας ἄρχων)[52]։ Արտաշեսի թագավոր հռչակվելը չրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի պատմության մեջ, ունեցավ քաղաքական կարևորագույն նշանակություն թե՛ ներքին և թե՛ արտաքին իմաստով։ Հայաստանում թագավորական իշխանության հաստատումն, առաջին հերթին, հետևանք էր երկրի ներքին

(50) Strabo, XI, 2, 10 (C. 499)։ XII, 3, 33 (C. 557) և այլն։
(51) Նույն տեղում, XI, 14, 5 (C. 528).
(52) Polyb, XXVI, 6, 1-2.

զարգացման և, դրա հիման վրա, մեծ թափով չարունակվող հայկական էթնիկական տարրերի համախմբման։

Հայաստանում Աքեմենյանների տիրապետության չրջանից մինչև Արտաշեսյանների թագավորությունն ընկած ժամանակամիջոցը Հայաստանի տնտեսական կյանքում տեղի էին ունեցել լուրջ տեղաշարժեր։ Այդ եզրակացությունը հետևում է պատմական այդ տարբեր չրջաններին վերաբերող երկու վկայություններից, որոնցից առաջինը մեզ հասել է Աքեմենյաններին ժամանակակից Հերոդոտոսի գրչի չնորհիվ, մյուսը՝ Ստրաբոնի։ Ելնելով այդ վկայությունների կարևորությունից, անհրաժեշտ ենք գտնում դրանք մեջ բերել բնագրից կատարած մեր թարգմանությամբ։

«Նավերը, — պատմում է Հետոդոտոսը, — որոնցով (սատրեստանցիները) նավում են գետն ի վար դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ։ Ամմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը։ դրանց կողերը պատում են կաշվե ծածկով, նավի հատակի նման։ Նրանք ոչ նավի եռնամասն են լայնացնում, ոչ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև։ Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար։ Նրանք մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կաթասներով»[53]։ Իսկ Ստրաբոնը, խոսելով նախարշակունյան Հայաստանի առևտրի մասին, գրում է։ «Կոմանան բազմամարդ քաղաք է և հանդիսանում է Հայաստանից եկածների հայտնի վաճառատեղին»[54]։ Այս երկու վկայությունների համեմատությունից բխում է, որ եթե Հերոդոտոսի ժամանակ, երկրի տնտեսությունը համեմատաբար թույլ էր զարգացած և Հայկական լեռնաշխարհի ու Բաբելոնի միջև կատարվող առևտրի միջնորդները ասորեստանցի առևտրականներն էին, ապա Ստրաբոնի ժամանակ, մոտավորապես հինգ հարյուրամյակ հետո, երկրի տնտեսությունն արդեն այնքան էր զարգացել, որ հայերն իրենք էին անմիջականորեն զբաղվում ներքին

(53) Herod., I, 194.
(54) Strabo, XI, 5, 8 (C. 506)։ XII, 3, 36 (C. 559).

և արտաքին առևտրով[55]:

Հայկական բարձրավանդակում արտադրողական ուժերի հետագա աճի և, այդ հիման վրա, առևտրի զարգացման պատմական պրոցեսի արագացմանը մեծ չափով նպաստեցին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով Աքեմենյանների լծի տապալումը, ինչպես նաև Աքեմենյան նախկին սատրապությունների ավերակների վրա Մերձավոր Արևելքում մի շարք նոր, հելլենիստական տիպի պետությունների (Պոնտոս, Կապադովկիա, Բյութանիա և այլն) առաջացումը, որոնք, հակառակ յուրաքանչյուր երկրի բնակչության էթնիկական առանձնահատկություններից բխած որոշ տարբերություններին, այնուամենայնիվ, ունեին հիմնականում միատեսակ սոցիալ-տնտեսական և քաղաքական կարգեր:

Եթե մինչ այդ, կլասիկ կոչված շրջանում, Հունաստանում և Փոքր Ասիայում պետական կազմակերպության գերակշռող ձևը քաղաք-պետությունն էր, պոլիսը, ապա Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո ընկած պատմական ժամանակաշրջանում, որն ընդունված է անվանել ընդհանրապես հելլենիզմ, պետական կառուցվածքի եթե ոչ համընդհանուր, ապա գերակշռող ձևը դառնում է տերիտորիալ միապետությունը, թագավորների գլխավորությամբ: Մենք տեսանք, որ Հայկական լեռնաշխարհում ևս այդ ժամանակ առաջանում է Երվանդունիների հայկական թագավորությունը, որի հիման վրա հետագայում կազմավորվում է Արտաշեսյանների հելլենիստական թագավորությունը:

Այս առթիվ անհրաժեշտ ենք համարում հիշեցնել, որ Արևելքի համար հելլենիստական պետությունը երբեք չի կարելի պատկերացնել որպես հելլենների պետություն: Նորաստեղծ այս հելլենիստական թագավորությունները նույնպես արևելյան տիպի պետություններ էին, պատմական զարգացման նոր փուլին համապատասխան, որտեղ, սակայն, հելլենների դերը եղել է

(55) Այս մասին ավելի մանրամասն տես Ս.Մ. Կրկյաշարյան, Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, էջ 64–65: Նույնի՝ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 160–165, որտեղ քննադատել ենք ցարդ կատարված սխալ թարգմանությունները:

չդադարել, հատկապես տնտեսական ու մշակութային առումով[56]:

Արդ, ի՞նչ նկատելի տարբերություն կար Երվանդունիների և դրան հաջորդած Արտաշեսյանների հայկական թագավորության կառուցվածքի միջև: Ինչո՞վ էին տարբերվում իշխանության գլուխ կանգնած Արտաշեսյան թագավորի իրավասությունները իր նախորդի՝ Երվանդունի թագավորի իրավասություններից: Սկզբնաղբյուրները համարյա լռում են այդ մասին: Այնուամենայնիվ, աղբյուրների աղոտ տվյալների և անորոշ ակնարկությունների հիման վրայ կփորձենք որոշ համեմատություններ անել, այդ հարցին ինչ-որ չափով պատասխանելու նպատակով:

Նախորդ էջերում մենք խոսեցինք սատրապական Հայաստանում գոյություն ունեցած մի շարք հաստատությունների մասին, որոնք, բնական է, սատրապ Օրոնտեսից պիտի ժառանգեր թագավոր Երվանդը:

Երվանդունի թագավորի մասին Դիոդորոսի հաղորդած չփոթ տեղեկություններից հետո, որոնց մասին արդեն խոսք է եղել նախորդ հատվածներում, վավերական առաջին տվյալը Արմավիրի հունարեն այն արձանագրությունն է, որի մասին նույնպես մեկ անգամ խոսել ենք վերևում: Մեզ հետաքրքրող հարցին անցնելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այդ արձանագրությունն ամբողջությամբ: Այնտեղ կարդում ենք:

Ο ΒΑΣΙΛΕΥΣ ΑΡ
ΜΑΔΟΕΙΡΩΝ
ΜΙΘΡΑΣ Ε(Β)ΡΟΝΤΗ
ΒΑΣΙΛΕΙ ΧΑΙΡΕΙΝ
(Ε)Ι ΕΡΡΩΣ ΕΥ ΑΝ ΕΧΟΙ
ΥΓΙΑΙΝΕΙΝ ΔΕ ΚΑΙ ΤΑ ΕΓ
ΓΟΝΑ ΑΥΤΟΥ ΥΓΙΑΙ
ΝΩΝ ΤΗΝ ΒΑΣΙΛΕΙ
ΑΝ ΔΙΑΤΕΛΕΣΕΙΣ
ΤΕ ΣΙΒΙΟΥ
Δ

(56) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 406 և հաջ.:

Ինչպես նկատելի է, արձանագրության մեջ, որը քրմապետի նամակն է թագավոր Երրոնտեսին, երկու անգամ (առաջին և չորրորդ տողերում) օգտագործված է բասիլևս — «թագավոր» բառը և մեկ անգամ՝ (8–9րդ տողեր) բասիլեյա — «թագավորություն, թագավորական իշխանություն» բառը։ Առաջին դեպքում երրորդ տողում նամակի հեղինակ, Արմավիրի տաճարի քրմապետ Միթրասը (ΜΙΘΡΑΣ)[57] ինքն իրեն անվանում է բասիլևս։ Երկրորդ դեպքում Միթրասը, դիմելով Երրոնտեսին, որն անկասկած հայկական աղբյուրների Երվանդն է, նրան անվանում է նույնպես թագավոր։ Այն հանգամանքը, որ քրմապետը իր ուղերձում իրեն ևս համարում է թագավոր, ինչպես Երրոնտեսին, թույլ է տալիս ենթադրելու, որ Հայաստանում, դասակարգային չերտավորման դեպևս համեմատաբար թույլ լինելու պայմաններում, Երվանդունի թագավորի իշխանությունը տակավին բացարձակ չէր, որ դեռևս նրա կողքին կային քրմապետներ ու ցեղերի առաջնորդներ, որոնք նույնպես իրենց համարում էին թագավորներ։

Արմավիրի արձանագրության այս երրոնտեսը, ամենայն հավանականությամբ, հունական աղբյուրներում կցկտուր կերպով հիշատակված Հայաստանի սատրապ, հետագայում, Աքեմենյանների տապալումից հետո, թագավոր, Օրոնտեսների վերջին ներկայացուցիչն է եղել։ Սա, անկասկած, Մովսես Խորենացու Երվանդն է, որը պատմահոր մոտ կիսապատմական-կիսավիպական անձնավորություն է։ Խորենացին այս Երվանդի պատմությանը նվիրել է իր մատյանի երկրորդ գրքի լէ–խզ գլուխները։

Պատմահայրը Երվանդ Վերջինի գահակալությունը վերագրում է երկու տարբեր ժամանակների։ Մի անգամ նա Երվանդի թագավորությունը դնում է «յոթերորդ ամի Դարեհի վերջնոյ»[58]։ Սակայն, ոչ պարթև Արշակունիների, և ոչ էլ Սասանյանների մեջ Դարեհ անունը կրող որևէ թագավոր մեզ հայտնի չէ։ Պատմությանը հայտնի են Դարեհ անունը կրող ընդամենը երեք թագավոր, որոնք պատկանում էին մ.թ.ա. VI-IV դարերում

(57) *Միթրասի մասին հանգամանորեն տես՝ Ս.Մ. Կրյաշարյան, Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, էջ 57–59։ Նույնի, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 134–139։*

(58) *Մովսես Խորենացի, Բ, լէ։*

իշխած Աքեմենյան տոհմին։ Եթե ընդունենք, իսկ չընդունել չենք կարող, որ այս Դարեհ Վերջինը Կոդոմանոսն է (336–331 թթ.), որի թագավորությանը վերջ դրեց Ալեքսանդր Մակեդոնացին, ապա պիտի ենթադրել, որ Խորենացին իրոք նկատի ունի Երվանդյան թագավորներից մեկն ու մեկին։ Մեր այս ենթադրության օգտին խոսում է նաև այն փաստը, որ նույն Խորենացու պատմելով, Երվանդին կործանում և նրան հաջորդում է ոչ այլ ոք, քան Արտաշեսը[59]։ Այս տվյալները լիովին համընկնում են Ստրաբոնի հավաստի այն վկայությանը, թե Հայաստանում «վերջին իշխողն էր յոթը պարսիկներից մեկի, Հյուդարնեսի չառավիղ Օրոնտեսը։ Այնուհետև երկիրը բաժանվեց երկու մասի հռոմայեցիների դեմ պատերազմած Անտիոքոս Մեծի տոհմատեղոնների՝ Արտաքսիասի և Զարիադրիսի կողմից։ Եվ իշխում էին նրանք թագավորի հանձնարարությամբ, իսկ նրա պարտությունից հետո հարելով հռոմայեցիներին՝ իշխեցին իրենք առանձին և թագավոր հայտարարվեցին»[60]։ Հ.Հ. Մանանդյանը նույնպես գտնում է, որ Խորենացու հիշատակած Երվանդը Արտաշեսի նախորդ Երվանդ Վերջինն է[61]։ Իր մատյանի հաջորդ գլխում, սակայն, պատմահայրը նույն այս Երվանդին համարում է Հռոմի կայսրներ Վեսպասիանոսի (69–79 թթ.) և Տիտոսի (70–81 թթ.) ժամանակակիցից[62]։ Այս դեպքում արդեն Խորենացու ժամանակագրական վրիպումն ակներև է. քանի որ, Վեսպասիանոսին ու Տիտոսին ժամանակակից պատմիչներ Հովսեպոս Փլավիոսի և Տակիտոսի, ինչպես նաև II դարի հեղինակներ Սվետոնիոս Տրանկվիլլի ու Դիոն Կասսիոսի համապատասխան վկայությունների համաձայն[63], այդ թվականներին Հայաստանում թագավորում էր Տրդատ Ա Արշակունին, Արշակունյաց հարստության հիմնադիրը Հայաստանում։

Հ.Հ. Մանանդյանը, անդրադառնալով Խորենացու այս վրիպումին, իրավացի կերպով գրում է. «Բայց մեր պատմահայրը,

(59) *Մովսես Խորենացի, Բ, խգ–խզ։*

(60) Strabo, XI, 14, 15 (C. 531).

(61) *Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 126։*

(62) *Մովսես Խորենացի, Բ, լը։*

(63) Ἰώσηπος Φλαύιος, Περὶ Ἰουδαϊκοῦ πολέμου, VII, 249; C. Taciti Annales, XIII, 34-40; XIV, 26; XV, 24-30; XVI, 23-24; C. Suetonii Tranquilli, De vita XII Caesarium, Nero, 12, 1; Cass. Dio, L XIII, 1-8.

օգտվելով, հավանորեն, բացի վիպասանքից նաև այլ մեզ անհայտ աղբյուրներից՝ Երվանդի ու Արտաշեսի ընդարձակ պատմությունը հերյուրել է և չարադրել, բնականաբար ըստ իր ըմբռնման ու ժամանակագրության, չփոթելով Օրոնտես-Երվանդին Եդեսիայի Արգար է թագավորի որդու՝ Արբանդեսի (Ἀβγάνης) հետ, որը ժամանակակից էր Տրայանոս կայսեր (96–117 թթ.)[64]:

Ըստ երևույթին, Խորենացին այս Երվանդին չի համարում օրինական թագավոր, քանի որ նա թագավորել է «առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր»[65], այսինքն, չի թագադրվել Բագրատունի ասպետի կողմից: Այն, որ թագադրման ակտը առաջնահերթ նշանակություն ուներ հայոց թագավորի իշխանության օրինականությունը հաստատելու համար, կարելի է հետևցնել նաև Խորենացու այն հաղորդումից, որի համաձայն Վաղարշակ թագավորը, իր թագավորությունը կազմակերպելիս և նախարարությունները հաստատելիս, առաջին հերթին կարգավորում է ինքն իրեն և իր տունը, սկսելով իր գլխից ու թագից և Բագարատին նշանակում է թագադիր ասպետ:

«Արդ՝ նախ և առաջին, — գրում է Խորենացին, — օրինադրէ թագաւորն զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ և ի թագէ: ... Եւ իշխել նմա (Բագարատին — Ս.Կ.) թագ ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր, այլ և ասպետ»[66]:

Թագադրման ակտը ոչ միայն օրինականացնում էր տվյալ թագավորի իշխանությունը, այլև միաժամանակ հաստատում էր թագադրողի և թագադրվողի, այն է՝ քրմապետի և թագավորի դաշինքը և համագործակցությունը երկրի կառավարման գործում:

Պատմահոր տվյալներով, Երվանդը, որպես թագավոր, քաղաքական ու տնտեսական ոչ մի աչքի ընկնող միջոցառում չի ձեռնարկել, բացի այն, որ իր համար նոր մայրաքաղաք կառուցելիս, երկրի վարչա-քաղաքական կենտրոնը անջատել է պաշտամունքային կենտրոնից, ինչպիսին մինչ այդ հանդիսանում էր նախկին մայրաքաղաք Արմավիրը: Այդ մասին Խորենացու մոտ

(64) Հ.Հ. Մանանդյան, նույն տեղում: Համմ. նաև Г. Халатянц, Армянский эпос в «Истории Армении» Моисея Хоренского, М., 1896, էջ 219 և 226:

(65) Մովսես Խորենացի, Բ, լե:

(66) Նույն տեղում, Բ, լ:

կարդում ենք. «Բայց Երուանդայ չինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւիրայ, ուրոյն ի կրոցն, զոր ոչ օգուտ իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի ի գալ և ի զոհել անդր աչխարհի՝ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին չինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբազնաց յօրինեալ է զկազմութիւն, և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս չինեալ՝ զեղբայր իւր զերուազ քրմապետ կացուցանէր»[67]: Գահակալման այս դեպքը հիմք է տվել Ս.Տ. Երեմյանին ենթադրելու, որ «Երվանդունիների տոհմում ավագ եղբայրը ժառանգում էր թագավորական գահը, իսկ կրտսերը դառնում էր Արմավիրի քրմապետը»[68]: Նշենք, սակայն, որ աղբյուրներից մեզ հայտնի այս միակ փաստի հիման վրա նման անվերապահ եզրակացության հանգելը դերևս վաղ է: Թագավոր Երվանդը երկրի կրոնական կենտրոնը Արմավիրից փոխադրում է ոչ թե իր նոր հիմնադրած Երվանդաշատ թագավորանիստը, այլ Բագարան, ըստ երևույթին, տաճարների և քրմերի հետագա հզորացումը կանխելու նպատակով, քանի որ Հայաստանում տաճարների տնտեսական հզորությունը և դրա հետ միասին նրանց քաղաքական ազդեցությունը, հավանաբար աճելով, սկսում էր հասնել թագավորական իշխանության համար վտանգավոր չափերի: Երվանդի այս քայլն առնելու պատճառներից մեկն էլ, անկասկած, տոհմախմբությունների ժամանակ ժողովրդական հավանական ընդվզումների վախն է եղել — «զի մի ի գալ և ի զոհել անդր աչխարհի՝ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն»:

Մեր քննարկած հարցի կապակցությամբ թագավորանիստը պաշտամունքային կենտրոնից անջատելու երևույթն ունի կարևոր նշանակություն: Պիտի ենթադրել, որ երկրի վարչաքաղաքական կենտրոնը պաշտամունքայինից անջատելը և այնտեղ, որպես քրմապետ, երվազին նշանակելը հետևանք էր երկրում առաջացած յուրատեսակ երկիշխանության: Մենք այս ենթադրությունն անում ենք ելնելով երկու փաստից: Արմավիրի վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակված են, ինչպես

(67) Նույն տեղում, Բ, խ:

(68) С.Т. Еремян, Основные ч[illegible]ты ..., էջ 62:

տեսանք, երկու թագավոր, որոնցից մեկը քրմապետն է, մյուսը՝ Եբրոնտես-Երվանդը։ Այնուհետև, Խորենացու պատմելով, Ամբատը Արտաշեսից հրաման է ստանում «երթալ յամուրն Բագարան, որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ, գի սպանցէ զԵրուազ զեղբայր Երուանդայ»[69]։ Ըստ երևույթին, թագավոր Երվանդին սպանելով չէր կարելի գործը ավարտված համարել։ Որպեսզի Արտաշեսը կարողանար վերցնել թագավորական իշխանությունը Երվանդունիների ձեռքից, անհրաժեշտ էր ոչնչացնել նաև երկրորդ թագավորին՝ քրմապետ Երվազին։

Մեր մատնանշած երկիշխանության այս երևույթը Երվանդունիների Հայաստանում ազերվում է, մի կողմից, պատմական նույն այս ժամանակաշրջանում Հայաստանի հարևան երկրներում տիրող դրության, որտեղ, Ստրաբոնի վկայությամբ, «քուրմը թագավորից հետո երկրորդ անձնավորությունն է և ... մեծ մասամբ նույնիսկ թագավորներն ու քրմերը պատկանում են միևնույն տոհմին»[70], մյուս կողմից, հելլենիստական թագավորություններում լայնորեն տարածված գահակցության երևույթին, երբ հայր ու որդի և կամ երկու եղբայր գահակից են հայտարարվում։

Արտաքին աղբյուրները հնարավորություն չեն տալիս դատելու երկրի ներսում Երվանդունի թագավորների ձեռնարկած որևէ վարչական միջոցառման մասին։ Այդ առնչությամբ սոսկ ազոտ ակնարկությունների կարելի է հանդիպել Խորենացու մոտ։ Պատմահոր հաղորդումներից կարելի է եզրակացնել, թե Երվանդ վերջինը փորձել է վարչական ինչ-որ բարեփոխություններ կատարել, իր երերվող իշխանությունը ամրապնդելու նպատակով, սակայն անհաջող։ Խորենացին պատմում է, թե Երվանդը, տեսնելով, որ նախարարները լքում են իրեն և անցնում Արտաշեսի կողմը, «առաւել ևս յորդագոյն տայր զպարգևան, և բաշխէր միոյ միոյ ումեք ի նոցանէ զգանձան. և որչափ չատ տայր՝ չատ ևս ատելի լինէր։ Քանզի գիտէին ամենեքեան, եթե ոչ առ առատութեան տայ, այլ առ երկիւղի վատնէ։ Եւ ոչ այնչափ սիրելի գայնոսիկ առնէր, որոց չատն տայր, քան թե թշնամի գայնա՝ որոց ոչն տայր պերճագոյնա»[71]։

Խորենացու պատմելով, Երվանդի և Երվազի սպանությունից հետո Հայաստանի գահն անցնում է Արտաշեսին։ Ի դեպ նշենք, որ պատմահոր մոտ Արտաշեսի գահակալության տարիները ևս չփոթված են, քանի որ խախտված են նրա նախորդի՝ Երվանդի թագավորության տարիները։ Ըստ Խորենացու, Երվանդի թագավորությանը անմիջապես փոխարինում է Արտաշեսի գահակալությունը։ Մինչդեռ, ինչպես տեսանք, այդ դեպքերին առավել ժամանակակից օտար աղբյուրների համաձայն, Երվանդունիների կործանումից հետո, կարճ ժամանակով, վերանում է Հայաստանում թագավորական իշխանությունը և Հայաստանը վերածվում է Սելևկյան թագավորներին ենթակա մարզի՝ սատրապիայի, սատրապոս-կառավարչի տիրապետության տակ։ Բայց այս դրությունը տևում է ոչ երկար, հավանաբար երկու տասնամյակից էլ պակաս։ Շուտով Մոփքում Զարեհը, իսկ Մեծ Հայքում Արտաշեսն իրենց հայտարարում են թագավորներ։ Հիմք է դրվում Արտաշեսյան թագավորությանը։ Թե՛ օտար և թե՛ հայկական աղբյուրներում համեմատաբար ավելի լայն տեղեկություններ կան Արտաշեսյանների թագավորության մասին, որոնց քննարկումը մեզ հնարավորություն կտա որոշ եզրակացություններ անելու թագավորական իշխանության ֆունկցիաների մասին Հայաստանում։

Արտաշեսի մասին եղած պատմական առաջին հիշատակության համար մենք պարտական ենք Պոլիբիոսին, որի մոտ Արտաշեսը (Ἀρταξίας) դասված է Փոքր Ասիայի դինաստների՝ տիրակալների շարքում և անվանված է «Հայաստանի մեծագույն մասի «ἄρχων»[72]։ Վերջին ἄρχων (արքոն) բառը հունարենում նշանակում է տիրող, թագավոր, ուստի և մենք այն նույնացնում ենք «արքայ» հասկացողությանը։ Արտաշեսին թագավոր (βασιλεύς) են անվանում նաև Դիոդորոս Սիկիլիացին, Ստրա-

(69) *Մովսես Խորենացի, Բ, խը։*

(70) Strabo, XII 2, 3 (C. 535)։ *Համմ. նաև* Strabo, XII, 3, 32 (C. 557) և XI 4, 7 (C. 503)։ *Այս մասին հանգամանորեն տես Ս.Մ. Կրկյաշարյան, Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, էջ 56–61։ Նույնի, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 126–143։*

(71) *Մովսես Խորենացի, Բ, խե։*

(72) «... Περιελήφθησαν δέ ταῖς συνθήκαις τῶν μέν κατά τήν Ἀσίαν δυναστῶν Ἀρταξίας ὁ τῆς πλείστης Ἀρμενίας ἄρχων» (Polyb., XXV, 1, 12).

բոնը և Ապպիանոսը[73]: Հատկանշական է, որ Ստրաբոնը Օրոնտեսներին (Երվանդունիներ) համարում է ինքնակոչ Գաումատայի տապալած յոթը պարսիկներից մեկի, Հյուդարնեսի չառավիղ[74], նշանակում է՝ նրանց չի համարում տեղական, հայկական արքայատոհմ: Մինչդեռ Արտաշեսին Ապպիանոսը համարում է հայ՝ արմեն (Ἀρταξίαν τόν Ἀρμένιον)[75]: Արտաշեսյաններին հայ է համարում նաև Ստրաբոնը, որը Տիգրանի՝ կապադովկիա կատարած արշավանքի մասին խոսելիս, նրան անվանում է Տիգրան հայ (Τιγράνης ὁ Ἀρμένιος)[76], իսկ մեկ այլ դեպքում նույնիսկ առանց անունը տալու, Տիգրանի որդի Արտավազդին նա պարզապես անվանում է հայ (Ἀρμένιος)[77]:

Այսուհանդերձ, եթե բացառենք Արտաշեսի կողմից Արտաշատ մայրաքաղաքի կառուցման մասին Ստրաբոնի, Պլուտարքոսի և Դիոդորոսի հաղորդումները, ինչպես նաև վերջինիս այն վկայությունը, թե Արտաշեսը, «ժողովեց հզոր արանց»[78], ապա, ինչպես արդեն նկատել ենք, օտար հեղինակները անդրադարձել են հայոց Արտաշես թագավորի արտաքին քաղաքականության ասպարեզում ունեցած գործունեությանը միայն: Արտաշեսի ժամանակ Հայաստանում կատարված ներքին վարչա-տնտեսական բարեփոխությունների մասին մեզ հասած հատ ու կտոր տեղեկությունների համար, մենք դարձյալ պարտական ենք Մովսես Խորենացուն և, մասամբ, իր իսկ Արտաշեսի թողած նորահայտ արամեատառ վիմական արձանագրություններին:

Սկզբից ևեթ նշենք, որ պատմահոր մոտ Արտաշեսի անձնավորությունը չփոխված է այլ թագավորների հետ և նրան վերաբերող վկայությունները հաճախ պարուրված են առասպելական շղարշով: Սակայն, ժամանակագրական հաշվումներից ելնելով, ենթադրում ենք, որ Խորենացու մոտ հիշատակված հայոց թագավոր Վաղարշակ Ա Արշակունին պետք է դիտվի որպես արտաքին աղբյուրներում բազմիցս հիշատակված պատմական

(73) Diod., XXXI, 17a; 27a; Strabo, XI, 14, 15; Appiani Syr., 40 և 46.
(74) «Τελευταῖος δ' ὑπῆρξεν Ὀρόντης ἀπόγονος Ὑδάρνου τῶν ἑπτά Περσῶν ἑνός» Strabo, XII, 2, 9.
(75) Appiani Syr., 45.
(76) Strabo, XII, 1, 28.
(78) Նույն տեղում, XI, 14, 6: Diodor., XXXI, 17a.

Արտաշեսը[79]: Նախ՝ որովհետև Վաղարշակը, ըստ Խորենացու, հանդիսանում է հայկական թագավորության հիմնադիրը, մինչդեռ այդպիսին, արտաքին աղբյուրների համաձայն, եղել է Արտաքսիաս-Արտաշեսը: Ապա՝ Վաղարշակին վերագրված գահակալության ժամանակը մոտավորապես համընկնում է պատմական Արտաշեսի թագավորության տարիներին: Այսպես, Մովսես Խորենացին վկայում է, որ «յետ վաթսուն ամի մահուանն Ալեքսանդրի՝ թագավորէ ի վերայ Պարթևաց Արշակ քաջ»[80]: Պատմագրության մեջ Արշակի գահակալման տարեթիվն ընդունված է մոտ 250 թվականը, իսկ Խորենացու տվյալներով ստացվում է 323-ից (Մակեդոնացու մահվան տարեթիվը) կամ 312/311-ից (Սելևկյան տոմարի սկիզբը) հանած 60՝ 263 կամ 252-251 թվականը: Նա իշխում է «ամս երեսուն և մի, և յետ նորա Արտաշէս, որդի նորա ամս քսան և վեց, զոր պայազատէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ մեծ»[81]: Ահա այս Արշակն է, որ, ըստ Խորենացու, «թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ մերոյ աշխարհիս»[82]: Արդ՝ եթե Արշակ Ա-ի գահակալման տարուց հանենք նրա և նրա որդու թագավորության տարիները (263/252-31-26), կստացվի 206/195 թվականը, որը Արշակ Մեծի գահակալման տարեթիվն է ըստ Խորենացու: Այս Արշակի 40-րդ տարում թագավորում է Վաղարշակը. ուստի՝ 206/195-40=-166/155 թ.: Մեկ ուրիշ առիթով, Խորենացին ավելի մանրամասն ժամանակագրական տվյալներ է հաղորդում Վաղարշակի գահակալության տարեթվի մասին: «Եւ ի նոցանէ, – գրում է Խորենացին, – Արշակ քաջ, որ ապստամբեալ ի Մակեդոնացւոց՝ թագաւորեաց յերկիրին Քուշանաց ամս երեսուն և մի, և յետ նորա որդին նորին Արտաշէս ամս քսան և վեց, ապա Արշակ նորին որդի, որ կոչեցաւ մեծ, որ զԱնտիոքոսն եսպան և զվաղարշակ զեղբայր իւր թագաւոր կացոյց Հայոց, երկրորդ իւր առնելով: Եւ ինքն լուեալ ի Բահլ՝ հաստատեաց զթագաւորութիւնն իւր ամս

(79) Ա.Գ. Փերիխանյանը նշում է, որ Վաղարշակի կերպարում միակցված է պատմական երկու դեմք՝ Արտաշես Ա-ը և Տրդատ Ա-ը (А.Г. Периханян, Древнеармянские востаники, ВДИ, 1956, N°2, стр. 51, примеч. 3):
(80) Մովսես Խորենացի, Բ, ը:
(81) Նույն տեղում:
(82) Նույն տեղում, Բ, գ:

յիսուն և չերիս ...։ Ցետ Արշակայ մեծի առնու զթագաւորութիւն նորա Արշական, չերեքտասաներորդի ամի Վաղարշակայ ...»[83]։ *Այս տվյալների հիման վրա դարձյալ ունենում ենք, 263/252-31-26-26-53+13=166/155 թվականը։ Ինչպես տեսնում ենք, այս դեպքում ևս ժամանակագրական տարբերություններ Խորենացու Վաղարշակի և պատմական Արտաշեսի գահակալման միջև մեծ չի լինում, չուրջ քառորդ դար*[84]։

Այս առնչությամբ տեղին է նշել ևս մի հանգամանք։ Պոնտոսում, Փռյուգիայում և Ղազիկայում Վաղարշակի մղած պատերազմը, որի մասին պատմում է Խորենացին[85], *շատ բանով հիշեցնում է Պոնտոսի թագավոր Փառնակեսի դեմ Արտաշեսի մղած պատերազմը, որի մասին ակնարկում է Պոլիբիոսը*[86]։

Վաղարշակ-Արտաշես նույնությունը ավելի հավանական է դառնում, եթե հաշվի առնենք Մովսես Կաղանկատվացու այն վկայությունը, թե «ի նոյն Պարթևաց, որք ի Վաղարշակայ մինչև ցԱրտաշիր՝ Վռամշապհոյ որդի, թագավորք Հայոց քսան և վեց, իսկ ամք վեց հարիւր քսան»[87]։ *Ահա այս 620-ից եթե հանենք Արշակունյաց թագավորության վերացման թվականը՝ 428, ստանում ենք 192, այն է՝ գրեթե Արտաշեսի գահակալության նույն թվականը՝ 190/189։*

Ի տարբերություն Երվանդունիների, որոնք նախապես հանդիսանալով Աքեմենյան արքայից արքայի կողմից Հայաստանում նշանակված սատրապներ, հետագայում, բարենպաստ հանգամանքների բերումով, դառնում են անկախ տիրակալներ, Արտաշեսը, ինչպես այդ երևում է Ստրաբոնի և Խորենացու վկայություններից, Հայաստանի ամեն մի թիզ հողին տեր էր

(83) *Մովսես Խորենացի, Բ, կը։*

(84) *Այստեղ մեր նպատակից դուրս է միջամտել Խորենացու ժամանակագրության առնչությամբ հայագետների միջև առաջացած տարաձայնություններին։ Սակայն, մեզ հետաքրքրող տվյալ հարցի առիթով հիշեցնենք, որ Վաղարշակի գահակալության տարեթիվը տատանվում է տարբեր հայագետների մոտ։ Այսպես ըստ Մ. Զամչյանի՝ մ.թ.ա. 149 թ., ըստ Մեն Մարտենի՝ 152, ըստ Գուտշմիտի և Գ.Ղ. Սարգսյանի՝ 153, ըստ Մ. Խորնի՝ 144՝ ըստ Ռ. Պատկանյանի՝ 132, ըստ Թ. Ավդալբեկյանի՝ 135 և ըստ Լ.Փ. Շահինյանի՝ 134։*

(85) *Մովսես Խորենացի, բ, դ-ե։*

(86) Polyb., XXVI, 6, 1-12.

(87) *Մովսեսի Կաղանկատվացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, գլխ. Ւ։*

դարձել Երվանդի, ինչպես նաև վերջինիս գահակալության ժամանակ հայարնակ մի շարք չրջաններին տիրացած սահմանակից թագավորների դեմ մղած դաժան կռիվներից հետո։ Հետևաբար, նա կարող էր Հայաստանը դիտել իրրև իր նիզակով նվաճված երկիր։ Այսպիսի երևույթը հաճախ է հանդիպում հելլենիստական թագավորությունների առաջացմանը վերաբերվող հունական աղբյուրների հաղորդումներում և արտահայտված է հունարեն δορίκτητος *կամ* δορίάλωτος *(նիզակով նվաճված) բառով։ Այսպես, Սելևկոս Նիկատոր Ա-ը, Լիսիմաքոսին պատերազմում հաղթելուց և նրան սպանելուց հետո, նրա ամբողջ երկիրը համարում է* δορίκτητος — *իր նիզակով նվաճված*[88]։

Պաղամեոս Լագոսը ևս իշխելով Եգիպտոսում, այն համարում է δορίκτητος χώρα — *նիզակով նվաճված երկիր*[89]։ *Հայաստանն իր նիզակով նվաճված երկիր համարելով, Արտաշեսը, ինչպես հելլենիստական մյուս միապետներն իրենց երկրներում, լիովին իրեն իրավունք էր վերապահում արդեն կազմավորվող ազնվականության ներկայացուցիչներին հողային տիրույթներ չնորհելով, նրանց նշանակելու պետական այս կամ այն պաշտոնի։ Հետագայում Տիգրան Բ-ի նվաճումները ավելի լայն հնարավորություններ պիտի ստեղծեին պետական պաշտոններ վարողներին հողային ընդարձակ տիրույթներ պարգևելու համար։*

Արտաշեսն, անկասկած, ձեռնամուխ է եղել հողային բարեփոխությունների, որոնց հրամայական պահանջը բխում էր արտաքին ընդարձակման և սոցիալ-տնտեսական ներքին բուռն զարգացման ուղին թևակոխած երկրի չահերից։ Արտաշեսի հողաշինարարական գործունեության մասին մեզ հասել են լավագույն վավերագրեր՝ մատենագրական և վիմական։ Այսպես, Խորենացին հաղորդում է, թե Արտաշեսը «հրամայէ զահմանս գիւղից և ագարակաց որոշել։ քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս։ Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպես։ հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս ի վերայ յարուցել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ։ ... Ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային, ոչ դաշտային, յաղագս

(88) Polyb., XVIII, 51, 4.

(89) Diodor., XX, 76, 7.

չինութեան երկրին»[90]: Խորենացու այս ավելի քան պարզ հաղորդման մեկնաբանությունն ավելորդ է թվում:

Պատմահոր այս վկայութիւնները իրենց պերճախոս հաստատումը գտան Արտաշեսի անունը կրող արամեատառ վիմական այն արձանագրութիւններում, որոնք վերջերս հայտնաբերվեցին Հայաստանում և որոնց մասին մենք դեռ կտեսնենք[91]:

Երվանդունի թագավորների և Արտաշեսի ունեցած ֆունկցիաների հնարավոր համեմատությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ եթե Երվանդը, ինչպես տեսանք, միակ թագավորը չէր երկրում, ապա Արտաշեսի ժամանակ միանձնյա թագավորն արդեն օժտված էր ավելի քան ինքնակալական իշխանությամբ:

Թագավորական իշխանության ամրապնդմանը և բացարձականացմանը պետք է նպաստեր գահակալության կարգի ժառանգականությունը: Երվանդունիների և Արտաշեսյանների ժամանակ Հայաստանում, թագավորի մահանալուց հետո, գահն անցնում էր նրա ավագ որդուն: Արքայի անզավակ մահանալու դեպքում գահը ժառանգում էր նրա եղբայրը կամ մերձավորագույն ազգականը: Այդ են վկայում անտիկ երկերում Հայաստանի մասին պահպանված տեղեկությունները: Գահակալության իրավունքը ժառանգական է եղել նաև հելլենիստական մյուս պետություններում՝ Պտղոմեոսյան Եգիպտոսում, Սելևկյանների տերության մեջ, Պերգամոնում, Կապադովկիայում, Պոնտոսում և այլն:

Հայոց արքան ևս, հարևան մի շարք երկրների թագավորների նման, ունեցել է իր պատվանիշողոսը: Այդպիսին մենք չենք հանդիպում դեռևս Երվանդունի թագավորներին վերաբերող առանց այն էլ աղքատիկ տվյալներում: Հայոց թագավորներից իր տիտղոսաշարով առաջինը մեզ հայտնի է Արտաշես Ա-ը: Նրա տիտղոսաշարը վկայված է արդեն բազմիցս հիշատակված նրա արամեատառ արձանագրություններում, որտեղ ընթերցվում է՝ «Արտաշես արքա, որդի Զարիադրայի (Զարեհ – Ս.Կ.), Երվանդա-

(90) Մովսես Խորենացի, Բ, ծգ:

(91) Այս մասին մանրամասն տես նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 533-536:

կան» (Սևանի արձանագրություններ)[92], «Արտաշես, արքա, երվանդական, Բարի, որդի Զարեհի» (Զանգեզուրի արձանագրություն)[93]: Հետագայում, Թեղուտի արձանագրության վերծանման կապակցությամբ, Ա.Գ. Փերիխանյանը վերանայեց իր նախկին տեսակետը և առաջարկեց նոր ընթերցում, համարյա ամբողջ արձանագրության բովանդակությունը դիտելով իբրև Արտաշեսի տիտղոսաշար: Թեղուտի արձանագրության մեջ[94], Ա.Գ. Փերիխանյանի վերծանմամբ, Արտաշեսի տիտղոսաշարն է՝ «Արտաշես, արքա, Երվանդական, որդի Զարիադրեսի, Բարի, թագակիր, դաշնակից Խշաթրայի, հաղթող այն ամենին, ինչը քաղաքներում է չարը»[95]:

Անկախ այն բանից, թե Ա.Գ. Փերիխանյանի առաջարկած այս երկու վերծանումներից ո՞ր մեկը պետք է ընդունել, կասկած չի հարուցում այդ տիտղոսաշարի առաջին մասը՝ «Արտաշես արքա, Երվանդական, Բարի, որդի Զարեհի»:

«Երվանդական» (Երվանդունի) տիտղոսի մասին մենք արդեն խոսել ենք: Այստեղ հատկանշական է Արտաշեսի «Բարի» մակդիրը, որը ձայնակցում է հելլենիստական թագավորների՝ մեզ հայտնի Եվերգետես (Բարեգործ), Եվսեբես (Բարեպաշտ), Եվպատոր (Բարեհայր) և այլ մակդիրներին: Հետևելով իր նախկին սյուզերեն Սելևկյանների օրինակին, Արտաշեսը ստացել էր «Բարի» պատվատիտղոսը, որի յուրացումը Գ. Սարգսյանի կարծիքով, թերևս կապ ունի թագավորական նախնիների պաշտամունքի հետ[96]:

Արտաշեսյանների ժամանակ երկրում քաղաքական իրա-

(92) А.Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, N° 2, стр. 97-17; И.М. Дьяконов, К.Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1955, N° 2, стр. 161-174; К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 163-164: Գ.Ա. Տիրացյան, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, Տեղ. ՀԳԱՀԳ, 1957, Նո 10, էջ 108:

(93) А.Г. Периханян, Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, Նո 4, էջ 108: A. Perikhanian, Une inscription araméenne du roi Artašés trouvée à Zanguézour (Siwnik'), REANS, III, 1966, էջ 16-29.

(94) Գ.Հ. Կարախանյան, Արամեերեն երկու արձանագրություններ, ՊԲՀ, 1971, Նո 3, էջ 274-276:

(95) A. Perikhanian, Une inscription araméenne du roi Artašés, REANS, VIII, 1971, էջ 169-174.

(96) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, էջ 526:

դրության փոփոխման, ինչպես նաև ժամանակի միջազգային քաղաքական կյանքում Հայաստանի ունեցած դերի և կշռի փոփոխման համապատասխան, փոփոխություններ են նկատվում նաև հայոց թագավորի կրած տիտղոսաշարի մեջ։ Դեռ ավելին։ Միայն Տիգրան Մեծը իր 40-ամյա գահակալության ընթացքում կրել է տարբեր պատվատիտղոսներ, որոնց մասին կան եւ՛ մատենագրական վկայություններ, եւ՛ հայոց թագավորի հատած դրամների վրա արված համապատասխան մակագրություններ։ Անկասկած է, որ Տիգրանն իր թագավորության առաջին տարիներին կրել է սոսկ «թագավոր» (βασιλεύς) տիտղոսը, ինչպես և իր նախորդները։ Իր գահի վրա ամուր հաստատվելուց հետո, երբ արդեն իր իշխանության տակ միավորել էր ամբողջ Մեծ Հայքը և Ծոփքը, գրավել էր Կապպադովկիան ու Կոմմագենեն, նա արդեն հայերի համար պիտի դառնար «Մեծ թագավոր» (μέγας βασιλεύς). իսկ կորդուքի, Ադիաբենեի, Ատրպատականի, Օսրոենեների թագավորներին հպատակեցնելուց և պարթև «արքայից արքային» հաղթելուց հետո, Տիգրանը ինքը պետք է մեծարվեր վերջին՝ «արքայից արքա» (βασιλεύς βασιλέων) տիտղոսով։ Տիգրանի անունը կրող դրամների վրա հանդիպում են հայոց թագավորի վերոհիշյալ բոլոր երեք տիտղոսները։ Ինչպես իրավացիորեն նշված է պատմական գրականության մեջ, «տարբերությունը գալիս է և դրամների՝ նրա թագավորության տարբեր տարիներին պատկանելուց, ... և դրանց հատման վայրից։ Եթե Հայաստանում՝ Արտաշատում հատված դրամների վրայ հաճախակի հանդիպում է «թագավորների թագավոր»-ը, ապա այն երբեք չի պատահում Ասորիքում, Անտիոքում և այլուր հատվածների վրա»[97]։ Այս վերջին հանգամանքը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ Ասորիքի համար Տիգրանը համարվում էր Սելևկյանների հետնորդ և կրում էր նրանց նման՝ «թագավոր» տիտղոսը[98]։

Հատկանշական է, որ Տիգրան Մեծի հետնորդները ևս, թեպետև բոլորովին կորցրել էին իրենց արտաքին տիրույթները, այնուամենայնիվ իրենց հատած դրամների վրա հանդես են գալիս իբրև «արքայից արքա» (βασιλεύς βασιλέων)։

Տիգրան Մեծը կրել է նաև Θεός — «աստված» պատվատիտղոսը, որ բավական տարածված էր հելլենիստական և պարթև թագավորների մեջ։ Գ.Խ. Սարգսյանն այս երևույթը հիրավի բացատրում է նրանով, որ այդ պատվատիտղոսը կրող թագավորը դեռևս իր կենդանության օրոք աստվածացված է եղել[99]։

Վերջին Արտաշեսյաններից ոմանք կրել են նաև «հելլենասեր» (φιλέλλην) կամ, «հռոմեասեր» (φιλορώμαιος) պատվատիտղոսները։ Այս առնչությամբ Գ.Խ. Սարգսյանը ճիշտ է, երբ գրում է. «Այս երկուսը իրենց արտաքին նմանությամբ հանդերձ, միանգամայն տարաբնույթ էին իրենց իմաստով։ «Հռոմասեր»-ը նշանակում էր իր հպատակների մեջ հույն բնակչություն ունեցող և այդ բնակչության ու ընդհանրապես հունական մշակույթին ու քաղաքակրթությանը բարյացակամ վերաբերմունք ցուցաբերող։ Ի տարբերություն սրան, «հռոմեասերն» ունի քաղաքական իմաստ, այն նշանակում էր Հռոմին ու հռոմեական քաղաքականությանը համակրող։ Այս պատվատիտղոսներն, ուրեմն, բացահայտում էին իրենց կրողների հակումները»[100], ինչպես նաև, կավելացնեինք մենք, միջազգային ասպարեզում նրանց առանձնած քաղաքական պարտավորությունները։

Հայաստանում միապետի իշխանությունը դառնում է առավել բացարձակ, երկրի ռազմական ու անտեսական հզորացման զուգընթաց։ Այն իր բարձրակետին է հասնում Տիգրան Բ Մեծի գահակալության տարիներին։ Սկզբնաղբյուրներից հետևում է, թե Տիգրան Մեծն իր բոլոր հպատակների նկատմամբ ունեցել է կյանքի և մահվան իրավունք։ Պատահական չէ, որ Թ. Ռեյնաքը, Տիգրանակերտ քաղաքի կառուցման առնչությամբ, Տիգրանին անվանում է նոր Սալմանասար[101]։ Միապետի իշխանության հզորացման հիման վրա Հայաստանում ևս, հելլենիստական մյուս երկրների նման, թագավորի նախնիների աստվածացումից հետո, արդեն աստվածացվում է տիրող թագավորի անձը, դեռևս նրա գահակալության ժամանակ։ Ինչպես ճիշտ նկատված է գրականության մեջ, թագավորի անձի պաշտամունքը Հայաստանում պետք է հիմնադրված լիներ Տիգրան Մեծի

(97) Նույն տեղում, էջ 668։
(98) Հմմտ. Josephi Flauii antiq. Ivd., XII, 419.
(99) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 670։
(100) Նույն տեղում։
(101) Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, էջ 345.

թագավորության ժամանակ[102]։

Մենք դեռ առանձին կխոսենք Տիգրանի ժամանակաշրջանի մասին։ Բայց նախքան այդ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հեթանոսական Հայաստանում քրմական դասի հետ առնչվող հարցերին։

(102 Գ.Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 23–78։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՔՐՄԱԿԱՆ ԴԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հին Հայաստանում, ինչպես և հարևան փոքրասիական երկրներում, գերագույն իշխանության մարմնացումը ինքը, թագավորն էր հանդիսանում։ Սակայն, պատմական տվյալ ժամանակաշրջանում, նրա կողքին և նրա հետ միասին արդեն գոյություն ուներ ավագանու ևս մի դաս, որը խոշորագույն դեր էր խաղում երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում։ Այդ քրմերի դասն էր։

Նախաքրիստոնեական Հայաստանում քրմական դասի գոյության ու նրա ունեցած քաղաքական ու տնտեսական կշռի մասին մի շարք արժեքավոր վկայություններ են պահպանվել Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Հովհան Մամիկոնյանի մոտ, ինչպես նաև մեզ հասած Արմավիրի ու Գառնիի հունարեն արձանագրություններում։ Այդ առնչությամբ որոշակի մի ակնարկություն կա նաև Պլուտարքոսի գրչին պատկանող Լուկուլլոսի կենսագրության մեջ[1]։ Ավելի առատ են Հայաստանին անմիջական հարևանության մեջ գտնվող երկրների քրմական դասին վերաբերող տվյալները, որոնց հեղինակը, հիմնականում, Ստրաբոնն է։ Այդ վկայությունների համեմատումը Հայաստանին վերաբերող տվյալների հետ, մեզ համոզում է այն բանում, որ թե՛ Հայաստանի և թե՛ նրան հարևան երկրների հասարակական կյանքում բացառիկ մեծ էր քրմական դասի դերը։

Այսպես, Ստրաբոնը, խոսելով կապադովկիական Կոմանա տաճարային քաղաքի մասին, վկայում է, թե «քաղաքի բնակիչները կատարողներ են, որոնք իբր ենթարկվում են թագավորին, բայց առավել հնազանդ են քրմին։ ... Ընդհանրապես,

(1) Plutarchi Lucullus, XXIV, 2–6.

թագավորից հետո քուրմը երկրորդ անձնավորությունն է կապադովկիայում. մեծ մասամբ նույնիսկ թագավորներն ու քրմերը պատկանում են միևնույն տոհմին»[2]:

Նույնպիսի իրավիճակ է պատկերում դարձյալ Ստրաբոնը, խոսելով Պոնտական Կոմանա քաղաքի մասին, որտեղ քուրմը «համարվում էր իր կարևորությամբ երկրորդ դեմքը թագավորից հետո»[3]: Նման դրություն էր նաև Ազվանքում, որտեղ «քրմական պարտականությունները կատարում է թագավորից հետո ամենահարգված դեմքը»[4]:

Անկասկած, Հայաստանում ևս նույնպիսի փոխհարաբերություն կար թագավորի և քրմական դասի միջև, ինչ վերոհիշյալ երկրներում: Այդ ավելի քան պարզ հետևում է Մովսես Խորենացու վկայություններից, որի համաձայն Երվանդ Վերջինի թագավորության տարիներին Հայաստանի քրմապետ էր կարգված թագավորի եղբայր Երվազը[5]: Մեկ ուրիշ անգամ, պատմելով Երվանդի չախչախման մասին, Խորենացին դարձյալ վկայում է, որ Արտաշեսի կարգադրությամբ սպարապետ Մմբատ Բագրատունին կործանում է նաև Բագարանում քրմապետ Երվապին և նրա փոխարեն «ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի ...»[6]: Հետագա դեպքերի ընթացքը չարադրելիս, Խորենացին պատմում է, որ Արտաշես թագավորը իր որդի Մաժանին «կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ»[7]: Խոսելով Վահունի քրմերի մասին, որոնք իրենց համարում են Վահագնի սերնդից, պատմահայրը հաղորդում է, որ Վաղարշակ թագավորը նրանց է հանձնարարում քրմության պաշտոնը «և կարգէ ընդ առաջին նախարարութիւնն ...»[8]:

Մեր այն ենթադրության օգտին, թե Հայաստանի քրմապետները նույնպես սերում էին թագավորական տոհմից, խոսում է նաև Տակիտոսի վկայությունն այն մասին, որ հայ Արշակունիների հարստության հիմնադիր Տրդատ Ա թագավորը (66–80

(2) Strabo, XII, 2, 3 (C. 535).
(3) Նույն տեղում, XII, 3, 32 (C. 557).
(4) Նույն տեղում, XI, 4, 7 (C. 503).
(5) Մովսես Խորենացի, Բ, խ:
(6) Նույն տեղում, Բ, խը:
(7) Նույն տեղում, Բ, ծգ:
(8) Նույն տեղում, Բ, ը:

թ.), միաժամանակ նաև քուրմ էր: Այսպես, Հռոմայեցի մատենագիրը պատմում է, որ Հռոմի և պարթևների միջև տեղի ունեցող բանակցությունների ընթացքում, ի պատասխան կայսր Ներոնի պահանջին, որի համաձայն Հայաստանի գահի պարթևական թեկնածու Տրդատը պետք է Հռոմ ներկայանար անձամբ, արքայական թագը կայսրի ձեռքից ստանալու համար, պարթևական թագավոր Վաղարշը, Տրդատի ավագ եղբայրը, գրում է Ներոնին. «Տրդատը չէր հրաժարվի Հռոմ գալով թագն ընդունելուց, եթե նրան չխանգարեին քրմական պարտականությունները»[9]: Ուրիշ մի առիթով Գառնիի հունարեն արձանագրության առաջին երկու՝ ΗΛΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ բառերի շուրջ մեր կատարած դիտողություններից եզրակացրել ենք, որ այդ բառերից ΗΛΙΟΣ-ը եղել է հիշյալ թագավորի տիտղոսը կամ հավելյալ անունը իբրև քրմի, իսկ ΤΙΡΙΔΑΤΗΣ-ը՝ նրա անձնական թագավորական անունը[10]:

Գրավոր աղբյուրների այս բոլոր տվյալները վկայում են հին Հայաստանի հասարակական–քաղաքական կյանքում քրմական դասի ունեցած կարևորագույն դերի մասին:

Փոքր Ասիայում և Հայաստանում հայտնաբերված վիմագրական նյութը ևս մեզ իրավունք է տալիս պնդելու, որ քրմերը հելլենիստական միապետությունների պետական գործերում խաղում էին նշանակալից դեր: Նշենք երկու օրինակ, մեկը Փոքր Ասիայից, մյուսը Հայաստանից:

Այսպես, Պերգամոնի թագավորներ Եվմենես Բ–ը և նրա հաջորդ Ատտալոս Բ–ը մ.թ.ա. 163–156 թթ. աչքի ընկնող գործունեություն ծավալեցին գալատական Պեսինունտում գտնվող Կյուբելեի տաճարի քրմապետ Ատտիսի հետ: Վիմական արձանագրությունների ձևով մեզ են հասել վերոհիշյալ թագավորների յոթը նամակ, ուղղված քուրմ Ատտիսին, որոնց բովանդակությունը վկայում է այն մասին, որ երկու կողմերը համատեղ քննարկում են պետական կարևորագույն նշանակություն ունե-

(9) Taciti Annales, XV, 24: Հմմտ. C. Plin., Nat. Hist., XXX, 6, 1.
(10) Ա յս մասին մանրամասն տես՝ Ս.Մ. Կրկյաշարյան, Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, էջ 57–59: Նույնի՝ Եւս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, ՊԲՀ, Նո 3, էջ 235–238:

ցող գործեր[11]: Ժամանակի քաղաքական իրադրության հետևանքով վրա ավելի հստակորեն է ընդգծվում այն դերը, որ խաղում էր քրմապետ Ատոխը կենտրոնական Փոքր Ասիայի պետությունների փոխհարաբերության մեջ: Մագնեսիայի ճակատամարտում և դրա ելքը արձանագրած Ապամեայի պայմանագրով Հռոմը և նրա դաշնակից Պերգամոնի թագավոր Եվմենես Բ-ը ծանր հարված հասցրին Առաջավոր Ասիայի խոշորագույն տերության, Սելևկյան կայսրության, որից հետո Սելևկյանները դադարեցին ասիական գործերում որևէ կարևոր դեր խաղալուց: Նրանց տեղը միջազգային կյանքում փորձում են գրավել Պերգամոնի թագավորները, Եվմենեսն ու Ատտալոսը: Սակայն այդ բանը ձեռնտու չէր Արևելքում իր էքսպանսիան ծավալող Հռոմին: Մակեդոնիան և Հունաստանը վերջնականապես իրեն ենթարկելուց հետո, թիկունքն ապահոված Հռոմն արդեն կարող էր հիմնական ուժերը կենտրոնացնել, Արևելքի երկրները իր քաղաքական ազդեցությանը ենթարկելու համար: Արդեն համաշխարհային տիրապետության ձգտող հռոմայեցիները չէին թույլատրում ոչ մի տիրակալի, մինչև իսկ իրենց երեկվա գլխավոր դաշնակիցներին, Պերգամոնի թագավորներին, արտաքին քաղաքականության հարցերում որևէ չափով ինքնուրույնություն դրսևորել: Միաժամանակ, հռոմայեցիների ոտնձգությունները անպակաս էին Եվմենես Բ-ի դեմ: Այսպես, երբ վերջինս փորձեց ի հաշիվ սահմանակից Գալատիայի, որտեղ քրմապետ էր վերոհիշյալ Ատոխը, ընդարձակել իր տերության սահմանները, հակառակ գալատների դեմ պետարշավում Պերգամոնի թագավորի տարած հաղթանակին, Հռոմի ծերակույտը, ի հեճուկս Եվմենեսի շահերին, Փռյուգիայում հաստատված գալլական ցեղերին չնորհեց ինքնավարություն նրանց նախկին տոհմական սահմաններում: Այնուամենայնիվ, Պերգամոնի թագավորները չէին հրաժարվում Գալատիան նվաճելու իրենց մտադրությունից: Նրանք, սակայն, չէին համարձակվում բացահայտ հանդես գալու Հռոմի կամքի դեմ: Հանձին քուրմ Ատոխի, Պերգամոնի թագավորները հավատարիմ դաշնակից էին գտել: Եվմենեսը կյուբելեի տաճարի քրմապետի օգնությամբ, Հռոմի ծերակույտից գաղտնի, չարու-

(11) C.B. Welles, Royal Correspondence in the Hellenistic Period (այսուհետև՝ RC), New Haven 1934, (55-61).

նակում էր թշնամական գործունեությունը Գալատիայի դեմ: Ակներևորեն, Եվմենեսն ու Ատտալոսը այս դեպքում մեծ հանդրգնություն էին ցուցաբերում: Եթե աշխարհակալության ձգտող ամենազոր Հռոմը տեղեկանար տարվող այդ գաղտնի բանակցությունների մասին, ապա պարզ է, որ չնորհակալություն չէր հայտնելու Պերգամոնի թագավորներին: Այս հանգամանքը մի անգամ ևս մեզ համոզում է այն մեծ վստահության մասին, որ վայելում էր Պեսինունտի քրմապետ Ատոխը Պերգամոնի թագավորների մոտ, որոնք միասնաբար էին քննարկում պետական կարևորագույն հարցեր:

Արմավիրում հայտնաբերված Նո 4 հունարեն արձանագրությունը ևս (երկրորդ քարի առաջին արձանագրությունը) մի արժեքավոր վավերագիր է այն մասին, թե քրմապետը Հայաստանում գտնվում էր թագավորի հետ համարյա հավասար աստիճանում (նա իրեն անվանում է «βασιλεύς»: Այս արձանագրությունը Հ. Մանանդյանը իրավացի կերպով դիտում է որպես Արմավիրի հեթանոսական տաճարի քրմապետ Միհրդատ Նամակը Հայաստանի Երվանդես թագավորին: Արձանագրության մեջ հատկանշականն այն է, որ Միհրդատն իրեն անվանում է նույնպես թագավոր, ինչպես և Երվանդեսին. հանգամանք, որը վկայում է ոչ միայն նրա բարձր ծագման, այլև այն մասին, որ նա թագավորի կողքին և նրա հետ միասին կարևոր դեր էր խաղում պետական գործերում[12]:

Մեզ մոտ հայտնաբերված վիմական տվյալներից և խորենացու վկայություններից վստահ կերպով կարելի է հետևցնել, որ քրմապետը Հայաստանում ևս, ինչպես և հարևան երկրներում, երկրորդ դեմքն էր թագավորից հետո, երբեմն քրմապետի պարտականությունները նույնիսկ միահյուսվում էին թագավորի պարտականություններին և միևնույն անձը հանդիսանում էր միաժամանակ թագավոր և քրմապետ, ինչպես այդ պարզվում է Գառնիի և Արմավիրի հունարեն արձանագրություններից և Տակիտոսի մի հաղորդումից:

Հայաստանում և ընդհանրապես Արևելքի երկրներում քրմերի բարձր դիրքը և հեղինակությունը հիմնված էր առավելապես տաճարների և տաճարային տնտեսությունների նյութա-

(12) Հմմտ. Հ.Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946:

կան հզորության վրա[13]: Մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում տաճարների հարստությունը Առաջավոր Ասիայում և Հայաստանում բաղկացած էր հողային ընդարձակ տիրույթներից և այդ հողերի վրա բնակեցված և դրանց վրա աշխատող ու շահագործվող տաճարային տարուկ-ծառաներից՝ հիերոդուլներից (ἱερόδουλοι): Խորենացին պատմում է, թե Երվանդ Վերջինի դեմ Արտաշեսի տարած հաղթանակից և թագավորի եղբայր՝ քրմապետ Երվազի սպանությունից հետո, Սմբատ Բագրատունին, «աւար առեալ զգանձն Երուազայ, և ծառայս անձինս հինդ հարիւր, նաև զընտիր ընտիր գանձուցն մեհենից, բերէ Արտաշիսի: Եւ Արտաշէս պարգևէ Սմբատայ զծառայսն Երուազայ»[14]: Սա, ինչ խոսք, ոչ թե չահագործվող ծառաների, հողագործների ազատագրումն էր շահագործումից, այլ, պարզապես, մի տիրոջ գերիշխանությունից մյուսի գերիշխանության տակ անցնելը: Նախկինում քրմապետին պատկանող տաճարական հողերի վրա աշխատողներն այժմ արդեն տարվում են աշխատելու սպարապետ Սմբատին չնորհված հողերի վրա: «Ցայնժամ», – գրում է պատմահայրը, – Սմբատայ զծառայսն Երուազայ, զոր գերեացն ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ ի Թիկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն»[15]:

Հայաստանում տաճարների տնտեսական հզորությունը և, դրա հետ միասին, նրանց քաղաքական ազդեցությունը, հավանաբար, աճելով սկսեց ընդունել թագավորական իշխանության համար վտանգավոր չափեր: Ըստ երևույթին, տաճարների և նրանց սպասավորների՝ քրմերի հետագա հզորացումը կանխելու նպատակով է, որ Երվանդը երկրի կրոնական կենտրոնը Արմավիրից փոխադրում է ոչ թե իր նոր կառուցած Երվանդաշատ մայրաքաղաքը, այլ Բագարան: «Բայց Երուանդ չինեալ զքաղաքն իւր, – գրում է Խորենացին, – և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւիրայ ուրոյն ի կուռցն. զոր ոչ օգուտ իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի գալն և ի գոհել անդ աշխարհի, ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն, այլ հեռագոյն ի նմանէ իւրր

(13) Փոքր Ասիայի և Հայաստանի տաճարային տնտեսությունների մասին տես՝ А.Г. Периханян, Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959.
(14) Մովսես Խորենացի, Բ, խը:
(15) Նույն տեղում:

քառասուն ասպարիսաւ գհիւսիսով՝ նման իւր քաղաքին չինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան, այսինքն թե ի նմա յօրինեալ է զկազմութիւն բագնացն. և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս չինեալ, զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»[16]:

Խորենացու վերոհիշյալ վկայությունից հետևում է, որ Հայաստանում տաճարներին պատկանող ընդարձակ հողերի վրա ապրելիս և աշխատելիս են եղել ոչ թե ազատ մարդիկ, այլ ծառաներ, որոնց, որպես սեփականություն, տերը կարող էր տեղափոխել և բնակեցնել այս կամ այն վայրը: Նմանօրինակ դրություն էր նաև Հայաստանի հարևան երկրներում, հատկապես կապադովկիայի Կոմանա և Մորիմենա տաճարային քաղաքներում, ինչպես և պոնտական Կոմանայում: Այդ մասին ընդարձակ տեղեկություններ է հաղորդում ականատես Ստրաբոնը: Այսպես, կապադովկիայի Կոմանա քաղաքի մասին, որտեղ գտնվում էր Մա դիցուհու հայտնի տաճարը, նա գրում է. «... քուրմը տերն է տաճարի և տաճարային ծառաների (ὁ δὲ τοῦ Θ'ἱεροῦ κύριός ἐστί καί τῶν ἱεροδούλων), որոնք մեր այնտեղ կատարած այցելության ժամանակ ավելի քան վեց հազար էին կանայք և տղամարդիկ միասին: Տաճարին կից կա ընդարձակ հողամաս, որի եկամուտները ստանում է քուրմը»[17]: Մորիմենա քաղաքի մասին Ստրաբոնը գրում է, թե այնտեղ «գտնվում է Վենասյան Զևսի տաճարը, որն ունի մոտ երեք հազար տաճարային ծառաների համար բնակատեղի (ἱεροδούλων κατοικίαν ἔχον τρισχιλίων σχεδόν τι) և բարեբեր տաճարային հողամաս, որը քրմին տալիս է տարեկան տասնհինգ տաղանդի եկամուտ»[18]: Համարյա նույն պատկերն է նկարում Ստրաբոնը, խոսելով պոնտական Կոմանա քաղաքի մասին[19]:

Մեկ այլ տեղ Ստրաբոնը, խոսելով Զելե քաղաքի մասին, որը գտնվում էր իր ծննդավայր Ամասիա քաղաքի մոտ, նշում է, որ այնտեղ կառուցվել է Անահիտ դիցուհու տաճարը, որին մեծարում են նաև հայերը, որ տաճարային ծառաների թիվը և քրմերի վայելած հարգանքն ու պատիվը թագավորի կողմից

(16) Նույն տեղում, Բ, խ:
(17) Strabo, XII, 2, 3 (C. 535).
(18) Նույն տեղում, XII, 2, 5 (C. 537).
(19) Նույն տեղում, XII, 3, 32 (C. 557).

նույնպիսին էր, ինչպիսին ինքը նկարագրել է հայերի մոտ Անահիտի պաշտամունքի մասին խոսելիս։ Այնուհետև հույն մատենագիրը ավելացնում է, որ պարսից արքաները (խոսքը Աքեմենյան թագավորների մասին է — Մ.Կ.) «հնում Զելեն համարում էին ոչ թե քաղաք, այլ պարսկական աստվածների սըրբավայր։ Քուրմը ամեն ինչի տերն էր։ Այն բնակեցված էր բազմաթիվ տաճարային ծառաներով և քուրմը շատ հարուստ էր։ Սրբավայրի շրջապատում կար ոչ քիչ սրբազան հող, որը պատկանում էր քրմին»[20]։ Նույնն էր իրավիճակը նաև Հայկական լեռնաշխարհից հյուսիս-արևելք ընկած երկրներում։ Խոսելով, օրինակ, Աղվանքում բնակվող ցեղերի մասին, Ստրաբոնը դարձյալ գրում է. «Նրանք իբրև աստվածների պաշտում են Արևը, Զևսին և Լուսինը։ Սրա տաճարը գտնվում է Իբերիայից ոչ հեռու։ Քրմական պարտականությունները կատարում է ամենահեղինակավոր անձը թագավորից հետո։ Նա կանգնած է սրբազան հողի գլուխ, որն ընդարձակ է և լավ բնակեցված, ինչպես նաև գլխավորում է տաճարային ծառաներին (ἱεροδούλων)[21]։ Իբերիայի բնակչության չորս դասի (τέτταρα γένη) բաժանված լինելու մասին Ստրաբոնի հայտնի հաղորդումից[22] պարզվում է, որ Իբերիայում ևս քրմական դասը իրոք խոշոր դեր է ունեցել երկրի քաղաքական կյանքում։

Ստրաբոնի ժամանակ եթե այդպիսին էր դրությունը Հայաստանին սահմանակից երկրներում, ապա ոչ մի հիմք չկա կասկածելու Հայաստանում ևս նման հարաբերությունների գոյության մասին։

Այսպիսի իրավիճակը, երբ քրմապետը համարվում էր թագավորից հետո ամենահեղինակավոր անձնավորությունը, շարունակվել է նաև քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հաստատվելուց հետո։ Միայն այսպես կարելի է հասկանալ Փավստոս Բուզանդի մոտ պահպանված այն պատումը, որի համաձայն, երբ բյուզանդական վաղես կայսրը որոշում է մահվան ենթարկել իր մոտ ժամանած հայոց կաթողիկոս Ներսեսին, կայսեր մերձավորները խորհուրդ են տալիս չանել այդ, քանի որ Ներսեսը մեծ ու ավագ մարդ է «և աշխարհի միոյ

(20) Նույն տեղում, XII, 3, 37 (C. 559).
(21) Strabo, XI, 4, 7 (C. 503).
(22) Նույն տեղում, XI, 3, 4.

գլուխ։ Զի թագաւորն դոցա աշխարհին և դա, որպես ասեն, ընդ մի համար են»[23]։

Սկզբնաղբյուրների վկայություններից կարելի է հետևցնել, թե, ինչպես Փոքր Ասիայի երկրներում, այնպես էլ հին Հայաստանում, որոշակի համերաշխություն գոյություն ուներ թագավորական իշխանության և քրմական դասի միջև։ Դրա յուրահատուկ արտահայտությունը մենք տեսնում ենք Մորիմենա քաղաքում գտնվող վենասյան Զևսի տաճարի քրմի մասին Ստրաբոնի այն վկայության մեջ, թե «այս քուրմը ցկյանս է (διὰ βίου), ինչպես և Կոմանայի քուրմը»[24]։ Հետևաբար, ինչպես ցկյանս էր թագավորի իշխանությունը, այնպես էլ ցկյանս էր քրմական պաշտոնը։ Հավանական է, որ թագավորը իրավունք է ունեցել խախտելու այդ կարգը և զրկելու քրմերին իրենց պաշտոնից։ Ամենայնդեպս, մեզ հայտնի է Խորենացու մատյանում եղած մի վկայություն, որի համաձայն Տիգրան թագավորը «ցասուցեալ ընդ Վահունիան, եթէ ընդէր յիւրեանց սեպհականին իշխեցին կանգնել զպատկերն Հերակլի, զառաքեալն ի նորին հօրէ՝ ընկենու զնոսա ի քրմութենէն, և զգիւղն առնու, յորում պատկերքն կանգնեցան»[25]։

Հայաստանում ևս թագավորական իշխանության և քրմական դասի միջև գոյություն ունեցած սերտ հարաբերությունների մասին վկայող մի շարք ցուցումներ կան Խորենացու մոտ։ Հայտնի են պատմահոր վկայություններն այն մասին, որ հայոց թագավորներն իրենց ազգակիցներին էին հանձնարարում կրոնական ծեսերի կատարումը։ Այսպես, «Արայեանն Արայ մեռանի ընդ Շարմիրամայ ի պատերազմին, թողլով արու զաւակ ամենահարուստ և չատահանճար յիր և ի բան՝ զԱնուշաւանն Սօսանուէր։ Քանզի ճօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսին Արամանեկայ որ յԱրմաւիր»[26]։ Մեկ այլ առիթով Խորենացին հաղորդում է, որ Երվանդը «մեհեանս չինեալ, զեղբայր իւր զերուազ քրմապետ կացուցանէր»[27]։ Այնուհետև, Խորենացու մի ուրիշ հաղորդման համաձայն, Արտաշեսը «զտեալ յԱսիոյ պղնձաձոյլ

(23) Փավստոս Բուզանդ, Դ. ե։
(24) Strabo, XII, 2, 5 (C. 537).
(25) Մովսես Խորենացի, Բ, ժդ.
(26) Նույն տեղում, Ա, ի։
(27) Նույն տեղում, Բ, ի։

ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և յԱպողոնի, տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր։ Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգէ Վահունեաց, զԱպողոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր»[28]։ Նույնքան հետաքրքիր է նաև Խորենացու վկայությունն այն մասին, թե Արտաշեսն իր որդիներից Մաժանին «կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ»[29], իսկ Բագարանում՝ սպանված քրմապետ Երվազի փոխարեն Սմբատը «ի վերայ բազնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի ...»[30]։ Այս առթիվ դարձյալ տեղին է հիշեցնել, որ Գառնիի հունարեն արձանագրության տվյալներով և Տակիտոսի վկայությամբ, նույն անձը միաժամանակ եղել է քուրմ և արքա[31]։

Պիտի ենթադրել, որ ինչպես Փոքր Ասիայի հելլենիստական երկրներում, Հայաստանում ևս նմանօրինակ հանճնարարություններն, սովորաբար, ուղեկցվում էին հարուստ նվիրատվություններով։ Այլապես, դժվար կարելի է բացատրել Խորենացու հաղորդումն այն մասին, թե Արտաշես թագավորի սպարապետ Սմբատը, «աւար առեալ գգանձան Երուազայ, և ծառայս հինգ հարեւր, նաև զընտիր ընտիր գանձուցն մեհենից, բերէ Արտաշիսի»[32]։ Քրմերի ձեռքին և հեթանոսական տաճարներում այդպիսի մեծ հարստություն կուտակվում էր ժամանակի ընթացքում տաճարներին չնորհված հողային և նյութական պարգևների միջոցով[33]։

Տեղին է յիշել, որ Ագաթանգեղոսը, խոսելով Տարոնում գտնվող Վահեվահյան մեհյանի մասին, այն համարում է «մեծագանձ, լի ոսկով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդր»[34]։

Հողային նվիրատվություններ կարող էր անել միայն նա, ով սեփականատերն էր այդ հողերի և իրավունք ուներ ազատորեն, ըստ իր հայեցողության, տնօրինել դրանք. իսկ այդպիսի անձնավորություն Հայաստանում, ինչպես նաև Արևելքի մյուս երկրներում, բոլորից առաջ, երբեմն և բացառապես, հանդիսանում էր ինքը՝ թագավորը։ Դրա պատճառով էլ տաճարներին, ինչպես և առանձին մարդկանց հողային նվիրատվություններ անում էին գլխավորապես թագավորները։ Այսպիսի բազմաթիվ փաստերի կարելի է հանդիպել, ինչպես Փոքր Ասիայի հելլենիստական թագավորների՝ քաղաքներին ուղղված նամակներում, այնպես և անտիկ ու հայ մատենագիրների երկերում։

Նշենք այդ փաստերից մի քանիսը։ Պերգամոնի թագավորներից մեկը (հավանաբար Ատտալոս Բ-ը) Իլիոն քաղաքին հղած իր նամակում հիշատակում է անասունների և հողային որոշ տարածության նվիրաբերման մասին Աթենաս դիցուհուն։ Հետաքրքրական է նշել, որ անասունների հետ միասին, դրանք խնամելու համար, թագավորն ուղարկում է նաև հոտաղներին (βουκόλους)[35], որոնք, հավանաբար, տաճարի անտեսության մեջ դառնալու էին տաճարային ծառաներ՝ հիերոդուլներ։ Մ.թ.ա. II դարի վերջերին թագավորած Անտիոքոսներից մեկին վերագրվող մեկ այլ նամակ, ուղղված բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին, վերաբերում է Բայտոկայկեյում գտնվող Զևսի տաճարին (Διός Βαιτοκαίκης) արված նվիրատվություններին։ Այդ նամա-

(28) Նույն տեղում, Բ, ժբ։
(29) Մովսես Խորենացի, Բ, ծգ։
(30) Նույն տեղում, Բ, խը։
(31) Այս առնչությամբ Կ. Վ. Տրեվերը գրում է. «Տակիտոսի այս խոսքերից երևում է, որ մ.թ. առաջին դարում Հայաստանում դեռևս շարունակվում էր պահպանվել արքայի և քրմի ֆունկցիաների միակցությունը (որը պարզվում է նաև հայերեն համապատասխան տերմինների — «արքա» և «արզապետ» — մոտիկությամբ, մի երևույթ, որը Ֆ. Էնգելսը նկել էր Հունաստանի վերաբերյալ» (К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953, էջ 62-63)։
(32) Մովսես Խորենացի, Բ, խը։
(33) Տաճարներում կուտակված հարստությունը երբեմն գայթակղեցրել է թագավորներին և նրանք փորձել են այդ գանձերը կողոպտելով լցնել իրենց դատարկված գանձարանը (հմմտ. Diodor., XXVIII, 3; XXIXm 5; Strabo, XVI, որտեղ խոսվում է Էլիմայիսում գտնվող տաճարի գանձերը հափշտակվելու ուղղությամբ Սելևկյան Անտիոքոս Գ թագավորի կատարած անհաջող փորձի մասին, որի համար էլ վերջինս հատուցեց իր իսկ կյանքով)։
(34) Ագաթանգեղոս, ՁԺԴ, 809։
(35) RC, 62.

կում հաղորդվում է, որ թագավորը ետ է վերադարձնում տաճարին այն հողերը, որ Սելևկյան թագավորները իրենց տիրապետության առաջին շրջանում վերցրել էին տաճարից և պարգևել իրրև δωρεά մակեդոնացի պաշտոնյա Դեմետրիոսի[36]: Հելլենիստական աշխարհի թագավորները տաճարներին և դրանց սպասարկուներին, քրմերին, նվիրում էին ոչ միայն հողային տիրույթներ, այլև ուրիշ ունեցվածք, չարժական և անշարժ: Այսպես, հելլենիստական թագավորի (հավանաբար Ատտալոս Ա-ի) նամակը քրմական պաշտոնի հաստատման պայմանների մասին, ուղղված մի պաշտոնյայի, հավաստում է, թե քուրմը պետք է իրր նվիրատվություն և լրացուցիչ վարձ ստանա զոհաբերվող անասունների մորթին և գիստը, ինչպես նաև այն արհեստանոցների եկամուտը, որոնք թագավորը նվիրել է տաճարին[37]:

Հելլենիստական թագավորի կողմից սրբատեղիներին արված հողային նվիրատվությունների մասին անժխտելի վկայություններ կան Կոմմագենեի Նեմրուդ լեռան հայտնի արձանագրությունում, որտեղ այդ ոչ մեծ թագավորության գահակալ Անտիոքոս Ա-ը պատմում է աստվածների, հերոս նախնիների և իր՝ թագավորի պաշտամունքի կազմակերպման մասին: Այդ սրբավայրը սպասարկելու համար հաստատված էին քրմեր և տաճարային սարուկներ (ἱεροδούλοι): Սրբավայրը մնաեսապես ապահովելու համար թագավորը տաճարին նվիրել էր «բավարար քանակությամբ հողեր և դրանից ստացվող կայուն եկամուտ» (χώραν τε ἱκανην καί προσόδους ἐξ αὐτῆς ἀκινήτους)[38]:

Այս կապակցությամբ չի կարելի ուշադրություն չդարձընել մեկ ուրիշ նամակի վրա ևս, որը հասցեագրել է Սելևկոս Ա-ը Միլետ քաղաքին, որով հաղորդում է Դիդիմեյան Ապոլլոնի տաճարին իր ուղարկած թանկարժեք նվերների մասին: Նամակին կցված է հետաքրքիր ցուցակ, որում մանրամասն թվարկված են Սելևկոսի ուղարկած նվերները Ապոլլոնի տաճարին. զանազան ոսկե և արծաթե սպասներ, 12628 դրախմա 3 օբոլա ընդհանուր արժողությամբ, 10 տաղանդ անուշահոտ յուղ, 1000 ոչխար, 12

(36) Նույն տեղում, 70:

(37) « ... λαμβανέτω τῶν θυομένων γέρα τό δέρμα καί κωλεάν καί τῶν ἐργαστηρίων ὧν ἀνατέθηκα τήν πρόσοδον» (RC, 24).

(38) K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Berlin, 1890, էջ 265.

գլուխ խոշոր եղջերավոր անասուն (βοῦς) և այլն[39]:

Կարծում ենք, որ այս նամակների և Արմավիրի Նո 3 հունարեն արձանագրության համադրումը որոշ չափով հնարավորություն կտա պարզելու վերջինիս բնույթը: Ա.Ի. Բոլտունովան հետևյալ կերպ է ընթերցում այդ արձանագրությունը.

τέτταρες
ἵπποι τό ζεῦγος
Εὐθυχαρμί[δης]
πινάκιον
Πηλαμύδος

և այն համարում է Արմավիրի տաճարին արված նվիրաբերությունների թվարկում և թարգմանում է հետևյալ կերպ. «Զորս ձի, կառք, որ նվիրաբերել է Եվթիքարմիդեսը և ոչ մեծ մի պատկեր, որը նվիրաբերել է Պելամիդեսը»[40]: Իսկ Կ.Վ. Տրեվերը, հիմնվելով ակադ. Ցա.Ի. Սմիռնովի՝ այս արձանագրության մասին թողած ձեռագիր մեկնաբանությունների վրա, առաջարկում է կարդալ՝

τέτταρες
ἵπποι τό ζεῦγος
εὐθύ Χάρμι
πινάκιον εἰ[μι]
Πηλαμύδο[υ]

և տալիս է հետևյալ, առաջինից բոլորովին տարբեր թարգմանությունը. «Զորս ձի (և) կառք (նվիրված) Հարմային, տախտակն եմ Պելամիդեսի»[41]: Ակադ. Ցա.Ի. Սմիռնովը և, նրան հետևելով, Կ.Վ. Տրեվերը ենթադրում են, որ այս արձանագրությունը ևս, Արմավիրի մյուս արձանագրությունների նման, ունի ընծայաբերական բնույթ կամ թե հատված է գրական ինչ-որ երկից[42]:

Մենք առավել ընդունելի ենք համարում Ա.Ի. Բոլտունովայի՝ արձանագրության բառերը իրենց ուղիղ իմաստով վերցրնելը. ինչո՞ւ արձանագրության բառերի մեջ փնտրել խորհըր-

(39) C.B. WELLES, RC, 5.

(40) А.И. Болтунова, Греческие надписи Армавира, *Արմֆանի Տեղեկագիր*, 1942, Նո 1-2, էջ 42:

(41) К.В. Тревер, Очерки по истории культуры ..., էջ 132:

(42) Նույն տեղում, էջ 132-156:

դանչական կամ փոխաբերական իմաստ, ինչպես այդ անում են Յա.Ի. Սմիռնովը և Կ.Վ. Տրեվերը, այն ժամանակ, երբ այդ նույն բառերը ուղիղ իմաստով վերցնելը լիովին բանական է և չի հակասում պատմական իրականությանը: Տվյալ արձանագրության ընդհանուր իմաստը հետևյալն է. ոմն Եվթիքարմիդես ընծայաբերում է տաճարին չորս ձի և կառք, իսկ Պելամիդեսը՝ πυνάκιον:

Այս ոչ մեծ արձանագրության առաջին մասի բնույթի վերաբերյալ կարելի է երեք ենթադրություն անել: Առաջինը բխում է Ստրաբոնի այն վկայությունից, թե Հայաստանը վաղուց ի վեր հարուստ է եղել ձիաբուծության համար հարմար արոտավայրերով (ἱππόβοτος), որ Հայաստանի սատրապը ամեն տարի պարսից արքային ուղարկում էր 20 հազար մարուկ՝ Միհրական տոների համար (τοῖς Μιθρακίνοις)[43]: Արմավիրի տաճարը, հավանաբար, նվիրված էր Միհրին: Ուստի լիովին բնական է ենթադրել, որ արձանագրության մեջ հիշատակված չորս ձիերը ընծայվել էին տաճարին, Միհրի տոնակատարության ժամանակ զոհաբերելու համար: Այս դեպքում, սակայն, անբացատրելի է մնում ձիերի հետ կառքի նվիրաբերումը: Ուստի բացառված չէ նաև երկրորդ ենթադրությունը, որ չորս ձիերը և կառքը նվիրաբերված էին տաճարային տնտեսության մեջ օգտագործելու համար: Հնարավոր է նաև մի երրորդ ենթադրություն, որ այս փոքր արձանագրությունը եղել է տաճարային տնտեսության ունեցվածքի գույքագրության ցուցակից մի հատված: Այնուամենայնիվ, այս դեպքում ևս Եվթիքարմիդեսը և Պելամիդեսը մնում են թվարկված իրերի նվիրաբերողները: Ինչ վերաբերում է արձանագրության երկրորդ մասում հիշատակված πυνάκιον բառին, ապա այդ բառի նշանակությունը այս դեպքում ընդունելի է ոչ թե որպես տախտակ (Կ. Տրեվեր) կամ ոչ մեծ նկար (Ա. Բոլտունովա), այլ որպես մատուցարան, պնակ:

Փոքր Ասիայում ևս, ինչպես Արևելքի մյուս երկրներում, տաճարներն ունեին հողային ընդարձակ տիրույթներ: Խոսելով Կապպադովկիայի Կոմանա քաղաքում գտնվող Մա դիցուհու տաճարի մասին, Ստրաբոնը գրում է, որ տաճարին կից կա մեծ հո-

(43) Strabo, XI, 13, 7 (C. 525): XI, 14, 9 (C. 530): Համմ. նաև Xenoph. Anabasis, IV, 5, 24:

ղամաս[44]: Այնուհետև հույն աշխարհագետը մատնանշում է, որ Վենասյան Զևսի տաճարին պատկանել Մորիմենա քաղաքում կա «բարեբեր սրբազան հողամաս»[45], որ Ազմանքում քուրմը «կանգնած է ընդարձակ և լավ բնակեցված սրբազան հողի գլուխ»[46]: Անկասկած, նույն դրությունը պետք է եղած լիներ նաև Հայաստանում: Ագաթանգեղոսի մի շարք վկայությունները խոսում են նման ենթադրության օգտին: Իր պատմության սկզբում Ագաթանգեղոսը հաղորդում է, որ Սասանյան Պարսկաստանի դեմ տարած հաղթանակից հետո Տրդատ Մեծի հայրը, Հայաստանի խոսրով թագավորը, վերադարձավ հարուստ ավարով, որի մեկ հինգերորդ մասը նա պարգևեց քրմերին[47]: Նույն Ագաթանգեղոսը վկայում է, որ Հայաստանում քրիստոնեությունն ընդունելուց հետո, Տրդատ Մեծը Գրիգոր Լուսավորչի հետ համատեղ սկսեցին կործանել երկրում գտնվող հեթանոսական բոլոր տաճարները: Շարունակելով, հայ մատենագիրը վկայում է, որ Արտաշատում գտնվող Անահիտ դիցուհու[48] տաճարը կործանելուց հետո, Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը հեթանոսական այդ տաճարին պատկանող ունեցվածքը նվիրեցին եկեղեցուն — «Եւ գդաստակերտն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և նոցին գեառովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»[49]: Այնուհետև, Ագաթանգեղոսը վկայում է Հայաստանի հեթանոսական մյուս տաճարների ունեցվածքի բռնագրավման մասին հօգուտ քրիստոնեական նորաստեղծ եկեղեցու:

Այս առնչությամբ ակնառու փաստեր կան Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատության մեջ, ըստ որի Մեծ Հայքում Աշտիշատի հեթանոսական տաճարին պատկանում էին 7 գյուղ՝ Կուառ, Մեղոխ, Բրեխ, Տումբ, Խորնի, Կեղք և

(44) Strabo, XII, 2, 32 (C. 535).
(45) Նույն տեղում, XII, 2, 5 (C. 537):
(46) Նույն տեղում, XI, 4, 7 (C. 507):
(47) Ագաթանգեղոս, Ա, 22:
(48) Ստրաբոնը (XI, 14, 16) մատնանշում է, թե «հայերը առանձնապես պատվում էին Անահիտի տաճարները, որի պատվին նրանք այդպիսիք կառուցել էին այլ վայրերում և հատկապես Ակիլիսենեում: Այստեղ նրանք նվիրաբերում էին ստրուկներ և ստրկուհիներ»:
(49) Ագաթանգեղոս, ՃԸ, 731:

Բուզու[50]:

Ագաթանգեղոսի վերոհիշյալ հաղորդման արժանահավատությունը հաստատվում է Փավստոս Բուզանդի տվյալներով: Վերջինս Պապ թագավորին (367–380 թթ.) մեզադրելիս, խիղճ-այլոց խոսում է նրա ձեռնարկած բարենորոգումների մասին: Այդ բարենորոգումներից մեկն էլ այն էր, որ թագավորը բռնագրավում էր մի մասը եկեղեցապատկան այն հողերի, որ Տրդատ Մեծը վերցրել էր հեթանոսական տաճարներից և պարգևել քրիստոնեական եկեղեցու սպասավորներին[51]: Վերջապես, մենք ունենք պատմահոր այն վկայությունը, թե Տիգրան թագավորը «ցասուցեալ ընդ Վահունին, ... ընկենու զնոսա ի քրմութենէն, և զգեղն յարքունիս առնու»[52]:

Ավելորդ չենք համարում այս վկայությունների կողքին մեկ անգամ ևս հիշատակել մ.թ.ա. II դարի վերջերին գահակալած Անտիոքոսներից մեկի նամակն այն մասին, որ թագավորը ետ է վերադարձնում Բայտոկայկեյում գտնվող Զևսի տաճարին նրա հողային նախկին տիրույթները: Այս դեպքում անկասկած է, որ Սելևկյան թագավորները իրենց տիրապետության սկզբնական շրջանում այդ տաճարից վերցրել էին նշանակալից հողային տարածություններ[53]: Այս բոլորից հետո, դժվար չէ կռահել, որ թագավորական իշխանության փոխհարաբերությունը քրմական դասի հետ ոչ բոլոր դեպքերում էր բարեկամական:

Այսպիսին էր իրադրությունը ոչ միայն Հայաստանի պաշտամունքային կենտրոնի՝ Արմավիրի տաճարում, այլ նաև երկրի մյուս մասերում և քաղաքներում: Եփրատի վերին ձախ հոսանքում, Եկեղյաց գավառում, մի ամբողջ շրջան է հայտնի, որը այնտեղ գտնվող Անահիտ դիցուհու տաճարի անունով հայերը կոչել են Անհատական երկիր, հույները՝ ἡ Ἀναΐτιδος χώρα և համարվում էր «սրբազան երկիր»: Պլուտարքոսը հաղորդում է, որ այդ երկրի ընդարձակ արոտավայրերում արածում էին հատուկ գույնի կովեր, որոնք նվիրաբերված էին աստվածուհուն[54]: Ս.Տ. Երեմյանը նշում է, որ «տաճարային այդ տիրույթները

(50) Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 111:
(51) Փավստոս Բուզանդ, է, լա:
(52) Մովսես Խորենացի, Բ, ժդ:
(53) C.B. Welles, RC, 79.
(54) Plutarchi Lucull., XXIV, 2-6.

առավել կայուն և պահպանողական էին և մի չարք դեպքերում առաջացել են նախահայկական շրջանում»[55]:

Արտաշեսյանների մայրաքաղաք Արտաշատը ևս, հին աշխարհի բոլոր մեծ քաղաքների նման, ունեցել է իր հովանավոր դիցուհուն՝ Անահիտին, որի պատվին քաղաքում կառուցված է եղել տաճար[56]: Անկասկած, իրենց հովանավոր աստվածներին նվիրված տաճարներ կային նաև Հայաստանի այնպիսի քաղաքներում, ինչպիսիք Երվանդաշատը, Բագարանը, Բագավանը, Տիգրանակերտը և այլն:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ավելի քան պարզ կերպով ցույց է տալիս, որ քրմապետի իրավասությունները չէին սահմանափակվում միայն պաշտամունքային արարողությունների կատարումով և տաճարային տնտեսությունների վերահսկողությամբ:

Ամենայն հավանականությամբ, հեթանոսական Հայաստանում քրմապետերն ունեցել են նաև մի բացառիկ իրավունք, որպիսին մենք չենք հանդիպում հելլենիստական արևելքի մյուս երկրներում: Այդ՝ հայոց թագավորին թագադրելու իրավունքն էր: Իսկ սա ուներ բացառիկ կարևորություն, քանի որ առանց թագադրումի արարողության թագավորական իշխանությունը ապօրինի կհամարվեր: Հավանաբար այս հանգամանքը ի նկատի ունի Խորենացին, երբ անդրադառնալով Երվանդի գահակալությանը, գրում է. «Եւ ի մեռանելն Սանատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցուցին զնա, առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր»[57]: Թագադրման արարողությունն, անկասկած, տեղի էր ունենում հայտնի սրբավայրերից մեկում: Այդպիսի սրբավայրում, հավանաբար, թագադրվել էր Տիգրան Բ-ը, որտեղ և հետագայում նա կառուցեց իր քաղաքը, Տիգրանակերտը[58]:

Աղբյուրներից հայտնի է, որ հայոց թագավորին թագադրելու իրավունքը վերապահված էր Բագրատունյաց տոհմին: Բագրատունի անվան առաջին բաղկացուցիչ մասը —«բագ»— ինքնին հուշում է այն մասին, որ Բագրատունիները սկզբնական

(55) С.Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, стр. 56; Նույնի, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, N^{O} 1. стр. 25.
(56) Հմմտ. Մովսես Խորենացի, Բ, խթ:
(57) Մովսես Խորենացի, Բ, լէ:
(58) Հմմտ. Appiani Mithrid., 67.

չրջանում պատկանելիս են եղել քրմական դասին[59]: Հենց այս հանգամանքն էլ մեզ հանգեցրել է վերոբերյալ ենթադրության, թե հայոց թագավորին թագադրում էր քրմապետը:

Հրեաների մոտ ևս քրմապետն ունեցել է թագավորին թագադրելու իրավասություն: Այսպես, Աստվածաշնչի մեջ կարդում ենք, որ քահանայապետ Սամվելը թագավոր է օծում Սավուղին[60]:

Արևելքի երկրներում քրմական դասի ձեռքին է եղել նաև դատական իշխանությունը: Դեռ ավելին: Երբեմն քրմապետ դատավորը հանդիսացել է նաև երկրի գերագույն իշխանավորը և աշխարհագործի առաջնորդը: Աստվածաշնչի մեջ կա մի ամբողջ գիրք, որտեղ նկարագրվում է պատմական այն դարաշրջանը, երբ հրեաները դեռ թագավոր չունեին և երկրի գերագույն իշխանությունը գտնվում էր քահանայապետ-դատավորի ձեռքին, որը միաժամանակ պատերազմի ընթացքում հանդիսանում էր հրեաների ռազմական առաջնորդը[61]:

Ըստ երևույթին, հեթանոսական Հայաստանում ևս քրմապետի ձեռքին է եղել դատավորական իշխանությունը, որը հետագայում ժառանգաբար անցել է հայոց կաթողիկոսին: Ինչպես վկայում է պատմահայրը, հայկական եկեղեցու գլուխ կանգնած կաթողիկոսը միևնույն ժամանակ վարում էր «մեծ դատավարության գործակալությունը»: Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հայտարարվելուց հետո, ինչպես հաղորդում է Ագաթանգեղոսը, Տրդատ թագավորը և Գրիգոր

(59) Իրավացի է Ա.Մ. Գարագաշյանը (տես՝ Քննական պատմություն Հայոց մ. Ա, Թիֆլիս, 1895, էջ 178), երբ գրում է. «Ըստ մեզ թագավոր պահելն առ հայս ոչ միայն վաղեմի սովորություն էր, ... այլև թերևս կրոնական արարողություն, և Բագրատունիք իրև գվահունիս էին թերևս քրմական ցեղ ի մեջ Հայոց: Առ այս արդարև չունենք պատմական ապացույց, բայց այսպես ենթադրելու բավական պատճառ կուտա մեզ Բագրատունի անվան առաջին բառը բագ, որ հնդեվրոպական լեզվաց շառերուն մեջ կա և կնշանակե դիք կամ աստված: Ուստի մարթ է կարծել, թե Բագրատունիք այսպես կոչված էին իբր նվիրական անձինք որպես գվահունիս, որ քուրմ էին ցեղով և որոց անվան առաջին բառը Վահ՝ բագ բառին ուրիշ ձևն է և միևնույն նշանակությունն ունի»:

(60) Ա. գիրք Թագաւորութեանց, Գ–ԺԱ:

(61) Գիրք Դատաւորաց, Բ, 16–19: Գ, 10: Դ, 4–24: ԺԱ–ԺԶ:

Լուսավորիչը «զդատաւակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և նոցին գեանովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյն սպասաւորութեան»[62]: Կասկած չի կարող լինել, որ նորաստեղծ քրիստոնեական եկեղեցին Հայաստանում հեթանոսական տաճարներից ժառանգեց ոչ միայն նրանց չարժական և անշարժ ունեցվածքը, այլև քրմերի մինչ այդ ունեցած արտոնությունները, այդ թվում նաև դատական իշխանությունը:

Վերջապես Արևելքում քրմապետը հաճախ հանդիսանում էր նաև ամբողջ մարզի քաղաքական կառավարիչը, տարատեգոսը: Այդ մասին մեզ է հասել հետաքրքիր մի վկայություն, որի վավերականությունը ամեն կասկածից վեր է: Դա Կապպադովկիայի Կոմանա քաղաքում գտնված Մա դիցուհուն նվիրված տաճարի քրմապետի պատվին ընդունված մեծարման դեկրետն է, որը մեզ է հասել արձանագրության ձևով: Դրանում ասված է. «[Οἱ Κατάονες οἱ ἐ]ν [τ]ῇ ἱερᾷ Κομάνων πό]λει Τ[ρ]ι[ταναίχ]μην Ἰαζῆμ[ιον] τόν ἱερέ]α Νικηφόρου θ[εᾶς καί] στρατηγόν Καταονία[ς, ἡ]γησάμενον αὐτῶν ἐπιεικ[ῶς τε] καί εὐεργετικῶς»:

(Կատաոնացիները, որոնք ապրում են Կոմանայի սրբազան քաղաքում, Տրիտանտեքմեսին, Ցազիմոսի որդուն Նիկեփորոս դիցուհու քրմին և Կատաոնիայի ստրատեգոսին, որը նրանց կառավարում էր պաշտաճորեն ու բարեգործությամբ)[63]: Ինչպես տեսնում ենք, Կոմանայի քրմապետը միաժամանակ հանդիսանում է Կապպադովկիայի տասը ստրատեգիաներից մեկը, Կատաոնայի ստրատեգոս-կառավարիչը[64]: Ինչ խոսք, որ վերոհիշյալ արձանագրությունից բխող եզրակացությունը սերտորեն ձայնակցում է Ստրաբոնի հայտնի վկայությանը, թե Կոմանայի քրմապետը «թագավորից հետո երկրորդ անձնավորությունն է Կապպադովկիայում»[65]:

Բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ քրմերը Հայաստանում ևս ունեցել են գինվորական իշխանություն: Այդ են-

(62) Ագաթանգեղոս, ՃԸ, 781:

(63) Արձանագրության հրատարակությունը տես W. Ramsay, The social basis of Roman power in Asia Minor, Aberdeen, 1941, p. 105–106.

(64) Համմ. А.Г. Периханян, Храмовые объединения Малой Азии и Армении, էջ 160.

(65) Strabo, XII, 2, 3 (C. 535).

թագրության լավագույն հիմքը հեթանոսության վերացման և քրիստոնեության տարածման ամբողջ պատմությունն է: Մեր հիմնական աղբյուրը, Ագաթանգեղոսը, վկայում է, որ քրիստոնեությունը միանգամից, խաղաղ ճանապարհով չէ, որ մտավ Հայաստան, այլ Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի կողմից բռնությամբ, հրով ու սրով տարածվեց: Նոր վարդապետության դեմ պայքարելիս, հեթանոսության գլխավոր հենարանները տաճարներն էին, որոնք մեծ մասամբ ամրացված բերդեր էին և ունեին հատուկ զորական միավորումներ: Տրդատ թագավորն ու Լուսավորիչը ստիպված էին մեծաթիվ զորքով արշավել այդ տաճարային կենտրոնների դեմ և արյունալի մարտերից հետո միայն գրավել դրանք:

Հայաստանի տաճարային մի շարք կենտրոնների մասին խոսելիս, հայ մատենագիրները դրանք համարում են նույնիսկ ամրություններ: Բերենք մի քանի օրինակ: Մովսես Խորենացին Երվանդաշատի մոտ կառուցված Բագարան քաղաքը, որտեղ Երվանդը փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը և այնտեղ մեհյաններ չինելով իր Երվազ եղբորը քրմապետ նշանակեց, անվանում է «ամուրն Բագարան»[66]: Ագաթանգեղոսի վկայությամբ, Տրդատ թագավորն ու Գրիգոր Լուսավորիչը եկեղեցի գավառի Անի-Կամախում գտնվող Արամազդի տաճարը ավերելուց հետո, «զաւանն ամրականավն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյ նուիրէին»[67]: Մովսես Խորենացին ևս այս Անին նույնպես անվանում է ամրոց[68]: Երիզա ավանը ևս, որտեղ գտնվում էր Անահիտ դիցուհու տաճարը, շրջապատված էր բարձր պարիսպներով և ցույց տվեց ուժեղ դիմադրություն Տրդատի և Լուսավորչի զորքերին[69]:

Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» մատյանում հիշատակվում են մի շարք պատերազմներ, որ մղել է Տարոնում գտնվող Գիսհանեի տաճարային կազմակերպությունը թագավորական զորքերի դեմ: Նրա հաղորդման համաձայն, տաճարին պատկանող ավաններից դուրս բերված զորքերը բաղկա-

(66) *Մովսես Խորենացի, Բ, խը:*
(67) *Ագաթանգեղոս, ՃԹ, 785:*
(68) *Մովսես Խորենացի, Բ, ժբ:*
(69) *Ագաթանգեղոս, ՃԹ, 786:*

ցած էին աղեղնավորներից, պարսավորներից և տեգավորներից[70]: Հայկական մատենագրության մեջ պահպանված են ոչ քիչ տեղեկություններ այն մասին, որ Հայաստանում նորաստեղծ եկեղեցու առաջին ականավոր գործիչները միաժամանակ առնչություն են ունեցել զինվորական ծառայության հետ: Այսպես, Փավստոս Բուզանդի վկայությամբ, Գրիգոր Լուսավորչի թոռները, Պապը և Աթանագինեսը, զբաղվում էին ռազմական գործով[71]: Դարձյալ Փավստոսի պատմությունից մեզ հայտնի է, որ Ներսես կաթողիկոսը, նախքան հայկական եկեղեցու քահանայապետ նշանակվելը, եղել էր զինվորական[72]: Այս առնչությամբ առավել հետաքրքրական է Փավստոսի այն հաղորդումը, թե Զավեն եպիսկոպոսը ոչ միայն մտցրեց հոգևորականության ռազմական պատրաստականության հարցը, այլև առաջարկում էր հոգևորականներին կրել ռազմական համազգեստ[73]: Մեզ հասել է վկայություն, թե մեծն Մաշտոցը ևս մի ժամանակ եղել է զինվորական[74]: Այս փաստերի մեջ Հ.Հ. Մանանդյանը հակված է տեսնելու Եվրոպայի միջնադարյան ասպետական բարքերի ընդօրինակումը Հայաստանում[75], իսկ Ա.Գ. Փերիխանյանը Փոքր Ասիայի և Հայաստանի տաճարային տնտեսություններին նվիրված իր ուսումնասիրության մեջ վերոհիշյալ փաստերի կապակցությամբ իրավացիորեն գրում է, որ «քրիստոնեության սկզբնական շրջանում հայ հոգևորականության ներկայացուցիչների ռազմական հակումները գուցե անհրաժեշտ է բացատրել որպես վերապրուկ նրա նախորդների՝ հայկական քրմական դասի ավանդների»[76]:

Ամբողջ չարադրվածից ավելի քան պարզ է, որ հեթանոսական Հայաստանում և Առաջավոր Ասիայի մյուս երկրներում քրմական դասը խոշոր դեր է ունեցել երկրի թե՛ ներքին

(70) *Ցովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 110-112:*
(71) *Փավստոս Բուզանդ, Գ, ժգ:*
(72) *Նույն տեղում, Դ, գ:*
(73) *Նույն տեղում, Դ, բ:*
(74) *Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան Մեսրոպայ Վարդապետի, Վենետիկ, 1894, էջ 13-14:*
(75) *Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 145-147:*
(76) А.Г. Периханян, Храмовые объединения Малой Азии и Армении, էջ 80-81:

տնտեսական և թե՛ մշակութային-պաշտամունքային կյանքում: Քրմերի գործունեությունը, սակայն, չի սահմանափակվել այդքանով: Նրանք գործոն մասնակցություն են ունեցել նաև արտաքին, միջպետական հարաբերություններին: Այս տեսակետից հետաքրքիր են երկու փաստ, մեկը մատենագրությունից, մյուսը վիմական արձանագրություններից:

Նկարագրելով Իբերիայի (Վրաստան) հասարակակարգը, Ստրաբոնը գրում է. «Ձորս դասի (γένη) մարդիկ են բնակեցնում երկիրը: Դրանցից մեկը ամենակարևորն է, որից և թագավոր են ընտրում (καθιστᾶσι), ծագումով (նախկին թագավորին) ամենամոտիկ և տարիքով ավագագույն անձին, իսկ նրանցից երկրորդը վարում է դատական գործերը և առաջնորդում է զորքը: Երկրորդը քրմերի դասն է, որին հանձնված է հարևանների հետ հարաբերություններ վարելու գործը: Երրորդ (դասը) ռազմիկներն են և երկրագործները: Չորրորդ դասը ժողովուրդն է (τὸ τῶν λαῶν), որոնք հանդիսանում են արքունի ստրուկներ (βασιλικοί δοῦλοι) և արտադրում են այն ամենը, ինչ անհրաժեշտ է ապրելու համար»[77]:

Ստրաբոնի անգնահատելի այս հաղորդման մեջ նրա վկայությունը Իբերիայի քրմական դասի մասին, անշուշտ, չի կարելի հասկանալ այն տառացի իմաստով, որ երկրի արտաքին հարաբերությունների հարցերը վճռելու իրավունքը գտնվում էր բացառապես քրմերի ձեռքին: Արտաքին քաղաքականության հարցերը, անկասկած, բոլոր դեպքերում պետք է, որ լուծեր ինքը, երկրի գերագույն տերը համարվող թագավորը, իր խնդ հայեցողությամբ: Ստրաբոնի վկայության իմաստն այն է, որ թագավորը քրմերին էր հանձնարարում արտաքին քաղաքականության հարցերի մասին հոգալը:

Մյուս փաստը, որի մասին ակնարկեցինք, վիմական արձանագրությունների այն ամբողջ կոմպլեքսն է, որը հայտնաբերվել է Գալատիայի խոշորագույն տաճարային կենտրոն Պեսսինունտում: Այդ արձանագրություններում պահպանված է այն նամակագրությունը, որ ժամանակի միջազգային քաղաքական բարդ պայմաններում ունեցել են Պերգամոնի թագավորները Կյուբելեի տաճարի քրմապետի՝ Ատտիսի հետ: Ներկա գլխում մեկ ուրիշ առիթով մենք մանրամասն անդրադարձել ենք այդ արձանագրություններին, որոնց վերլուծությունը նույնպես մեզ հանգեցրել է այն եզրակացության, թե քրմապետները նշանակալից դեր են խաղացել հելլենիստական տերությունների միջպետական հարաբերություններում:

Այսպիսով, քրմապետները, բոլոր դեպքերում, ունեցել են բարձր հեղինակություն և համարվել են թագավորի մերձավոր բազուկն մարդիկը, միաժամանակ իրենց պաշտոնը վարելով ցմահ: Հայաստանում ևս, ինչպես և հելլենիստական մյուս երկրներում, թագավորները տաճարներին և դրանց սպասարկող քրմերին նվիրել են հողային ընդարձակ տիրույթներ, դրանց վրա աշխատող անմիջական արտադրողների հոծ զանգվածով, որը և կազմում էր քրմական դասի տնտեսական և քաղաքական հզորության գլխավոր աղբյուրը:

Քրիստոնեության ընդունումից հետո, նորաստեղծ եկեղեցին Հայաստանում ժառանգեց հեթանոսական տաճարների ոչ միայն ամբողջ հարստությունը, այլև բոլոր այն առանձնաշնորհումները, որ նախապես վայելում էին քրմերը: Դրանով էլ, այնուհետև, քրիստոնեական եկեղեցին դառնում է Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի ամենակարևոր գործոններից մեկը:

(77) Strabo, XI, 3, 6: Ա.Ի. Բոլտունովան գտնում է, որ Ստրաբոնի այս վկայության աղբյուրը Պոսիդոնիոսն է, ուստի և այն արտացոլում է մ.թ.ա. II դարի կեսերի Իբերիայի հասարակական և քաղաքական կարգերը (տես՝ А.И. Болтунова, Возникновение классового общества и государственной вдасти в Иберии, ВДИ, 1956, N° 2., стр. 38).).

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայտնի է, որ պետական ապարատի կազմավորումն, առհասարակ, պայմանավորված է առաջին հերթին տվյալ հասարակութեյան մեջ գուլքային անհավասարութեյան հիման վրա ծագած պետականութեյան առաջացմամբ։

Նախորդ գլուխներում Բեհիստունի արձանագրութեյան, ինչպես նաև Հերոդոտոսի և Քսենոփոնի հաղորդած տվյալների հիման վրա ցույց տվեցինք, որ Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերը մ.թ.ա. VI դարում արդեն թևակոխել էին դասակարգային չերտավորման փուլը և որ այնտեղ ստեղծվել էին մի շարք նախադրյալներ ինքնուրույն պետականութեյան առաջացման համար։ Սակայն Հայաստան աշխարհը չուտով ընկավ օտարերկրյա, պարսկական տիրապետութեյան տակ, որով և ժամանակավորապես խանգարվեց երկրի զարգացման բնականոն ընթացքը պետականութեյան կազմավորման ճանապարհին և արգելակվեց ինքնուրույն պետութեյան ստեղծումը։ Այնուհետև, մենք ցույց տվեցինք, որ Աքեմենյանների պարսկական տերութեյան կործանումը և Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո նրա ժառանգների միջև ծայր առած հակամարտութեյունը ավելի քան նպաստավոր պայմաններ ստեղծեցին Առաջավոր Ասիայում մի շարք փոքր միապետութեյունների (Պերգամոն, Բյութանիա, Կապադովկիա, Պոնտոս, Հայաստան, և այլն) առաջացման համար, տեղական իշխանների գլխավորութեյամբ։ Այդ ժամանակ էլ ինքնուրույն պետականութեյան ստեղծման հիման վրա Հայաստանում սկսում է կազմավորվել պետական ապարատը։

Հայրենական և օտարազգի սկզբնաղբյուրների, ինչպես նաև վիմագրական նյութի մանրակրկիտ ծանոթութեյունը մեզ հիմք է տալիս Հայաստանում պետական ապարատի կազմավոր-

ման ու հետագա զարգացման ամբողջ ընթացքը բաժանել երեք հիմնական փուլի. 1) Ներքին համախմբման ու կազմակերպման փուլ, որն ընդգրկում է Երվանդունիների թագավորության ամբողջ շրջանը և Արտաշեսյան թագավորության հաստատումից հետո մինչև Տիգրան Բ-ի գահակալումն ընկած տարիները (IV դարի վերջ — I դարի սկիզբ մ.թ.ա.)։ 2) Արտաքին ընդարձակման և ներքին կատարելագործման փուլ, որն ընդգրկում է Տիգրան Բ-ի գահակալումից մինչև Հայաստանում Արշակունիների հաստատումն ընկած ժամանակահատվածը (I դար մ.թ.ա. — I դար մ.թ.)։ 3) Հելլենիստական տերկատիրական պետական ապարատի՝ ֆեոդալականի վերաաերման փուլ, որն ընդգրկում է հայ Արշակունիների թագավորության 350-ամյա գահակալության ամբողջ ժամանակաշրջանը։

Ավելի քան յոթհարյուրամյակ տևած պատմական այդ երեք շրջանների համար ընդհանուրն այն է, որ պետական իշխանության գլուխ կանգնած է եղել ինքը՝ թագավորը։ Մենք արդեն խոսել ենք թագավորական իշխանության առաջացման և նրա ֆունկցիաների մասին Երվանդունիների և Արտաշեսյանների թագավորության առաջին շրջանում։ Այդ շրջանի մասին պահպանված պատմական բոլոր վկայությունները ցույց են տալիս, որ Հայաստանում դեռևս չէր կազմավորվել այնպիսի զարգացած ու ճյուղավորված պետական ապարատ, ինչպիսին հետագայում առաջացավ Տիգրան Բ-ի աշխարհակալության հետո և Արշակունիների գահակալության տարիներին։ Այնուամենայնիվ, մենք նկատեցինք, որ Երվանդունիների ժամանակ Հայաստանում արդեն գոյություն ուներ իշխանության ինչ-որ բաժանում։ Թագավորի հետ միասին երկրի կառավարման գործին ակտիվ կերպով մասնակցել են նաև քրմերը։ Ամենայն հավանականությամբ, այդ շրջանում հայոց թագավորի կողքին եղել է նրան շրջապատող և նրա իշխանությունը ինչ-որ չափով սահմանափակող ավագանու խորհուրդը, որը Քսենոփոնի վկայությամբ, գոյություն ուներ դեռևս Աքեմենյանների կողմից Հայաստանի նվաճումից առաջ։ Հույն պատմագիրը նրանց անվանում է «պատվավոր արմեններ»[1]։

Ընթերցողին արդեն հայտնի են անտիկ հեղինակների

(1) Xenoph., Cyrop., III, 1, 8։

երկերում պահպանված այն բոլոր վկայությունները, որոնցում հիշատակություն կա Արմենիայի սատրապ, հետագայում թագավոր, Երվանդի (Ὀρόντης) մասին։ Այդ վկայությունների մեջ չկա և ոչ մի տեղեկություն, ոչ մի ակնարկություն հայոց թագավոր Երվանդի որևէ ստորադրյալի մասին։ Մեզ հայտնի միակ աղբյուրը, որտեղ խոսվում է Երվանդ թագավորի ստորադրյալների մասին, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է։ Պատմահոր վկայությամբ, թագադիր ասպետը Բագրատունյաց տոհմից մերժել է թագադրել Սանադրուկ թագավորին հաջորդած Երվանդին[2]։ Այնուհետև Խորենացին հիշատակում է Երվանդին ենթակա բազում նախարարների մասին։ «Լուր հասանէ, — գրում է հայ մատենագիրը, — առ Երուանդ, յՈւտեացւոց գաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Մմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ անցէ գմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր։ Զայս լուեալ Երուանդայ՝ եթող անդէն զբազումս ի նախարարացն կողմնապահս .... և ամենայն նախարարացն տայր պարգեւս և պատիւս, և զօրացն ամենեցուն պարգեւէր առատապէս»[3]։ Եւ վերջապես, պատմահայրը հիշատակում է Երվանդի պալատում գտնվող արքունի սպասավորների մասին[4]։

Մովսես Խորենացու այս վկայությունները, սակայն, որոնք ժամանակագրական առումով ընկնում են մ.թ. առաջին դարին, դժվար թե վերաբերվեն Երվանդ անունով մեզ հայտնի թագավորներից որևէ մեկին։ Անդրադառնալով Խորենացու պատմության մեջ Երվանդին վերաբերող գլուխներին (գիրք Բ, գլխ. լէ-խը), Հ.Հ. Մանանդյանը իրավացի կերպով նշում է, որ «պատմահայրը, օգտվելով, հավանորեն, բացի վիպասանքից նաև մեզ անհայտ աղբյուրներից՝ Երվանդի ու Արտաշեսի ընդարձակ պատմությունը հերյուրել է և չարադրել, բնականաբար, ըստ իր ըմբռնման ու ժամանակագրության, չփոթելով Օրոնտաս-Երվանդին եգեսիայի Աբգար Է թագավորի որդու՝ Արբանդեսի (Ἀβγάντης) հետ, որը ժամանակակից էր Տրայանոս կայսեր»[5]։

Երվանդունիների թագավորության ժամանակ Հայաստանում չէր կարող գոյություն ունեցած լիներ զարգացած վարչա-

(2) Մովսես Խորենացի, Բ, լէ։
(3) Նույն տեղում, Բ, խդ։
(4) Նույն տեղում, Բ, խը։
(5) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 126-127։

պետական ապարատ, քանի որ նրանց տերության սահմանները զգալի չափով կրճատվել էին և երկիրը դժվար թե ունենար վարչա-տերիտորիալ բաժանումներ։ Մ.թ.ա. III դարում Երվանդունիների իշխանությունից դուրս էին գտնվում Փոքր Հայքը, Մոփքը, Կոմմագենեն, որտեղ, ինչպես տեսանք, հաստատվել էին առանձին իշխանություններ։ Բացի այդ, երկրի հարավ-արևմտյան մի շարք շրջաններ նվաճել էին Սելևկյանները։ Ըստ երևույթին, Հայկական լեռնաշխարհի մի շարք գավառներ այդ ժամանակ գտնվում էին հարևանների՝ իբերների (Խորշենեն և Գոգարենեն), մեղացիների (Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեղան), խալիբների և մոսինոյկների (Կարենիտիսը և Դերքսենեն), կատաոնների (Ակիլիանեն) և ատրիների (Տամոնիտիսը) ճեռքին[6]։ Այդ գավառները, ինչպես հաղորդում է Ստրաբոնը, հետագայում Արտաշեսն ու Զարեհը նվաճելով, միացրին իրենց տերությանը[7]։ Հետևաբար, Երվանդ Վերջինի իշխանության տակ մնացել էր Հայաստանի այն մասը, որը հետագայում հայտնի էր «Միջնաշխարհ» անունով։ Երվանդյան Հայաստանի տարածքային այս կրճատումները չէին կարող բացասաբար չանդրադառնալ նոր կազմավորվող հայկական պետական ապարատի հետագա զարգացման վրա։

Հայկական պետականության կազմավորման և հետագա ներքին զարգացման փուլը հիմնականում ավարտվում է Արտաշես Ա-ի թագավորության ժամանակ։ Պատմական այդ պրոցեսը պայմանավորված է եղել ոչ միայն երկրի ներքին, սոցիալ-տնտեսական զարգացմամբ, այլև մի շարք ներքին ու արտաքին քաղաքական հանգամանքներով, որոնց մասին արդեն խոսել ենք նախորդ գլուխներում։

Թագավոր դառնալուց հետո, Արտաշեսին հաջողվեց նախկինում Արաքսի հովտում պարփակված թագավորության սահմանները ընդարձակել, նրան միացնելով հայկական լեռնաշխարհի ծայրամասային գավառները[8], որի հետևանքով, ինչպես վկայում է Պոլիբիոսը, Արտաշեսը դառնում է Հայաստանի մե-

(6) Համմ. Г.А. Тирацян, Страна Коммагена и Армения, Տեղ. ՀԳԱՀԳ, 1956, Նո 3, էջ 72։ Գ.Ա. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, Տեղ. ՀԳԱՀԳ, 1958, Նո 6, էջ 66։

(7) Strabo, XI 14, 5 (C. 528).

(8) Նույն տեղում, XI 14, 5։

ծագույն մասի (բայց ոչ ամբողջ Հայաստանի) տիրակալ (ὁ τῆς πλείστης Ἀρμενίας ἀρχων)[9]։ Հենց այդ ժամանակ էլ մեկ միասնական պետության կազմում ընդգրկված Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերի կյանքում տեղի ունեցավ պատմական կարևորագույն իրադարձություն, «բոլորը միավեզու դարձան»[10]։

Ինչպես արդեն նշել ենք, Պոնտոսի և Կապադովկիայի թագավորներն ամեն կերպ խանգարում էին հայկական բոլոր հողերը մեկ թագավորության մեջ միավորելու ուղղությամբ Արտաշեսի վարած քաղաքականությանը, որի հետևանքով էլ Փոքր Հայքն ու Մոփքը դուրս մնացին հայկական կենտրոնացած պետության սահմաններից։ Այսուհանդերձ, հաստատուն հիմքը դրված էր։ Ստեղծված էր էթնիկական կոմպակտ ամբողջություն ներկայացնող մի պետական միավորում։

Անցնելով միասնական պետության գլուխ, Արտաշեսը պետք է որ ձեռնամուխ լիներ վարչա-պետական նոր ապարատի ստեղծմանը։ Այդ ուղղությամբ նրա ձեռնարկած միջոցառումներին հետևելու համար ուսումնասիրողն իզուր կփորձի ուղղակի տվյալներ փնտրել հայ, ինչպես և օտար մատենագրության մեջ։ Այս դեպքում մենք դարձյալ ստիպված ենք դիմելու անուղղակի տվյալների և հարևան հելլենիստական երկրների պատմությունից մեզ հայտնի օրինակներին։ Ամենից առաջ պիտի նկատի ունենալ այն փաստը, որ Արտաշեսը, նախքան իրեն անկախ թագավոր հռչակելը, եղել էր Սելևկյան Անտիոքոս Գ-ի նշանակած սատրապեդոսը Հայաստանի մի մասի վրա։ Մենք արդեն առիթ ունեցանք նշելու, որ Անտիոքոս Գ-ի ժամանակ սատրապեդոսն արդեն ոչ միայն զինվորական, այլ քաղաքական-վարչական պաշտոն էր նաև, որը նույնացվում է մարզի կառավարչի պաշտոնի հետ[11]։

Կասկած չի կարող լինել, որ Արտաշեսը, որպես Սելևկյանների նշանակած սատրապեդոսը Հայաստանում, մոտ էր կանգնած Անտիոքոսի արքունիքին և լավ էր ծանոթ հելլենիստական այդ

(9) Polyb., XXVI, 6, 1-12։

(10) Strabo, նույն տեղում։

(11) Հին Հայաստանի στρατηγός տերմինի մասին տես Գ.Ա. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Սորաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի Ն.մ.թ. 3-2րդ դարերի պատմության մասին, ԲՄ, Նո 6, 1962, Երևան, էջ 21-23։

խոշոր տերության պետական ապարատին։ Ուստի Հայաստանի մեծագույն մասի թագավոր դառնալուց հետո նա, իր պետության վարչա-պետական ապարատի ստեղծմանը ձեռնարկելիս, առաջին հերթին պետք է անպայման նկատի ունենար Սելևկյանների պետական հաստատությունները և աշխատեր հետևել նրանց օրինակին։

Նորաստեղծ հայկական կենտրոնացված թագավորության կառավարչական ապարատը կազմակերպելիս, սակայն, Արտաշեսը չէր կարող հաշվի չառնել նաև Հայաստանում ստեղծված պատմական կոնկրետ պայմանները, որոնք շատ բանով տարբերվում էին Սելևկյանների մոտ տիրող պայմաններից։ Առկա էին երկու էական տարբերություն։ Հայկական թագավորության աշխարհագրական սահմաններն անհամեմատ նեղ էին Սելևկյանների յայնատարած պետության սահմաններից։ Մյուս կողմից, սակայն, Սելևկյանների տերությունը, որն իր մեջ ընդգրկում էր տարբեր ցեղերով ու ժողովուրդներով բնակեցված երկրամասեր, զուրկ էր էթնիկական այն միասնությունից, որին արդեն հասել էր Արտաշեսի տիրապետության տակ գտնվող «միալեզու» դարձած Հայաստանը։

Հին Հայաստանի վարչա-տերիտորիալ բաժանման մասին մեզ հասած գրավոր սակավաթիվ տեղեկությունները հիմնականում կարելի է բաժանել երկու կարգի։ Դրանց մի մասը վերաբերում է պատմական այն ժամանակահատվածին, երբ Հայկական լեռնաշխարհը դեռևս գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ (սատրապության չրջան)։ Մյուս մասը վերաբերվում է արդեն Հայկական ինքնուրույն պետության վարչական ներքին բաժանմանը։

Սատրապության չրջանին վերաբերող Հայկական լեռնաշխարհի բաժանման մասին պահպանվել են երկու վկայություն՝ Հերոդոտոսի[12] և Քսենոփոնի[13] մոտ։ Այդ վկայությունների հիման վրա մի շարք ուսումնասիրողներ ենթադրում են, որ Հայաստանն այդ ժամանակ վարչական տեսակետից բաժանված է եղել երկու մասի՝ Արևելյան և Արևմտյան, կազմելով Աքեմենյան Պարսկաստանի 13-րդ և 18-րդ սատրապությունները[14]։ Հիրավի, Հերոդոտոսը հաղորդում է, որ Արմենիան և նրա հարևան մի շարք չրջաններ կազմում էին Աքեմենյան տերության երկու՝ 13-րդ և 18-րդ սատրապությունները, որոնցից յուրաքանչյուրը պարսից արքային վճարում էր տարեկան որոշակի հարկ, մինչդեռ «Անաբասիսում», Քսենոփոնի նկարագրած Հայաստանը, հավանաբար, կազմում էր մեկ սատրապություն, Օրոնտասի իշխանության տակ։ Հ.Հ. Մանանդյանն այն կարծիքին է, թե «ինչպես Հերոդոտոսի, այնպես և Քսենոփոնի ժամանակ Արմենիան ունեցել է, հավանորեն, միայն մեկ սատրապ։ Հ.Հ. Մանանդյանը, սակայն, չի բացառում Հայաստանի բաժանումը Արևելյան և Արևմտյան մասերի, որոնք կազմում էին մեկ սատրապություն, սատրապ Օրոնտասի գերիշխանության տակ, որի օգնականն էր հյուպարքոս (ὕπαρχος) Տիրիբազոսը[15]։ Վերջերս Գ.Ա. Տիրացյանը ճիշտ է նկատել, որ Հերոդոտոսի և Քսենոփոնի վկայությունները արտացոլում են տարբեր իրավիճակ և որ V դարի վերջերին Հայկական լեռնաշխարհը վարչական վերաբաժանման է ենթարկվել[16]։

Հետագայում արդեն որպես ինքնուրույն պետություն կազմավորված Հայաստանի վարչա-տերիտորիալ բաժանումը և, այդ հիման վրա, պետական տարբեր պաշտոնների առաջացումը իր արտահայտությունը գտել է ինչպես հունա-լատինական, այնպես էլ հայ պատմիչների երկերում։

Աղբյուրներից մեզ հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը դեռևս Արտաշեսից առաջ բաժանված է եղել Մեծ Հայքի, Ծոփքի և Փոքր Հայքի իշխանությունների[17]։ Սակայն, դժբախտաբար, մենք ոչինչ չգիտենք այդ իշխանությունների ներքին վարչա-տերիտորիալ բաժանման և կառավարման ձևի մասին։

(12) Herod., III, 93 և 94։
(13) Xenoph., Anabasis, III, 5, 17։ IV, 4, 4.

(14) Ա.Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մ. Ա, էջ 67։ Н. Адонц, Армения ..., էջ 390։ K. Aslan, Etudes historiques sur le peuple arménien, Paris 1909, էջ 71 և ուրիշներ։
(15) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 65։ Պրոֆ. Լեոն ևս մատնանշում է, որ Հայաստանը Քսենոփոնի ժամանակ ունեցել է մեկ սատրապ (Լեո, Հայոց պատմություն, հ. Ա, Թիֆլիս, 1917, էջ 391)։
(16) Գ.Ա. Տիրացյան, «Անաբասիս» և Հայաստանը (Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970 գրքում, էջ 226-229)։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1 Երևան, էջ 454։
(17) Polyb., XXVI, 6, 1-1։ VIII, 25, 1-6։ Strabo, XI, 14,5 (C. 528).

Միայն Ստրաբոնն է, որ հիշատակում է այդ երկրների սահմաններում բնակվող ցեղերի, ինչպես նաև մի շարք գավառների անունները։ Խոսելով, օրինակ, Փոքր Հայքի մասին, նա հաղորդում է, որ «Մոփքի նման այստեղ ևս իշխել են բնիկ դինաստներ ...։ Նրանց տիրապետության տակ էին նաև տիբարենները և խալդայները, այնպես, որ նրանց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն»[18]։ Նույնպիսի բնույթ ունի նաև հույն աշխարհագետի հայտնի հաղորդումը Զարեհի և Արտաշեսի իշխանության տակ գտնվող Մոփքի և Մեծ Հայքի մասին, ուստի և այդ տվյալները մեծարժեք լինելով հանդերձ, մեզ քիչ են օգնում այդ երկրների պետական ներքին կառուցվածքի ու վարչական բաժանման մասին ճշգրիտ եզրակացության հանգելու։

Ստրաբոնի համապատասխան հաղորդումները վկայում են այն մասին, որ Արտաշեսի ժամանակ Մեծ Հայքի թագավորությունն արդեն մեծապես ընդարձակվել էր, ընդգրկելով հայկական տարրերով բնակեցված գրեթե բոլոր մարզերը։ Հետևաբար, պետության կառավարման գործը դյուրացնելու նպատակով, անհրաժեշտ էր ձեռնամուխ լինել երկիրը վարչա-տերիտորիալ բաժանման ենթարկող բարենորոգումների։ Այս կարևորագույն երևույթի մասին, ցավոք, աղբյուրներում գրեթե բացակայում են որոշակի տվյալներ։ Ճիշտ է, Խորենացին որոշ տեղեկություններ հաղորդում է Արտաշեսի վարչական բարեփոխությունների մասին, սակայն պատմահայրը դրանք տեղադրում է մ.թ. I դարում և նրա պատմության ընթացքում այդ բոլորն ընկալվում են իբրև շարունակություն Վաղարշակ Ա-ի ձեռնարկած միջոցառումների[19]։

Հայագիտության մեջ առանձին ուշադրության է արժանացել Պլինիոս Ավագի այն հաղորդումը, թե Հայաստանը «բաժանված է պրեֆեկտուրաների, որոնք կոչվում են στρατηγίαι, որոնցից մի քանիսը հնում եղել են թագավորություններ։ Դրանք (թվով) 120 են և ունեն բարբարոսական անուններ»[20]։

Պրոֆ. Ն. Ադոնցն այն կարծիքին է, թե Պլինիոսի այս հաղորդումը արտացոլում է Հայաստանում Արշակունյաց հա-

(18) Strabo, XII, 3, 28 (C. 555).

(19) *Մովսես Խորենացի*, Բ, խէ-ծթ։

(20) "Dividitur in praefecturas, quas στρατηγίας vocant, quasdam ex iis vel singula ragna quondam, barbaris nominibus CXX" (C. Plin., Nat. Hist., VI, 10).

րստության հիմնադիր Տրդատ Ա-ի ժամանակաշրջանը[21]։ Գ.Խ. Սարգսյանն, իր հերթին, ենթադրում է, որ Հայաստանի բաժանումը ստրատեգիաների կատարվել է Արտաշեսյանների, գուցե և իր՝ Արտաշեսի ժամանակ[22]։

Հիրավի, Պլինիոսի այս հաղորդումը պատմական ո՞ր շրջանին է վերաբերում. Տրդատ Ա-ի, թե՞ Արտաշեսյանների թագավորության։ Գ.Խ. Սարգսյանն իր վերոհիշյալ տեսակետը հիմնավորելու նպատակով նշում է մի շարք համոզիչ փաստարկներ։ Դրանց մենք կցանկանայինք ավելացնել ևս մեկը, որը, մեր կարծիքով, կարող է առավել պարզություն մտցնել այդ կարևոր հարցը որոշելու համար։ Բանն այն է, որ Պլինիոսի՝ լատիներեն գրված այս երկում ստրատեգիա (στρατηγία) բառը գրված է հունարեն տառերով։ Այս հանգամանքը մեզ մղում է երկու ենթադրության։ Առաջին, որ Պլինիոսը չի գտել այդ բառի լատիներեն բուն համարժեքը, թեև նա ստրատեգիան բացատրելով իբրև պրեֆեկտուրա, փորձել է որոշ պարզաբանում մտցնել։ երկրորդ, որ նա այդ տեղեկությունը քաղել է իրենից առաջ (ասել է թե՝ Տրդատ Ա-ի թագավորությունից առաջ) հեղինակած մի հույն պատմիչի երկից։ Ուստի մենք նույնպես առավել հավանական ենք համարում այս վերջին կարծիքը, դրա համար որոշակի հիմքեր տեսնելով իրենց իսկ Ստրաբոնի և Պլինիոսի հաղորդումներուն մեջ։

Ինչպես գիտենք, Ստրաբոնը, թվարկելով Արտաշեսի ջանքերով հայոց թագավորության տարածքին վերամիավորված մարզերը, տալիս է հայկական մեկ տասնյակ գավառների անուններ՝ Կասպիանե, Փավնիտիս, Քորզենե, Գոգարենե, Ակիլիսենե, Կարենիտիս և այլն[23]։ Սրանցից յուրաքանչյուրը, հավանաբար, միաժամանակ նաև ստրատեգիաներից մեկի անվանումն էր, քանի որ Պլինիոսը նշելով, թե Հայաստանի ստրատեգիաները կրում են բարբարոսական անուններ, տալիս է դրանցից մեկի անունը՝

(21) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 391-392, 433-434.

(22) *Գ.Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, էջ 7-9։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 676-679 և 839-840։ Այստեղ հետաքրքիր ենթադրություն է հայտնվում այն մասին, թե Պլինիոսի բնագրի 120 թիվը հետագայի ազավաղում է և այն պետք է լինի 20։*

(23) Strabo, XI, 14, 5.

Caranitis[24], որն, անկասկած, Ստրաբոնի հիշատակած նույն կարենիտիսն է՝ հայկական կարինը:

Արտաշեսյանների ժամանակ Հայաստանը ստրատեգիաների բաժանված լինելու մասին ենթադրությունը առավել հավանական է դառնում Ստրաբոնի այն հաղորդումների հաշվառմամբ, որոնց համաձայն այդ ժամանակ Հայաստանի հարևան Պոնտոսի և Կապադովկիայի թագավորությունները ևս կազմված էին ստրատեգիաներից[25]:

Ստրաբոնի և Պլինիոսի վերոհիշյալ հաղորդումներում հիշատակված տեղանունները հիմք են տալիս ենթադրելու, որ վարչա-տերիտորիալ առումով Հայաստանի ստրատեգիաների սահմանները համընկնում էին հայրենի լեռնաշխարհի ներքին ռելյեֆով, ինչպես նաև էթնիկական երանգներով պայմանավորված ստորաբաժանումներին: Ուստի ճիշտ պիտի համարել այն ենթադրությունը, թէ «այդ վարչա-տերիտորիալ միավորները կայուն են եղել և իրենց աշխարհագրական նկարագիրը հաղորդել են հետագայի նախարարություններին, հետզհետե վերախոհվելով ֆեոդալական «տիրակալական իշխանությունների», որպիսիք և հանդիպում ենք մ.թ. IV-V դարերում»[26]: Ստրատեգիաների կառավարիչները եղել են պետական պաշտոնյաներ, որոնց նշանակել է հայոց թագավորը իր մերձավորագույն շրջապատի մարդկանցից: Այդ հարցին մենք կանդրադառնանք փոքր ինչ հետո, Տիգրան Բ-ի տերության մասին խոսելիս:

Անտիկ հեղինակների մեզ հասած երկերում, թեկուզ և դարձյալ կցկտուր, այնուամենայնիվ ավելի շատ տեղեկություններ կան Տիգրան Բ-ի թագավորության տարիների Հայաստանի, քան նրան նախորդած որևէ այլ շրջանի մասին: Այն բանից հետո, երբ Հռոմը կայուն կերպով հաստատվեց Փոքր Ասիայում և հասավ մինչև Եփրատ գետը, անտիկ, հատկապես լատինական հեղինակները, ավելի հաճախակի են անդրադառնում Հայաստանի տարածքում ծավալված դեպքերին, դրանով իսկ լրացնելով հայ ժողովրդի առաջին դարի պատմությանը վերաբերող

(24) C. Plin., Nat. Hist., V, 20.

(25) Strabo, XI, 2, 16: XII, 1, 4.

(26) *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, Երևան, էջ 678-679: *Համմ.* նաև Գ.Խ. Սարգսյան, *Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին*, էջ 8, ծան. 1:

հայկական աղբյուրների չատ սուղ և, հաճախ, խառնաչփոթ վկայությունները:

Մի կողմից, հենվելով երկրի ներքին զարգացման հետևանքով կուտակված միջոցների վրա, մյուս կողմից, օգտվելով ստեղծված միջազգային բարենպաստ քաղաքական պայմաններից, մ.թ.ա. 95 թվականին Հայաստանի գահին բարձրացած «Տիգրանի որդի Տիգրանը»[27] ձեռնամուխ է լինում իր տերության սահմաններն ընդարձակելու գործին: Առաջին հերթին նա բարեհաջող վախճանի է հասցնում Արտաշեսի սկսած պայքարը Փոքր և Մեծ Հայքի թագավորությանը միացնելու համար: Ինչպես հայտնի է, Արտաշեսի այդ բացառիկ կարևորություն ունեցող ծրագրի իրագործմանը մինչև այդ խանգարում էր հարևան Կապադովկիայի թագավորը: Սակայն Տիգրան Բ-ի գահակալության առաջին տարիներին Կապադովկիայի թագավորն ինքը հազիվ էր հռոմայեցիների օգնությամբ պահպանում իր անվանական անկախությունը: Հետևաբար, նա արդեն ի վիճակի չէր իրական օժանդակություն ցույց տալու Փոփքի թագավորին: Ուստի և Տիգրան Բ-ը, օգտվելով հարմար առիթից, հարձակվում է Փոփքի վերջին թագավոր Արտանեսի վրա և նրա երկիրը միացնում իր թագավորությանը (մ.թ.ա. 94 թ.): Պատմական այս ակտի միակ աղբյուրը Ստրաբոնի հետևյալ հակիրճ հաղորդումն է. « ... Իսկ Զարիադրիսի (չառավիղն) էր Արտանես Փոփացին ...: Նա նվաճվեց Տիգրանի կողմից և սա ամբողջ երկրին տեր դարձավ»[28]:

Հայկական ցեղերով բնակեցված միակ երկրամասը, որը դուրս մնաց Տիգրան Բ-ի տիրապետությունից, Փոքր Հայքն էր, որն արդեն մ.թ.ա. II դարի վերջին դադարել էր գոյություն ունենալուց որպես ինքնուրույն պետություն այն բանից հետո, երբ Միհրդատ Պոնտացին, նույնպես օգտվելով Փոքր Ասիայում իր համար ստեղծված միջազգային քաղաքական նպաստավոր իրադրությունից, այն միացրել էր իր թագավորությանը: Ուստի, այդ հզոր հարևանի և ապագա դաշնակցի հետ հարաբերությունները չսրելու համար, Տիգրանին մնում էր հաշտվել կատարված

(27) Appiani Syr., 48.

(28) Strabo, XI, 14, 15 (C. 532): *Համմ.* նաև՝ Հ.Հ. Մանանդյան, *Տիգրան երկրորդը և Հռոմը*, Երևան, 1940, էջ 28: Նույնի, *Քննական տեսություն ...*, հ. Ա, էջ 137:

փաստի հետ: Հետագայում Փոքր Հայքը անցավ Հռոմի գերիշխանության տակ: Այսպիսով, հնագույն ժամանակներից հայկական էթնիկական տարրերով բնակեցված այդ երկրամասը, պատմական դաժան հանգամանքների բերումով, երբեք չմտավ հայկական միացյալ թագավորության սահմանների մեջ:

Իրեն արդեն բավականաչափ ամուր զգալով իր գահի վրա, Տիգրան Բ-ը կարող էր ձեռնամուխ լինել արտաքին նվաճումների: Սակայն դրա համար նախապես անհրաժեշտ էին նյութական որոշ միջոցներ, որը նա, Միհրդատ Պոնտացու հետ դաշնակցած, ձեռք բերեց հարևան Կապպադովկիայի վրա երկու անգամ արշավանք կատարելով[29]: Հայոց թագավորի արշավանքը Կապպադովկիա միաժամանակ նպատակ ուներ ապահովելու իր թիկունքը, պարթևների դեմ արշավանք սկսելու նախօրյակին: Այս վերջին արշավանքի ամենամերձավոր նպատակն էր ետ նվաճել պարթևներից այն յոթանասուն հովիտները, որ, Սորաբոնի վկայությամբ,[30] նրանց արքունիքում որպես պատանդ գտնվող Տիգրանը իբրև փրկագին տվել էր պարթևներին, Հայաստանի գահը ստանալու համար:

Տիգրան Բ-ը, սակայն, չբավականացավ դրանով: Նա, օգտվելով պարթևների տերության թուլացումից, նվաճեց Ադիաբենեն, Ատրպատականը, և Գորդիենեն: Այդ երկրների թագավորները, որոնք մինչ այդ պարթևական թագավորի հպատակներն էին, հարկադրված եղան ճանաչել Տիգրանի գերիշխանությունը: Պարտված պարթևները ստիպված եղան զիջելու Տիգրանին նաև ամբողջ Միջագետքը: Հ.Հ. Մանանդյանը նշում է, որ այս առընչությամբ էլ պարթևների թագավորը ստիպված եղավ, հօգուտ հայոց թագավորի, հրաժարվելու «արքայից արքա» տիտղոսից[31]: Մենք կարծում ենք, որ հայոց թագավորին տրված այս նոր տիտղոսը ոչ այնքան հետևանք էր պարթևների դեմ Տիգրանի տարած հաղթանակի, որքան փաստական այն դրության, երբ նրա գերիշխանության տակ էին գտնվում արդեն մի շարք երկրների թագավորներ[32]: Դա առանձնապես չեչոված է Ապպիանոսի մի վկայության մեջ, որի համաձայն Հայաստանի թագավոր Տիգրանը, հպատակեցնելով իրենց սեփական դինաստներին ունեցող մի շարք հարևան ազգերի, այնուհետև համարվեց արքայից արքա[33]:

Այս բոլորից հետո Տիգրան Բ-ը իր ուշադրությունը բևեռեց մի ժամանակ հզորագույն հելլենիստական տերության, նախկինում Հայաստանի սյուզերեն համարվող, բայց արդեն ներքին խորագույն քաղաքական ճգնաժամ ապրող Սելևկյանների տերությունը նվաճելու վրա[34]: Մագնեսիայի ճակատամարտում կրած պարտությունից հետո, Սելևկյան տերության սկսած արագ քայքայումը գնալով ավելի ու ավելի խանգարում էր առևտրական նորմալ հարաբերություններին Առաջավոր Ասիայում: Այս հանգամանքը մեծապես հարվածում էր Արևելքի հելլենիստական վաճառաշահ քաղաքների և սուրկատիրական իշխող վերնախավի շահերին: Մյուս կողմից, Սելևկյանների երկրի նվաճումը անհրաժեշտ էր Տիգրանին հատկապես Մերձավոր Արևելքի քարավանային ուղիների վերահսկողությունն իր ձեռքը վերցնելու, ինչպես նաև դեպի Միջերկրական ծով ելք ապահովելու համար: Դրանով ուժեղ զարկ կատանար քարավանային տարանցիկ առևտուրը նրա տերության մեջ: Իսկ այդ առևտրից գանձվող տուրքը կազմում էր թագավորական եկամուտի մի պատկառելի մասը: Ուստի և Տիգրանը, իր թիկունքն ապահովելուց հետո, մ.թ.ա. 84 թ.[35] արշավելով, նվաճում է Ասորիքը՝

(29) Strabo, XII, 2, 9 (C. 539): Appiani Mithr., 10.

(30) Strabo, XI, 14, 15 (C. 532).

(31) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 148-151:

(32) Ս.Մ. Կրկյաշարյան, Բդեշխությունների առաջացումը Հայաստանում, ՊԲՀ, 1968, Նո 4, էջ 259-260:

(33) «Καί βασιλεύς Αρμενίας Τιγράνης ὁ Τιγράνου, ἔθνη τινά τῶν περιοίκων ἰδίοις δυνάσταις χρώμενα ἑλών, βασιλεύς ἀπό τοῦδε βασιλέων ἤγειτο εἶναι ...» (Appiani Syr., XLVIII).

(34) Սելևկյանների տերության ներքին ճգնաժամը յուրահատուկ ձևով արտահայտել է Յուստինոսը, գրելով, որ «... Ասորիքի (իմա Սելևկյան տերության – Ս.Կ.) ե՛ւ թագավորները ե՛ւ թագավորությունը ուժասպառ եղան համառ կռիվներում ...» (Justin, XL, 1, 1-3):

(35) Strabo, XI, 14, 15 (C. 532): Josephi Flavii Jud. Antiq., XIII, 16, 4: De bello jud., I, 5, 3: Justin., XL, 1, 1-3: Հ.Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, էջ 49-55: Նույնի, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 151-156: Այս առնչությամբ մատնանշենք պրոֆ. Ա.Գ. Առաքելյանի (Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Հ. Ա, Երևան, 1959, էջ 19) մի բացահայտ սխալը: Նա մեզ համար անհասկանալի պատճառով, գտնում է, որ Սելևկյան տերությունը նվաճվել է Հռոմի կողմից դեռևս մ.թ.ա. 190 թ.: Պատմական իրականությունն այն է, որ Հռոմը 190 թ. միայն ծանր հարված հասցրեց Սելևկյաններին: Իսկ նրանց տերությունը նվաճողը եղել է հայոց թագավոր Տիգրան Բ-ը:

Անտիոք մայրաքաղաքով, Փյունիկիան, ինչպես նաև Դաշտային Կիլիկիան։ Ասորիքը նվաճելու գործում Տիգրան Բ-ին մեծ աջակցություն ցույց տվեցին հելլենիստական քաղաքների, հատկապես Անտիոքի առևտրականները և վաշխառուները, արհեստանոցների տերերը, խոշոր ստրկատերերը[36]։

Տիգրան Բ-ի այս նվաճումների հետևանքով արդեն աշխարհակալ տերություն դարձած հայկական պետությունը չէր կարելի կառավարել նախկին եղանակներով ու միջոցներով։ Եթե մինչև այդ նվաճումները Հայաստանը իրենից ներկայացնում էր առավել կամ պակաս չափով միատարր տնտեսական և էթնիկական մի ամբողջություն, ապա Տիգրան Բ-ի ընդարձակ նվաճումներով հիմնովին խախտվեց այդ միատարրությունը։ Տիգրան Բ-ի ստեղծած ընդարձակածավալ տերությունն արդ ուներ մոտավորապես նույն պատկերը, ինչ մի ժամանակ Աքեմենյանների պարսկական և, հետագայում, Սելևկյանների հելլենիստական, տնտեսապես և էթնիկական խայտաբղետ, տերություններ։ Նրա գերիշխանության տակ այժմ գտնվում էին մի կողմից բարձր զարգացման հասած Ասորիքի և Փյունիկիայի առափնյա վաճառաշահ ստրկատիրական կենտրոններ, մյուս կողմից արարական անապատների վաչկատուն ցեղեր, երկար ժամանակ իրենց պետականությունն ստեղծած Կապադովկիայի և Ատրպատականի կողքին դեռևս տոհմատիրական կարգերում ապրող և որպես պետություն չկազմավորված աղվանական ցեղեր, մանր թագավորություններ և ինքնավար քաղաքներ։ Ուստի Տիգրանը պարտավոր էր կառավարչական որոշակի բարեփոխություններ կատարել։

Տիգրան Բ-ը իր տիրապետության տակ գտնվող երկրների մի մասի կառավարումը, Սելևկյանների օրինակով, թողեց այդ երկրների նախկին թագավորների ձեռքին, որոնք այժմ համարվում էին հայոց թագավորի հպատակներ։ Այդ հպատակների թվում էին Կորդիենեի թագավոր Զարբիենոսը, Ատրպատականի թագավոր Միհրդատը, Կոմմագենեի թագավոր Անտիոքոսը, Խաչկիսի տիրակալ Մեննայոսը և Ադիաբենեի թագավորը։ Բացի հպատակության տարեկան հարկ վճարելուց, նրանք պարտավոր էին պատերազմի ժամանակ Տիգրանին զորք տրամադրել։ Հիրա-

(36) Очерки истории СССР, Первобытно-общинный строй и древнейшие государства на территории СССР, М., 1956, стр. 451.

վի, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը, Տիգրանին, երբ նա կռվում էր Լուկուլլոսի դեմ, իրենց զորքերով օգնության եկան Ադիաբենեի և Ատրպատականի թագավորները[37]։

Տիգրան Բ-ի նվաճած երկրների մեջ կային և այնպիսիները, (Կիլիկիա, Միջագետք), որոնք չատ վաղուց արդեն կորցրած լինելով իրենց ինքնուրույն պետականությունը, չունեին իրենց թագավորը, այլ կառավարվում էին Սելևկյան արքունիքին մոտիկ կանգնած ստրատեգոսների միջոցով, որոնց նշանակում էր ինքը՝ Սելևկյան թագավորը։ Նվաճելով այս երկրները, Տիգրան Բ-ը նոր վարչաձև չմտցրեց։ Նա հետևեց Սելևկյանների օրինակին, որպես կառավարիչ այդ երկրամասերում նշանակելով իր մերձավորներին։ Աղբյուրներից մեզ հայտնի է, որ Հյուսիսային Միջագետքի կառավարումը հայոց թագավորը հանձնել էր իր եղբայր Գուրասին, որի նստավայրը Մծբին քաղաքն էր[38]։ Տիգրան Բ-ը նույն ձևով վարվեց նաև Սելևկյանների թագավորության բուն կորիզի՝ Ասորիքի հետ, որը հանդիսանում էր Սելևկյան թագավորի ոստանը և հունական աղբյուրներից հայտնի է որպես χώρα βασιλική – արքունի երկիր։ Այնտեղ Տիգրան Բ-ը ստրատեգոս-կառավարիչ նշանակեց Բագաղատեսին (Ապպիանոսի մոտ հանդիպում է նաև Μαγαδάτης = Մագադատես ձևը)[39], որին Յ. Մարկվարտը և Ն. Ադոնցը համարում են հայ Բագրատունիների նախահայր[40]։ Դաշտային Կիլիկիան ևս, ինչպես հետևում է Ապպիանոսի վկայությունից, վարչականորեն միացվելով Ասորիքին, հանձնվել էր այս նույն Բագաղատեսի կառավարմանը։ Այժմ արդեն Տիգրան Բ-ի կողմից նվաճված բոլոր երկրների թագավորներն ու նոր նշանակված ստրատեգոս-կառավարիչները հայոց թագավորի հանդեպ ունեին հպատակության նույնպիսի հարաբերություններ, ինչպիսին նախկինում Արտաշեսյան թագավորության հիմնադիր ստրատեգոս Արտաշեսը, ինչպես նաև այդ նույն երկրների տիրակալներն ունեին մինչ այդ դեպի Սելևկյան թագավորը։ Այդ հարաբերություն-

(37) Plutarchi Lucull., XXII, 6.
(38) Նույն տեղում, XXXII.
(39) Appiani Syr., 40 և 49.
(40) J. Markwart, Eranšahr nach der Geographie des Pseud. Mose Xorenac'i, Berlin, 1901, s. 174; Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 411-413.

ների էության մասին մենք արդեն խոսել ենք նախորդ էջերում։

Այս իրադրության լավագույն ապացույցը պիտի համարել Մովսես Խորենացու վկայությունն այն մասին, թե Տիգրանը «արանց գլուխ կացեալ և արուեստիւն ցուցեալ զազգս մեր բարձրացոյց և գլյնդ լծովն կացեալ՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց»[41]։

Հելլենիստական պետությունների օրինակով ստեղծված սատրապեգոս-կառավարչի պաշտոնը Տիգրան Բ-ի նորաստեղծ ընդարձակ պետության մեջ չէր կարող ժառանգական բնույթ ունենալ, քանի որ, պայմանավորված լինելով արտաքին նվաճումների միջոցով երկրի տարածքի աննախընթաց ընդարձակումով, այն չէր կարող առաջանալ Տիգրան Բ-ի թագավորությանը նախորդած ժամանակաշրջանում, երբ Հայկական պետությունը դեռևս պարփակված էր ավելի նեղ շրջանակներում, քան երկրի բնական-աշխարհագրական սահմաններն էին։ Սատրապեգոսի, որպես առանձին մարզի կառավարչի պաշտոնի համար Հայաստանում պայմաններ ստեղծվեցին միայն Տիգրան Բ-ի աշխարհակալ նվաճումներից հետո։ Հետևաբար, նվաճված երկրների կորուստով էլ, ինքնաբերաբար, պիտի վերանային այդ երկրներում հայոց թագավորի նշանակած կառավարիչների պաշտոնները։ Այդ իսկ պատճառով, դժվար է համաձայնվել Ն. Ադոնցի[42] և Հ. Մանանդյանի[43] հետ, որոնք նախարարությունների, որպես ժառանգական հողատիրության հետ կապված պետական պաշտոնների, առաջացումը Հայաստանում դնում են Արտաշես Ա-ի կամ Տիգրան Բ-ի թագավորության ժամանակ։ Նախարարությունները, որպես պետական պաշտոններ, որոնք անցնում էին ժառանգաբար, առաջացել են, անկասկած, ավելի ուշ, հայ Արշակունիների թագավորության շրջանում։ Այդ մասին հետո։

* * *

(41) Մովսես Խորենացի, Ա, իգ։
(42) Н. Адонц, Армения ..., стр. 211-212.
(43) Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 10։

Պետական կազմակերպության առաջացումից հետո միշտ և ամենուրեք պետական կարևորագույն հաստատություններից մեկը եղել է զորքը, բանակը։ Հայկական զորքերի առաջին հիշատակումների համար մենք դարձյալ պարտական ենք հույն հեղինակներին։ Քսենոփոնը մեղացիների թագավորի բերանով պատմում է, որ «արմենների կողմից ... կգան 4000 հեծելազոր և 20 հազար հետևակ»[44]։ Իսկ դա, պատմիչի վկայությամբ, կազմում էր արմենական ամբողջ զորքի կեսը։ Որ արմեններն, իրոք, ունեցել են այդպիսի պատկառելի քանակությամբ զորք, կոմս-նակի կերպով հաստատվում է նաև Դարեհ Ա-ի Բեհիստունյան արձանագրության Արմենիային վերաբերող տվյալներով։ Այնտեղ կարդում ենք. «Դարեհ թագավորն ասում է. Դադարշիշ անունով արմենին, իմ ստրուկին, ես ուղարկեցի Արմենիա։ Ես նրան ասացի. «Գնա, ջարդիր ապստամբ զորքին ...։ Շնորհիվ Ահուրամազդայի, իմ զորքը գլխովին ջախջախեց ապստամբ զորքին»։ Նույն բնույթի տվյալներ կան նաև արձանագրության չարունակության մեջ, որի թարգմանությունը տվել ենք մեր աշխատության առաջին գլխում։

Հայտնի է Հերոդոտոսի վկայությունը՝ Արտոքմեսի (Արտաչեսի – Ս.Կ.) գլխավորությամբ հույն-պարսկական պատերազմներին մասնակցած արմենական զորքերի մասին, որոնք «զինված էին փրյուգիացիների նման»[45]։ Այս զորքը դեռևս մշտական չէր, այլ ամեն անգամ, պատերազմի դեպքում, զենք կրելու ընդունակ տղամարդիկ ներկայանում էին «գեղջավագների» գլխավորությամբ։ Վերևում ուրիշ առիթով մենք անդրադարձել ենք նաև Երվանդունիների ժամանակ պարսկական բանակի կազմում գտնվող արմենական զորքերի մասին անտիկ հեղինակների մի շարք վկայություններին։ Սակայն, հայկական զորքերի և նրանց ինքնուրույն ռազմական գործողությունների մասին մենք համեմատաբար ավելի հավաստի տեղեկություններ ունենք Տիգրան Բ-ի թագավորության ժամանակաշրջանի վերաբերյալ, որոնք մեզ հասել են ինչպես անտիկ հեղինակների, այնպես էլ Մովսես Խորենացու միջոցով։

Ճիշտ է, պատմահայրը հայկական պետական հաստատությունների ու հայկական բանակի կազմակերպումը վերագրում

(44) Xenoph., Cyrop., II, 1, 6.
(45) Herod., VII, 73.

է հայոց կիսապատմական թագավոր Վաղարշակ Արշակունուն[46], այնուամենայնիվ, մեզ համար կասկածից վեր է, որ Տիգրան Բ–ը մեծ վերափոխություններ ձեռնարկեց հայկական բանակի վերակազմության ուղղությամբ, այն բարձրացնելու համար իր ժամանակի առումով պրոֆեսիոնալ աստիճանի։ Հաջորդած դեպքերի ամբողջ ընթացքը ցույց է տալիս, որ այս բանը նրան մասամբ հաջողվում է։ Տիգրան Բ–ի ձեռնարկած ռազմական վերափոխությունների ամենամերձավոր հետևանքը պիտի համարել կարճ ժամանակի ընթացքում նրա տերության սահմանների ոչ միայն վերականգնումը, այլև դրանց աննախընթաց ընդարձակումը Կովկասյան լեռներից մինչև Կիլիկիա ու Պաղեստին։ Տիգրան Բ–ի ռազմական այդ վերափոխությունների էության մասին որոշ պատկերացում կարելի է ստանալ Մովսես Խորենացու այն վկայությունից, թե այդ ժամանակ, «հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպազեղունք, և չերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթօք պարածածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և չողիւնք՝ զթշնամին արտահալածել»[47]։

Տիգրան Բ–ի բանակի և նրա մղած ռազմական գործողությունների մասին անտիկ հեղինակներից մեզ հասած կարևոր վկայությունները մանրամասն թարգմանաբար մեջ են բերված Հ.Հ. Մանանդյանի՝ Հռոմի զորավարների դեմ Տիգրան Բ–ի վարած պատերազմների պատմությանը նվիրված մեծարժեք ուսումնասիրության մեջ։ Այդ տեղեկությունների ուսումնասիրությունից առաջին հերթին պարզ է դառնում այն, որ Արևելքի բոլոր մյուս երկրների նման, Հայաստանում ևս զորքերի գլխավոր հրամանատարը հանդիսանում էր ինքը՝ թագավորը։ Սակայն, ոչ բոլոր ռազմական արշավանքների ժամանակ հայոց թագավորը անձամբ առաջնորդում էր իր զորքը։

Հետևենք սկզբնաղբյուրների վկայություններին։ Ապպիանոսը հաղորդում է, որ Տիգրանի զորավարներից Միթրասը և Բագոասը ուղարկվեցին Կապպադովկիան նվաճելու համար[48]։ Մեկ

(46) Մովսես Խորենացի, Բ, գ։
(47) Նույն տեղում, Ա, իդ։
(48) Appiani Mithr., 10.

ուրիշ առիթով նույն Ապպիանոսը խոսում է Տիգրանի Բագադատես (Μαγαδάτης = Βαγαδάτης զորավարի մասին[49]։ Հավանաբար այս Բագադատեսն է Տիգրանի կողմից զորքի մի մասով ուղարկվել նվաճելու Կոմմագենեի թագավորությունը և դաշտային Կիլիկիան, մինչ ինքը՝ հայոց թագավորը, զբաղված էր Փյունիկիայի վրա արշավելով։ Այնուհետև, այս նույն Բագադատեսն էր, որ 69 թ., Լուկուլլոսի արշավանքի ժամանակ, իր զորքով կիլիկիայից օգնության չտապեց անակնկալ հարձակման ենթարկված Տիգրան թագավորին։

Տիգրան Բ–ի մեկ այլ զորապետի՝ Մեհրուժանի (Μιθροβουζάνης) մասին, որը Մեծ Հայքին միացված Ծոփքի թագավորական գերդաստանից էր, հանգամանալից խոսում են Պլուտարքոսն ու Ապպիանոսը։ Անակնկալի եկած հայոց թագավորը սրան 2000 հեծելազորով ուղարկում է Լուկուլլոսի դեմ, հռոմեական լեգեոնների առաջխաղացումը կանգնեցնելու համար։ Տեղի ունեցած կատաղի ճակատամարտում այս Մեհրուժանը ընկնում է քաջաբար[50]։ Մեհրուժանի հրամանատարությանը հանձնված այս հեծելազորի, ինչպես նաև Հայաստանի նախկին սյուզերեն Սելևկյան թագավորի արքունի հեծելազորի մասին սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների ուսումնասիրումը մեզ հնարավորություն է տալիս որոշ չափով պարզելու Մեհրուժանի պաշտոնի և նրա ղեկավարած հեծելազորի էությունը։

Սելևկյանների իշխանության կարևորագույն հենարանը նրանց, ճիշտ է, խայտաբղետ, սակայն պատերազմի ժամանակ պատկառելի ուժ ներկայացնող բանակն էր։ Այդ բանակի կազմի մասին որոշ գաղափար կազմում ենք 216 թ. Ռաֆիայում և 190 թ. Մագնեսիայում տեղի ունեցած պատերազմների նկարագրություններից, որ մեզ թողել են Պոլիբիոսը, Ապպիանոսը և Տիտոս Լիվիոսը[51]։ Այդ նկարագրությունների հիման վրա ուսումնասիրողները եզրակացրել են, որ Սելևկյանների հսկայական բանակը, հիմնականում, կազմված է եղել հետևակներից և հեծյալներից[52]։ Հետևակների ամենակարևոր մասը հայանի մակեդոնական ֆալանգան էր, փաղանգը, որտեղ գլխավոր հարվածա-

(49) Նույն տեղում, 48։
(50) Նույն տեղում, 84։ Plutarchi Lucull., XXV, 3–6.
(51) Polyb., V, 79; Appiani Syr., 32; Titi Livii, XXXVII, 40.
(52) E. Bickermann, Institution des Seleucides, Paris, 1938, p. 52-60.

յին ուժը կազմում էր պեզետայրոյ (πεζεταῖροι = հետևակ ընկերներ) կոչված գունդը։ Այս զորագունդը, որը գոյություն ուներ դեռևս Փիլիպպոս Բ-ի և Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ և բաղկացած է եղել 6000 ծանրազեն հետևակներից, հանդիսանում էր թագավորի թիկնապահ գորքը։

Հետևակի շարքերում, բացի ծանրազեն հոպլիտներից, կռվում էին նաև թեթևազեն աղեղնավորներ և պարսատիկավորներ (τοξόται καί σφενδονῆται)[53]։

Եթե Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներին մասնակցած հետևակը հիմնականում կազմված էր մակեդոնացի ծանրազեն ֆալանգիտներից, հոպլիտներից, ապա Սելևկյանների ժամանակ մակեդոնական ֆալանգայի կողքին կարևոր տեղ էին գրավում նաև հույն և բարբարոս (ոչ հույն) վարձկանների, ինչպես նաև Սելևկյաններին հպատակ երկրներից հավաքագրված-ների գնդերը։

Սելևկյանների հեծելազորը ևս, հետևակի նման, բաղկացած էր բուն մակեդոնացիներից, որը կոչվում էր ագեմա (τό λεγόμενον ἄγημα τῶν Μακεδόνων)[54], և տեղաբնիկ, արևելյան ժողովուրդներից, քանի որ Ապպիանոսի համապատասխան վկայության մեջ մակեդոնացիների կողքին հիշատակված են հեծյալ աղեղնավորներ դայերից, միսիացիներից և էլիմայեցիներից (ἱπποτοξόται ... Δᾶαι καί Μυσοί καί Ἐλυμαῖοι), ինչպես նաև՝ ծանրազեն հեծյալ գալատներ (Γάλαται τε κατάφρακτοι)[55]։ Պոլիբիոսը ևս, Սելևկյանների բանակը նկարագրելիս, հիշատակում է նիսայական ծանրազեն հեծելազորի մասին[56]։ Ապպիանոսը նույն հատվածում հիշատակում է նաև (δρομάδες = վազողներ) կոչված գունդը, որը, ամենայն հավանականությամբ, կազմում էին անապատի արաբներն իրենց ուղտերով։

Բացի հեծելազորի մի գնդից, որի մասին խոսք կլինի ստորև, ինչպես նաև տարբեր բերդերում տեղակայված կայազորերից, Սելևկյանների այս ամբողջ բանակը, ըստ երևույթին, մշտական չէր, այլ ամեն անգամ հավաքագրվում էր պատերազմների ժամանակ։ Հայոց թագավորը ևս, Սելևկյանների նման, չի ունեցել մշտական բանակ։ Ս.Տ. Երեմյանը այդ առնչությամբ իրավացի կերպով նշում է, որ «Հելլենիստական մյուս միապետությունների նման, Հայաստանում ևս չկային մշտական խոշոր բանակներ։ Պատերազմի ավարտից հետո հայ թագավորները արձակում էին դրանք։ Սակայն, այս պրակտիկան կապված էր խոշոր անպատեհությունների հետ, քանի որ նոր պատերազմի դեպքում հարկ էր լինում նորից դրանք հավաքագրել։ Այդ պատճառով թագավորը իր մոտ պահում էր հեծելազորի մի մասը»[57]։

Սելևկյանների մշտական բանակը հիմնականում ցրված էր տերության տարբեր պրովինցիաներում որպես կայազորներ, տեղավորված բերդերում և ամրոցներում (φρουραί)։ Այդպիսի բերդեր մեզ հայտնի են Սարդեսում, Եփեսոսում, Սուսայում, Երուսաղեմում, Դուրա-Եվրոպոսում և այլն։ Բերդի կայազորը գտնվում էր բերդապահի (φρούραρχος) հրամանատարության տակ[58]։ Բերդապահն աղբյուրներում հաճախ կոչվում է նաև ἀκροφύλαξ[59] կամ ἔπαρχος = praefectus[60]։

Հելլենիստական թագավորների կայազորները հաճախ զավորված էին լինում ոչ միայն բերդերում և ամրոցնել այլև թագավորին ենթակա քաղաքներում։ Քաղաքներին ուղված հելլենիստական թագավորների նամակներում հանդիպում ἐπισταθμευθῆναι[61] (տեղավորված լինել օթեվաններում) ἀνεπίσταθμος[62] (օթևան տրամադրելու պարտավորությունից ազատ) բառերը, ինչպես նաև Պոլիբիոսի ուշագրավ մի վկայությունը[63] դրա ամենահավաստի ապացույցն է։ Հունական քաղաքներում կայազորներ (φυλακαί) տեղավորելու պրակտիկան գոյություն է ունեցել դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու ժամա-

(53) Polyb., V, 53, 9։ Հմմտ նաև Polyb., V, 79, 6 և XVI, 18, 7։
(54) Appiani Syr., XXXII։ Տիտոս Լիվիոսը սխալմամբ այս ագեման համարում է մեդական (Titi Livii, XXXVII, 40, 6)։
(55) Appian., նույն տեղում։
(56) Polyb., XXXI, 3, 6.

(57) С.Т. Еремян, Основные черты ..., էջ 56։
(58) Polyb., XXI, 44, 1։
(59) Polyb., V, 50, 10.
(60) Բ Մակկաբեաց, Դ, իէ։
(61) C.B. Welles, RC, 30, 7.
(62) C.B. Welles, RC, 70, 13.
(63) Պոլիբիոսը պատմում է, որ Թաւսոսի բնակիչները հաղորդեցին Մակեդոնիայի վերջին թագավոր Փիլիպպոս Ե-ին այն մասին, որ կհանձնեն իրենց քաղաքը, եթե «հաստատում է նրանց ազատել կայազորից, հարկերից, օթևան տրամադրելու պարտավորությունից և թուլյատրի ապրելու սեփական օրենքներով» (Polyb., XV, 24, 2)։

նակ և ամեն մի քաղաքային համայնք պարտավոր էր իր միջոցներով հոգալու կայազորի կարիքները[64]։ Դրանով, մի կողմից, թագավորի տրամադրության տակ լինում էր որոշ քանակությամբ մշտական զորք, մյուս կողմից, սահմանափակվում էր քաղաքի ինքնավարությունը և ուժեղանում էր նրա ենթակայությունը թագավորական իշխանությանը։

Անկասկած, Սելևկյանների մշտական բանակի մասն էին կազմում նաև ազգություններում հիշատակված թիկնապահները (ὑπασπισταί) իրենց հրամանատարով (ἡγεμών τῶν ὑπασπιστῶν)[65]։

Սելևկյանների այս խայտաբղետ բանակում, սակայն, ամենակարևոր դերը պետք է որ խաղար հեծելազորային այն գունդը, որը հայտնի է ագեմա (ἄγημα)[66] կամ արքունի հեծելագունդ (βασιλική ἴλη)[67] անունով։

Հայոց թագավորի, հատկապես Տիգրան Բ-ի բանակի մասին խոսելիս, մենք անհրաժեշտ համարեցինք համառոտակի ուրվագծել Սելևկյանների բանակի կազմակերպման պատկերը, քանի որ, մեր կարծիքով, հելլենիստական այդ խոշորագույն պետության բանակը, ինչպես նաև հարևան հելլենիստական մյուս առավել փոքր միապետությունների բանակները, այն հիմնական սկզբնօրինակն էր, որին հետևեց հայոց թագավորը, վճռական մարտերից առաջ իր բանակը կազմակերպելիս։ Հետևաբար, Տիգրանի բանակը ևս հռոմեականի նկատմամբ պետք է որ ունենար նույն թերությունները, ինչ Սելևկյանների բանակը, որի հետևանքով էլ, Անտիոքոս Գ-ի նման, Տիգրան ևս պարտվեց հռոմեացիների դեմ բաց դաշտում ունեցած առաջին իսկ ճակատամարտում։

Ինչպես Սելևկյանների պետությունում էր, Հայաստանում ևս բանակի գլխավոր հարվածային կորիզը հանդիսանում էր թագավորի թիկնապահ հեծելազորը։ Հայոց թագավորներ Տիգրանի, Արտավազդի և Արշակունի Տրդատ Ա-ի թիկնապահ հեծելազորի մասին մեզ հասել են անտիկ հեղինակների մի չարք

(64) W. Dittenberger, Sylloge Inscriptionum Graecarum, ed. 3, Lipsiae, 1915-1924, 3, 283.
(65) Polyb., VII, 16, 2։ Polyaen., IV, 9, 3.
(66) Polyb., XXXI, 3, 7։ Appiani Syr., XXXII.
(67) Polyb., V, 85, 12։ Զ 49, 7։ Polyaen., IV, 9, 6.

հետաքրքիր հիշատակություններ, որոնք բացառիկ կարևորություն ունեն, ուստի և մեջ ենք բերում՝ բնագրից կատարած մեր թարգմանությամբ։

«Առաջինը նրա (Տիգրան – Ս.Կ.) ընկերներից Մեհրուժանը (τῶν φίλων Μιθροβουζάνης) համարձակվեց ճշմարտությունը հաղորդելու ...։ Սա խնդրին ուղարկվեց Լուկուլլոսի դեմ 3000 հեծելազորով և բազմաթիվ հետևակով»[68]։

«Տիգրանը ..... Մեհրուժանին ուղարկեց երկու հազար հեծյալներով, որպեսզի խափանի Լուկուլլոսի ճանապարհը»[69]։

«Իսկ Տիգրան թագավորը ..... վերցնելով իր ընկերներին ու ազգականներին, գնաց, որպեսզի անձնատուր լինի Պոմպեոսին»[70]։

«Նրան (Կրասոսին – Ս.Կ.) սրտապնդեց հատկապես Արտավազդ Արմենի ժամանումը։ Սա եկավ ճամբար վեց հազար հեծելազորով։ Իսկ սրանք, ինչպես ասում էին, միմիայն թագավորի թիկնապահներն էին և ուղեկիցները։ Նա (Արտավազդը – Ս.Կ.) խոստանում էր, որ կտա տասը հազար այլ զրահապատ հեծելազոր և երեք բյուր հետևակ .....»[71]։

Մի վերջին վկայություն ևս կա Տրդատ Ա-ի թիկնապահ հեծելազորի մասին։ Հանդեսայի մոտ հայ-պարթևական միացյալ զորքերից կրած ծանր պարտությունից հետո, Հռոմը հարկադրված եղավ համաձայնվել այն բանին, որ Հայաստանում արդեն թագավոր հռչակված Տրդատ Արշակունին մեկնի Հռոմ և այնտեղ Ներոն կայսեր ձեռքից ստանա Հայաստանի թագը։ Այդ նպատակով Տրդատի Հռոմ կատարած ճանապարհորդությունը և այնտեղ նրան ցույց տրված չքեղ ընդունելությունը մանրամասն նկարագրված է Դիոն Կասիոսի կողմից։ Տակիտոսն ու Պլինիոս Ավագը ևս որոշ մանրամասնություններ են հաղորդում Տրդատի այդ այցելության մասին։ Նրանց վկայությունների համաձայն, Տրդատն ուղևորվելիս իր հետ վերցրել էր իր կնոջը և երեխաներին, իր եղբայրներ՝ Ատրպատականի թագավոր Պակորոսի (Բակուր) և Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսի որդիներին։ Հայոց թագավորին ուղեկցում էր երեք հազար հայ ու պարթև

(68) Plutarchi Lucull., XXV, 9.
(69) Appiani Mithr., 84.
(70) Plutarchi Pomp., XXXIII, 1.
(71) Plutarchi Crass., XIX 1-2.

հեծյալներից բաղկացած մի չքախումբ[72]։

Վերոհիշյալ վկայություններում հիշատակված հայոց թագավորի թիկնապահ հեծելագունդն, անկասկած, համապատասխանում էր Սելեվկյանների մակեդոնական ագեմային, որի մասին խոսք եղավ վերեվում։ Հայկական այդ հեծելագունդը իր սոցիալական կազմով համապատասխան պետք է լիներ ագեմային։ Ինչպես հայտնի է, մակեդոնական այդ ագեման բաղկացած էր Սելևկյան թագավորի ընկերներից ու մերձավոր բարեկամներից (ἑταῖροι, φίλοι, σύντροφοι), որոնց միջից էլ, սովորաբար, նշանակվում էին պալատական և այլ պաշտոնյաները։ Պլուտարքոսի և Ապպիանոսի, ինչպես և մյուս հեղինակների վկայություններից հետևում է, որ հայկական թիկնապահ հեծելագունդը ևս կազմված էր թագավորի բարեկամներից և ընկերներից։ Ելնելով դրանից, պիտի ենթադրել, որ հայոց թագավորի թիկնապահ գնդի և նրա հրամանատարի դերը երկրի քաղաքական կյանքում նույնքան կարևոր էր, ինչքան ագեմայի դերը Սելևկյանների պետությունում։

Այդ դրությունն էլ արձանագրված ենք տեսնում հետագա դարերի հայ մատենագրության մեջ։ Մովսես Խորենացին, օրինակ, պատմելով Վաղարշակ թագավորի կողմից Հայաստանում արքունի գործակալությունների՝ նախարարությունների հաստատման մասին, վկայում է, որ թագավորը նշանակում է «թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս, և գլուխ նահապետության նոցա զՄաղխազ ոմն այր բարի և արտեայ ...[73]։ Ինչպես հետևում է պատմահոր այս խիստ կարևոր վկայությունից, Մաղխազը գլխավորում էր արքունի թիկնապահների գունդը և նրա վարած պաշտոնը կոչվում էր «մաղխազություն», որը հին Հայաստանում կարևորագույն վեց գործակալություններից (թագակապ սպասավորություն, հազարապետություն, մարդպետություն, մաղխազություն, սպարապետություն և մեծ դատավորություն) մեկն էր։ Ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը, «մաղխազ» (=ասոր. malxazu) նշանակում է տեր, իշխան, թագավոր[74]։

(72) Cass. Dio, LXIII, 1-7; Taciti Annales, XVI, 24; C. Plin., Nat. Hist., XXX, 16; XXXIII, 54.

(73) *Մովսես Խորենացի*, Բ, է։

(74) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 400.

Մենք արդեն նշել ենք, որ Տիգրանի թիկնապահ հեծելագնդի հրամանատար Մեհրուժանը Ծոփքի թագավորական տոհմից էր։ Այդ հանգամանքը, ինչպես նաև «Մաղխազ» անվան Ն. Ադոնցի տված բացատրությունը միանգամայն պարզ են դարձնում, որ բարձր պաշտոնից սերած այդ պաշտոնյան շատ մոտիկ կանգնած լինելով արքունիքին, նշանակալից դեր պետք է խաղար Հայաստանի քաղաքական կյանքում։

Սելևկյանների մակեդոնական ագեմայի և հայոց թագավորի թիկնապահ հեծելագնդի ոչ միայն սոցիալական դերն ու դիրքն էր համընկնում համապատասխան երկրների հասարակական-քաղաքական կյանքում, այլև դրանք գրեթե համընկնում են նաև թվական առումով։

Ինչպես տեսանք, Պոլիբիոսի և Ապպիանոսի վկայություններում Սելևկյանների ագեման բաղկացած էր 2000 հեծյալներից։ Վերևում բերված տվյալների համաձայն, հայոց թագավորի թիկնապահ հեծելագունդը հաշվվում էր 2000, 3000, 6000 և 3000։ Առաջին հայացքից թվում է, թե այդ գնդի թիվը Հայաստանում տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ 2000-ից մինչև 6000։ Սակայն այդ վկայությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ հայկական թիկնապահ գունդը ևս, Սելևկյան ագեմայի նման, բաղկացած է եղել շուրջ 2000 հեծյալներից։ Ինչպես նկատեցինք, Ապպիանոսը հաղորդում է, որ Տիգրանը Մեհրուժանին 2000 հեծյալներով ուղարկեց Լուկուլլոսի դեմ։ Նրա հաղորդած այս թիվն էլ, մեր կարծիքով, պիտի համարել միակ ճիշտը։

Պլուտարքոսը գրելով այդ նույն դեպքերի մասին, պատմում է, որ Տիգրանը Մեհրուժանին ուղարկեց Լուկուլլոսի դեմ 3000 հեծյալներով և բազմաթիվ հետևակով։ Տիգրան Բ-ի պատմությանը վերաբերող Պլուտարքոսի մի շարք վկայություններ Հ.Հ. Մանանդյանը իրավացի կերպով համարում է միտումնավոր ու չափազանցված։ Մենք հակված ենք ենթադրելու, որ Մեհրուժանին հանձնված հեծելազորի թվի և հետևակի մասին Պլուտարքոսի այս հաղորդումը ևս վստահելի չէ։ Դեռևս Հ.Հ. Մանանդյանն իր ժամանակին մատնացույց է արել, որ Պլուտարքոսն իր իդեալականացրած հերոսի՝ Լուկուլլոսի տարած հաղթանակն ընդգծելու նպատակով, բոլոր դեպքերում մեծացրել է Տիգրանի

զորքերի թիվը[75]։ Անհավանական պիտի համարել նաև Պլուտարքոսի հաղորդման այն մասը, որ իբր հեծելազորից բացի Մեհրուժանին հանձնվել էր նաև հետևակ զորք, այն էլ՝ «բազմաթիվ»։ Ինչպես նշում է Հ.Հ. Մանանդյանը[76], Լուկուլլոսի արշավանքը հանկարծակիի էր բերել Տիգրանին։ Հետևաբար, հայոց թագավորը պատրաստ չլինելով պատերազմելու, չէր կարող այդ ժամանակ Տիգրանակերտում իր տրամադրության տակ ունենալ «բազմաթիվ հետևակ»։ Մեր ուսումնասիրություններից մեկում[77] մենք ցույց ենք տվել, որ Լուկուլլոսի հարձակման ժամանակ Տիգրանը գտնվում էր Պաղեստինում և, լսելով իր մայրաքաղաքի վրա կատարված հանկարծակի հարձակման մասին, շտապ կերպով ուղարկել էր իր թիկնապահ հեծելագունդը Մեհրուժանի գլխավորությամբ, Լուկուլլոսի առաջընթացը կասեցնելու համար։ Տիգրանը Մեհրուժանին չէր կարող հանձնած լինել նաև հետևակ, քանի որ այն միայն կխանգարեր հեծելագնդի արագ ընթացքին։

Ինչ վերաբերում է մ.թ.ա. Կրաստոսի բանակատեղին Արտավազդի գալու մասին Պլուտարքոսի հաղորդմանը, որի համաձայն հայոց թագավորը ժամանել էր 6000 թիկնապահներով, ապա մենք կարծում ենք, որ այն ոչ լիովին է համապատասխանում պատմական իրականությանը։ Կասկած չի կարող լինել, որ մինչև Ասորիք, որտեղ բանակել էր պարթևների դեմ արշավանքի պատրաստվող Կրաստոսը, ճանապարհվող հայոց թագավորին պետք է որ ուղեկցեր նրա թիկնապահ հեծելագունդը, հիմնականում բաղկացած 2000 հեծյալներից։ Արտավազդը, անտարակույս, խրատվելով իր հոր՝ Տիգրան Բ-ի ճակատագրական սխալից, որը չէր կանխատեսել նենգ Լուկուլլոսի անակնկալ արշավանքը, ռազմական անհրաժեշտ պատրաստություն էր տեսել, հավաքելով բավականաչափ զորք, հարկ եղած դեպքում դիմագրավելու համար և՛ հռոմայեցիների, և՛ պարթևների հավանական հարձակումները։ Հետևաբար, և՛ անձնական ապահովության (նրա ճանապարհի զգալի մասը, կրաստոսի մոտ գնալիս, անցնում էր օտար երկրի տարածքով), և՛ իր ուժը ցուցադրելու համար, նա, բացի իր թիկնապահ հեծելագնդից, որի թիվը պետք է լիներ

(75) Հ.Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, էջ 116–120։
(76) Նույն տեղում, էջ 93–103։
(77) Ս.Մ. Կրկյաշարյան, Տիգրան II-ին վերաբերող մի կարևոր ուղղում, ՊԲՀ, 1987, Նո 4, էջ 275–278։

չուրջ երկու հազար, իր հետ վերցրել էր նաև մի քանի հազար ուրիշ հեծյալների, որով իրեն ուղեկցող զորագնդի ընդհանուր թիվը հասել էր վեց հազարի։ Իսկ հռոմայեցիներն այդ պատկառելի բանակն ամբողջությամբ ընդունել էին որպես թագավորի թիկնապահ զորք։

Երկու խոսք էլ ըստ պայմանավորվածության Ներոնի ձեռքից Հայաստանի թագը ստանալու համար Հռոմ ուղևորված Տրդատ Արշակունուն ուղեկցող երեք հազարանոց հեծյալ չքախմբի մասին։ Ակներև է, որ այն խայտաբղետ է եղել։ Սակայն այդ չքախմբի հիմնական կորիզը, անկասկած, թագավորի երկու հազարանոց թիկնապահ հեծելագունդն էր։ Տրդատի չքախմբի թիվը հասել էր երեք հազարի, հավանաբար, այն բանից հետո, երբ թագավորական հեծելագնդին միացել էին Ատրպատականի և Ադիաբենեի թագաժառանգներին ուղեկցողները, ինչպես նաև պարթև Վաղարշ Ա-ի Հռոմ ուղարկած պատգամավորները։

Խորենացու այն եզակի հաղորդումը, թե Արտաշեսը հայկական զորքերը չորս մասի բաժանեց և դրանք, համապատասխանաբար, հաստատեց աշխարհագրական չորս ուղղություններով[78], հնարավորություն է տալիս ենթադրելու, թե Արտաշեսյանների ժամանակ Հայաստանում ստեղծված են եղել հատուկ սահմանապահ զորամասեր, որոնց առաքելությունն էր՝ պաշտպանել երկրի սահմանները արտաքին հարձակումներից։ Մեր կարծիքով, այս հիմքի վրա է, որ հետագայում, Արշակունիների օրով, Հայաստանում ստեղծվում են այսպես կոչված «կոմնակալ» իշխանությունները, որոնք գալիս են փոխարինելու նախկին բդեշխություններին։ Բդեշխությունների մասին կխոսենք քիչ հետո։

Պատերազմի ժամանակ հայոց թագավորը հավաքում էր մեծ քանակությամբ հետևակ զորք, որի թիվը, մոտավոր հաշվումների համաձայն, կարող էր հասնել 100 հազարի։ Մեր խոսքը, անշուշտ, վերաբերում է ոչ թե Տիգրան Բ-ի նվաճումներից հետո առաջացած ընդարձակածավալ և էթնիկատնտեսապես խայտաբղետ տերությունից, այլ, ընդհանրապես, Մեծ Հայքից հավաքագրված զորքերի քանակին[79]։

(78) Մովսես Խորենացի, Բ, ծգ։
(79) Այս մասին առավել մանրամասն տես՝ Հայ ժողովրդի պատմություն, Երևան, հ. 1, 1971, էջ 686–688։

Արտաշեսյանների ժամանակ հայոց թագավորը, բացի հեծյալ թիկնապահ գնդից և մեծաթիվ հետևակից, ուներ նաև պատկառելի թիվ կազմող հեծյալ զորաբանակ։ Թեև սկզբնաղբյուրներում հայկական հեծելազորի ընդհանուր թվի մասին հիշատակություն չկա, սակայն այլ տվյալներով հնարավոր է որոշել դրա մոտավոր քանակը։ Այսպես՝ Պլուտարքոսը հաղորդում է, թե Արտավազդը, գալով Կրասոսի մոտ, խոստացավ նրան տրամադրել «10 հազար զրահապատ հեծելազոր և 30 հազար հետևակ»[80]։ Ենթադրելով, որ Արտավազդը, իբրև «Հռոմի դաշնակից ու բարեկամ» Կրասոսին օգնելու համար կտրամադրեր ոչ թե իր ամբողջ զորքը, այլ, լավագույն դեպքում, դրա կեսը, ապա կարելի է ասել, որ նրա զրահապատ հեծելազորի թիվը, բացի թիկնապահներից, հասնում էր 20 հազարի։

Բացի հիմնական հեծյալ և հետևակ զորքերից, հայկական բանակում կային նաև օժանդակ զորամասեր, որոնց մասին վկայություններ մնացել են Ստրաբոնի, Պլուտարքոսի և այլոց մոտ։ Այսպես, Ստրաբոնը, խոսելով Տիգրանին հպատակ կորդվացիների մասին, նշում է, որ «նրանք համարվում էին աչքի ընկնող ճարտարապետներ և պաշարողական գործերին հմուտ։ Դրա համար էլ Տիգրանն օգտագործում էր նրանց այդպիսի գործերում»[81]։ Պլուտարքոսը, նկարագրելով Տիգրանակերտի ճակատամարտը, խոսում է Տիգրանի բանակում եղած սակրավորների զորամասերի, ինչպես նաև մեծաքանակ գումակի մասին[82], որը և այդ ճակատամարտում դառնում է Տիգրանի պարտության հիմնական պատճառը։

Նախորդ էջերում, Տիգրան Բ–ի տերության մեջ ստեղծված ստրատեգոս–կառավարչի պաշտոնի մասին խոսելիս, նշել էինք, որ նման պաշտոնը, պայմանավորված լինելով տերության սահմանների աննախընթաց ընդարձակումով, չէր կարող առաջանալ Տիգրանի թագավորությանը նախորդած ժամանակաշրջանում, իսկ նոր նվաճված երկրների կորուստով էլ, բնականաբար, պետք է վերանար։ Այնուհետև հայտնել էինք այն միտքը, որ նախարարությունները Հայաստանում, որպես ժառանգական պաշտոններ, կարող էին առաջանալ ավելի ուշ, Արշակունիների թագավորության ժամանակ։

(80) Plutarchi Crassus, 19, 1–4.
(81) Strabo, XVI, 1, 24.
(82) Plutarchi Lucullus, 26–27.

Այս երևույթը բացատրելու համար հատուկ նշանակություն են ստանում անտիկ հեղինակների վերևում արդեն նշված այն հաղորդումները, որոնցում, տարբեր հանգամանքներում, հիշատակվում են Տիգրան Բ–ի զորքերի տարբեր հրամանատարների անուններ։ Դա վկայում է այն մասին, որ ո՛չ Արտաշեսի, ո՛չ իսկ Տիգրանի ժամանակ դեռևս գոյություն չուներ հայոց սպարապետի ժառանգական պաշտոնը և սպարապետությունը չէր կազմավորված որպես նախարարություն։ Այն, որպես այդպիսին, կազմավորվեց հետագայում, Արշակունիների թագավորության ժամանակ, երբ Հայաստանում պետական բոլոր պաշտոնները, որպես արքունի գործակալություններ, ժառանգաբար չնորհվեցին այս կամ այն նախարարական ընտանիքի ավագագույն ներկայացուցչին։

Նկատեցինք, որ Տիգրան Բ–ի (ինչպես նաև նրա հաջորդների) ժամանակ կազմավորված էր արքունի թիկնապահ հեծելազորը։ Տիգրանի օրոք այդ գնդի հրամանատարն էր Մեհրուժանը։ Այս կարևոր պաշտոնը ևս այդ ժամանակ չէր կարող ժառանգական լինել, քանի որ հիշյալ Մեհրուժանը Մոփքի թագավորական գերդաստանից էր[83], իսկ Մոփքը դեռ նոր էր միացվել թագավորությանը և, հավանաբար, Մոփքի արքունիքի ներկայացուցիչներին սիրաշահելու համար, հայոց թագավորը արքունի գերդաստանին զանազան պաշտոններ էր տալիս։

Վերևում նշվեց, որ Սելևկյանների մշտական բանակը, հիմնականում, ցրված էր տերության տարբեր մասերում, որպես կայազորներ, տեղավորված բերդերում և ամրոցներում։ Հավանաբար Հայաստանում ևս հայոց թագավորի զորախմբերը ցրված են եղել երկրի բերդերում և ամրոցներում։ Նշենք դրանցից կարևորագույնները։ Տոմիսա բերդը Եփրատի ձախ ափին, Կապպադովկիայի և Մոփքի սահմանի վրա։ Ստրաբոնը այն տեղադրում է Մոփքից աշխարհում[84]։ Տոմիսան ոչ միայն հայտնի ամրություն էր, այլ գտնվելով պարսկական հին «արքունի ճանապարհի» վրայ, միևնույն ժամանակ Հայաստանի վրայով Բաբելոնիա կամ Փոքր Ասիա գնացող քարավանների հայտնի

(83) Markwart, Eranšahr..., էջ 176։ Հմմտ. նաև Հ.Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, էջ 103։
(84) Strabo, XII, 2, 1 և XIV, 2, 29.

կայանն էր[85]: Նկատի ունենալով այս վերջին հանգամանքը, պիտի ենթադրել, որ այդ ամրոցում տեղավորված բերդապահ զորքը պարտավորված էր ապահովելու Տոմիսայի վրայով անցնող քարավանային ուղիների անվտանգությունը:

Մայրաքաղաք Արտաշատի մասին խոսելուց հետո, Ստրաբոնը թվարկում է Հայաստանի մի քանի բերդերի անուններ, որոնք միաժամանակ եղել են հայոց թագավորի գանձատները: «Քաղաքից (Արտաշատից – Ս.Կ.) ոչ շատ հեռու, – գրում է Ստրաբոնը, – գտնվում էին Տիգրանի և Արտավազդի գանձատները, Բաբյուրսա և Օլանե անառիկ ամրոցները: Ուրիշներ ևս կային Եփրատի վրա: Արտագերսան (Արտագերս – Ս.Կ.) ապստամբեց բերդապետ Ադոնի գլխավորությամբ: Կեսարի զորավարները գրավեցին այն, երկար ժամանակ պաշարելուց հետո, և պարիսպները քանդեցին»[86]: Այս վերջին դեպքի մասին Դիոն Կասիոսի մոտ եղած հիշատակության համաձայն, Արտագերսա ամրոցը նույնպես եղել է հայոց թագավորի գանձատներից մեկը[87]:

Բերդերն ու ամրոցները, որպես ապահով գանձատուն, օգտագործել են ոչ միայն հայոց թագավորները, այլև հարևան հելլենիստական միապետները: Վկայակոչենք դարձյալ Ստրաբոնին, որը գրում է. «Միհրդատ Եվպատորը ... հոգ տարավ այս երկրների մասին և կառուցեց այնտեղ յոթանասունհինգ ամրոց, պահելու համար իր գանձերի մեծ մասը: Սրանցից առավել հիշարժան են Հյուդարան, Բասգոյդարիզան և Սինորիսան»[88]:

Կասկած չի կարող լինել, որ Հայաստանի ամենահայտնի բերդերից է եղել Արտաշատ մայրաքաղաքը հյուսիսից պաշտպանող Գառնի ամրոցը, որը ամբողջ I դարում խոշոր դեր է խաղացել երկրի քաղաքական ու ռազմական կյանքում: Ուստի բոլորովին էլ պատահական պիտի չհամարել այն հանգամանքը, որ Գառնիի մասին հիշատակություններ կան ոչ միայն օտար և հայ մատենագիրների մոտ, այլև այնտեղ հայտնաբերված հունարեն արձանագրության մեջ:

Բերդապահ զորքերի պետը, որին վստահված է եղել երկրի այս կամ այն ռազմական կարևոր հանգույցի, ինչպես նաև

(85) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 111:
(86) Strabo, XI, 14, 6 (C. 529).
(87) Cass. Dio, LV, 20.
(88) Strabo, XII, 3, 28.

արքունի գանձերի պաշտպանությունը, պատկանում էր թագավորին չրջապատող ամենահեղինակավոր և ազդեցիկ պաշտոնյաների թվին:

* * *

Հելլենիստական թագավորների պետական ապարատում խոշոր դեր խաղում էր նաև արքունի դպիրը, թագավորի անձնական քարտուղարը: Հելլենիստական արքունիքում մեզ հայտնի առաջին դպիրը եղել է Ալեքսանդր Մակեդոնացու քարտուղար, Կարդիայում ծնված հույն Եվմենեսը, չափազանց կարևոր դեր կատարեց Արևելքի քաղաքական կյանքում ե՛ւ Մակեդոնացու կենդանության օրոք, ե՛ւ նրա մահից հետո կայսրությունը ժառանգելու շուրջ դիադոխների միջև ծագած պատերազմների ժամանակ: Հավանաբար այդ է պատճառը, որ Պլուտարքոսն իր գրած կենսագրություններից մեկը նվիրել է նրա գործունեությունը նկարագրելուն:

Շուտով, հելլենիստական բյուրոկրատական ապարատի կազմավորման ղուգընթաց, Պտղոմեոսների և Սելևկյանների արքունիքում ստեղծվում է հատուկ գրասենյակ, դիվան, որը գլխավորում է նամակագիրը (ἐπιστολογράφος) – Դիոնիսիոսը Անտիոքոս Դ-ի օրոք, Մենեքարեսը Դեմետրիոսի օրոք և ուրիշներ: Նամակագիրը բարձրաստիճան պաշտոնյա էր, որին, բարձրաստիճան բոլոր պաշտոնյաների նման, թագավորը նշանակում էր իր մերձավոր ընկերների (φίλοι) միջից[89]: Այդպիսի բարձրաստիճան պաշտոնյայի ղեկավարած դիվանատունը, անպայման, կառավարման կարևորագույն մարմին էր: Համապատասխան կերպով նույնպիսի դրություն էր նաև հելլենիստական մյուս թագավորություններում:

Եգիպտական պապիրուսներում, ինչպես նաև մատենագրական աղբյուրներում և վիմական արձանագրություններում, մեզ հասել են բազմաթիվ նամակներ, որ փոխանակել են հելլենիստական թագավորներն իրար միջև, կամ ուղղել են հպատակ քաղաքներին, իրենց ստորադրյալ պաշտոնյաներին և տարբեր անձնավորություններին: Այդ ընդարձակ նամակագրությունը,

(89) Polyb., XXX, 25, 16.

հավանաբար, թագավորներին պատճառում էր այնքան մեծ հոգսեր, որ չի կարելի անհիմն համարել այս կապակցությամբ առաջացած այն զրույցը, թե իբր Սելևկոս Ա-ը հաճախ ասելիս է եղել, որ եթե չաներն իմանային, թե ինչքան ծանր է գրել ու կարդալ այքան չաո նամակներ, ապա նրանք չէին վերցնի դեն շպրտված թագավորական դիադեման:

Հայաստանի առաջին թագավորները, Երվանդունիները, Արտաշեսն ու նրա հաջորդները ևս, ունեցե՞լ են արդյոք իրենց նամակագիրը, դժվար է այդ հարցի որոշակի պատասխանը գտնել մեզ հասած սկզբնաղբյուրներում: Սակայն հնագույն վավերագրերի և մատենագրական մի շարք անուղղակի տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ Երվանդունիների և Արտաշեսյանների արքունիքում ևս կային հատուկ գրագիրներ, դպիրներ, արքունի դիվանատան գրագրությունը վարելու և պահելու համար: Այսպես, դեռևս Աքեմենյան տերության մեջ յուրաքանչյուր սատրապ ուներ առանձին դիվանատուն իր գրագիրներով[90]: Անկասկած, Երվանդունի նախկին սատրապի հայոց թագավոր հռչակվելուց հետո, սատրապի ծառայության մեջ գտնված դիվանատունն իր գրագիրներով ու դպրապետով փոխարկվեց արքունի դիվանատան, սպասարկելու հայոց թագավորին: Այդպիսի դիվանատան գոյության օգտին անուղղակիորեն վկայում են նաև Հայաստանում հայտնաբերված Արտաշես Ա-ի հողաբաժան սահմանաքարերի արամեատառ և արմավիրի, Գառնիի ու Ապարանի հունարեն արձանագրությունները, որոնց տեքստերը, ինչպես նշված է պատմագիտության մեջ, անպայման նախապես մշակված ու կազմված պիտի լինեին արքունի դիվանատան[91]: Մենք մատենագրական որոշակի տվյալներ ունենք այն մասին, թե հետագայում, հայ Արշակունիների արքունիքում, արդեն հաստատապես եղել է դպրի պաշտոնը: Այսպես, Ագաթանգեղոսը խոսում է հայոց թագավորի առենակալ դպիրների մասին[92], իսկ Կորյունը և Մովսես Խորենացին վկայում են, որ հայ գրերի ստեղծողն սկզբնական շրջանում նշանակված է եղել քարտուղար, դպիր արքունի դիվանում[93]: Բացառված չէ, որ Արշակունիների նման, Արտաշեսյանները ևս ունեցել են իրենց արքունի դպիրները: Հայոց թագավորի դպրի պաշտոնը, ամենայն հավանականությամբ, նույնն էր, ինչ հելլենիստական թագավորների նամակագրի, էպիստոլոգրաֆոսի պաշտոնը: Այս առնչությամբ Ս.Տ. Երեմյանը գրում է. «Արտաշեսյանների շրջանում պետք է որ գոյություն ունենար նաև արքունի սենեկապետ, որը գլխավորում էր արքունի դիվանը: Աղբյուրներից երևում է, որ սենեկապետը հանդիսանում էր թագավորի անձնական քարտուղարը և գրանցում էր նրա բանավոր հրամանները, որոնք հետագայում մտցվում էին հատուկ մատյանում»[94]:

* * *

Նախորդ գլուխներում ցույց տվեցինք, որ մ.թ.ա. IV-II դդ. հարևան երկրների նման, հին Հայաստանում ևս գերագույն տերը թագավորն էր, իսկ քրմապետը հանդիսանում էր «թագավորից հետո երկրորդ անձնավորությունը» տերության մեջ: Սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա կարելի է եզրակացընել, որ նշված հարաբերությունը Հայաստանում գոյություն է ունեցել Երվանդունիների և Արտաշեսի ժամանակ, ծայրահեղ դեպքում մինչև Տիգրան Բ-ի գահակալումը, որի օրոք արդեն քրմապետը պետք է որ կորցրած լիներ իր նախկին հեղինակությունը և դիրքը: Այդ բանն ուղղակի կերպով երևում է երկու վկայություններից, որոնցից մեկը պահպանվել է Մովսես Խորենացու, մյուսը՝ Պլուտարքոսի մոտ: Այսպես, պատմահայրը վկայում է, որ Տիգրանը «ցասուցեալ ընդ Վահունիան ..... ընկենու զնոսա ի քրմութենէն, և զգիւղն յարքունիս առնու»[95]: Իսկ Պլուտարքոսը, նկարագրելով Տիգրանի արքունի չքախումբը, գրում է. «Շատ թագավորներ սպասարկում են Տիգրանին, բայց նրանցից չորսը միշտ նրա հետ էին լինում որպես ուղեկիցներ և թիկնապահներ. և երբ նա գնում էր ձիով, նրանք, կարճ խիտոններ հագած, վազում էին առջևից, իսկ երբ նստած էր լինում և պաշտոնական գործերով զբաղվում, նրանք, իրար ձեռքից բռնած, կանգնած

(90) Г.А. Тирацян, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, ՊԲՀ, 1972, Նո 2, էջ 106-109:
(91) К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 181, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 681-682:
(92) Ագաթանգեղոս, Ը, 99:
(93) Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան Մեսրոպայ վարդապետի, Վենետիկ, 1894, էջ 14: Մովսես Խորենացի, Գ, խէ:
(94) С.Т. Еремян, Основные черты ..., էջ 72.
(95) Մովսես Խորենացի, Բ, ժգ:

հին լինում նրա չուրջը»[96]:

Եթե Խորենացու վկայությունը որոշակի կերպով վերաբերվում է Վահունիների (որոնց սերնդից էլ պետք է լիներ քրմապետը, երկրի «երկրորդ անձնավորությունը») չնորհազրկմանը, ապա Պլուտարքոսի վկայությունը չորս թագավորների մասին, իր ծագրանկարային ընույթով հանդերձ, կարելի է դրա անուղղակի ապացույցը համարել: Բանն այն է, որ, ինչպես ենթադրում է Ց. Մարկվարտը, այդ չորս թագավորները պետք է լինեն Հայաստանի չորս բդեշխները, որոնց մասին ընդարձակ վկայություններ կան Ագաթանգեղոսի, Փավստոսի և Խորենացու մոտ[97]: *Ինչպես հայտնի է, Հայաստանի պետական ապարատի հիերարխիայում բդեշխները, թագավորից հետո, գրավում էին երկրորդ տեղը: Եթե այդպես է, ապա քրմապետը, ինչքան էլ կարևոր դեր խաղար երկրի քաղաքական կյանքում, բդեշխությունների հաստատումից հետո այլևս չէր կարող թագավորից հետո երկրորդ անձնավորությունը լինել:*

Գ.Վ. Մերեթելին, սակայն, չի ընդունում, որ բդեշխը երբևիցե եղել է թագավորից հետո երկրորդ դեմքը պետության մեջ, հենվելով այն հայտնի իրողության վրա, որ բդեշխները «ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում, մի քանիսն էին, և նրանք բոլորը չէին կարող միաժամանակ լինել երկրորդ դեմքը թագավորից հետո»[98]: *Գ.Վ. Մերեթելու այս տեսակետը, մեր կարծիքով, հակասում է նույն տեղում իր իսկ վկայակոչած այն փաստերին, թե Հայաստանում չորս բդեշխներից մեկը՝ Աղձնիքի իշխանը համարվում էր «բդեշխն մեծ»*[99], *որը Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու մոտ կոչված է մեծ իշխան*[100], *իսկ*

(96) Plutarchi Lucullus, XXXI, 6.

(97) J. Markwart, Ernašahr..., էջ 171-173: *Մարկվարտի այս ենթադրությունը հավանական են համարում նաև* Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 391, *էջ* 283 *և* 410-411) *և Հ. Մանանդյանը (Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ* 34: *Տիգրան երկրորդը և Հռոմը, էջ* 58: *Քննական տեսություն ..., հ. Ա,* 159-160):

(98) Г.В. Церетели, Армазская билингва, Тб., 1941, стр. 60.

(99) *Ագաթանգեղոս, ՃԺԲ,* 795:

(100) «*Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխան Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեշխն ...*» (*Փավստոս, Գ.Թ.*): «*Քանզի վախճանեալ երանելւոյն Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր, բդեշխն Աղձնեաց կոչէր ...*» (*Մովսես Խորենացի, Գ, դ*):

Արմազիում հայտնաբերված և իր իսկ Գ.Վ. Մերեթելու կողմից հրատարակված երկլեզվյան (արամեերեն և հունարեն) արձանագրության մեջ հիշատակված է Զևախա անունով կրտսեր բդեշխը (Ζηουάχου τοῦ νεωτέρου πιτιάξου)[101]: *Եթե վրաստանում գոյություն է ունեցել կրտսեր բդեշխ, ապա բնական է, որ նրա կողքին պետք է գոյություն ունենար «բդեշխն մեծը»: Հետևաբար, բդեշխներից մեկը, հանդիսանալով «մեծ», կարող էր լինել թագավորից հետո երկրորդ դեմքը պետության մեջ:*

Գ.Վ. Մերեթելու այդպիսի ոչ ճիշտ եզրակացության հանգելը մասամբ հետևանք է այն բանի, որ նա, բդեշխների մասին խոսելիս, հենվում է բացառապես Հայաստանի և Պարսկաստանի մասին հետագայ շրջանի պատմիչների վկայությունների վրա, որոնցում արտացոլված է արդեն ֆեոդալականացած Հայաստանի և Սասանյան Պարսկաստանի քաղաքական իրավիճակը:

Թ.Կ. Գամսախուրդիան ևս, իր «Բդեշխությունների ինստիտուտի հարցի շուրջ» հետաքրքիր աշխատության մեջ, հրատարակված Վրացական ՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների Տեղեկագրում[102], *մի շարք զուգահեռների և սկզբնաղբյուրներից բերած վկայությունների հիման վրա, Վրաստանի մասին հանգում է նույն այն եզրակացության, ինչ մենք՝ Հայաստանի մասին, թե՝ բդեշխը թագավորից հետո եղել է երկրորդ անձնավորությունը երկրում*[103]:

«*Բդեշխ*» *տերմինը* բդեաշխ, πιτιάξης, πιτάξης, βιτάξης, βίδιξ, βάτησα, vitaxa *ձևերով մեզ հայտնի է տարբեր բնույթի սկզբնաղբյուրներից՝ մատենագրական աղբյուրներից, վիմական*

(101) Г.В. Церетели, Армазская билингва, Тб., 1941, стр. 23. *Նաև* Г.В. Церетели, Эпиграфические находки в Мцхета - древней столице Грузии, ВДИ, 1948, N^{O} 2, стр. 50.

(102) «*Մացնե*», 1970, *Նո* 6: *Հայերեն թարգմանությունը տես՝ Թ.Կ. Գամսախուրդիա, Բդեշխությունների ինստիտուտի հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների ինֆորմացիայի տեկտոր, Նո* 5, 1971, *Երևան, (վկայակոչվում է այս հրատարակությունը):*

(103) *Նույն տեղում, էջ* 43-53:

արձանագրություններից, դեմմաներից և այլն[104]:

«Բդեշխ» բառի ստուգաբանության և, ընդհանրապես, դրա տակ հասկացված պաշտոնի էության տարբեր մեկնաբանություններ են տրվել: Տիրապետող է այն կարծիքը, թե «բդեշխ» բառն ունի պարսկական ծագում: Մինչդեռ ակադ. Գր. Ղափանցյանը գտնում է, որ «դժվար է pitiaxš-ը / կամ bidiaxš / համադրել փեհլևական pātāxšāh, նոր պարսկ. pādšāh (թագավոր) բառերի հետ առաջին վանկի (pitiaxš) i ձայնավորի պատճառով, որին իրանական բառում համապատասխանում է a ձայնավորը»[105]: Մեր կարծիքով, սակայն, ակադ. Ղափանցյանի այս տեսակետի դեմ կարելի է բերել այն փաստարկը, որ Դուրա-Եվրոպոսի պեղումներից հայտնաբերված և 121 թվականին վերագրվող մի հունարեն վավերագրի մեջ մեզ հետաքրքրող տերմինը դրված է βατησα (բատեսա-բատեչա) ձևով[106] և այստեղ առաջին վանկի ձայնավորը ոչ թե i է, այլ a և բառը կարելի է հեշտությամբ համադրել թագավոր նշանակող pātāxsāh և pādšāh իրանական բառերի հետ:

Այստեղ նշենք, որ βατησα տերմինը bitiax-ի հետ նույնացնելուն կողմնակից են ոչ բոլոր հետազոտողները: Այսպես, Գ.Կ. Գամախուրդիան նշում է, որ Ռ. Ֆրայը, ուսումնասիրելով վերոհիշյալ վավերագիրը Դուրա-Եվրոպոսից, այն կարծիքն է հայտնում, որ βατησα տերմինը, առավելապես արտահայտում է ազնվատոհմությունը, նրա աստիճանը, քան պաշտոն: Ռ. Ֆրայի կարծիքով βατησα պիտի լինի իրանական āzātān-ի միջագետքյան համարժեքը»[107]:

Բդեշխության ինստիտուտը հատուկ է եղել Պարսկաստանին, Իբերիային և հայկական պետության: Բդեշխության պաշտոնը, անկասկած, անցել է հարյուրամյակների ընթացքում զարգացման որոշակի փուլ: Այստեղ, այդ պաշտոնը ինչպիսի փոփոխություններ էլ կրած լիներ, բոլոր դեպքերում իր էությամբ մոտավորապես համապատասխան էր մնում նահանգապետի, կուսակալի բարձր պաշտոնին:

Սկզբում մենք վկայակոչեցինք Ց. Մարկվարտի ենթադրությունն այն մասին, թե Պլուտարքոսի նկարագրած չորս արքայիկները, որոնք չրջապատում էին Տիգրան Բ-ին, պետք է լինեն Հայաստանի չորս բդեշխները: Ց. Մարդկվարտի կարծիքով, բդեշխները Հայաստանում սահմանային մարզի կառավարիչներ էին[108]: Ն. Ադոնցը բդեշխներին համարում է յուրատեսակ մանր արքաներ, որոնք նախապես իշխել են ինքնուրույն առանձին երկրամասերում, բայց Տիգրան Բ-ի նվաճումներից հետո ճանաչել են Հայաստանի թագավորների գերիշխանությունը: Այնուհետև նա նշում է, որ Հայաստանում բդեշխները դիտվել են իբրև կուսակալներ համեմատաբար ուշ շրջանում, Սասանյան Պարսկաստանի պետական կարգի ազդեցության չնորհիվ[109]: Կ. Թումանովը նույնպես, ըստ էության, համաձայն է Ց. Մարկվարտի կարծիքին[110]: Թ. Գամախուրդիան այն կարծիքին է, թե Խորենացու տվյալների համաձայն, Հայաստանում եղել են ոչ թե չորս, այլ միայն երկու բդեշխ և մատնացույց է անում այն, որ Մարկվարտը հետագայում նշում է Հայաստանում միայն երկու՝ Աղձնիքի և Գուգարքի բդեշխության գոյությունը[111]: Պետք է դիտել, որ Խորենացու մեկ առանձին վկայության վրա հիմնված[112] Թ. Գամախուրդիայի այս տեսակետը դեռևս բավարար չափով փաստարկված չէ, քանի որ Խորենացու համապատասխան վկայությունները չեն հակասում բդեշխությունների մասին ցարդ մեր ունեցած պատկերացումներին:

Եթե ընդունենք չորս արքայիկների մասին Պլուտարքոսի վկայությանը Ց. Մարկվարտի տված բացատրությունը, ապա

(104) Փավստոս Բուզանդ, Գ, իգ: Բ, ը: Ագաթանգեղոս, 795 և 873: Մովսես Խորենացի, Ա, իգ: Բ, ը: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 434: Ammianus Marcellinus, XXIII, 6, 14; Г.В. Церетели, Армазская билингва, стр. 23; Его же, Эпиграфические находки ..., стр. 50; M.I. Rostovtzeff and C.B. Welles, A Parchment contract of Loan from Dura-Europos, Yale Classical Studies, II (1931), pp. 6 and 51; Ernest Honigmann et André Maricq, Recherches sur le Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953, p. 17-18.

(105) Гр. Капанцян, Историко-лингвистические работы, Ереван, 1956, էջ 468.

(106) M.I. Rostovtzeff and C.B. Welles, նույն տեղում:

(107) Թ.Կ. Գամախուրդիա, նույն տեղում, էջ 6:

(108) J. Markwart, Eranšahr..., էջ 163-175:

(109) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 283.

(110) C. Toumanoff, Studies in Christian Caucasian history, Georgetown University press, 1983, էջ 155-192:

(111) Թ.Կ. Գամախուրդիա, նույն տեղում, էջ 24-27:

(112) Մովսես Խորենացի, Բ, ը:

դրանով իսկ մենք հնարավորություն ենք ստանում մոտավորապես որոշելու Հայաստանում բդեշխությունների առաջացման ժամանակը և պատմա-քաղաքական հանգամանքները։

Ինչպես նշել ենք՝ բդեշխությունների և բդեշխների մասին մեզ հասել են բազմաթիվ տարաբնույթ և տարալեզու տեղեկություններ, որոնք վերաբերում են տարբեր ժամանակների։ Սակայն Հայաստանում բդեշխությունների, հետևաբար և բդեշխների պաշտոնի, առաջացման մասին տեղեկություններ պահպանել են Պլուտարքոսը և Մովսես Խորենացին։ Հույն մատենագրի համապատասխան վկայությունը նոր մեջ բերվեց վերևում։ Ուստի և մենք կսահմանափակվենք ստորև մեջ բերելով միայն մեր պատմահոր երեք վկայությունը բդեշխների վերաբերյալ։

«Յորոց զմինն յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այս ինքն է զՍանասարն։ և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեառնն։ Իսկ պերճքն և գլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբդեշխութիւն կոչմանցն արժանաւորեցան առնուլ»[113]։

Այնուհետև՝ «Իսկ ընդդէմ լերինն կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն, և նահապետութեան անուն կարգայ բդեաչխ Գուգարաց ...»[114]։

Ու վերջապես՝ «և զՇարաշան ի տանէ Սանասարայ հաստատէ բդեշխ մեծ և կուսակալ յարևմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի ...»[115]։

Ակներև է, որ այս վկայություններից առաջինը մեզ համարյա ոչինչ չի տալիս հիշյալ բդեշխության առաջացման նույնիսկ մոտավոր ժամանակը պարզելու համար։ Այսուհանդերձ, այն շատ կարևոր է ընդհանրապես բդեշխության ինստիտուտի առաջացման սոցիալ-պատմական հանգամանքները հասկանալու տեսակետից։ Բանն այն է, որ, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին, Պարույր Սկայորդու կողմից Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում, Ասորեստանի սահմանների մոտ բնակեցված Սանասարի սերնդից ականավոր մարդիկ հետագայում, թագավորին հավատարմորեն ծառայելով, որպես հատուցում ստանում են այդ կողմերի բդեշխությունը։ Այստեղից պարզ կարելի է եզրակացնել, որ բդեշխության պաշտոնը Հայաստանում սկզբնական շրջանում եղել էր ոչ թե ժառանգական, ինչպիսին էին, սովորաբար, պետական պաշտոնները Աքեմենյան տերության մեջ, այլ այն շնորհում էր թագավորը ազնվականության այս կամ այն ներկայացուցչին կամ իր մերձավորներից որևէ մեկին, որպես վարձատրություն նրա մատուցած ծառայության համար, ինչպես ընդունված էր Սելևկյանների պետության մեջ։

Հայաստանում բդեշխությունների առաջացման ժամանակը որոշելու տեսակետից առանձնապես արժեքավոր են Խորենացու հաջորդ երկու վկայությունը, թե՝ հայոց Վաղարշակ թագավորը Հայաստանի ծայրամասերի կառավարումը հանձնում է բդեշխներին։ Մեկ ուրիշ առիթով մենք նշել ենք, որ պատմահոր կիսապատմական-կիսավիպական Վաղարշակ թագավորի գործունեությունը և ժամանակը ընդհանրապես համընկնում է հունական աղբյուրներում հիշատակված պատմական Արտաշեսի և, մասամբ, Տրդատ Ա-ի գործունեությանը։ Հետևաբար, ելնելով բդեշխների մասին Խորենացու վկայություններից, հնարավոր կլիներ ենթադրել, որ բդեշխություններն առաջացել են Հայաստանում մ.թ.ա. II դարի կեսերին։

Մյուս կողմից, եթե, հենվելով Ց. Մարկվարտի ենթադրության վրա, ընդունենք, որ Պլուտարքոսի հայոնի վկայության մեջ հիշատակված չորս թագավորները, որոնք ամենուրեք ուղեկցում էին Տիգրանին, նույն այդ բդեշխներն են, ապա միանգամայն ճիշտ կլինի ենթադրել, որ բդեշխությունները առաջացել են Հայաստանում իր իսկ Տիգրան Բ-ի թագավորության տարիներին, մի բան, որը միանգամայն (եթե ոչ բացառապես) հնարավոր էր այդ տարիներին ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում։ Ուշադրություն պարզել մեր ասածը։

Մինչև Տիգրան Բ-ի գահակալումը, հայկական թագավորության աշխարհագրական անճոռնի սահմանները հնարավորություն չէին ընձեռում բդեշխությունների առաջացման համար, քանի որ բդեշխությունն ինքնին մի փոքր թագավորություն էր, իսկ բդեշխը՝ Պլուտարքոսի վկայության համաձայն՝ թագավոր (βασιλεύς)։ Դրությունն արմատապես փոխվում է Տիգրան Բ-ի գահակալության առաջին տասնամյակում իսկ։

(113) Մովսես Խորենացի, Ա, իգ։
(114) Նույն տեղում, Բ, ը։
(115) Նույն տեղում։

Տիգրանի մղած յաջող պատերազմների հետևանքով, այդ տարիներին հայկական թագավորության սահմանները մեծապես ընդարձակվեցին աչխարհագրական բոլոր չորս ուղղություններով, դրանով իսկ ընդգրկելով մի շարք նախկինում ինքնուրույն թագավորություններ։ Ահա և այս թագավորությունների նախկին տիրակալները, հպատակվելով նոր աչխարհակալին, դառնում են նրա հպատակ զինակիրները։

Բդեաչխ (pitiaxš) տերմինի լեզվաբանական վերլուծության վրա ակադ. Գր. Ղափանցյանի արած եզրակացության վերջին մասը համահնչուն է մեր տեսակետին։ Նա գրում է. «Ես չեմ կասկածում, որ մենք ունենք հին փոքրասիական բառ, որտեղ սկզբնական bidi-(piti) նշանակում էր տեղ, երկրամաս (համմտ. խեթ. peda – «տեղ»), իսկ – ašx հավանաբար նշանակում էր տիրակալ, իշխան ...։ Այնպես, որ bidiaxš կարող էր նշանակել «երկրի իշխան», այսինքն՝ տեղական կիսանկախ մեծատոհմիկ, և ոչ թե սյուզերեն թագավորի օտար տեղապահը»[116]։

Թ.Կ. Գամսախուրդիան թեև փորձում է վիճարկել Հայաստանում բդեչխությունների՝ Տիգրան Բ-ի ժամանակ առաջացած լինելու տեսակետը, բայց իվերջո ստիպված է լինում ընդունելու, թե «բացառված չէ, որ դա իրոք էլ այդպես էր»։ Նույն միտքը նա կրկնում է՝ երկրորդ անգամ գրելով, թե «a priori կարելի է կարծել, որ այդ իրոք այդպես է եղել»[117]։

Թեկուզ և բդեչխներին ուղղակի կերպով չի հիշում, սակայն, ըստ էության վերոհիշյալ իրավիճակն է նկատի ունեցել ակադ. Ս.Տ. Երեմյանը՝ գրելով. «Լեռնային ծայրամասային մարգերի տեղաբնիկ բնակչությունը, մեծ մասամբ անասնապահական, հայոց թագավորների հարկատուն էր կամ դաշնակիցը։ Դրանք կիսանկախ բարբարոսական իշխանություններ էին ...։ Երկրի ներկայացուցիչը, իշխան կամ արքայիկ, հայոց թագավորին հարկ էր վճարում և պատերազմի դեպքում իր աչխարհազորի հետ միասին մասնակցում էր թագավորների կողմում։ Ռազմական ավարը հարստացնում էր ցեղի ավագանուն, որը ժամանակի ընթացքում հայոց թագավորի կողմից ճանաչվեց որպես ժառանգական տիրակալ իր ցեղի և նրա գբաղեցրած տերիտորիայի վրա»[118]։

Ի դեպ նշենք, որ այդ պայմաններում էլ հենց հնարավորություն է ստեղծվում հայոց թագավորի համար յուրացնել «արքայից արքա» (βασιλεύς βασιλέων) տիտղոսը[119]։ Կարծում ենք, որ հայոց թագավորի այս նոր տիտղոսը ոչ այնքան հետևանք էր պարթևների դեմ նրա տարած հաղթանակի, որի մասին վկայում են Սորաբոնը և Ցուստինոսը[120], որքան փաստական այն դրության, ըստ որի, Տիգրանի գերիշխանության տակ էին գտնվում արդեն մի շարք երկրների թագավորներ։ Այս մասին մենք արդեն խոսել ենք։

Ս.Տ. Երեմյանը, սակայն, խոսելով ուղղակի բդեչխությունների առաջացման մասին Հայաստանում, վերոհիշյալից փոքր ինչ տարբեր բացատրություն է տալիս։ Նա գրում է. «Նվաճված երկրները (խոսքը Տիգրան Բ-ի նվաճումների մասին է – Ս.Կ.) ստանում էին նոր վարչական կառավարում։ Դրանք բաժանված էին առանձին կուսակալությունների, որոնց գլուխ կանգնած էին թագավորի նշանակած կուսակալները՝ բդեչխները, որոնք ունեին քաղաքացիական և ռազմական իշխանություն։ Բդեչխներին կարելի է համեմատել Սելևկյան պետության սատրապների հետ։ Այս կուսակալություն-բդեչխությունների կառավարիչներ նշանակվում էին կամ թագավորական ընտանիքի անդամները, կամ բարձր ազնվականության ներկայացուցիչները։ Այսպես, օրինակ, Միգդոնիա նահանգում կուսակալ էր նշանակված Գուբասը, Տիգրան Բ-ի եղբայրը։ Հավանաբար նրա (Տիգրանի – Ս.Կ.) որդին, արքայորդի Զարեհը, նշանակված էր Նոր Շիրականի բդեչխ։ Նախկին Սելևկյան Սիրիայի կառավարիչ նշանակված էր մեծատոհմիկ Բագադատը կամ Բագարատը ...։ Նույնպիսի կառավարիչներ և կուսակալներ էին նաև Տիգրան Բ-ի պալատականներ Մեհրուժանը և Մանկայոսը»[121]։

(116) Гр. Капанцян, Хаяса-колыбель армян, Ереван, 1946, էջ 116, ծանոթ. 1։

(117) Թ.Կ. Գամսախուրդիա, նշվ. աչխ., էջ 30 և 33։

(118) С.Т. Еремян, Основные черты ..., էջ 52։

(119) Թեև այս «արքայից արքա» տիտղոսը մեզ մոտ հանդիպում է դեռևս ուրարտական արձանագրություններում՝ տրված Ուրարտուի թագավորներին, սակայն այդ պատմական ժամանակաշրջանից մինչև Տիգրանն ընկած ժամանակահատվածն այնքան երկար է, որ դժվար կլինի Տիգրանին տրված «արքայից արքա» տիտղոսի և ուրարտական թագավորների նույնանման տիտղոսի միջև որևէ առնչություն գտնել։

(120) Strabo, XI, 14, 15 (C. 531); Justin., XL, 3.

(121) С.Т. Еремян, Основные черты ..., էջ 72.

Ինչպես տեսնում ենք, Ս.Տ. Երեմյանի այս տեսակետը նույնպես չի հակասում մեր այն ենթադրությանը, թե բդեշխությունները Հայաստանում առաջացել են Տիգրան Բ-ի թագավորության ժամանակ։

Հետագա շրջանում, երբ արդեն քաղաքական աննպաստ հանգամանքների բերումով հայերը կորցրին Տիգրան Բ-ի նվաճած այդ երկրամասերը, բդեշխներն, իրենց հերթին, կորցնելով հայոց «արքայից արքային» հպատակ թագավորի բնույթը, աստիճանաբար վերածվեցին թագավորության չորս ծայրամասերում նրա նշանակած կուսակալ-կոմսնակալների։ Այս վերջին դրությունն էլ հենց հայտնի է ուսումնասիրողներին, քանի որ այն արձանագրված ենք գտնում V դարի մեր մատենագիրների մոտ, որոնք բդեշխներին գիտեն որպես «սահմանակալ» (τοπο-κράτωρ), «գահերէց» (τιμιώτατος), «բարձերէց» իշխաններ[122]։ Ի դեպ, «գահերէց» և «բարձերէց» տերմինների մասին։

Համանիշ այս բառերը աղբյուրներում օգտագործված են բնորոշելու համար բդեշխների սոցիալան դիրքը Հայաստանում Արշակունիների թագավորության ժամանակ։ Ուսումնասիրողները, ելնելով «գահ» և «բարձ» բառերի՝ նստելու տեղ, «բազմոց» նշանակությունից, գտել են, որ դրանք մեր մատենագրության մեջ գործ են ածվել «նշանակելու համար այն տեղը, բազմոցը, որ նախարարները գրավում էին թագավորի սեղանին չուրջը խնջույքների ժամանակ։ Այս տեղերը ճշտով սահմանված էին պարսից թագավորների կողմից (տես Գահնամակ), և նրանցով որոշվում էր նախարարներից յուրաքանչյուրի ավագության կարգը»[123]։

Ուսումնասիրողները մինչև հիմա պատշաճ ուշադրություն չեն դարձրել այն փաստի վրայ, որ, «գահերէց» բառը Ագաթանգեղոսի հունարեն տարբերակում արտահայտված է τιμιώτατος (պատվավորագույն) բառով։ Այս բառը ճիշտ հասկանալու համար մենք մի անգամ ևս ստիպված ենք վերադառնալու Սե-

(122) Փավստոս Բուզանդ, Գ, թ։ Դ, ծ։ Ագաթանգեղոս, ՃԻՋ, 873։ Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu herausgegeben von Paul de Lagarde, Göttingen, 1887, էջ 83։

(123) Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածութ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 282-283, ծանոթ. 128։ Համմ. նաև Н. Адонц, Армения ..., էջ 283։

լևկյանների հելլենիստական արքունիքը, որտեղ պետական գործերում խոշոր դեր էին խաղում թագավորի ընկերները (φίλοι), և պատահական չէ, որ է. Բիկերմանը Սելևկյանների պետական հաստատությունների ուսումնասիրմանը նվիրված իր կարևոր մենագրության մեջ հունարեն φίλος տերմինը թարգմանում է courtisan = պալատական և գտնում, որ նրանց կապը թագավորի հետ ավելի սերտ էր, քան սովորական պալատականների կապը[124]։ Աղբյուրներում հաճախ հիշատակված թագավորի այս ընկերները արքունիքում կրել են պատվավոր տարբեր տիտղոսներ, թագավորի հետ իրենց ունեցած մոտիկության համապատասխան։ Այսպես, վիմական արձանագրությունների տվյալներից հետևում է, որ Սելևկյանների տերության մեջ սովորական ընկերների (τὸν φίλον) ... ἡμέτερον[125] կողքին կային նաև առաջին ընկերներ (τῶν πρώτων φίλων βασιλέως Αντιόχου), որոնցից մեկը բժշկապետ էր (ἀρχίατρος), մյուսը՝ թագուհու ննջարանի վերակացու (ἐπί τοῦ κοιτῶνος τῆς βασιλίσσης)[126]։ Մեզ հաջողվել է արձանագրություններում հայտնաբերել նաև պատվավոր ընկերների (Ἀριστόλοχον τῶν τιμωμένων φίλων)[127] աստիճանը։ Կար-

(124) E. Bickermann, Institutions des Séleucides, Paris, 1935, էջ 35 և հետ։ Այս առիթով նշենք, որ թագավորին մոտիկ պալատականները համարվել են φίλος ոչ միայն Սելևկյանների արքունիքում, այլև հելլենիստական մյուս երկրներում, ինչպես Պերգամոնում (Diodor., XXXIV, 3), Պոնտոսում և այլն։ Նրանք այստեղ ևս գրաղեցրել են բարձրագույն պետական պաշտոններ։ Այսպես, Ստրաբոնը գրում է. «Միհրդատ Եվպատորը այնքան զորացավ, որ (Կոլխիդա) երկիրը նրան անցավ։ Որպես երկրի հյուպատոս և կառավարիչ մշտապես ուղարկվում էր ընկերներից մեկը (τῶν φίλων)։ Սրանցից էր և Մոափեռնեսը, մորս հորեղբայրը» (Strabo, XI 2, 18, C. 498-499)։

(125) C.B. Welles, RC, 22.

(126) OGIS, 256.

(127) C.B. Welles, RC, 45։ Այս առումով հետաքրքիր է նաև կոմմագենեում հայտնաբերված հունարեն արձանագրություններից մեկը, որը վերաբերում է Կոմմագենեի Անտիոքոս Ա թագավորին։ Այս արձանագրության մեջ Անտիոքոսի տիտղոսաշարին հաջորդող տողերում հիշատակվում է, որ թագավորի առաջին և առավել պատվավոր ընկերներից էր (τῶν πρώτων καί πρωτιμωμένων φίλων) ոմն Ապոլլաս, Ապոլլասի որդին, որը նշանակվել էր սատրապոս-կառավարիչ (F.K. Dörner and R. Naumann, Forschung in Kommagene, "Istanbuler Forschungen", Bd. 10, Berlin, 1939, էջ 43-44).

ծում ենք, որ չի կարելի այս վերջին փաստի կողքով անցնել։ Սելևկյան թագավորի մոտիկ ընկերը, պալատականը, կրում է «պատվավոր» (τιμώμενος) տիտղոսը։ Ինչպես նոր նշեցինք, գահերեց բդեշխներին Ագաթանգեղոսի հունարեն տարբերակը տալիս է τιμιώτατοι (պատվավորագույններ) տիտղոսը, որը բդեշխներին տարբերում էր հայոց թագավորի մյուս մերձավորներից ու ենթականերից։ Եթե ընդունենք, որ Սելևկյանների արքունիքում հանդիպող «պատվավոր» տիտղոսը իրոք առնչվում է հայկական իրականության մեջ բդեշխներին տրված «պատվավորագույն» տիտղոսին, ապա կարելի է հաստատ ասել, որ «գահերեց» բառում «գահը» օգտագործված է ոչ այնքան «նստելու տեղ, բազմոց» իմաստով, ինչքան «պատիվ» նշանակությամբ, որը և, մեր կարծիքով, ավելի է համապատասխանում պատմական իրականությանը։

Մի վերջին, ընդհանուր կարգի, դիտողություն ևս Հայաստանում բդեշխությունների առաջացման կապակցությամբ։ Վերևում ամբողջ չարադրվածից ավելի քան պարզ է, որ Արտաշեսյան Հայաստանի պետական մի շարք հաստատություններ իրենց վրա կրել են հելլենիստական շրջապատի ուժեղ ազդեցությունը։ Այնուամենայնիվ, դրանք ունեցել են տեղական առավել հին արմատներ և կրել են միաժամանակ «ազգային» ավանդությունների բացահայտ կնիքը։ Այդ պարզորոշ երևում է Հայաստանում բդեշխությունների առաջացման և դրանց հետագա գոյության մասին ամբողջ պատմությունից։ Ինչպես ցույց տվեցինք, դրանք առաջացել են միայն Տիգրան Բ-ի նվաճումներից հետո, որպես հայոց աշխարհակալ թագավորի գերագույն իշխանությանը ենթակա երկրամասեր։ Եթե դրանց առաջացումը խորթ երևույթ լիներ Հայաստանի ներքին զարգացման համար, ապա չուտով, այդ երկրամասերի կորստից հետո, բդեշխությունները, հետևաբար և բդեշխները, պետք է վերանային Հայաստանում։ Մինչդեռ նկատելի է, որ դրանք հիշատակվում են մեր մատենագրության մեջ համարյա մինչև հայկական թագավորության անկումը։ Ես մի փաստարկ այն մասին, թե բդեշխությունների առաջացումը Հայաստանում կապ չուներ հելլենիզմի ազդեցության հետ, հավանաբար այն է, որ Պլուտարքոսը, չկարողանալով ճիշտ բնորոշել հելլենիստական աշխարհին խորթ այդ հաստատությունը, բդեշխությունների տիրակալներին, ինչպես տեսանք, անվանում է թագավորներ։

Ամփոփելով բդեշխությունների մասին մեր ամբողջ ասածը, կարելի է ուրվագծել հետևյալ պատկերը։ Դեռևս նախահայկական ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում Ուրարտական պետության մեջ, դուցե և դրանից էլ առաջ, եղել են երկրամասերի իշխաններ։ Սակայն նրանց մասին մենք առավել հավաստի տեղեկություններ ունենք սկսած Արտաշեսյան թագավորության ժամանակից։ Այդ դարաշրջանում է, որ Հայաստանը, դառնալով Առաջավոր Ասիայի հզոր տերություններից մեկը, վարչականորեն բաժանվում է մի շարք միավորների, որոնց գլուխ կանգնած էին հայոց թագավորին ենթակա կուսակալ-կառավարիչներ, որոնք հայկական աղբյուրներից հայտնի են բդեշխ անունով, իսկ հույն հեղինակները նրանց համարում են հայոց թագավորին ենթակա բասիլևսներ, թագավորներ։ Հին Հայաստանում եղել են հիմնականում չորս բդեշխներ, որոնց կառավարած երկրամասերը, ինչպես և պաշտոնը, կոչվել են բդեշխություն։ Բդեշխներից մեկը կոչվել է «մեծ» և հանդիսացել է թագավորից հետո երկրորդ անձնավորությունը, հետին պլանի վրա մղելով քրմապետին։ Բդեշխներն ու բդեշխությունները վերջնականապես ձևավորվել են Տիգրան Բ-ի ժամանակ, երբ Հայկական թագավորության սահմանները դուրս եկան Հայկական լեռնաշխարհի բնական-աշխարհագրական սահմաններից, դրանով իսկ ստեղծվեցին նյութական պայմաններ բդեշխությունների առաջացման համար։ Բդեշխները, որպես «գահերէց» և «բարձերէց» իշխաններ, թագավորի մերձավորագույն և հզորագույն զինակիցներն էին։ Սկզբնական շրջանում բդեշխության պաշտոնը ժառանգական չի եղել, այլ թագավորն այն չնորհել է իր մերձավորներից որևէ մեկին, իրեն մատուցած որոշակի ծառայության համար։ Ավելացնենք նաև, որ միայն հետագայում, Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների արմատավորմանը զուգընթաց, բդեշխները դառնում են ժառանգական պաշտոնյաներ, որպիսի վիճակն էլ, ահա, արձանագրված ենք գտնում մեր անդրանիկ մատենագիրների երկերում։

Քսենոփոնի երկերից մեզ հայտնի է, որ դեռևս մ.թ.ա. VI դարում արմենների բասիլևսի կողքին են եղել նաև «պատվավոր արմեններ»[128], որոնք հավանաբար, տոհմական կարգերի քայ-

(128) Xenoph., Cyrop., III, 1, 8.

քայման հիման վրա նոր կազմավորվող արմենական ավագանու ներկայացուցիչներն էին: Ճիշտ կլինի ենթադրել, որ հետագա դարերում, հայկական կենտրոնացված թագավորության առաջացումից հետո, պետական բարձրագույն պաշտոնները վարել են այդ ավագանու միջից դուրս եկած մարդիկ, որոնք էլ, աստիճանաբար, դառնում են տերիտորիալ որոշակի միավորների ժառանգական սիրակալներ՝ նախարարներ: Նախարարներին մենք կանդրադառնանք առանձին գլխում:

Նախքան նախարարությունների հարցին անցնելը, անհրաժեշտ ենք համարում խոսել «լիտուրգիա» կոչված երևույթի մասին:

* * *

Իր մատյանի երկրորդ գրքի 7–8րդ գլուխները պատմահայրը հատկացրել է Հայաստանում նախարարությունները կարգավորելու ուղղությամբ վաղարշակ թագավորի ձեռնարկած միջոցառումներին: Նրա վկայություններից կարելի է եզրակացնել, որ սկզբնական շրջանում յուրաքանչյուր նախարար կապված է եղել արքունի որևէ պաշտոնի, ծառայության հետ: Այդ ծառայությունը սկզբնաղբյուրներում կոչված է նաև «գործակալություն»[129]: Ն. Ադոնցը իրավացի է, երբ գործակալությունը համարում է ծառայություն և այն անջատում է իշխանությունից[130]: Եթե գործակալությունը իրոք ծառայություն է, ապա այդ երեվույթի զուգահեռը մենք գտնում ենք նաև հելլենիստական աշխարհում, որտեղ պետական ծառայությունը կոչվել է λειτουργία (լիտուրգիա) իսկ այդ ծառայությունը տանող անձնավորությունը՝ λειτουργός (լիտուրգոս): Ըստ մեզ կասկածում, որ առաջին դարի Հայաստանում էս պետական ծառայությունը համարվել է λειτουργία: Դրա ապացույցը մենք տեսնում ենք Գառնիի հունարեն արձանագրության մեջ, որտեղ հանդիպում է λειτουργός բառը: Հունական աշխարհում այս տերմինով արտահայտվում էր այն ծառայությունը (ռազմանավերի շինություն, թատերախմբի ֆինանսավորում, շինարարական աշխատանքներ,

(129) Փավստոս Բուզանդ, Դ, ը: ե, գ: ե, լ: Համմ. նաև Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 63–70: Նույնի, Քննական տեսություն ..., հ. Բ, մաս Ա, էջ 327:

(130) Н. Адонц, Армения ..., էջ 444:

հարկերի գանձում և այլն), որ այս կամ այն պոլիսում իր իսկ միջոցներով կատարում էր որևէ ունևոր քաղաքացի, քաղաքային համայնքի կամ, ընդհանրապես, պետության օգտին: Այս առումով պիտի ճիշտ համարել Թ.վ. Տրեվերի և Գ.Խ. Սարգսյանի տեսակետը, որոնք Գառնիի արձանագրության λειτουργός բառը համարում են արտահայտություն այն բանի, որ հելլենիստական Հայաստան մուտք էր գործել լիտուրգիայի ինստիտուտը[131]:

Այսուհանդերձ, լիտուրգիայի ինստիտուտը ժամանակի ընթացքում, պետական կարգերի փոփոխման գուգընթաց, ենթարկվել է որոշ փոփոխությունների: Եթե Հունաստանի պատմության դասական կոչված ժամանակաշրջանում, երբ պետական կազմակերպության հիմնական և գերակշռող ձևը պոլիսն էր, քաղաք-պետությունը, լիտուրգիայի պարտականությունները համայնքի որոշմամբ դրվում էին այս կամ այն հարուստ քաղաքացու վրա, որի նյութական միջոցները հնարավորություն էին տալիս նրան կատարելու իր վրա դրված պարտավորությունները, ապա հաջորդ շրջանում, երբ պետական կազմակերպության հիմնական ձևը դարձավ հելլենիստական միապետությունը, արդեն թագավորն ինքը այս կամ այն ծառայությունը, լիտուրգիան, հանձնարարում էր այս կամ այն մարդուն (այսպես են հասկացել «Հունարեն մեծ բառարանի» հրատարակիչները՝ Պոլիբիոսի/III, 93, 4) οἱ ἐπί τινα λειτουργίαν ἀπεσταλμένοι հատվածում լիտուրգիա բառը, այն թարգմանելով «ծառայություն, գերատեսչություն, հանրային գործերի վերահսկողություն, որը կատարվում է մեկ ուրիշի հանձնարարությամբ»[132]:

Լիտուրգիայի ինստիտուտի Հայաստան մուտք գործելու առաջին փաստը կարելի է տեսնել Պլուտարքոսի հետաքրքիր մի հաղորդման մեջ: Նկարագրելով Տիգրան Բ-ի ժամանակ Տիգրանակերտի կառուցումը, նա գրում է, որ «ինչպես քաղաքի հասարակ մարդիկ, այնպես էլ իշխանավորները, թագավորին հաճոյանալու նպատակով, իրար հետ մրցում էին քաղաքի կառուց-

(131) К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, т. I, М.-Л., 1953, էջ 183–185: Գ.Խ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, Տեղ. ՀԳԱՀԳ, 1956, Նո 3, էջ 55–56:

(132) Μέγα λεξικόν τῆς Ἑλληνικῆς γλώσσης, ἔκδ. Δημητράκου, Ἀθῆναι, 1951, հատ. 5, էջ 4288, տես λειτουργία 2:

ման և ընդարձակման համար»[133]: Հայաստանում լիտուրգիայի ինստիտուտի հետագա արմատավորման փաստը չի՞ կարելի արդյոք համարել Գառնիի բաղնիքի խճանկար հատակի կենտրոնական մակագրությունը, որտեղ ասված է. Μηδὲν λαβόντες ἠργασάμεθα – «Ոչինչ չստանալով աշխատեցինք»[134]:

Լիտուրգիան, մուտք գործելով Հայաստան, անկասկած, տեղական պայմանների, ինչպես նաև տեղական համանման ինստիտուտների ազդեցության հետևանքով, ստացել է տեղական բնույթ, որն արտահայտվել է թագավորին ծառայելու եղանակով: Հետևաբար, լիտուրգիան հայ իրականության մեջ կարող էր ստանալ թագավորի հանձնարարությամբ հօգուտ պետության կատարվող ծառայության բնույթ: Մենք նշեցինք, որ հայոց թագավորը ազնվականության այս կամ այն ներկայացուցչին հանձնարարում էր այս կամ այն ծառայությունը, որը կոչվում էր «գործակալություն», իսկ պաշտոն ստացողը՝ «գործակալ»: Մեր կարծիքով, հունարեն λειτουργός *և* λιτουργεία *տերմինների բովանդակությունն, այդ դեպքում, ուղղակի համընկնում են հայերեն «գործակալ» և «գործակալություն» տերմինների բովանդակությանը*[135]:

(133) Plutarchi Lucull., XXVI; *Համմ. Գ. Մարգսյան, նշվ. աշխ., էջ* 56:
(134) Б.Н. Аракелян, Гарни II, Ереван, 1957, էջ 30:
(135) *Այդ մասին հանգամանորեն տես՝ Ս.Մ. Կրկյաշարյան, Ես մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, ՊԲՀ, 1965, Նո 3, էջ 235–238:*

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ գտնված համարյա ամբողջ տարածքը աննախընթաց արագությամբ նվաճելուց հետո, հունամակեդոնական գաղութարար նվաճողներին անհրաժեշտ էր հիմնավորապես հաստատվել ոչ հունական «բարբարոս» ցեղերով բնակեցված այդ երկրներում: Ալեքսանդր Մակեդոնացին ու նրա հետնորդները նվաճված երկրների քաղաքական ու տնտեսական յուրացման ճանապարհին ամենաարդյունավետ միջոցը համարեցին ինտենսիվ քաղաքաշինությունը: Եւ ահա, շատ արագ կերպով հին քաղաքների կողքին հայտնվում են նորերը, որոնք ոչ միայն թվով են գերակշռում, այլ հաճախ նույնիսկ տնտեսապես և քաղաքականապես հետին պլան են մղում Արևելքի հինավուրց քաղաքային կենտրոնները:

Անտիկ աշխարհում ամեն մի բնակավայր չէ, որ կարող էր քաղաք համարվել: Հույների պատկերացմամբ, որևէ բնակավայր քաղաք էր համարվում սոսկ այն դեպքում, եթե ուներ քաղաքային ինքնավարության մի շարք օրգաններ, իր հատուկ օրենքները և ֆինանսները: Բացի այդ, քաղաքների մեծ մասի համար հատկանշական էին քաղաքային պարիսպները: Առանց դրան որևէ բնակավայր համարվում էր պարզապես գյուղ (հուն. κώμη):

Մեր կարծիքով, նույնպիսի պատկերացում է եղել նաև Հայաստանում: Մենք այդպիսի ենթադրության հիմքը ուզում ենք տեսնել Վաղարշապատի կառուցման մասին Խորենացու հաղորդման մեջ, որի համաձայն, Վաղարշը «Պատեաց պարսպաւ և զհզոր աւանն վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ ...: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ Նոր քաղաք»[1]:

(1) *Մովսես Խորենացի, Բ, կե:*

Վերոհիշյալ պայմանների ստեղծումով որևէ բնակավայր հեշտությամբ դառնում էր պոլիս, քաղաք։ Դրանով էլ, մասամբ, բացատրվում է քաղաքների այն մեծ թիվը, որոնց հիմնադրումը վերագրվում է Ալեքսանդր Մակեդոնացուն և նրա հետնորդներին։ Հունա-մակեդոնացիների՝ Արևելքում նոր քաղաքներ հիմնելու գործը հեշտանում էր նաև նրանով, որ դեռևս հունա-մակեդոնական նվաճումներից առաջ էլ Արեվելքին անծանոթ չէր պոլիսային կազմակերպության ձևը։ Այստեղ արդեն վաղուց գոյություն ունեին քաղաքներ, որոնց սոցիալական կառուցվածքը մոտիկ էր պոլիսայինի։ Դրանք տաճարային քաղաքներ էին, որոնցում քաղաքացիական կազմակերպությունը համընկնում էր տաճարայինի հետ, կազմելով տաճարա-քաղաքացիական համայնք[2]։ Ուստի, այնքան էլ դժվար չէր լինի Ալեքսանդրին և նրա հաջորդներին, այդ քաղաքների մինչ այդ ունեցած առանձնաշնորհումներն ընդունելով, դրանք վերածել պոլիսի։ Հունա-մակեդոնացիները չէին կարող չօգտագործել այս հնարավորությունը, քանի որ Մակեդոնացու առանց այն էլ ոչ մեծաթիվ զորքը չէր բավականացնի թեկուզ մեկ մեծ քաղաք հիմնադրելուն և բնակեցնելուն, իսկ արշավանքների սկզբնական շրջանում Հունաստանից եկող վերաբնակիչները այնքան էլ մեծ թիվ չէին կազմում, որպեսզի հնարավորություն տային Ալեքսանդրին շատ քաղաքներ հիմնելու և բնակեցնելու։ Ինչպես նշում է Մ.Մ. Դյակոնովը, «Ալեքսանդրի և նրա հաջորդների՝ Ասիայում կիրառած ընդարձակ քաղաքաշինությունը չի կարող բացատրվել սոսկ հունական գաղութացմամբ։ Այդ բոլոր քաղաքները բնակեցնելու չէր բավականացնի ամբողջ Հունաստանի բնակչությունը»[3]։ Մյուս կողմից, քանի որ ինքը՝ Ալեքսանդրը, զբաղված էր հեռավոր տարածությունների վրա պատերազմական գործողություններով, բավականաչափ ժամանակ չէր ունենա նոր քաղաքների հիմնադրմամբ զբաղվելու։ Այդ դեպքում, ինչպե՞ս բացատրել այն փաստը, որ Արևելքում առաջացան Ալեքսանդրի անունը կրող բազմաթիվ քաղաքներ։ Բոլորից հավանականն այն է, որ Ալեքսանդրը տեղական բնակչության բարյացակամությունն ու հավատարմությունը ապահովելու համար, քաղաքական և ռազ-

(2) Г.Х. Саркисян, Самоуправляющийся город Селевкидской Вавилонии, ВДИ, 1952, № 1.

(3) М.М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, стр. 156.

մական նշանակություն ներկայացնող խոշոր բնակավայրերին քաղաքի իրավունքներ էր շնորհում, մեծ մասամբ վերանվանելով դրանք իր իսկ անունով՝ Ալեքսանդրիայի։

Խոսելով ընդհանրապես հելլենիստական աշխարհի կյանքում այդ նոր քաղաքների ունեցած դերի մասին, հելլենիզմի խոշոր մասնագետ պրոֆ. Ա.Բ. Ռանովիչը գրում է. «Թափանցելով հելլենիստական աշխարհի ամենահեռավոր անկյունները, այդ քաղաքները քայքայում էին հասարակական կառուցվածքի հնամենի ձևերը, բերում էին ոչ միայն ուրիշ, ավելի բարձր մշակույթի, այլև տնտեսական տարբեր հարաբերություններ, ապրանքայնությունն սկսում է երևան գալ այնտեղ, ուր նախկինում անբաժան կերպով իշխում էր բնաանտեսությունը։ Այնուամենայնիվ, արևելքի հելլենիստական պետությունների տարածքի վրա այդ քաղաքները ոչ մեծ օազիսներ էին, ընդարձակ մարգերն անհաղորդ էին մնում իրերի նոր դրությանը»[4]։

Հելլենիստական միապետները, առանձնապես Սելևկյան թագավորները, օտար երկրներում իրենց իշխանությունը ամրապնդելու համար հենվում էին գլխավորապես հելլենիստական քաղաքների վրա։ Ուստի շատ բնական է, որ այդ քաղաքները համարվում են արևելյան, ոչ հելլեն, ժողովուրդների վրա հունա-մակեդոնական տիրապետության կենտրոններ։

Քաղաքաշինության ասպարեզում համարյա բոլոր հելլենիստական միապետները հետևեցին իրենց մեծ նախորդի՝ Ալեքսանդր Մակեդոնացու օրինակին, որը իր տերության տարբեր մասերում հիմնել էր իր անունը կրող մի քանի տասնյակ քաղաքներ։ Սակայն Մակեդոնացուն հետևելու տեսակետից առավելապես աչքի ընկան Սելևկյան թագավորները, որոնք ստեղծեցին հելլենիստական քաղաքների մի ամբողջ ցանց։

Մերձավոր Արևելքում առաջացած հունա-մակեդոնական քաղաքները, բնակավայրերը և ռազմական գաղութները, որոնց հիմնադրումը վերագրվում է Սելևկյան թագավորության հիմնադրին և նրա առաջին հաջորդներին, ձգվում էին Միջերկրական ծովի փոքրասիական ափերից մինչև Բակտրիա[5]։ Դրանք ցրված են եղել հյուսիսային Սիրիայում և Եփրատի միջին հո-

(4) А.Б. Ранович, Эллинизм и его историческая роль, М.-Л., 1950, стр. 27.

(5) M.I. Rostovtzeff, SEHHW, էջ 477.

սանքի ուղղությամբ, որտեղ Սելևկոս Ա-ը ստեղծել էր քաղաքների և այլ բնակավայրերի մի ամբողջ խումբ, տալով դրանց մակեդոնական հին տեղանուններ, ինչպես՝ Եդեսսա, Բերրեյա, Պելլա, Պերինթոս, Խալկիս և այլն։ Անտիոքոս Ա-ը Իրանական սարահարթի չուրջը ստեղծել էր քաղաքների կիսաբոլորակ մի ցանց։ Անտիոքոս Բ-ը քաղաքաշինության ասպարեզում իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրեց Փոքր Ասիայի միջով անցնող առևտրական և քարավանային ճանապարհների, հատկապես մերձեփրատյան հանգույցի (Փոքր Ասիայից, Սիրիայից և Հյուսիսային Միջագետքից դեպի Պարսկաստան) ապահովման վրա, այդ ճանապարհի երկարությամբ հունա-մակեդոնական նոր բնակավայրեր և գաղութներ հիմնելու միջոցով[6]։

Պետք նշել, որ հելլենիստական ոչ բոլոր քաղաքներն ու բնակավայրերն էին նորակերտ։ Այս կապակցությամբ պրոֆ. Ա.Բ. Ռանովիչը իրավամբ նշում է, որ «հիմնադիր (κτίστης) կարող էր համարվել նաև նա, ով սոսկ ընդարձակում կամ թեկուզ վերանվանում էր արդեն նախկինում գոյություն ունեցած քաղաքը»[7]։ Հավանական է, որ հին քաղաքը «հիմնադրի» կողմից վերանվանվելով, նրանից ստանում էր նոր՝ պոլիսային կառուցվածք, այլ խոսքով ասած, վերածվում էր ինքնավար քաղաքի։

Այս առիթով հարկ ենք համարում նշել, որ համանման երևույթ նկատելի է նաև հին Հայաստանում։ Այսպես, Գառնիի հունարեն արձանագրության մեջ խոսվում է այն մասին, որ Մեծ Հայքի թագավոր Տրդատը թագուհու համար կառուցեց (AIKTIΣEN – պետք է լինի՝ EKTIΣEN) անառիկ ամրոց[8]։ Հնագիտական պեղումները[9], ինչպես նաև Տակիտոսի հաղորդումները մ.թ. 40–50-ական թվականներին Գառնիի բերդապարիսպների տակ տեղի ունեցած պատմական իրադարձությունների մասին[10],

(6) M. Gary, A History of the Greek World from 323 to 146 B.C., London, 1932, p. 258.

(7) А.Б. Ранович, Նշվ. աշխ. էջ 98, ծանոթ. 1։

(8) Ս.Մ. Կրկյաշարյան, Եւս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, էջ 235–236։

(9) Б.Н. Аракелян, Гарни I, Ереван, 1951.

(10) Taciti Annales, XII, 45, որտեղ նշված է, թե դեռևս 51 թ. Հայաստանում թագավորող Միհրդատ Իբերացին ամրացել էր Գառնի բերդում (in castellum Gorneas), որի վրայ հարձակվել էր նրա եղբորորդի Հռադամիզդը։

ցույց են տալիս, որ Տրդատ Արշակունին ոչ թե հիմնադրել կամ կառուցել է Գառնի ամրոցը, այլ, պարզապես, վերակառուցել է հինը։ Այս վերջին հանգամանքը այնքան ակնհայտ իրողություն է, որ Հ.Հ. Մանանդյանը, անդրադառնալով Գառնիի հունարեն արձանագրությանը, նույնիսկ անիմաստ է համարում այնտեղ հաճախակի կարդացվող «կառուցեց» արտահայտությունը և առաջարկում է այն ուղղել՝ «վերստին կառուցեց»[11]։

Քաղաքների հիմնադրմամբ և քաղաքային կյանքի զարգացման խրախուսմամբ դեռևս սկսվում էր միայն հելլենիստական միապետների գործունեությունը քաղաքաշինության բնագավառում։ Թագավորների համար տակավին անհրաժեշտ էր այդ քաղաքները յուրացնել քաղաքականապես և տնտեսապես ու միավորել դրանք իրենց տերության կազմում։ Սակայն թագավորներին այդպես էլ չհաջողվեց վերջնականապես հարթել հարաբերությունները քաղաքների հետ և վերջիններիս դնել լրիվ ստորադրյալ վիճակում։ Խուլ հակամարտությունը թագավորական իշխանության և քաղաքային ստրկատիրական համայնքի միջև չէր դադարում, բայց քանի որ երկու կողմերը փոխադարձաբար կապված էին ընդհանուր շահերով, ապա բանը չէր հանգում պատակոման։ Քաղաքը իրեն կցագրված հողային տարածության վարչա-քաղաքական ու տնտեսական կենտրոնն էր։ Այդ շրջանի բնակչությունը քաղաքային գանձարանին մուծում էր ամենամյա կանոնավոր հողահարկ, որի աւյուծի բաժինը, բնականաբար, մտնում էր թագավորական գանձարանը։ Հետևաբար, հելլենիստական միապետությունների տարածքի վրա գտնվող քաղաքները պետք է որ երկակի դեր խաղային, այն է՝ պետության համար ապահովեին նյութական եկամուտ և կենսագործեին տվյալ տարածքի քաղաքական ու տնտեսական վերահսկողությունը։ Քաղաքային համայնքի (տեղական իշխանություն) և թագավորի (կենտրոնական իշխանություն) սոցիալական ու տնտեսական շահերը համընկնում էին։ Երկու կողմերն էլ ձգտում էին հնազանդ պահել անմիջական արտադրողների ճնշված զանգ-

(11) Հ.Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, էջ 6։ Հ.Հ. Մանանդյանը հետագայում ևս պաշտպանում էր նույն տեսակետը (Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, Տես՝ ՀԳԱՀԳ, 1951, Նո 4, էջ 13)։

վածներին, տորուկներին և կիսակախյալ, ոչ լիիրավ հողագործներին։ Քաղաքային համայնքը, որպես տերկատերերի դասակարգի չհագործող լայն կազմակերպություն, հանդիսանում էր տերկատիրական պետության սոցիալական կարևորագույն հենարանը։ Մյուս կողմից, քաղաքների համար միանգամայն ձեռնտու էր ընդգրկվելու միասնական խոշոր տերության կազմում, որը կարող էր լավագույնս ապահովել տերկատեր քաղաքացիների առևտրական և այլ շահերը[12]։ Փոխադարձ շահերի այս համընկնումը հելլենիստական աշխարհում քաղաքների աճի ու քաղաքային կյանքի զարգացման ուղղությամբ թագավորների ցուցաբերած հոգատարության պատճառներից մեկն էր։

Մինչ այդ պատմությանը դեռևս հայտնի չէին ուժեղ կենտրոնական իշխանություն ունեցող պետական այսպիսի խոշոր միավորումներ։ Արևելքի հելլենիստական միապետները, որոնք կտրված գտնվեցին Հունաստանի մայր հողից, հույների համար օտար երկրում ստիպված էին հենց այդպիսի պետություն ստեղծել։ Այս նպատակի կենսագործման համար նրանք կարիք ունեին հելլենական կայուն և ուժեղ հենարանի։ Ահա թե ինչու նրանք լայն բաց արեցին իրենց տերության դռները հունական բոլոր տարրերի առաջ, որոնք տարբեր պատճառներով լքում էին Հունաստանը և բնակություն հաստատում Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում։ Այդ տարրերից առավել չափով աշխատում էին օգտվել Սելևկյանները, աննախընթաց աշխուժություն ծավալելով քաղաքաշինության ասպարեզում։ «Սելևկյանների պետությունը, – գրում է վ. Տարնը, – պետք է խարսխվեր առավել կամ պակաս հելլենական բնույթ ունեցող քաղաքների և բնակավայրերի ընդարձակ ցանցի վրա։ Հունական պոլիսը նրանց թվում էր միակ հնարավորությունը ասիական զանգվածների միջև կայուն պետություն ստեղծելու համար։ Սելևկյանների հիմնած բնակավայրերից որո՞նք էին իրականում «պոլիսներ», միշտ չէ, որ հնարավոր է լինում վստահաբար հաստատել։ Բայց, հավանական է, որ բնակավայրերի մակեդոնական կամ դինաստիական անունները ցույց են տալիս դրանց հունական պոլիսային կազմակերպությունը և իրավունքները։ Հնարավոր է, որ Ալեքսանդրի հիմնած քաղաքները նույնպես դառնում

(12) М.М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, էջ 170-172։

էին լիիրավ պոլիսներ ...։ Երբ տեղական քաղաքն ստանում էր դինաստիական անվանում, դա նշանակում էր, որ այն նորից էր «հիմնված» իբրև լիովին հունական պոլիս, մի հանգամանք, որը իր հետ բերում էր էական փոփոխություններ»[13]։

Առաջին Սելևկյանների ինտենսիվ քաղաքաշինությունը մեկն էր այն միջոցառումներից, որոնք կոչված էին հեշտացնելու իրենց լայնատարած և բազմաբեղետ տերության միասնականացման ընդհանուր պրոցեսը։ Քաղաքաշինությունը և արևելյան քաղաքներին պոլիսային ստատուս չնորհելը, մյուս կողմից, նպատակ ուներ դեպի Արևելք հրապուրել նորանոր հունա-մակեդոնական գաղութարարների։ Արևելյան քաղաքներին պոլիսային ստատուս չնորհելով, Սելևկյան առաջին թագավորները ձգտում էին, և այդ նրանց հաջողվում էր, ապահովել այդ քաղաքների չեզոքությունը և, հետագայում, հնազանդությունը։ Դրան զուգընթաց «Արևելքի առևտրական քաղաքները և, առաջին հերթին, բնակչության հարուստ խավերը արագորեն հելլենականանում էին, դառնալով հենարան նվաճողների համար»[14]։

Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդների, հատկապես Սելևկյանների, քաղաքաշինության ասպարեզում ծավալած գործունեությամբ նշագծվում է նոր երևույթ քաղաքների առաջացման պատմության մեջ։ Եթե մինչ այդ քաղաքները, ինչպես բուն Հունաստանում, այնպես էլ Արևելքում, առաջանում էին տարերայնորեն, ապա Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով և նրա հաջորդների տիրապետությամբ սկսվում է թագավորների անմիջական միջամտությունը, որոնք այս ու այնտեղ հիմնում էին նոր քաղաքներ և բնակավայրեր։

Ինչո՞ւ Ալեքսանդրը և նրա հաջորդները այդպիսի ջանասիրությամբ քաղաքներ էին հիմնում։ Քաղաքները նրանց հարկավոր էին ոչ միայն որպես քաղաքական և ռազմական, այլև տնտեսական, սոցիալական և մշակութային հենարաններ։ Արևելքի հունական քաղաքների օժանդակությունն ապահովելու ճանապարհին Ալեքսանդրի և նրա հաջորդների կատարած առաջին քայլը այդ քաղաքների «ազատության» (ἐλευθερία) ճանաչումն էր։ Ընդհանրապես քաղաքներին արտոնություններ չնորհելու միջոցով դրանցում հենարան ապահովելու ձգտումը,

(13) В. Тарн, Эллинистическая цивилизация, М., 1949, էջ 143։
(14) А.Б. Ранович, Նշվ. աշխ., էջ 24։

սակայն, օբյեկտիվորեն բախվում էր այն փաստի հետ, որ քաղաքների ինքնավարությունը (αὐτονομία) և պոլիսային կազմակերպությունը խախտում էին այս կամ այն հելլենիստական պետության վարչական միասնությունը։ «Ազատություն» հասկացությունը, որպես հունական պոլիսների քաղաքական ազատություն, արդեն անհամատեղելի էր հելլենիստական միապետի բացարձակ իշխանության հետ։ Հունական քաղաքի նմանօրինակ ազատության ճանաչումը, վերջին հաշվով, կնշանակեր իշխանության թուլություն այն թագավորի, որի տիրության սահմաններում գտնվում էր տվյալ քաղաքը, ուստի և պոլիսի նույնիսկ սահմանափակ ազատության ճանաչումը թագավորը դիտում էր որպես մեծ զիջում, որպես կորուստ[15]։ Քաղաքների ազատությունը հելլենիզմի շրջանում այլևս նման չէր նախկինում սուվերեն քաղաքի ազատությանը։ Այժմ ազատությունը սահմանափակվում էր, լավագույն դեպքում, քաղաքի ներքին ինքնավարությամբ։ Քաղաքների այդպիսի «ազատությունը՝ ամեն անգամ հուչակվում էր միապետի հատուկ հրովարտակով, ուղղված քաղաքին[16]։

Սելևկյանների տիրապետության վերջին շրջանում, երբ կենտրոնական իշխանությունը ժամանակի ընթացքում հետզհետե թուլանում էր, թագավորն ստիպված էր լայնորեն ճանաչել քաղաքների ազատությունը, ոչ միայն վերադարձնելով նրանց նախկին արտոնությունները, այլև նորերը շնորհելով։

H. Seyrig-ը ուսումնասիրելով Սելևկյան թագավորության մեջ հատված դրամները, պարզել է, որ Սելևկյանների տիրապետության տակ եղած մի շարք քաղաքներ գրկված են եղել ἐλευθερία «ազատություն» կոչված արտոնությունից։ Այդ քաղաքները ἐλευθερία ստացել են միայն Տիգրան Բ-ի կողմից մ.թ.ա. 81 թ., այն բանից հետո, երբ հայոց թագավորը նվաճել է Սելևկյանների երկիրը և գահակալել է Անտիոքում։ Այդ արտոնության հետ պայմանավորված էր այն հանգամանքը, որ հիշյալ

(15) Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 48–55։

(16) Նույն տեղում, էջ 53 և հաջ.։

քաղաքները իրավունք են ստանում հատելու սեփական դրամ[17]։

Այդ քաղաքներն արդեն ընդգրկված լինելով այս կամ այն հելլենիստական պետության կազմում, հասկանալի է, որ չէին կարող ինքնուրույն, սուվերեն պետական միավորումներ լինել և, հետևաբար, վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն։ Անդրադառնալով Սելևկյան պետության քաղաքների ինքնավարության հարցին, Ն.Վ. Պիգուլևսկայան նշում է. «Պոլիսները, քաղաքներն իրենց ինքնավարությամբ, թուլլ արձագանգն էին քաղաք-պետությունների[18]։ Հելլենիստական թագավորների հետ քաղաքների ունեցած հարաբերությունների հարցին նվիրված մեր ուսումնասիրության մեջ մենք ցույց ենք տվել, որ այդպիսին էր դրությունը նաև հելլենիստական մյուս միապետություններում[19]։

Հելլենիստական տերությունների կազմում ընդգրկված ինքնավար քաղաքներն, անկասկած, ունեին ինքնավարության իրենց տարբեր օրգանները։ Այդ օրգաններից մեկի կամ մյուսի առկայությունը կամ բացակայությունը ցուցանիշ էր տվյալ քաղաքի վայելած այս կամ այն չափի ինքնավարության։ Ֆ.Բ. Ուելլսի կողմից հրատարակված միապետների՝ քաղաքներին ուղղված նամակներում իրենց արտահայտությունն են գտել թե՛ այդ քաղաքների ինքնավարությունը կենսագործող օրգանները և թե՛ այդ ինքնավարության աստիճանը։ Այդ նամակների առաջին տողերում միապետի՝ քաղաքին դիմելու եղանակն էլ բացայայտում է տվյալ քաղաքի ինքնավարության բնույթը և միապետից ունեցած նրա քաղաքական ու տնտեսական կախվածության աստիճանը։ Թագավորի՝ քաղաքներին ուղղած 46 նամակների մեջ բոլորից հաճախ հանդիպող «քաղաքային խորհրդին և համայնքին» դիմելու եղանակի կողքին երկու անգամ հանդիպում է ուղերձ «իշխանավորներին և խորհրդին և համայնքին» (τῇ βουλῇ καί τῷ δήμῳ), երկու անգամ՝ «իշխանավորներին և քաղաքին» (τοῖς ἄρχουσι καί τῇ πόλει) և մեկական անգամ դիմում՝ «համայն-

(17) H. Seyrig, Antiquitées syriennes, 42. Sur les éres de quelques villes de Syrie, "Syria", 1940, էջ 26 և հաջ.։ Տես նաև Գ.Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 50։

(18) Н.В. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, М.-Л., 1956, стр. 106.

(19) Գ.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 49 և հաջ.։

քին» (τῷ δήμῳ), «Հոնիական լիգային» (Ἰώνων τῷ κοινῷ) և, «քաղաքին ու ծերերի խորհրդին» (τῇ πόλει καί τοίς γεραιοίς)։

Հելլենիստական այս կամ այն միապետության կազմում ներգրավված հելլենիստական տիպի քաղաքների ինքնավարության վերոհիշյալ օրգանները – համայնք, քաղաքային խորհուրդ, իշխանավորներ, ծերերի խորհուրդ – անցյալի սուվերեն քաղաք-պետության, պոլիսի, նույնանուն օրգանների արձագանգներն էին լոկ։ Շատ քաղաքներում, ինքնավարության նշված օրգանների կողքին, կային նաև էպիստատեսներ, վերակացուներ (ἐπιστάτης)[20], որոնք թագավորական իշխանության ներկայացուցիչներն էին տեղերում և առաքելություն ունեին հետևելու թագավորական շահերի պաշտպանությանը տվյալ քաղաքում։ Հելլենիստական քաղաքներում էպիստատեսի հայտնվելը, արդեն, նոր երևույթ էր քաղաքային կյանքում, պայմանավորված կենտրոնական իշխանության ուժեղացման հետ։

Խոսելով հելլենիստական թագավորների կողմից քաղաքներում նշանակված վերակացուների մասին, Գ.Խ. Սարգսյանը նշում է, որ նրանց «ֆունկցիաները մեզ ոչ լրիվ են հայտնի և, հավանաբար, տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում միանման չեն եղել։ Բայց, ըստ երևույթին, հարկ եղած պահին վերակացուն կարող էր քաղաքային խորհրդին ու ժողովրդական ժողովին թելադրել թագավորի կամքը»[21]։ Ի դեպ նշենք, որ հին Հայաստանի քաղաքներում ևս եղել են հայոց թագավորի կողմից նշանակված վերակացուներ, որոնք, ինչպես նկատում է Գ.Խ. Սարգսյանը, բացի քաղաքականից, ունեին նաև զինվորական իշխանություն[22]։ Այդ երևույթը վկայող առնվազն երկու փաստ կա սկզբնաղբյուրներում. առաջինը՝ Պլուտարքոսի հաղորդումն է այն մասին, որ Մծբին քաղաքի վրա նշանակված էր Տիգրանի եղբայր Գուրասը[23]։ Երկրորդ փաստը հանդիպում է Խորենացու մատյանի այն հատվածում, որտեղ նկարագրվում է Տիգրանակերտի բնակիչների դիմադրությունը պարսից Շապուհ արքային։ Պատմահայրը գրում է. «Կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գումարտակ գնդաւ. քանզի Անտիոք նահապետ Սիւնեաց,

(20) Polyb., V, 48, 12 և V, 60, 1։
(21) Г.Х. Саркисян, Тигранакерт, էջ 11։
(22) Նույն տեղում, էջ 98–100։
(23) Plutarchi Lucullus, XXXXII.

որ էր աներ Արշակայ և վերակացու քաղաքին, հրամայեաց աղխել ընդդէմ Շապհոյ»[24]։ Այս հատվածի «վերակացու» բառը լիովին համապատասխանում է հունարեն ἐπιστάτης բառին և վերջինիս ճշգրիտ պատճենավորումն է հայերեն թարգմանությամբ (ἐπι = վերա, իսկ στάτης-ի արմատը ἵστημι = «կանգնել» բայն է)։

Այս հարցին անդրադարձել է նաև Ս.Տ. Երեմյանը, որի կարծիքով, Հայաստանի քաղաքներում թագավորի նշանակած աստիճանավորը կոչվել է «չահապ» և որը պարտավոր էր հարկեր հավաքել քաղաքի առևտրից և արհեստներից[25]։ Գ. Սարգսյանը հավանական է համարում, որ քաղաքի կառավարչին տրված «չահապ» տիտղոսը միաժամանակ գոյություն է ունեցել «վերակացու» տիտղոսի կողքին[26]։

Հելլենիստական քաղաքի ինքնավարությունը սահմանափակվում էր ոչ միայն էպիստատեսի ներկայությամբ, այլև նրանով, որ քաղաքում հաճախ կանգնում էին թագավորական կայազորներ։ Մյուս կողմից, քաղաքների իրավունք էր վերապահված անմիջական չփման մեջ մտնել թագավորի հետ, հարկ եղած դեպքում նրա մոտ ուղարկելով իրենց դեսպաններին[27]։ Նրանց խնդրանքին տրված թագավորի պատասխանը սովորաբար չափադրվում էր քաղաքային ինքնավարության մարմիններին ուղղված նամակի ձևով, որն ունենում էր կարգադրության, հրամանի ուժ։ Հելլենիստական քաղաքների իրավագրկությունը հատկապես զգալի էր արտաքին հարաբերությունների ասպարեզում։ Ջունենալով արդեն իրենց ինքնուրույն բանակը, այս հարցում նրանք ստիպված էին լիովին ենթարկվել միապետի կամքին։ Իրենց ներքին ինքնավարության վերաբերյալ հարցերը ևս լուծելիս, քաղաքային համայնքն ու խորհուրդը, ինչպես նաև մյուս մարմինները, առաջին հերթին պարտավոր էին հաշվի նստել միապետի կամքի, նրա «խորհրդի» հետ։

Արևելքի հելլենիստական քաղաքներն իրենց իրավական դրությամբ, արդեն խստորեն տարբերվում էին հին հունական սուվերեն պոլիսներից, քաղաք-պետություններից։ Փոխհարաբե-

(24) *Մովսես Խորենացի*, Գ, իգ։
(25) С.Т. Еремян, Развитие городов и городской жизни ..., էջ 25.
(26) Г.Х. Саркисян, Նշվ. աշխ., էջ 98, ծան. 45։
(27) C.B. Welles, RC, 2, տողեր 6–9, 15, 22, 26, 31–35 և հաջ.։

րությունները այդ քաղաքների և հելլենիստական թագավորների միջև իրենց արտահայտությունն են գտել ինչպես գրավոր աղբյուրներում, այնպես էլ արձանագրություններում հանդիպող - ἐλευθερία (ազատություն), αὐτονομία (ինքնավարություն), ἀτέλεια (ապահարկ դրություն), ἀφορολόγητος (հարկերից ազատ), ἀσυλία ապաստանի իրավունք), ἀφρούρητος (կայազորից ազատ), ἀνεπιστάθμευτος (օթևան տրամադրելու պարտավորություններից ազատ) տերմիններում, որոնց ռեալ բովանդակությունը փոխվում էր թագավորական իշխանության ուժեղացումով կամ թուլացումով: Կենտրոնական իշխանության ուժեղացումով քաղաքների արտոնությունները սահմանափակվում էին: Մյուս կողմից, քաղաքներն ամեն կերպ ձգտում էին օգտվել թագավորական իշխանության ամեն մի թուլացումից, հնարավորին չափ ավելի ազատություն և ինքնուրույնություն ձեռք բերելու համար: Այդ էլ հանդիսանում էր թագավորների և քաղաքների միջև գոյություն ունեցող խուլ պայքարի բովանդակությունը հելլենիստական աշխարհում: Սակայն բանը չէր հանգում բացահայտ խզման: Նրանց միջև պատակտումը կանխվում էր նրանց դասակարգային, քաղաքական, հաճախ և անտեսական շահերի ընդհանրության պատճառով:

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Առաջավոր Արևելքի երկրներում քաղաքաշինության ստացած աննախընթաց թափն ընդգրկեց նաև Հայկական լեռնաշխարհը:

Հայկական լեռնաշխարհում առաջին քաղաքներն առաջացել էին դեռևս նախահայկական, ուրարտական ժամանակաշրջանում: Այդ շրջանից հայտնի են ուրարտական պետության մայրաքաղաք Տուշպան (այժմ Վան), Վանա լճի արևելյան ափին, Արգիշտիխինիլին՝ ուրարտացիների վարչա-ռազմական կենտրոնը հյուսիս-արևելքում, Այրարատյան դաշտում, և բազմաթիվ այլ քաղաքներ:

Ուրարտական քաղաքները ռազմա-վարչական և պաշտամունքային կենտրոններ լինելով հանդերձ, ունեցել են նաև խոշոր տնտեսական նշանակություն: Այդ մասին են վկայում Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) և Արին-բերդի (Երեբունի) պեղումները[28]: Ուրարտական պետության վերջնական անկումից հետո

(28) Б.Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944; Նույնի, Ванское царство, М., 1959; А.А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961.

(մ.թ.ա. VI դարի սկիզբ) աստիճանաբար իրենց նշանակությունը կորցնում են նաև այդ քաղաքները:

Հայկական բարձրավանդակում մի շարք նոր քաղաքների (Արմավիր, Արշամաշատ, Երվանդաշատ, Արտաշատ, Կարկաթիկերտ, Տիգրանակերտ և այլն) առաջացումը և զարգացումը մ.թ.ա. III-I դարերում, կապված էր մի կողմից անկախություն և ազատություն ձեռք բերելուց հետո երկրի ներսում արտադրողական ուժերի աճման և, մյուս կողմից Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Արևելքում նկատված քաղաքային կյանքի աչքառու աճման հետ: «Հայաստանի համար, – գրում է Ս.Տ. Երեմյանը, դա տնտեսական մասնավոր սեփականության և ապրանք-դրամային շրջանառության զարգացման ժամանակաշրջան էր, գյուղատնտեսությունից արհեստների անջատման և միջազգային ապրանքափոխանակության, միջազգային քարավանային առևտրի մեջ Հայաստանի ներգրավման ժամանակաշրջան, որն իր հերթին խթանում էր ապրանքային արտադրության զարգացումը»[29]:

Աքեմենյան տիրապետության անկումից հետո, Հայաստանում ստեղծվեցին նպաստավոր պայմաններ արտադրողական ուժերի հետագա զարգացման համար: Հատկապես դրա մեջ է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների առաջադիմական նշանակությունը Հայաստանի համար: Աքեմենյանների վերջնական տապալումից հետո, հայկական ցեղերով բնակեցված երկրները քաղաքական անկախություն ձեռք բերեցին: Մյուս կողմից, Մակեդոնացու ստեղծած միապետությունը, Արևմուտքն ու Արևելքը միավորելով մեկ իշխանության տակ, լայն հնարավորություն ստեղծեց միջազգային առևտրի հետագա զարգացման համար, որի հիմնական մայրուղիները Արևելքում անցնում էին Հայաստանի միջով: Բնական է, որ քարավանային այդ առևտրի հանգուցային կենտրոնը դառնալու էր երկրի վարչա-քաղաքական կենտրոնը, որպիսին էր Արմավիրը, Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում, Այրարատյան դաշտում, որը դարձել էր Երվանդունիների նորաստեղծ պետության քաղաքական ու պաշտամունքային կենտրոնը:

Արմավիրի, ինչպես նաև մի շարք ուրիշ քաղաքների առաջացումը Հայաստանում պատահական երևույթ չէր: Վաղ

(29) С.Т. Еремян, Развитие городов и городской жизни ..., էջ 11:

հելլենիստական շրջանում, ինչպես տեսանք, սկսվել էր հայկական էթնիկական տարրերի համախմբման պատմական պրոցեսը, որը բացել էր ընդհանրապես Հայաստանի համար տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման ժամանակաշրջան։ Միջազգային առևտուրը և տիրող դասակարգի աճող պահանջները խթանում էին արտադրողական ուժերի զարգացումը, աշխատանքի հասարակական բաժանումը և ապրանքային արտադրության զարգացումը։ Դրա պերճախոս վկայությունը պիտի համարել հելլենիստական աշխարհն ընդգրկած ինտենսիվ քաղաքաշինությունը։ Ահա թե ինչպես է բնութագրում Կ. Մարքսը առևտրի՝ քաղաքային կյանքի զարգացման հետ ունեցած փոխադարձ կապը. «... Երբ քաղաքային արդյունաբերությունն իրեն այդպիսին անջատվում է հողագործականից, նրա արդյունքները հենց այն գլխից երևան են գալիս իբրև ապրանքներ, և ուրեմն նրանց վաճառքի համար առևտրի միջնորդության պահանջ է զգացվում։ Ըստ այնմ, առևտրի հենվելը քաղաքի զարգացման վրա և մյուս կողմից վերջինիս պայմանավորվածությունը առևտրով այստեղ հասկանալի են ինքնըստինքյան»[30]։

Մովսես Խորենացու մի շարք վկայությունների հիման վրա կարելի է ենթադրել, որ հնագույն ժամանակներում, դեռևս Արտաշեսյան թագավորության հաստատումից առաջ, Արմավիրից բացի, Հայաստանում գոյություն ունեին ուրիշ խոշոր բնակավայրեր ևս, ինչպես Աշտիշատը, Անի-Կամախը, Երիզան, Բագահաուիճը, Թիլը, որոնք, Արմավիրի նման, միաժամանակ եղել են պաշտամունքային կենտրոններ[31]։ Նրանցից և ոչ մեկը Խորենացու մոտ չի անվանվում քաղաք, այլ սոսկ գյուղ կամ ամրոց։ Շատ հավանական է, սակայն, որ այդ կենտրոններից գոնե մեկը՝ Աշտիշատը մի ժամանակ եղել է քաղաք, քանի որ ինքը՝ Աշտիշատ անունը նշանակում է «զոհերի քաղաք»։

Երվանդունի թագավորների ժամանակ Մեծ Հայքում առաջանում են Արմավիր ու Երվանդաշատ մայրաքաղաքները։ Մոփքում՝ Զարեհյանների թագավորությունում հայտնի են դառնում Արշամաշատ և Արկաթիակերտ (կամ Կարկաթիակերտ) քաղաքները։ Հայաստանում քաղաքաշինության ամենափայլուն շրջանը պիտի համարել Արտաշեսյանների թագավորության տա-

(30) Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մաս 1, Երևան, 1947, էջ 319։
(31) Մովսես Խորենացի, Բ, ժբ-ժդ։

րիները։ Հայկական հողերի միավորումը մեկ տիրակալի իշխանության տակ այդ ժամանակաշրջանում նպաստում էր տնտեսական և մշակութային կապերի ամրապնդմանը երկրի ներսում և առևտրական հարաբերությունների հետագա զարգացմանը հարևան երկրների հետ։ Այս էլ, իր հերթին, խթանում էր Հայկական լեռնաշխարհում մի շարք նոր քաղաքների առաջանալուն։ Այդ քաղաքներից ամենակարևորներն էին քաղաքամայր Արտաշատն ու Տիգրանակերտը, հետագայում նաև Վաղարշապատը[32]։

Անտիկ հեղինակների տվյալները հնարավորություն են տալիս պարզորոշ կերպով հետևելու քաղաքաշինության պրոցեսին հելլենիստական աշխարհում և առանձնացնելու այդ պրոցեսի երկու տարբեր փուլեր։ 1) Քաղաքների տարերային առաջացման փուլ. 2) Թագավորի կողմից կիրառվող քաղաքաշինության փուլ։ Հին Հայաստանում քաղաքաշինության գործը հիմնականում գտնվում էր թագավորի ձեռքին։ Քաղաքի շինարարության գործում Հայաստանի ազատ բնակչության մասնակցության մասին միակ ակնարկը Պլուտարքոսի այն խոսքերն են, թե «ամեն մի հասարակ մարդ և իշխանավոր, թագավորին հաճոյանալու նպատակով, իրար հետ մրցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման համար»[33]։

Հայաստանում նոր քաղաքներ կառուցելիս Արտաշեսյանները (հատկապես Արտաշեսն ու Տիգրան Բ-ը) կիրառել են հելլենիստական աշխարհում լայնորեն տարածված քաղաքների բնակեցման հատուկ եղանակ, որը հայտնի է որպես սինոյկիսմոս (συνοικισμός = համատեղ բնակեցում)։ Այս հարցին մենք նվիրել ենք առանձին ուսումնասիրություն[34]։

Ի՞նչ նպատակներ էին հետապնդում Հայաստանի թագավորները նոր քաղաքներ կառուցելով։ 1) Համախմբել տիրող դասակարգը, որը հանդիսանում էր թագավորական իշխանության հիմնական հենարանը։ 2) Զարկ տալ Հայաստանում առևտրի ու արհեստների զարգացմանը այն պատճառով, որ առևտուրը հսկայական եկամուտ էր բերում արքունի գանձարանին, իսկ

(32) Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 79-127։
(33) Plutarchi Lucullus, XXVI.
(34) Ս.Մ. Կրկյաշարյան, Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, Նո 1, էջ 107-118։

արհեստների զարգացումը քաղաքներում խթանում էր առևտրի հետագա զարգացմանը։ 3) Քաղաքներ կառուցելով, Հայաստանի թագավորները ձգտում էին արմատավորել հելլենիստական առավել առաջավոր մշակույթը, որն իր հերթին պետք է որ ծառայեր ամբողջ հայկական հասարակության մշակութային առաջընթացին, դրանով իսկ հանդիսանար գաղափարական զենք Հռոմի էքսպանսիայի դեմ պայքարելիս։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մենք արդեն հանգամանորեն խոսել ենք Հայաստանում Երվանդունի (մ.թ.ա. IV-III դդ. վերջ), ինչպես նաև Արտաշեսյան (մ.թ.ա. II դ. սկիզբ – մ.թ.ա. I դ. վերջ) գահակալների թագավորական իշխանության առաջացման, այդ թագավորների դերի և սատրապությունների հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների մասին։ Խոսել ենք այն աստիճանական զարգացման մասին, որ անցել է երկրում գերագույն իշխանության կրողի իրավասությունը, սկսած հայկական անդրանիկ «թագավորության» առաջացման ժամանակներից (մ.թ.ա VI դար) մինչև Արտաշեսյանների բուռն վերելքի շրջանը, մինչև Տիգրան Բ-ը։

Հին Հայաստանի պետական ապարատի ուրվագծումը, ինչ խոսք, կարևոր շատ կետերում թերի կմնար, եթե չանդրադառնայինք Արշակունյաց ժամանակաշրջանի Հայաստանին, դոնե այդ թագավորության առաջին շրջանին վերաբերող մի շարք էական հարցերին։

Անժխտելի է, որ Արշակունի թագավորների դերն ու ֆունկցիաները Հայաստանում որոշակիորեն տարբերվել են նրանց նախորդած հարստության գահակալների ունեցած իրավասություններից։ Այդ փոփոխությունները, մեր կարծիքով, հիմնականում պայմանավորված են եղել մի կողմից երկրի արտադրողական ուժերի ընդհանուր զարգացման հիման վրա սոցիալ-տնտեսական նոր, առավել բարձր հասարակական հարաբերությունների առաջացումով, մյուս կողմից՝ դաժան փորձություններից հետո Հայաստանում Արշակունիների թագավորության հաստատման ռազմա-քաղաքական հանգամանքներով, որոնք մանրամասն շարադրված ու մեկնաբանված են հայագետների՝ ընդ-

հանրաճանչող բնույթի աշխատություններում[1]. ուստի և մենք ավելորդ ենք համարում անդրադառնալ այդ հարցերին:

Տիգրան Մեծից, հատկապես նրա որդի և հաջորդ Արտավազդ Բ-ից հետո մինչև Հայաստանում Արշակունիների թագավորության հաստատումը ընկած մոտ հարյուրամյա ժամանակահատվածը, Արտաշեսյան արքայատոհմի վերջին ներկայացուցիչներն, ըստհանրապես, իրրև ժամանակի այս կամ այն առավել հզոր երկրի կողմից դրածո գահակալներ, ոչ կարողացել են ինքնուրույն ներքին և արտաքին քաղաքականություն վարել, ոչ իսկ երկրի ներսում որևէ հեղինակություն ու հենարան ունեցել[2]: Ասենք, նրանք այդ ուղղությամբ մտածելու և որևէ բան ձեռնարկելու ժամանակ անգամ չեն ունեցել, քանի որ գահի վրա հաջորդել են իրար գեղադիտակի արագությամբ: Բավական է նշել, որ այդ կարճ ժամանակահատվածում Հայաստանի գահն իր տիրոջ վտոխել է չուրջ երկու տասնյակ անգամ:

Մակայն իրավիճակը, կարելի է ասել, արմատապես փոխվեց Տրդատ Արշակունու ժամանակ: Վայելելով իր եղբոր՝ Պարսկաստանի եռանդուն արքա Վաղարշ Ա-ի (51–75 թթ.) բազմակողմանի աջակցությունը և հենվելով հայ-պարթևական միացյալ ռազմական ուժերի վրա, նա, տասնամյա համառ մարտերից հետո, կարողացավ քայլ առ քայլ դուրս մղել Հայաստանից հռոմեական լեգեոներներին և վերականգնել թագավորական իշխանության ամբողջ հեղինակությունն իր իսկ զենքով վերանվաճված երկրում:

Տրդատը ոչ միայն հնարամտորեն օգտագործեց հայ-պարթևական ռազմա-քաղաքական հնարավորությունները հայկական գահին տիրանալու համար, այլև կարողացավ զենքի միջոցով պարտադրել աշխարհատեր Հռոմի գոռոզ կայսրին՝ Ներոնին, ճանաչել իրեն Հայաստանի թագավոր: Դեռ ավելին. Տրդատի ռազմական հաջողությունների հետևանքը եղավ այն, որ Հայաստանի (ինչո՞ւ միայն Հայաստանի) թագավորներից և ոչ մեկը այնքան չուքով ու հանդիսավորությամբ չընդունվեց «հավերժական քաղաքում» և այնտեղից այնքան պատիվներով ու պարգևներով ծանրաբեռ չվերադարձավ, ինչքան Տրդատ Արշակունին: Մեր այս ասածի պերճախոս վկաներն են իրենք իսկ դեպքերին ժամանակակից հռոմայեցի մատենագիրները, որոնք մանրամասնորեն և վառ գույներով նկարագրել են Տրդատի և նրա չքախմբի ուղեվորությունը Հռոմ, այնտեղ նրան ցուց տրված ընդունելությունը, նրա թագադրումը Ներոնի ձեռքով և վերադարձը[3]: Այդպիսով, 66 թվականին Հայաստանում վերջնականապես հաստատվում է Արշակունիների հայկական ճյուղի իշխանությունը և Հայաստանն այնուհետև դառնում է պարթև Արշակունիների երկրորդ թագավորությունը (secundogenitur):

Տրդատ Ա-ից բացի մեզ հայտնի չէ և ոչ մեկ ուրիշ թագավոր Հայաստանում, որի գահը հենված լիներ այնպիսի հաստատուն եռոտանու, ինչպիսին էր հայ ժողովրդի աջակցությունը, պարսկական արքունիքի հովանավորությունը և Հռոմի կայսեր հավանությունը: Այս հանգամանքներում գահի վրա իրեն ամուր զգացող Տրդատը եռանդուն ինքնավստահությամբ ձեռնամուխ եղավ երկարամյա պատերազմների հետևանքով երկրի քայքայված տնտեսությունն ու պետականությունը վերականգնելու, ավերված քաղաքները վերաշիներու գործին: Որպես փաստ հիշենք թեկուզ տասնամյա պատերազմի ընթացքում հիմնահատակ ավերված Արտաշատ մայրաքաղաքի և Գառնիի ամրոցի վերաշինությունն ու Գառնիի հեթանոսական տաճարի կառուցումը Տրդատի թագավորության 11-րդ տարում:

Զարմանալի է, որ հայ մատենագրության մեջ մենք չենք հանդիպում այս Տրդատի հիշատակությանը: Նույնիսկ Մովսես Խորենացին, որը փորձել է տալ հայոց ամբողջական պատմությունը հնագույն ժամանակներից սկսած մինչև իր ապրած ժամանակաշրջանը, ոչ մեկ ուղղակի հիշատակություն չի թողել Տրդատ Ա-ի մասին: Ուսումնասիրողները, սակայն, իրավացի կերպով ենթադրում են, որ մեր պատմիչների մոտ հիշատակված Վաղարշակ Արշակունու կերպարի մեջ միաձուլված են պատմական երկու անձնավորություն՝ Արտաշեսյան հարստության և Արշակունյաց հարստության հիմնադիրներ Արտաշեսն ու Տրդատը, ուստի և վերջիններիս գործունեության հիմնական

(1) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 284–355: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 703–764:

(2) Այս դեպքում գուցե հնարավոր է բացառել Արտավազդ Բ-ի որդի և հաջորդ Արտաշես Բ-ին (մ.թ.ա. 30–20 թթ.):

(3) Taciti Annales, XVI, 23; C. Plin., Nat. Hist. XXX, 16; XXXIII, 54; Suetonii Nero, XIII.

գծերը վերագրված են Վաղարշակին[4]:

Ի հակադրություն հայկական աղբյուրների, հունա-հռոմեական մատենագիրների երկերում սակավ չեն Տրդատ Ա-ին վերաբերող վկայությունները[5]: Օտար աղբյուրներում նրա մասին եղած տեղեկությունների քանակը կարելի է համեմատել միայն Տիգրան Բ-ի մասին արտաքին հեղինակների երկերում պահպանված տվյալների հետ:

Բացի այդ, արդեն չուրջ երեք տասնամյակ է, ինչ ուսումնասիրողների տրամադրության տակ Տրդատի մասին այնպիսի առաջնակարգ սկզբնաղբյուր կա, ինչպիսին Գառնիում հայտնաբերված հունարեն արձանագրությունը. և պատահական չէ, որ այս կարճ ժամանակամիջոցում տվյալ արձանագրությունը տարբեր հետազոտողների կողմից մանրամասն ուսումնասիրվել է բազմիցս[6]: Արձանագրության առաջին հրատարակողները (Ստ. Լիսիցյան, Հ. Մանանդյան, Ա. Աբրահամյան) գլխավորապես ուշադրություն են դարձրել դրա թվագրման, ինչպես նաև Գառնիում կատարված շինարարական աշխատանքների հետ նրա ունեցած առնչության վրա: Հաջորդ ուսումնասիրողներն արդեն (Կ. Տրեվեր, Գ. Սարգսյան, Հ. Բարթիկյան, Ս. Կրկյաշարյան) արձանագրության որոշ տվյալների օգնությամբ, փորձել են պարզել Արշակունյաց Հայաստանի սոցիալ-քաղաքական պատ-

(4) Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, էջ 432: К.В. Тревер, Очерки ..., էջ 198, ծանոթ. 2, էջ 202, 282: А.Г. Периханян, Древнеармянские востаники, ВДИ, 1956, N 2, էջ 51, ծան. 3:

(5) Josephi Flavii bell. Jud., VII, 34-37: 40-41 և այլն: C. Plin., Nat. Hist., XXX, 16: XXXIII, 54: Dio Cass., LII, 20: LXII, 23 և այլն:

(6) Ստ. Լիսիցյան, «Սովետական Հայաստան» թերթ, 23-9-1945 և «Коммунист» թերթ, 30-9-1945: Հ.Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946: Ա.Գ. Աբրահամյան, Գառնիի հունարեն արձանագրությունը, «Լրմիածին», 1947, մարտ-ապրիլ: Я.А. Манандян, Новые заметки о греческой надписи в языческом храме Гарни, Տեղ. ՀԳԱՀԳ, 1951, N 4: Б.Н. Аракелян, Гарни I, Ереван, 1951; К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 174-211: Գ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության չուրջը, Տեղ. ՀԳԱՀԳ, 1956, N 3: Հ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊԲՀ, 1965, N 3, էջ 229-234: Ս.Մ. Կրկյաշարյան, Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, ՊԲՀ, 1965, N 3, էջ 235-238:

մությանը վերաբերող մի չարք հարցեր: Այսուհանդերձ, մենք կարծում ենք, որ Գառնիի արձանագրությունը դեռևս իրեն չի սպառել: Այստեղ մենք ցանկանում ենք, Գառնիի արձանագրության ընձեռած տվյալների օգնությամբ, անդրադառնալ Տրդատի թագավորական իշխանության բովանդակությանը:

Ուսումնասիրողներն այս արձանագրության առաջին երկու տողերը վերականգնում են երկու կերպ. ΗΛΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ –, «Հելիոս Տիրիդատես թագավոր Մեծ Հայքի» (Հ. Մանանդյան՝ առաջին ընթերցում, Գ. Սարգսյան, Հ. Բարթիկյան, Ս. Կրկյաշարյան) կամ՝ ΗΛΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ Ο ΜΕΓΑΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ – «Հելիոս Տիրիդատես Մեծը Մեծ Հայքի .....» (Հ. Մանանդյան՝ երկրորդ ընթերցում, Ա. Աբրահամյան, Կ. Տրեվեր)[7]: Հ. Բարթիկյանը նշում է, որ այս երկու տողում արձանագրված է Տրդատ թագավորի ամբողջ տիտղոսաշարը, որն ավարտվում է ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ բառերով[8]: Մենք լիովին բաժանում ենք այս տեսակետը:

Նշված տիտղոսաշարը լիովին համահնչյուն է Ապարանի հունարեն արձանագրությունում պահպանված Տրդատ թագավորի տիտղոսաշարին՝ ΤΙΡΙΔΑΤΗΣ Ο ΜΕΓΑΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΒΑΣΙΛΕΥΣ (Տիրիդատես Մեծ, Մեծ Հայքի թագավոր)[9]: Նույնպիսին է նաև XVI դարում Հռոմում հայտնաբերված մի արձանագրության մեջ մ.թ. II դարում Հայաստանում գահակալած Արշակունի Բակուր թագավորի տիտղոսաշարը՝ ΑΥΡΗΛΙΟΣ ΠΑΚΟΡΟΣ ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ – Ավրելիոս Պակորոս թագավոր Մեծ Հայքի[10]:

Վիմական արձանագրություններում պահպանված է Արշակունյաց չորքանի Հայաստանում գահակալած թագավորների տիտղոսաշարի ևս մեկ տարբերակ, որը հանդիպում է վերջերս Գառնիում հայտնաբերված արամեերեն արձանագրու-

(7) Այստեղ մեզ չի հետաքրքրում ΗΛΙΟΣ (Հելիոս) բառին տրված այս կամ այն մեկնաբանությունը: Այդ հարցին մենք առանձին անդրադարձել ենք Գառնիի արձանագրությանը նվիրված մեր վերոհիշյալ հոդվածում: Տես նաև Գ.Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 58-59:

(8) Հ.Մ. Բարթիկյան, Նշվ. աշխ., էջ 231:

(9) М.И. Ростовцев, Апаранская надпись царя Тиридата. Анийская серия, N° 6, СПб., 1911.

(10) К.В. Тревер, Очерки ..., էջ 126:

թյան[11] և Սասանյան Շապուհ Ա-ի թողած Նախշ-ի-Ռուստեմի երեքլեզվյան արձանագրության մեջ[12]: Այս վերջին վավերագրում «թագավոր Մեծ Հայքի» տիտղոսի փոխարեն Հայաստանի թագավոր կարգված Որմիզդ-Արտաշիրը (ώρμιζδαρταξίρ – ώρμιζδαρταξάρ) կրում է «Մեծ թագավորի Հայոց» – ΜΕΓΑΛΟΥ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΜΕΝΙΑΣ տիտղոսը: Այս տարբերությունը ճիշտ է նշմարել Ա. Փերիխանյանը[13]: Մինչդեռ Ս. Երեմյանը գտնում է, որ Շապուհի ձեռքով Հայաստանի գահի վրա բարձրացած Որմիզդ-Արտաշիրը պիտի կրեր ոչ թե «Արմենիայի (կամ Հայաստանի) մեծ թագավոր», այլ «թագավոր Հայոց Մեծաց» տիտղոսը[14]:

Սակայն այսպիսի եզրահանգման դեմ է խոսում իր իսկ արձանագրության մեջ պարզ վկայված տիտղոսաշարը՝ ΤΟΥ ΜΕΓΑΛΟΥ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΜΕΝΙΑΣ, որտեղ արական սեռի ΤΟΥ ΜΕΓΑΛΟΥ (մեծի) ածականը ոչ մի դեպքում չի կարող վերաբերվել իգական սեռի ΑΡΜΕΝΙΑΣ գոյականին. այն կարող է վերաբերվել բացառապես արական սեռի ΒΑΣΙΛΕΩΣ (թագավորի) գոյականին, քանի որ հունարենում գոյականի և ածականի սեռային համաձայնությունը քերականական պարտադիր օրենք է: Բացի այդ, պնդել չի կարելի, որ Սասանյան Շապուհի որդին, դառնալով Հայաստանի թագավոր, անհրաժեշտաբար պետք է վերցներ Սասանյանների կատաղի թշնամի հայոց Արշակունիների թագավորական տիտղոսը: կա նաև ոչ պակաս կարևոր մի հարց. արդյո՞ք պարսիկ Սասանյանների համար այդ ժամանակ կար Մեծ և Փոքր Հայք հասկացությունը: Ահա այժմ մեզ համար դժվար է պատասխանել դրան:

Ուսումնասիրողները միանգամայն ճիշտ են նկատել, որ Գառնիի և Ապարանի հունարեն արձանագրություններում Տրդատի կրած ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ տիտղոսը միանգամայն համապատասխան է հունա-հռոմեական և հայ մատենագրության միջոցով մեզ հասած Արշակունի գահակալների կրած «թագավոր Հայոց Մեծաց» տիտղոսին[15]:

Տրդատ Արշակունու տիտղոսաշարը եթե համեմատենք նախորդ՝ Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես տիտղոսաշարի հետ՝ «Արտաշես արքա, որդի Զարիտարայի, Երվանդական» կամ «Արտաշես, արքա, Երվանդական, Բարի, որդի Զարեհի», որը պահպանվել է «Արտաշիսյան» սահմանաքարերի վրա եղած արամեերեն արձանագրություններում[16], ապա նկատելի է որոշակի տարբերություն: Եթե Արտաշեսյան թագավորն իր տիտղոսաշարի մեջ մացրել էր նաև իր հայրանունը՝ Զարիտարայի (Զարեհի) որդի, ապա Արշակունի թագավորի տիտղոսաշարում նրա հայրանվանը չենք հանդիպում: Հատկանշական է, որ պարսից Արշակունիների մեզ հասած տիտղոսաշարում էս հայրանունը բացակայում է: Արդյոք սա չի՞ նշանակում, որ տվյալ գահակալի հայրը թագավոր չի եղել: Որպես օրինակ նշենք պարթևների թագավոր Արտավան Գ-ի նամակը, ուղղված Սելևկիայի քաղաքային համայնքին: Վիմական արձանագրության ձևով մեզ հասած այդ նամակը վերաբերում է մ.թ. 21 թվականին և սկսվում է Արտավանի տիտղոսաշարով՝ ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΗΣ – Արքայից արքա Արսակես[17]:

Մեր կարծիքով, Հայաստանում թագավորական իշխանության ներքին բովանդակությունը բացահայտում են Գառնիի հունարեն արձանագրության մեջ Տրդատի տիտղոսաշարին հաջորդող ΑΝΑ[ΣΣΩΝ] ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ – «թագավորելով իբրև դեսպոտ»[18] բառերը:

(11) А.Г.Периханян, Арамейская надпись из Гарни, ՊԲՀ, 1964, Նո 3, էջ 126:

(12) Ernest Honigmann et André Maricq, Recherches sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953, p. 15-16.

(13) А.Г.Периханян, Նույն տեղում:

(14) Ս.Տ. Երեմյան, Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1986, Նո 2, էջ 64, ծան. 18:

(15) А.Г.Периханян, Նույն, տեղում: Ս.Տ. Երեմյան, Նույն տեղում:

(16) Տես սույն ուսումնասիրությունը, էջ 132, ծան. 1 և 2:

(17) C.B. Welles, 75, 1.

(18) Այսպես են ընթերցում Հ. Մանանդյանը և Ս. Կրկյաշարյանը. մինչդեռ մյուս ուսումնասիրողները բոլորովին տարբեր ձևով են ընթերցում: Բանն այն է, որ Գառնիի արձանագրության երկրորդ տողի վերջում գտնվող բառը կիսատ է պահպանվել. կարդացվում են միայն առաջին երեք տառերը՝ ΑΝΑ ...: Ա. Լիսիցյանի լրացումը՝ ΑΝΑΞΙΩΣ (նշ. է՝ անարժանաբար) պարզապես թյուրիմացություն է. Ա. Աբրահամյանն այդ բառը լրացնում է ΑΝΑ[ΚΤΟΣ] որը լինելով ΑΝΑΞ (թագավոր) բառի սեռականը, չի կարելի ընդունելի համարել. Կ. Տրեվերը այն լրացնում է՝ ΑΝΑ[ΚΤΩΡ] (նշ. է՝ թագավոր) հազվադեպ և արխայիկ բառով. Հ. Բարթիկյանը՝ ΑΝΑ[ΚΤΟΡΟΝ] (ապարանք) բառով. իսկ Գ. Սարգսյանը ΑΝΑ-ի հարցը համարում է դեռևս ոչ պարզ:

Δεσπότης հունարեն նշանակում է՝ վեհապետ, գերագույն տեր, անսահմանափակ իշխանությամբ օժտված միապետ: Այս բառի այդպիսի նշանակությունը առավել պարզ երևում է իր իսկ Տրդատի այն խոսքերի մեջ, որով նա դիմել է կայսր Ներոնին և որը պահպանվել է Դիոն Կասիոսի մոտ: Այսպես, Տրդատը երեք հազար հոգուց բաղկացած իր շքախմբի ուղեկցությամբ հասնելով Հռոմ, հավերժական քաղաքի ֆորումում ծնրադրում է Ներոնի առաջ և, ինչպես պատմիչն է վկայում, այս խոսքերով դիմում նրան. Ἐγώ, δέσποτα, Ἀρσάκου μέν ἔκγονος, Οὐαλαγαίσου δέ καί Πακόρου τῶν βασιλέων ἀδελφός, σός δέ δοῦλος εἰμί[19]. «Ես, ով վեհապետ, Արշակի հետնորդն եմ, Վաղարշ և Պակորոս թագավորների եղբայրը, իսկ քո ծառան»: Այստեղ դժվար չէ նկատել որ δεσπότης բառով բնորոշված է Ներոն կայսեր բացարձակ իշխանությունը:

Կ.Վ. Տրեվերը նշում է, որ այս տերմինը հանդիպում է Սև ծովի ափերին, Փոքր Ասիայում և Սիրիայում հայտնաբերված նույն ժամանակներին վերաբերող արձանագրություններում, որոնցում δεσπότης են անվանված բոսպորյան թագավորներ Սավրոմատեսը, Ռեսկուպորիդեսը, Հռոմի կայսրներ Սեվերոսը, Մակրինոսը և Դիոկլետիանոսը[20]:

Այն, որ հայոց Տրդատ Ա. թագավորը իրրև դեսպոտ պետք է որ օժտված լիներ անսահմանափակ իշխանությամբ, կարելի է հետևցնել նաև այն հանգամանքից, որ, ինչպես հաղորդում է Տակիտոսը և ինչպես պարզվում է Գառնիի արձանագրության մեր վերծանումից, նա ոչ միայն թագավոր էր, այլև քրմապետ[21]: Մինչդեռ վերևում նշեցինք, որ Երվանդունիների և Արտաշեսյանների ժամանակ Հայաստանում թագավորական իշխանության կրողը և քրմապետի պարտականությունները կատարողը տարբեր անձեր էին, թեպետ և նույն տոհմից:

Այսպես, Խորենացու մոտ Երվանդ թագավորի հետ միաժամանակ և նրա կողքին հիշատակվում է նրա եղբայրը՝ քրմապետ Երվազը[22]: Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկում քրմապետ Միհրասը, դիմելով Երվանդ թագավորին (արձանագրության մեջ՝ Երրոնտես), իրեն նույնպես անվանում է թագավոր (ΒΑΣΙΛΕΥΣ)[23]: Դարձյալ Խորենացու վկայությամբ, Արտաշես թագավորն իր որդի Մաժանին «կարգէ քրմապետ յԱնի»[24]:

Վաղարշ Ա-ի գահակալության տարիներին Արշակունիների պարթևական թագավորությունը հասավ ներքաղաքական որոշակի կայունացման: Գործիմաց Վաղարշին, երկար պայքարից հետո, հաջողվեց միանգամից լուծել երկու կարևորագույն հարց: Մինչ այդ պարսկական արքունիքում թագի հավակնորդների միջև անպակաս էին տերությունը թուլացնող գահակալական երկպառակությունները. իսկ այդ հանգամանքը վարպետորեն օգտագործում էր Պարսկաստանի գլխավոր թշնամին՝ Հռոմը, որը և պատեհ առիթը բաց չէր թողնում, հրահրելու համար պարսկական գահի շուրջ ծագող հաճախակի վեճերը, որոնք շատ անգամ հանգում էին ահավոր ոճրագործություններին: Վաղարշը, ահա, դառնալով պարսից թագավոր, այդ ցավոտ հարցը լուծեց մեծ հեռատեսությամբ: Նա, իմերջո, կարողացավ իր կրտսեր եղբայրներից մեկի, Պակորոսի համար ապահովել Մեդիա-Ատրոպատենեի գահը, իսկ մյուսի՝ Տիրիդատես-Տրդատի համար՝ հայոց գահը[25]: Այդ բանից հետո նա արդեն կարող էր իրեն հանգիստ զգալ պարսկական արքունիքում, որտեղից վարպետորեն հեռացվել էին գահի ամենահիրական հավակնորդները: Արտաքին քաղաքականության տեսակետից հարցի այսպիսի լուծումը ապահովում էր նաև Պարսկաստանի հյուսիս-արևմտյան սահմանները թշնամիների ներխուժումից և Հայաստանն ու Մեդիա-Ատրոպատենեն դարձնում Պարսկաստանի համար կարևոր պատվար

(19) Dio Cass., LXIII, 5, 2.

(20) К.В. Тревер, Очерки ..., էջ 200-201, ծան. 1:

(21) Taciti Annales, XV, 24: *Այս հարցին մենք անդրադարձել ենք մի շարք անգամներ մեր հետևյալ հոդվածներում, «Դիտողություններ հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին», Տեղ. ՀԳԱՀԳ, 1963, Նո 9, էջ 56: «Եւս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին», ՊԲՀ, 1965, Նո 3, էջ 236:*

(22) *Մովսես Խորենացի, Բ, խ:*

(23) А.И. Болгунова, Греческие надписи Армавира, *Արմֆանի Տեղեկագիր*, 1942, Նո 1-2, էջ 50-51: *Հ.Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946:* К.В. Тревер, Очерки ..., էջ 134-137: Г.Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, էջ 40-41: *Մ.Մ. Կրկյաշարյան, Դիտողություններ հին հայկական քաղաքների առաջացման մասին, էջ 56-58:*

(24) *Մովսես Խորենացի, Բ, 6 գ:*

(25) Josephi Flavii, Antiq. Jud., XX 74.

Հռոմի դեմ:

Այսպիսով, Վաղարշի և Տրդատի եռանդուն գործունեության շնորհիվ, Հայաստանի գահը վերջապես բաժին ընկավ պարթև Արշակունիների կրտսեր ճյուղին: Այս հանգամանքը չէր կարող իր որոշակի ազդեցությունը չունենալ մ.թ. I դարի Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքի վրա: Այդ ազդեցությունը երկակի բնույթ ուներ, արտաքին և ներքին իմաստով: Հնարավոր է, որ Տրդատ Արշակունին Վաղարշի անմիջական օգնությամբ Հայաստանի թագավոր դարձած լինելով, որոշ չափով իրեն կաշկանդված էր զգում և լիովին ազատ չէր արտաքին քաղաքականություն վարելու, քանի որ բոլոր դեպքերում նա պետք է հաշվի նստեր իր ավագ եղբոր՝ պարսից Վաղարշ թագավորի շահերի հետ: Մյուս կողմից, սակայն, վայելելով պարսից թագավորի համակողմանի աջակցությունը, Տրդատն այժմ բոլոր հնարավորություններն ուներ ներքին քաղաքականության ասպարեզում վճռական և գործուն միջոցների դիմելու համար. մի բան, որի կարիքը խստորեն զգում էր տասնամյակներ անընդհատ ծավալած երկիրը:

Հակառակ այս բոլորին, սակայն, տարօրինակ է, որ մեզ հասած պատմական սկզբնաղբյուրներում ոչ մի ուղղակի վկայության չենք հանդիպում Տրդատի ձեռնարկած որևէ վարչատնտեսական միջոցառման մասին: Դեռ ավելին. մենք նշել ենք, որ հայ մատենագրության մեջ զարմանալի կերպով Տրդատ Ա-ի հիշատակություններն անգամ չկա: Այսուհանդերձ, հայագետները փորձել են հայ պատմիչների, հատկապես Խորենացու մոտ, հայտնաբերել Տրդատ Ա-ին, կամ գոնե նրա գործունեության հետքերը: Եվ այդ նրանց մասամբ հաջողվել է:

Այսպես, ենթադրվում է, որ Խորենացու մոտ հիշատակված Վաղարշակ Արշակունու գործերի մի զգալի մասը վերաբերում է հունահռոմեական հեղինակների (Հովսեպոս Փլավիոս, Տակիտոս, Պլինիոս Ավագ, Դիոն Կասիոս, Սվետոնիոս) հիշատակած Տրդատ Արշակունու գործունեությանը: Տեսնենք, թե հայագետները ի՞նչ հիմքեր են ունեցել այդպիսի ենթադրություն անելու համար:

Այս հարցում ամենակարևոր փաստարկն այն է, որ Մովսես Խորենացու «Պատմության» մեջ Վաղարշակը ներկայացված էր իբրև Արշակունյաց թագավորության հիմնադիրը Հայաստանում. մինչդեռ օտար աղբյուրների համաձայն, այդպիսի դերը պետք է վերագրվի Տրդատ (Τιριδάτης) Ա-ին: Նախարարական

Հայաստանի պատմության խոշորագույն հետազոտող Ն. Ադոնցն, օրինակ, նշում է, որ «Խորենացու մոտ ուրվագծված Վաղարշակի բարենորոգչական կերպարը պատմական Տրդատի արտացոլումն է հանդիսանում»[26]: Ա.Գ. Փերիխանյանը նույպես խոսելով այդ մասին, գտնում է, որ Վաղարշակի կերպարի մեջ «բաղարկվում են (контаминируется) պատմական երկու անձնավորությունն՝ Արտաշես Ա-ը և Տրդատ Ա-ը»[27]: Այս նույն կարծիքն արտահայտել են նաև պրոֆ. Խ. Սամվելյանը, Կ. Բասմաջյանը, Կ.Վ. Տրեվերը, ինչպես նաև ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» առաջին հատորի հեղինակները[28]: Ըստ երևույթին, այդ կարծիքին է հակված նաև Հ.Հ. Մանանդյանը, երբ գրում է. «Վաղարշակի այդ գործունեությունը վերագրվել է Տրդատ Ա-ին, որովհետև ենթադրվել է, որ Խորենացու Վաղարշակը որ Արշակունիների դինաստիայի հիմնադիրն էր, իրականում Տրդատ Ա-ն է»[29]:

Խորենացու հիշատակած հայոց թագավոր Վաղարշակ Արշակունու և օտար աղբյուրներով անժխտելիորեն վկայված պատմական Տրդատ (Τιριδάτης) Արշակունու միջև նկատվող նույնության եզրերից մեկն էլ, բացի Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիրը լինելուց[30], այն է, որ և՛ Վաղարշակը, և՛ Տրդատը եղել են պարթև արքայի՝ մի դեպքում Արշակ Մեծի, մյուս դեպքում՝ Վաղարշի, եղբայրը: Այսպես, պատմահայրը հաղորդում է, որ պարսից և պարթևաց արքա Արշակ Մեծը «թագավորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց, պատեհ համարեալ այսպէս իմն անշարժ իւրոյ

(26) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 433.

(27) А.Г. Периханян, Древнеармянские востаники, էջ 51, ծան. 3.

(28) Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. Ա, Երևան, 1939, էջ 181, 264, 328: Կ. Բասմաջյան, Խնդրական պատմություն հայոց, Պոլիս, 1914, էջ 100: К.В. Тревер, Очерки ..., էջ 198, ծան. 2 և էջ 202, 282: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 674-675, 746, 766 և այլն:

(29) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Բ, մ. Ա, էջ 14

(30) Վերջին հետազոտողներից Լ.Փ. Շահինյանը չի համարում Տրդատն Արշակունյաց հարստության հիմնադիր, այլ նրան նույնացնում է Խորենացու հիշատակած Երվանդի հետ (Л.П. Шагинян, Хронологическая система «Истории Армении» Мовсеса Хоренаци и ее достоверность. Автореферат, Ереван, 1968).

թագաւորութեանն մնալ»[31]: Նույնը երկրորդ անգամ նշում է Խորենացին, գրելով, որ պարսից Արշակ Մեծը «ի ժամանակին յանյնմիկ թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ աչխարհիս Հայոց, զհիւսիսի և զարեւմուտս տալով նման սահմանս»[32]: Ասես ի հաստատումն այս բոլորի, Խորենացին բերում է հայոց Վաղարշակ թագավորի թուղթը, ուղղված պարսից արքա Արշակ Մեծին, որում իմիջիայլոց կարդում ենք նաև հետևեյալ խոսքերը. «Վաղարշակ կրտսեր եղբայր քո և նիզակակից, որ ի քէն կարգեալ արքայ Հայոց»[33]:

Նկարագրված դեպքերին ժամանակակից Հովսեպոս Փլավիոսը (I դ.) վկայում է, որ պարթև Վաղարշը (Οὐολογαίσης) տիրելով Պարակաստանի գահին, «իր հայրակից երկու եղբայրներին ևս թագավորություններ վստահեց. ավագին՝ Պակորոսին՝ նա տվեց Մեդիան, իսկ կրտսերին՝ Տրդատին՝ (Τιριδάτης) Հայաստանը»[34]: Նույնը մի քանի անգամ կրկնում է մեկ ուրիշ ժամանակակից մատենագիր՝ Տակիտոսը[35]: Բացի այս, մենք վերևում մեկ ուրիշ առիթով արդեն հիշատակեցինք նաև Դիոն Կասիոսի այն հաղորդումը, որտեղ Տրդատն իրեն անվանում է Վաղարշի և Պակորոսի եղբայրը:

Վաղարշակ–Տրդատ Ա. առնչության մասին խոսելիս մենք անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ աղբյուրներում հանդիպող երկու հաղորդման, որոնք դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել:

Խորենացին պատմում է, որ Արշակ Մեծն իր եղբոր՝ Վաղարշակին Հայաստանում թագավոր կարգելով, նրան է հանձնում մի շարք երկրամասերի կառավարումը և տալիս հետևյալ հայտնի պատվերը, որն անցել է թևավոր խոսքերի շարքը. «և այլ որչափ միաք քո և քաջութիւն հասանիցեն. զի սահմանք քաջաց .... զէնն իւրյանց, որքան հասանէ՝ այնքան ունի»[36]:

Մյուս կողմից, Տակիտոսը վկայում է, որ երբ Վաղարշ Ա-ը այլ գործերով զբաղված լինելու պատճառով, որոշ դանդաղ-

(31) Մովսես Խորենացի, Ա, ը:
(32) Մովսես Խորենացի, Բ, գ:
(33) Նույն տեղում, Ա, թ:
(34) Jos. Flav., Antiq. Juds., XX, 74.
(35) Taciti Annales, XIII, 34; XIII, 37.
(36) Մովսես Խորենացի, Ա, ը:

կոտութիյուն էր ցուցարերում իր եղբոր՝ Տրդատին օգնելու և հռոմայեցիներին Հայաստանից դուրս քշելու հարցում, վերջինս արդարացի տրտունջ է հայտնում պարսից թագավորին և ասես հանդիմանում նրան հետևյալ խոսքերով. «Անգործութիյամբ չէ, որ պահպանվում են մեծ պետութիյունները, այլ մարդկանց ու զենքերի մղվող պայքարով: Մարդկային ամենաբարձր վիճակում նա է առավել արդարացի, ով ավելի հզոր է: Պահել ինչ որ իրենն է՝ մասնավոր մարդկանց գործ է, իսկ այլոց ունեցվածքի համար կռիվ մղելը՝ կազմում է թագավորների փառքը»[37]:

Առաջին իսկ համեմատությունից ակներև է դառնում վերոհիշյալ հատվածներում Արշակի և Տրդատի խոսքերի ներքին բովանդակության նույնությունը: Այդ պատճառով կարելի է ենթադրել, որ առաջին դարում Տրդատի թագավորության ժամանակ տեղի ունեցած պատմական դեպքերը դառնալով հերոսապատումի նյութ, գողթան երգիչների բերանով աստիճանաբար մասամբ փոփոխության են ենթարկվել ու հասել մինչև Մովսես Խորենացին և, արձանագրվելով նրա մատյանում, անմահության ուղեգիր ստացել:

Կա մի հանգամանք ևս, որը հնարավորություն է տալիս անելու այն ենթադրությունը, թե Վաղարշակի թագավորության տարիներին վերագրված մի շարք դեպքեր իրականում կատարվել են ավելի ուշ, գուցե Տրդատ Արշակունու գահակալության ժամանակ: Այստեղ նկատի ունենք հետևյալը:

Մովսես Խորենացին, պատմելով Վաղարշակ թագավորի բարեկարգչական գործունեության մասին, վկայում է, որ «նախ և առաջին օրինադրէ թագաւորն զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ և ի թագէ: Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի Հրէից, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեանն առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, զյառաջատացեալ տանուտիրական պատիւն ազգին պարգևելով. և իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւորին և կոչել թագադիր, այլ և ասպետ»[38]: Նույն բանը պատմահայրը կրկնում է ամեն անգամ, երբ խոսում է Բագարատի մասին, նրան համարելով «ի հրէից»[39]:

(37) Taciti Annales, XV, 1: Այս հատվածը մեջ ենք բերել Հ.Հ. Մանանդյանի թարգմանությամբ (տես՝ Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 341):
(38) Մովսես Խորենացի, Բ, է:
(39) Նույն տեղում, Բ, գ: Բ, ը: Բ, թ:

Ինքնըստինքյան հարց է ծագում, թե այս հրեաները, որոնցից, ըստ Խորենացու հաղորդած ավանդության, սերում էր Բագարատը, ե՞րբ և որտեղի՞ց էին հայտնվել Հայաստանում: Սկզբնաղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատմական այդ իրադարձությունը տեղի էր ունեցել Տիգրան Մեծի, մասամբ նաև նրա հաջորդ Արտավազդ Բ-ի թագավորության ժամանակ (մ.թ.ա. I դարի առաջին կես), երբ հայոց թագավորն իր նվաճողական արշավանքների ընթացքում առաջին անգամ չվում ունեցավ հրեաների հետ և նրանցից մեծ բազմություն գերեվարելով, բերեց Հայաստան: Այս դեպքերի մասին ուղղակի հիշատակություններ կան թե հրեա մատենագիր Հովսեպոս Փլավիոսի և թե Փավստոս Բուզանդի ու Մովսես Խորենացու մոտ:

«Իսկ Ալեքսանդրան, – գրում է Փլավիոսը, – Արիստոբուլոսի գլխավորությամբ զորք ուղարկեց Դամասկոս այն պատճառով, որ Պտղոմեոսը[40] անդադար ճնշում էր քաղաքը, սակայն զորքը վերադարձավ իր մոտ առանց նշանակալից որևէ գործ կատարելու: Մյուս կողմից, հայոց թագավոր Տիգրանին, որը բանակել էր Պտղոմայիս քաղաքի առջև և այնտեղ պաշարել էր կլեոպատրային[41], դաշինքով ու ընծաներով հեռացրեց. իսկ սա Լուկուլլոսի արշավանքների հետևանքով սկսված անկարգությունների պատճառով վերացնում է պաշարումը և հասնում Հայաստան»[42]: Վերևում մենք մի այլ առիթով անդրադարձել

(40) Այս Պտղոմեոսը, Մեննայոսի որդին, ոչ մի առնչություն չունի Եգիպտոսի Պտղոմեոսների հարստության հետ: Նա եղել է Կելե-Սիրիաքի (Ներքին Ասորիք) ոչ մեծ թագավորության տիրակալը մ.թ.ա. 85-40 թթ. Նրա իշխանության կենտրոնը եղել է Քալկիսը (Χαλκίς): Շատ հավանական է, որ այս Պտղոմեոսը դաշնակից էր Տիգրան Բ-ին, քանի որ պատերազմում էր հայոց թագավորի թշնամու՝ Հրեաստանի դեմ: Երբ 84/83 թ. Տիգրանը նվաճեց Ասորիքը, Պտղոմեոսը, հավանաբար, ընդունեց Տիգրանի գերիշխանությունը և մնաց կելե-Սիրիայում որպես հայոց արքային ենթակա թագավոր:

(41) Այս կղեոպատրան, որը կոչվում էր նաև Սելենե (Strabo, XVI, 2, 3), Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս Ֆիսկոնի դուստրն էր և հաջորդաբար ամուսնացել էր Սելևկյան մի քանի թագավորի հետ: Նրան հիշատակում է նաև Խորենացին (Բ, ժդ):

(42) Jos. Flav., Bell. Jud., I, 115.

ենք Հովսեպոսի մեկ ուրիշ վկայությանը ևս[43], որտեղ կրկնվում է նույն այս դեպքերի պատմությունը:

Տիգրանի հրեական արշավանքի և Հրեաստանից նրա բերած բազում գերիների մասին հաղորդում է նաև Մովսես Խորենացին, որի պատմածը լիովին ձայնակցում է Փլավիոսի վերոբերյալ վկայությանը. ահա պատմահոր խոսքերը. «Եւ նոյն հետայն դիմէ (Տիգրան – Ս.Կ.) յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պողոմայիդ կղեոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց: Առեալ գերի բազում և ի Հրէից՝ նստի չուրջ զՊողոմայիդ քաղաքաւ: Իսկ դշխոյն Հրէից Ազեքսանդրիայ, որ և Մեսաղինայ, որ էր լեալ կին Ազեքսանդրի, որդւոյ Ցոհաննու, որդւոյ Շմաւունի, եղբօր Ցուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչս բազումս տալով՝ դարձոյց զնա անտի»[44]:

Նույնիսկ այս դեպքերից ավելի քան չորս հարյուրամյակ հետո, IV դարի կեսերին, հայերը դեռևս չէին մոռացել Հրեաստանից բերված գերիների մասին եղած պատմությունը: Բավական է հիշել, որ Փաւստոս Բուզանդը, խոսելով Սասանյան Շապուհի՝ Հայաստանի քաղաքներից հայերի հետ Պարսկաստան քշված հրեաների մասին, նրանց համարում է առաջին (Տիգրանի օրոք) և երկրորդ (Արտավազդի օրոք) գերության ժամանակ Հրեաստանից Հայաստան փոխադրվածների հետնորդներ[45]:

Խորենացին ևս, խոսելով այս նույն դեպքերի մասին, գրում է, որ հրաման հասավ Շապուհ արքայից, որպեսզի «զհրեայսն խաղացուսցեն ի գերութիւն, և զայն հրեայսն, որ նովին հրէութեան օրինօք կային ի Վանն Տոսպայ, զորս ածեալ էր Բարզափրանայ Ռընչունւոյ յաւուրս Տիգրանայ ... գերեցին և զայն հրեայսն որք յԱրտաշատ և ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ արքայի»[46]:

Դժվար չէ նկատել, որ Խորենացին ևս այս հատվածում պարզորոշ զատում է հրեաների երկու գերությունը, որոնցից առաջինը կատարել է Տիգրանը հրեական արշավանքից վերադառնալու ժամանակ, իսկ երկրորդը տեղի է ունեցել ավելի ուշ,

(43) Jos. Flav., Antig. Jud., XIII, 419-421.

(44) Մովսես Խորենացի, Բ, ժդ:

(45) Փաւստոս Բուզանդ, Դ, ծե:

(46) Մովսես Խորենացի, Գ, լե:

ըստ Խորենացու՝ դարձյալ Տիգրանի թագավորության տարինե-
րին, մինչդեռ պատմագիտությունը հաստատել է, որ այն տեղի
է ունեցել նրա հաջորդի՝ Արտավազդ Բ-ի ժամանակ[47]:

Այս ամենից հետո մեզ համար պարզ է դառնում, որ եթե
հրեաները Հայաստանում առաջին անգամ հայտնվել էին միայն
Տիգրան Բ-ի ժամանակ և նրանից հետո, ապա այդ հրեաներից
սերած Բագարատին թագադիր ասպետ կարգող վաղարշակը չէր
կարող մ.թ.ա. II դարի թագավոր լինել: Այս հանգամանքը ևս
մեզ մղում է նույն ենթադրության, թե հայ պատմիչները
Տրդատ Ա-ի գործունեության մի շարք դրվագներ վերագրել են
վաղարշակ թագավորին:

Այժմ վերադառնանք այն հարցին, թե Հայաստանում
«իրրև դեսպոտ» ὡς δεσπότης – թագավորող բացարձակ միա-
պետն ըստ էության ինչպիսի՞ իրավասություններ ուներ: Հա-
յաստանում Արշակունի թագավորի իշխանությունը, անկասկած,
կրում էր արևելյան բացարձակ միապետության բնույթ, որտեղ
միապետի կամքը օրենք էր:

Տասնամյա դաժան մարտերից հետո հռոմայեցիներին Հա-
յաստան երկրից դուրս մղելով, Արշակունյաց հարստության
հիմնադիրը, նախորդ հարստության հիմնադիր Արտաշեսի նման,
լիովին իրավունք ուներ Հայաստանը համարելու իր իսկ նիզա-
կով նվաճված երկիր՝ δορίκτητος χώρα – և իրրև այդպիսին,
այն դիտելու որպես իր բացարձակ սեփականությունը. մի
երևույթ, որին մենք արդեն հանգամանալից անդրադարձել ենք
Արտաշեսյանների մասին խոսելիս:

Մեր անդրանիկ մատենագիրների գործերում հանդիպում
են որոշ վկայություններ, որոնք, մեր կարծիքով, գալիս են հաս-
տատելու մեր այս տեսակետը: Դիմենք այդ վկայություններին:

Փավստոս Բուզանդը պատմում է, թե Շապուհի զորքերի
դեմ կռվելիս, ի թիվս այլ քաջերի, մարտում ընկնում է նաև
Վաչէ Մամիկոնյան զորավարը, որի համար հայոց աշխարհը սգի
մեջ էր: Այդ կապակցությամբ Վրթանես եպիսկոպոսապետը հա-
յոց թագավորի և զորքի առաջ հանդես է գալիս մխիթարական
խոսքերով և իմիջիայլոց նշում, թե այս մարտում ընկածներն

(47) Այս մասին մանրամասն տես՝ Գ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործ-
ման եղանակը Մովսես Խորենացու մոտ, ԲՄ, Նո 3, 1956, էջ 31-42:
Համմ. նաև Jos. Flav., Bell. Jud., I, 246-273:

իրենց անձը զոհեցին հանուն աստվածային ճշմարտության,
յանուն իրենց և ուրիշների հավատի, հանուն հայոց աշխարհի
բնիկ տիրոջ – «ի վերայ բնակի տեառն աշխարհի»[48]: Նույն
Փավստոսի մոտ կարդում ենք, որ պատերազմում պարտություն
կրած Շապուհը զարմանքով պատմում է հայոց զորքի ցուցա-
բերած քաջության մասին, նշելով, որ հայերը կռվում էին իրենց
կորած արքայի՝ Արշակի համար, որին Շապուհն անվանում է
«բնակ տէր» հայերի[49]:

Հայ Արշակունի թագավորներին Փավստոս Բուզանդի
կողմից տրված այս «բնակ տէր աշխարհիս Հայոց» բնորոշումը
բացարձակապես համահնչուն է Ագաթանգեղոսի այն հաղորդ-
մանը, թե Տրդատ թագավորն իր իշխանությանը ենթակա ժո-
ղովրդի բոլոր խավերին ուղղած հրովարտակներից մեկում հայոց
երկիրը համարում է Արշակունյաց թագավորի ձեռատուն և
ձեռատուն»[50]:

Այս ամենից հետո բոլորովին զարմանալի պետք չէ թվա
այն, որ Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում
հայոց արքան ևս, հին արևելյան միապետների նման, որպես
«բնակ տէրն աշխարհի», անկախ ազգակցական մերձավորությու-
նից և առանց աստիճանի խտրության, իր բոլոր հպատակների
վրա ուներ մահու և կենաց իրավունք[51]:

Մեր ասածի լավագույն ապացույցը պիտի համարել
Փավստոսի և Խորենացու մատյաններում պահպանված պատ-
մական հավաստի վկայությունները: Տվյալ դեպքում մենք առա-
ջին հերթին նկատի ունենք հայոց Արշակ Բ թագավորի հրա-
մանով արքայի եղբորորդու՝ Գնել Արշակունու սպանությունը[52],
նույն Արշակի հրամանով Սամվելի հոր՝ հայրենիքի դավաճան
Վարդան Մամիկոնյանի սպանությունը[53], այնուհետև Արշակի
որդի և հաջորդ Պապ թագավորի հրամանով Հայր Մարդպետի

(48) Փավստոս Բուզանդ, Գ, ժա:
(49) Նույն տեղում, ե, ե:
(50) Ագաթանգեղոս, ԺԲ
(51) Պլուտարքոսի (Lucullus, XXV, 1) և Ապպիանոսի (Mithrid, 84)
հաղորդումներից կարելի է եզրակացնել, որ իր հպատակների վրա
նույնպիսի իշխանություն ունեցել է դեռևս Տիգրան Բ-ը:
(52) Փավստոս Բուզանդ, Դ, ժա: Մովսես Խորենացի, Գ, իգ:
(53) Փավստոս Բուզանդ, Դ, ժը: Մովսես Խորենացի, Գ, իե:

սպանութիյունը[54] և այլ դեպքեր։ Եվ այս բոլորը կատարվում են այն ժամանակ, երբ արդեն IV դարի երկրորդ կեսին Արշակունի թագավորների բացարձակ իշխանութիյունը Հայաստանում անհամեմատ թուլացել, իսկ դրան ի հակակշիռ, ուժեղացել էր կենտրոնախույս նախարարների քաղաքական ազդեցութիյունը։ Եթե հաշվի առնենք այս հանգամանքը, ապա չի կարելի կասկածել, թե առաջին Արշակունի թագավորները, որոնք իրենց անհամեմատ առավել հաստատուն էին զգում Հայաստանի գահի վրա, պետք է որ ավելի լայն ինքնակալական իշխանութիյուն ունեցած լինեին, քան իրենց հետնորդները IV դարում, թեպետև այդ մասին մեր աղբյուրներում ուղղակի վկայութիյուններ չկան։

Հաստատապես կարելի է ասել, որ Արշակունի թագավորի ձեռքին էր ոչ միայն առանձին հպատակի կյանքը, այլև ցանկութիյան դեպքում ինքնակալը կարող էր բնաջնջել նախարարական ամբողջ գերդաստաններ[55]։ Այս բանում համոզվելու համար բավական է թերթել դարձյալ Խորենացու և Փավստոսի մատյանները։ Այսպես, Խորենացին պատմում է, թե հրապուրվելով հայոց երդվյալ թշնամի պարսից Շապուհ արքայի խոստումներից, Սկկունյաց տոհմի Սղուկ նահապետը ապստամբեց հայոց Տրդատ թագավորի դեմ (սա Տրդատ Գ-ն է) և «զինքեանն սպանանէ զփեսայ, զծերացեալն Օտայ, որ էր ի տոհմէն Ամատունեաց և սնուցող Խոսրովիդխտոյ քեռ թագավորին», որից հետո «նահապետ ազգին Սկկունեաց ամբանայր յամրոցին, որ անուանեալ կոչի Ողական, ապաւէն առնելով իւրեանց զբնակիչս Սիմն կոչեցեալ լերինն, և ընդդիմացեալ թագաւորին, աղմկէր զերկիրն, և մերձ առ լերամբն ոչ թողացուցանէր այլում պարապել գործոյ։ Ասէ ցամենայն նախարարութիւնս տանս Հայոց արքայ. «Որ ոք ածցէ առ իս զնահապետն ազգին Սկկունեաց՝ տայ նմա յաւիտենական իշխանութեամբ զգեօղս և զդաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին Սկկունեաց»։ Զոր յանձն առնոյր ձենազեայն Մամգոն»։ Մամգոնը «յետ բազում վստահութեանն, ի միում աւուրց հաւանեցուցանէ զնահապետ ազգին Սկկունեաց

(54) Փավստոս Բուզանդ, Ե, գ։

(55) Այստեղ մեր առաջադրանքից դուրս է խոսել թագավորի այդ դաժան միջոցառումների հետապնդած քաղաքական նպատակի մասին։ Նշենք միայն, որ դրանց հիմնական նպատակը հետզհետե խախտվող թագավորի կենտրոնական իշխանութիյան ամրապնդումն էր։

ելանել արտաքս յամրոցէն և որսալ երէս։ և ի միջամուխ լինել որսոյն՝ դիպեցուցանէ զապստամբն։ Եւ ընթացեալ իւրովք արամբքն ի դուռն ամրոցին՝ ունի զբերդն, կապելով զամենայն արս որ ի ներքս։ Նա և զազգն Սկկունեաց խորհեցաւ բառնալ, և կոտորեաց զամենեսեան. երկուք ոմանց փախստական անկան յաչխարհն Մոփաց։ Իսկ Մամգոն վաղվաղակի զգացուցանէ թագաւորին. ընդ որ ուրախացեալ Տրդատայ, գրէ հրովարտակ՝ իչխել նման ամենայնի զոր խոստացաւն, և կարգէ զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգոնեան։ Բայց մնացելոցն Սկկունեաց հրամայէ չվնասել»[56]։

Թող մեզ ներվի, եթե հետագա չարադրանքի պահանջներից ելնելով, այսքան ընդարձակ մեջբերում կատարեցինք Խորենացուց։

Վերոհիշյալ դեպքը բոլորովին եզակի երևույթ չէր Արշակունյաց Հայաստանում. ահա ևս մեկ օրինակ, Խորենացու մատյանից։

«Ի հեռանալ մեծին Ներսիսի՝ ստեաց Արչակ ամենայն ուխտիցն, զոր եղ ընդ նախարարսն, և խնդրեաց զքէն ձեռակերտին իւրոյ Արշակաւանու։ Եւ կոտորեաց զբազումս ի նախարարացն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, չարակնելով ագահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ։ Եւ կոչեցեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր իրր զազգականս իւր, ի պատճառս պատուոյ մեծարանաց, միահաղոյն զարս և զկանայս հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել։ Եւ ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Արշաւրի. քանզի ունէր կին Արշակունի, որ և բնակեցաւ ի նորին ժառանգութեան ի կողմանս Տարօնոյ և Հաշտենից, իրր տրտունջ գհօրեղբօրէ իւրմէ եղեալ գՆերսեհէ. Որոյ աղագաւ և ոչ ի կոտորման նոցա դիպեցաւ։ Այլ լուեալ գբօթն՝ հանդերձ որդւովքն Շաւարշաւ և Գագաւունիւ և բոլոր ընտանեօքն գնաց փախստական ի Յոյնս»[57]։

III-IV դարերում Հայաստանում արքայի կարգադրութիյամբ նախարարական ամբողջ տների բնաջնջման մասին Խորենացու հաղորդած այս (և ոչ միայն այս) փաստերը հաստատվում

(56) Մովսես Խորենացի, Բ, ձդ։

(57) Նույն տեղում, Գ, լա։ Նաև՝ Փավստոս Բուզանդ, Դ, ժթ։

են նաև Փավստոս Բուզանդի հաղորդած նույնիմաստ տեղեկություններով։ Բավարարվենք բերելով մեկ օրինակ միայն։ Փավստոսը, խոսելով Տիրան թագավորի (որն, ի դեպ, համարվում է հայ Արշակունիների թվում միանգամայն թուլլ միապետ) գահակալության ժամանակ նրա խորհրդատու Հայր Մարդպետի քսությունների և դավերի մասին, որոնք պատճառ դարձան հայկական նախարարական մի շարք տների բնաջնջմանը, խիճխայլոց գրում է։ «Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսմուա, որ աւելի ընդ ազգս նախարարցն գրգռէր զթագաւորն Տիրան։ Այս ինքն ունէր զպատիւն մեծի մարդպետութեանն, այր ներքինի՝ չարասիրտ, չարախորհուրդ, չարագործ, որում Հայր կոչէին։ Զրազումս ի նախարարացն եւ քսութեամբ առանց վնասու կոտորել, և խանգարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն։

Մանաւանդ աւելի գերկու տոհման զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անունդ առնել միահաղոյն զտոհմն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և զէգոն կոտորեցին ազգացն»[58]։

Բնականաբար իր հպատակների կյանքի տերը համարվող հայոց արքան միաժամանակ գերագույն տերն էր նաև նրանց ինչքի։ Ուստի և նախարարական այս կամ այն տունը բնաջնջելուց հետո, հայոց թագավորը իրեն իրավունք էր վերապահում ունեզրկելու ամբողջ տոհմը և բռնագրավված ամբողջ ունեցվածքը տնօրինելու իր հայեցողությամբ՝ նվիրել որևէ մեկ այլ նախարարական տոհմի կամ «յարքունիս առնել»։

Հայաստանում արքայի և ավագանու միջև գոյություն ունեցած այդպիսի հարաբերությունները, երբ տոհմագրյալների կյանքն ու ինչքը միապետի կամայականության առարկան էր, նկատելի են դեռևս նախորդ՝ Արտաշեսյան թագավորների ժամանակ։ Այդ երևույթի լավագույն ապացույցը կարելի է համարել մեր պատմահոր այն վկայությունը, թե Տիգրան Մեծը «ցասուցեալ ընդ վահունիան ... ընկենու գնոսա ի քրմութենէն, և զգիւղն յարքունիս առնու ...»[59]։

(58) *Փավստոս Բուզանդ, Գ, ժը։*
(59) *Մովսես Խորենացի, Բ, ժգ։*

Հունական աղբյուրներում ևս պահպանվել է ուշագրավ մի տեղեկություն, որն իր բնույթով լրացնում է Խորենացու վերոհիշյալ վկայությունը։ Հայտնի է, որ Տիգրան Մեծին հաջողվեց իր թագավորության սահմաններն ընդարձակել աչխարհագրական բոլոր չորս ուղղություններով և ժամանակավորապես իր իշխանությունը տարածել լայնարձակ երկրամասերի վրա։ Երբ արդեն նրա տերության սահմանները տարածվեցին Կովկասից մինչև Պաղեստին, հայոց թագավորի առաջ ծառացավ իր տիրույթների կենտրոնում մի նոր մայրաքաղաք ունենալու հրամայական պահանջը, քանի որ քաղաքամայր Արտաշատը մնում էր նորաստեղծ լայնարձակ թագավորության հյուսիս-արևելյան ծայրամասում, իսկ նորանվաճ Անտիոքը, Սելևկյանների մայրաքաղաքը, իր օտար բնակչությամբ չէր կարող վստահություն ներշնչել Տիգրանին[60]։ Այդ իսկ պատճառով, նա ձեռնամուխ եղավ իր քաղաքի՝ Տիգրանակերտի կառուցմանը։ Այդ նպատակով Հայաստանի «արքայից արքան» չարժման մեջ դրեց իր տրամադրության տակ գտնված բոլոր միջոցները. օտար ոազմագերիներ, կառուցող վարպետներ, անհաչիվ ոազմաոավար, դրամ, ինչպես նաև Հայաստան երկրում նկատված բոլոր հնարավորությունները, կանգ չառնելով նույնիսկ հայկական ավազանուն ունեզրկելու սպառնալիքի առաջ։ Ահա թե այս առնչությամբ ինչ է գրում Ապպիանոսը. «Այստեղ նա (Տիգրանը — Ս.Կ.) հավաքեց իր տերության ամենահայտնի մարդկանց, սպառնալով նրանց, որ այն, ինչ չեն վերցնի իրենց հետ՝ կբռնագրավվի»[61]։

Անկասկած Տիգրանի այս սպառնալիքը իր որոշակի ազդեցությունը ունեցավ. քանզի Պլուտարքոսը ևս, անդրադառնալով Տիգրանակերտի կառուցման հանգամանքներին, վկայում է, որ «ամեն մի հասարակ մարդ և իշխանավոր (δυνάστης), թագավորի նկատմամբ ունեցած հարգանքից, իրար հետ մրցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման համար»[62]։

Տեսնենք, թե հայոց արքան ինչպե՞ս էր վարվում չնորհազուրկ եղած հանցապարտ նախարարներից խլված ինչքի հետ։ Պարզվում է, որ նա այդ ամենը օգտագործում էր երկակի. կամ

(60) *Մ.Մ. Կրկյաշարյան, Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, Նո 1, էջ 113։*
(61) Appinai Mithrid., 64.
(62) Plutarchi Lucull., XXVI.

բռնագրավում էր արքունիքի օգտին,՝ «յարքունիս առնէր», և կամ պարգևում էր իր մերձավորներին և հավատարիմ նախարարներին: Խորենացու և Փավստոսի մատյաններում արձանագրված ենք տեսնում Արշակունյաց Հայաստանում կատարված մի շարք նման դեպքեր, որոնք ժամանակի քաղաքական և սոցիալական ցնցումների պերճախոս վկայություններն են:

Վերևում մենք խոսեցինք Սկևռնյաց Սղուկ Նահապետի ապստամբության մասին: Տրդատ Մեծը այդ ապստամբությունը զսպելու նպատակով, դիմում է Հայաստանի բոլոր նախարարներին, ասելով. «Որ ոք ածցէ առ իս զնահապետն Սկևռնեաց՝ տաց նմա յաւիտենական իշխանութեամբ զգեօղս և զդաստակերսս, և զամենայն իշխանութիւն ազգին Սկևռնեաց»[63]:

Արձագանքելով արքայի այդ կոչին, Ձենազյա Մամգոնը (ըստ Խորենացու՝ Մամիկոնյան տոհմի նահապետը) հանձն առավ գլուխ բերել այդ գործը: Նրան հաջողվեց իվերջո խաբեությամբ կործանել Սղուկ Սկևռնուն, որից հետո Տրդատ թագավորը Մամգունին չնորհեց հրովարտակ՝ «իշխել նմա ամենայնի զոր խոստացաւն, և կարգէ զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգոնեան»[64]:

Նույնպիսի մի դեպք կատարվում է նաև Տիրան թագավորի օրով Ռշտունյաց Զորա Նահապետի հետ, որը հայոց հարավային գնդի զորապետն էր: Զորան ընդվզում է Տիրան Արշակունու դեմ այն բանի համար, որ սա, բյուզանդական կայսր Հուլիանոս Ուրացողից վախենալով, մահվան է ենթարկում Հուսիկ եպիսկոպոսին և Գրիգոր Լուսավորչի աչակերտ և սպասավոր Ներսեհի Դանիէլ քահանային:

«Տեսեալ զայս Տիրանայ, — գրում է Խորենացին, — և յոյժ զարհուրեալ՝ առաքէ զմարդպետն կոչեցեալ Հայր, և հանդերձ երդմամբ կոչէ առ ինքն զՋօրայ: Իսկ զօրաց նորա տեսեալ, թէ լռեալ կան նախարարքն ամենայն՝ ըստ սովորական անժուժութեան մերոյ ազգիս ցրուեցան ի տունս իւրաքանչիւր: Եւ միայնացեալ Զօրայ, գայ առ արքայ յոչ կամաց. և արքայի զՋօրայ ի բուռն առեալ՝ ունի և զամուրն նոցին զԱղթամար, և բառնայ զամենեսին սատակմամբ: Բայց զմանուկ մի, որդի Մեհենդակայ

(63) Մովսես Խորենացի, Բ, ձգ:
(64) Նույն տեղում:

եղբօր նորա, փախուցեալ դայեկացն ապրեցուցին: Իսկ արքայ փոխանակ նորա կարգէ զՄաղամաթ տէր Անձևացւոյ»[65]:

Նմանօրինակ բազմաթիվ վկայություններ կարելի է քաղել մեր մատենագրությունից, բայց այսքանով բավարարվենք. այժմ նշենք մի քանի դեպք ևս, երբ հայոց արքան բռնագրավում է այս կամ այն անձնավորության ունեցվածքը և տիրույթները ոչ թե իր մերձավորներից մեկ ուրիշին վերապարգևելու, այլ ինքը սեփականելու նպատակով:

Այսպես, Խորենացին մանրամասն պատմելով Արշակ Թագավորի ձեռքով Գնելի սպանության մասին, գրում է, որ երբ Ներսես կաթողիկոսն իմացավ այդ, անիծելով Արշակին և սպանության առիթ եղողին, հեռացավ և օրերով սուգ պահեց: «Իսկ Արշակ ոչ զղջացեալ ապաշաւեաց, այլ անամօթեալ, ագահելով ի գանձս սպանելոյն և ի ժառանգութիւն՝ յաւել առնուլ զկին նորին Փառանձեմ»[66]:

Մեկ ուրիշ անգամ պատմահայրը գրում է, թե երբ Ներսես Եպիսկոպոսապետը բացակայում էր երկրից, Արշակ Թագավորը, օգտվելով առիթից, դրժեց նախարարներին տված իր խոստումը, կամենալով իր ձեռակերտի՝ Արշակավանի կործանման համար վրեժ լուծել նրանցից: «Եւ կոտորեաց զբաղումս ի նախարարացն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, չարակնելով ագահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ»[67]:

Խորենացու մեկ ուրիշ վկայության համաձայն, քիչ ժամանակ անց, նման քայլի դիմում է նաև այնպիսի թուլլ իշխանություն ունեցող մի թագավոր, ինչպիսին Խոսրով Վերջինն էր (385–388 թթ.): Ինչպես հայտնի է, Վարազդատ Արշակունու մահից հետո Հայաստանը փաստորեն երկու մասի բաժանվեց. մի մասի վրա, որը Բյուզանդիայի կողմում էր, թագավորեց Արշակը, իսկ մյուս՝ առավել մեծ մասի վրա պարսից արքա Շապուհը թագավոր կարգեց Խոսրովին: Մինչ այդ, սակայն, պարսկական հատվածում տիրույթներ ունեցող հայ նախարարները, ապահովության համար, արդեն ապատանել էին Արշակի մոտ: Բայց Հայաստանի պարսկական մասում Խոսրովի թագա-

(65) Մովսես Խորենացի, Գ, ժզ:
(66) Նույն տեղում, Գ, իզ:
(67) Մովսես Խորենացի, Գ, լա:

վոր կարգվելուց հետո, երբ Սասանյան Շապուհ արքան հավաստիացրեց նրանց անձի և ինչքի ապահովությունը, նրանց մի մասը վերադարձավ Խոսրովի մոտ, իսկ մյուս մասը, չհանապով հրավերին, մնաց Բյուզանդիայի կողմում: «Վասն որոյ, — շարունակում է Խորենացին, — գժառանգութիւնս նոցա կալաւ Խոսրով յարքունիս հրամանաւ Շապհոյ, և ոչ եթող զկալուածս որդւոյ ի հայր, և ոչ զեղբօր յեղբայր»[68]: Նույն այս Խոսրովը, ի պատասխան նախարարների ունեզրկված մասի դիմումին, որոնք ցանկանում էին վերադառնալ նրա մոտ, եթե արքան խոստանար վերադարձնել իրենցից բռնագրավված կալվածները, խիթխայլոց գրում է. «Երկրորդ՝ դարձուցանել ի ձեզ ժառանգութիւնս ձեր, զոր ունիմք յարքունիս. բայց յայնմանէ, զոր ումեք պարգևեցաք, զի ոչ չրջին պարգևք թագաւորացն առանց վնասու»[69]:

Հայոց թագավորների կատարած հողային և ինչքի բռնագրավումների մասին մեր հայրենի մատենագրության մեջ պահպանված վկայությունների ամբողջությանը ծանոթանալիս, ակնառու է դառնում հետաքրքիր մի հանգամանք: Այս կամ այն աստիճով ու պատրվակով հայոց արքայի կողմից կատարված բռնագրավումների մասին մեր պատմիչների հաղորդումները հիմնականում վերաբերում են հայ Արշակունիների թագավորության վերջին հարյուրամյակին, երբ կենտրոնական իշխանությունը երկրում համեմատաբար թուլացել էր և գլուխ էին բարձրացրել կենտրոնախույս ուժերը՝ ֆեոդալականացող նախարարները: Այս փաստը կարելի է համարել հետևանքն այն բանի, որ մեր անդրանիկ մատենագիրները իրենց չարադրանքներում հիմնականում պատկերել են մ.թ. IV դարից հետո Հայաստանում ստեղծված քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը: Այսպես, Ագաթանգեղոսը պատմում է Տրդատ Գ-ի ժամանակաշրջանի Հայաստանի մասին, անդրադառնալով մասամբ նաև Տրդատի հոր՝ Խոսրովի թագավորության տարիներին կատարված դեպքերին, իսկ Փավստոս Բուզանդը՝ Տրդատ Գ-ի հաջորդ Խոսրով Կոտակից (330–338 թթ.) մինչև Հայաստանի առաջին բաժանումը Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև 387 թվականին: Հետևաբար, ուսումնասիրողն իզուր կվորձեր նրանց

(68) Նույն տեղում, Գ, խզ:
(69) Մովսես Խորենացի, Գ, խը:

մատյաններում Արշակունիների թագավորության առաջին շրջանում կատարված հողային բռնագրավումներին վերաբերող որևէ վկայության հանդիպել: Էլ չենք խոսում Կորյունի, Եղիշեի և Ղազար Փարպեցու մասին, որոնք անդրադարձել են ավելի ուշ տարիների առանձին դեպքերին: Հարց է ծագում. իսկ Խորենացի՞ն: Զէ՞ որ նա իր դարակազմիկ մատյանում հայ ժողովրդի անցյալ պատմությունը չարադրելիս, միանգամայն հնարավորություն ուներ, նույնիսկ պարտավոր էր, արձանագրելու նման փաստերը: Բայց պատմահայրը ևս բացառություն չի կազմում: Հողային բռնագրավումների մասին նրա հաղորդած տեղեկությունները վերաբերում են մ.թ. IV դարից, այն է՝ Տրդատ Գ-ից այս կողմն ընկած ժամանակաշրջանին, եթե հաշվի չառնենք նրա այն եզակի վկայությունը, թե Տիգրան արքան «ցասուցեալ ընդ Վահունիան, ... ընկենու զնոսա ի քրմութենէն, և զգիւղն յարքունիս առնու ...»[70]:

Նման հանգամանքներում թվում է, թե հնարավոր է անել այն ենթադրությունը, որ մեր վաղ միջնադարյան պատմիչները գրկված են եղել անցյալի այդօրինակ դեպքերի մասին տվյալներից և գրել են իրենց ապրած ժամանակաշրջանի դեպքերի թարմ տպավորությունների տակ: Սակայն Խորենացու վերոհիշյալ միակ վկայությունը Տիգրանի և Վահունիների միջև տեղի ունեցած միջադեպի մասին մեզ թելադրում է ավելի շուտ կարծել, թե այդպիսի դեպքեր նախորդ դարերում չեն կատարվել, և եթե նույնիսկ տեղի են ունեցել, ապա շատ սահմանափակ չափերով: Հակառակ դեպքում, թագավորի և ազնվականության վերնախավի միջև գնացող երբեմն խուլ, հաճախ բացահայտ պայքարն ու դրա նշանակությունն ըմբռնող խորաթափանց պատմահայրը աչիթը բաց չէր թողնի այդ մասին հիշատակելու:

Բռնագրավումների ճանապարհով հողային հարցերը լուծելու եղանակը, մեր կարծիքով, նոր երևույթ էր հայ Արշակունիների թագավորության վերջին հարյուրամյակի համար: Արդ, ինչո՞վ էր պայմանավորված վերջին Արշակունիների այդպիսի քաղաքականությունը: Դրա արմատները, անկասկած, շատ ավելի խորն են, քան կարելի է ենթադրել սկզբնաղբյուրների նախնական ուսումնասիրությունից: Դրանք պիտի փնտրել հին Հայաս-

(70) Մովսես Խորենացի, Բ, ժդ:

տանի սոցիալ-անտեսական կյանքում իշխանության առաջին երկու դարերի ընթացքում տեղի ունեցած էական փոփոխությունների մեջ։

Այլ մի առնչությամբ մենք արդեն խոսել ենք այն մասին, թե Արևելքի հելլենիստական մյուս երկրների թագավորների նման, Արտաշեսյանները ևս, հատկապես Արտաշես Ա-ը և Տիգրան Բ-ը, Հայաստանն իրավամբ համարում էին իրենց նիզակով նվաճված երկիր (δορίκτητος χώρα), որը ամբողջապես պատկանում էր իրենց, իրրև սեփականություն։ Իր համար Հայաստանի նկատմամբ տերունական նույնպիսի դեր վերապահելու բոլոր հիմքերն ուներ նաև Տրդատ Ա Արշակունին, որը Հայաստանի ամեն մի թիզ հողին տեր էր դարձել օտարերկրյա նվաճողների դեմ մղած դաժան ու երկարատև մարտերից հետո։ Այս իրավիճակի արտահայտությունը պիտի համարել Գառնիի հունարեն արձանագրության մեջ Տրդատի իշխանության մասին տրված «ἀνάσσων ὡς δεσπότης» (թագավորելով իբրև դեսպոտ) բնորոշումը։

Հակառակը հաստատող փաստերի չգոյության պայմաններում, մենք հակված ենք ենթադրելու, որ հայոց առաջին Արշակունի թագավորի ժամանակ ամբողջ Հայաստանը, հելլենիստական թագավորությունների նման, համարվում էր արքունի երկիր (χώρα βασιλική), արքայի սեփականություն, ուստի և երկրի որևէ հատվածը մեկ ուրիշից բռնագրավելու անհրաժեշտություն չէր կարող ծագել։ Եթե արքան ցանկանար իր մերձավորներից որևէ մեկին այս կամ այն առիթով հողային նվիրատվություն անել, ապա իր այդ ցանկությունը նա կարող էր իրագործել առանց ուրիշի չահերին դիպչելու. մի բան, որ արդեն հնարավոր չէր մ.թ. IV-V դարերում, երբ հայ նախարարների տիրույթները աստիճանաբար աճել էին ի հաշիվ արքունի երկրի, իսկ վերջինս անհամեմատ կրճատվել էր։

Հիրավի, եթե հաստատվի մեր այն տեսակետը, թե Ապարանի հունարեն արձանագրությունը վերաբերում է ոչ թե Տրդատ Գ-ին, այլ՝ Տրդատ Ա-ին[71], ապա մենք կ'ունենանք անժխտելի ապացույցն այն բանի, որ Արշակունյաց հարստու-

(71) Ապարանի հունարեն արձանագրության առաջին հրատարակիչ Մ.Ի. Ռոստովցևը իրեն հատուկ բարեխղճությամբ ուսումնասիրել է այն (М.И. Ростовцев, Апаранская надпись царя Тиридата. Анийская

թյան հիմնադիրը Գնդունիների տոհմից Հռադամիստի (արձանագրության մեջ՝ Ῥοδομίστρου կամ Ῥοδομίθρου) որդուն, հավանաբար նրա մատուցած ինչ-որ ծառայության դիմաց,

серия, № 6, СПб., 1911)։ Նա իրավամբ նշում է որ արձանագրությունը պետք է վերաբերի Արշակունի երեք Տրդատներից մեկին, քանի որ դրանում կարդում ենք՝ Τιριδάτης ὁ μέγας Μεγάλης Ἀρμενίας βασιλεύς «Տրդատ Մեծ, Մեծ Հայքի թագավոր»։ Մ.Ի. Ռոստովցևը ենթադրում էր, որ այն պետք է լինի հայոց Տրդատ Գ թագավորը, քանի որ, նրա կարծիքով, արձանագրության վերջում պահպանվել են մի երկու տառի հետքեր, որոնք նշում են 305 թվականը։ Այսպիսի թվագրման ավելի քան կասկածելի լինելը նշել է դեռևս Կ.Վ. Տրեվերը (К.В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, т. I, М.-Л., 1953, էջ 276-282)։ Մ.Ի. Ռոստովցևի առաջարկած թվագրմանը չի առարկում Հ. Մանանդյանը (Քննական տեսություն ..., հ. Բ, մաս Ա, էջ 122)։ Բ.Ն. Առաքելյանը գտնում է, որ արձանագրության մեջ հիշատակված Տրդատ թագավորը հավասարապես կարող է լինել և Ա-ը, և Գ-ը (Բ.Ն. Առաքելյան, «Կօշիկը» որպես սոցիալական տերմին, Արմֆանի Տեղեկագիր, 1940, Նո. 3, էջ 78)։ Կ.Վ. Տրեվերը, իր հերթին, մանրամասն հետազոտելով տվյալ արձանագրությունը և այն համեմատելով Գառնիի հունարեն արձանագրության հետ (մի բան, որի հնարավորությունը չուներ Մ.Ի. Ռոստովցևը այն պարզ պատճառով, որ վերջինս հայտնաբերվել է միայն 1945 թ.), վճռականորեն մերժում է Ապարանի արձանագրությունը Տրդատ Գ-ին վերագրելու տեսակետը և գտնում, որ այն վերաբերում է Տրդատ Բ-ին (217-227 թթ.)։ Մենք գտնում ենք, որ Գառնիի և Ապարանի հունարեն արձանագրությունները նույն ժամանակին են վերաբերում և դրանցում հիշատակված Մեծ Հայքի թագավոր Տրդատը միևնույն անձնավորությունն է՝ Հայաստանի Արշակունյաց թագավորության հիմնադիրը։ Ի՞նչն է մեզ հիմք տալիս այդպես ենթադրելու. 1) Երկու արձանագրություններում Տրդատի թագավորական տիտղոսաշարի նույնությունը։ 2) Երկու արձանագրություններում տառաձևերի համընկնումը. մինչդեռ այդ տառերը բոլորովին այլ ձևերով են փորագրված III դ. վերջին – IV դ. սկզբին վերաբերող Տիգրանակերտի հունարեն արձանագրության մեջ, որտեղ տառերն ընդհանրապես պատկերված են ավելի համաչափ, երկարավուն, ուղիղ անկյուններով։ Առավել տարբերիչն այն է, որ Տիգրանակերտի արձանագրության մեջ կիրառվել է կապգիրը (լիգատուրա) և հապավումը (C.F. Lehmann-Haupt, Eine griechische Inschrift aus der Spätzeit Tigranokertas, "Klio", VIII, 1908, էջ 447; К.В. Тревер ..., նշվ. աշխ., տախտակ 88-90). մի բան, որ խոսում բացակայում է Գառնիի և Ապարանի արձանագրություններում։ 3) Ապարանի արձանագրության բովանդակության ընդհանուր իմաստը։

պարգևում է Նիգ քաղաքն իր գավառով (πόλιν Νίγην)[72]:

Այս հարցում ոչ պակաս նշանակություն պիտի ունենար նաև այն, որ Արտաշեսի և Տիգրան Բ-ի օրոք կատարված արտաքին նվաճումները հնարավորություն էին տալիս հայոց թագավորին նոր գրավված երկրամասերի հաշվին բավարարել աճող ազնվականության հողային պահանջները, առանց ներքին բռնագրավումների: Հիշենք, որ Տիգրան Բ-ի եղբայր Գուրասը տացել էր Միդոնիա երկրամասը Մծբին կենտրոնով[73], իսկ իր մերձավորներից Բագարատին Տիգրանը նշանակել էր նոր նվաճված Կիլիկիայի և Ասորիքի կառավարիչ[74]: Մինչդեռ հայ Արշակունիները, ամբողջ ժամանակ պարսիկների մնալով Հայկական լեռնաշխարհի բնական-աշխարհագրական սահմանների մեջ և այն բանից հետո, երբ թագավորի՝ նախարարներին արած հողային նվիրատվությունների հետևանքով, մեծ չափերով կրճատվել էր արքունի երկիրը, ստիպված էին ազնվականության մի խմբին բավարարելու համար չնորհագրկել մեկ ուրիշ մասին[75]:

Դասակարգային հասարակության մեջ պետության քաղաքական գործունեությունն ընթանում է երկու ուղղությամբ՝ արտաքին և ներքին: Այս պայմաններում թագավորի, որպես գերագույն իշխանության կրողի, ֆունկցիաները պետք է դրսևորվեին թե՛ արտաքին և թե՛ ներքին քաղաքականության բնագավառներում: Արտաքին քաղաքականության բնագավառում թագավորը վարում էր պատերազմ հայտարարելու, օտար դեսպաններին ընդունելու, գինակցային դաշինք կնքելու հարցերը անձամբ կամ իր կողմից հատուկ հանձնարարությամբ ուղարկված պատվիրակի միջոցով:

(72) М.И. Ростовцев, նշվ. աշխ., էջ 8:

(73) Plutarchi Lucull., 32: Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 151, 158, 208, 221: Նույնի՝ Տիգրան Բ-ը և Հռոմը, էջ 49, 56, 137, 159:

(74) Appiani Syr., 48.

(75) Արտաքին նվաճումների հնարավորություն ունենալը կամ չունենալը իր որոշակի անդրադարձումն է գտել հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի այլ երևույթների վրա ևս, ինչպիսիք օրինակ՝ քաղաքաշինությունը և սինոյկիսմոսի հետ կապված խնդիրները: Այս մասին տես՝ Ս.Մ. Կրկյաշարյան, Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, Նո 1, էջ 107-118:

Դեռևս Արտաշեսյան հարստության շրջանում հայոց թագավորները ունեցել են միջազգային որոշ հեղինակություն և մասնակցել նույնիսկ այլ երկրների միջև ծագած միջադեպերը հարթելու կապակցությամբ գումարված վեհաժողովներին: Դրա լավագույն վկայությունը գտնում ենք Պոլիբիոսի մոտ: Հույն պատմիչը, նկարագրելով մ.թ.ա. 180 թվականին Փառնակ Պոնտացու և նրա դաշնակից Փոքր Հայքի տիրակալ Միհրդատի պատերազմը Պերգամոնի, Կապպադովկիայի և Բյութինիայի թագավորների կազմած դաշնակցության դեմ, հիշատակում է երկու կողմերի միջև ստորագրված հաշտության պայմանագիրը, որի կնքմանը մասնակից էր դարձել նաև «Արտաշեսը՝ Հայաստանի մեծագույն մասի տիրակալը»[76]: Արտաշեսյան թագավորների, հատկապես Արտաշեսի, Տիգրան Բ-ի և նրա որդի Արտավազդի արտաքին քաղաքական լայն կապերի մասին հայ և օտար մատենագիրները մի շարք վկայություններ են պահպանել, որոնք բազմիցս դարձել են ուսումնասիրողների ուշադրության առարկան. ուստի և մենք ավելորդ ենք համարում դարձյալ անդրադառնալ դրանց:

Այս առնչությամբ ինչ-որ առանձնահատուկ նշանակություն է ստանում Ստրաբոնի վկայությունը Հայաստանին հարևան Իբերիայի մասին: Խոսելով այդ երկրում մ.թ.ա. II դարում տիրող հարաբերությունների մասին, նա հավաստում է այն փաստը, թե Իբերիան բնակեցված է չորս դասի (τέτταρα γένη) մարդկանց կողմից, թե «երկրորդը քրմերի դասն է, որոնց հանձնված է հարևանների հետ հարաբերություններ վարելու գործը»[77]:

Այս հաղորդման իմաստը, մեր կարծիքով, այն է, որ քրմերը արտաքին հարաբերությունների հարցում կարևոր դեր էին խաղում, սակայն, անկասկած, երկրի արտաքին քաղաքականության սանձերը, վերջին հաշվով, գտնվում էին թագավորի ձեռքին և քրմերը, լավագույն դեպքում, կարող էին հանդես գալ սոսկ իբրև թագավորի հանձնակատարներ կամ թե խորհրդատուներ:

Ստրաբոնի ժամանակ, հավանաբար, Հայաստանում ևս քրմերը նման իրավասություններ ունեցել են, ինչպես Իբերիա-

(76) Polyb., XXV, 2, 1-12.

(77) Strabo, XII, 3, 6.

յում: Սակայն բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ Արշակունի Տրդատ Ա-ի թագավորության ժամանակ երկրի արտաքին քաղաքականությունը ամբողջովին վարում էր ինքը՝ հայոց թագավորը, քանի որ, ինչպես այդ մասին բազմիցս նշել ենք, Տրդատը եղել էր միաժամանակ թագավոր և քրմապետ:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում անել մի վերապահություն: Եթե Արտաշեսյանների ժամանակ հայոց թագավորը իվիճակի էր առավել ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու (բացի վերջին շրջանից, երբ հայոց թագավորը հայտարարվեց, «Հռոմի բարեկամ» φιλορώμαιος), ապա Տրդատի գահակալությամբ և նրա հաջորդների օրոք, երբ Հայաստանի գահը բաժին ընկավ պարթև Արշակունիների տոհմի կրտսեր ճյուղին, հայոց թագավորն իր արտաքին քաղաքական հարաբերություններում պետք է հաշվի առներ Պարսկաստանում գահակալող Արշակունիների ավագ ճյուղի շահերը, որոնք, ի դեպ, ձեռնտու էին նաև Հայաստանի համար: Մեր ասածի լավագույն վկայությունը հայ-պարթևական ավագանու ուղեկցությամբ Տրդատի՝ Հռոմ կատարած ճանապարհորդությունն էր և այնտեղ Ներոն կայսեր հետ վարած բանակցությունները, որի պերճախոս նկարագրությունը մեզ թողել են անտիկ հեղինակները[78]:

Հայ Արշակունիների արտաքին քաղաքականությունը կարող էր համընթաց լինել պարսկական արքունիքի շահերին հավանաբար մինչև Պարսկաստանում Սասանյան հարստության հաստատումը (226 թ.):

Գառնիի հունարեն արձանագրության մեջ Տրդատի տիտղոսաշարի մասին խոսելիս մենք նկատեցինք, որ այնտեղ հանդիպող ἀνάσσων ὡς δεσπότης (տիրելով իբրև դեսպոտ) արտահայտությունը բնութագրում է Տրդատի թագավորական իշխանության ներքին էությունը: Այս փաստից, ինչպես նաև նախորդ էջերում մեր ամբողջ շարադրածից հետևում է, որ հայոց արքան ինքնիշխան էր նաև ներքին քաղաքականության ասպարեզում, որտեղ ինքն էր հանդիսանում և՛ օրենքը, և՛ իրավունքի աղբյուրը:

Հնագույն այս ժամանակաշրջանի Հայաստանում կիրառված գրավոր օրենքների մասին մենք որոշակի տվյալներ չու-

(78) Dio Cass., LXIII, 1-7; Taciti Annales, XVI, 24; C. Plinii Nat. Hist., XXX, 16; XXXIII, 54; Sueton., Nero, XIII.

նենք, բայց մեզ հասած մի քանի կողմնակի տեղեկություններ հավանական են դարձնում այդպիսի օրենքների գոյության մասին ենթադրությունը: Հայտնի է, որ Տիգրան Բ-ը իր արշավանքների ժամանակ տասներկու հելլենական քաղաքներու բնակչությունը տեղահանեց ու փոխադրեց Հայաստան[79]: Այդ քաղաքների թվում էր նաև Կապպադովկիայի մայրաքաղաք Մաժաքը, որտեղ ինչպես վկայում է Սարաբոնը, գործադրվում էին հույն օրենսդիր Ֆարոնդասի օրենքները[80]: Նման պայմաններում միանգամայն հնարավոր է, որ այդ օրենքները, թեկուզ և ժամանակավոր կերպով, հույն գաղթականների հետ մուտք գործած լինեին հայկական քաղաքները, որտեղ բնակեցվել էին Տիգրանի կողմից տեղահանված հույները[81]: Այդ ժամանակ իրենց օրենքները կարող էին բերած լինել ոչ միայն հելլենական քաղաքներից տեղահանված բնակիչները, այլև այն հրեաները, որոնց Հայաստան էր քշել Տիգրանը: Պիտի ենթադրել, որ այս հրեաների օրենքները ավելի երկար կյանք են ունեցել Հայաստանում, քան հույների օրենքները, քանի որ Հռոմի դեմ Տիգրանի մղած պատերազմների ոչ բարեհաջող ելքից հետո քաղաքների հելլենական բնակչությունը վերադարձավ իր երկիրը, մինչդեռ հրեաները դեռևս երկար ժամանակ մնացին Հայաստանում, պահպանելով իրենց համայնքները: Դրա լավագույն վկայությունները մենք գտնում ենք Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու մոտ[82]:

Հայոց թագավորի սահմանած օրենքների մասին ինչ-որ ընդհանուր կարգի տեղեկությունների մենք հանդիպում ենք Մովսես Խորենացու մատյանում: Այսպես, պատմահայրը նշում է, որ Վաղարշակը իր եղբոր՝ Արշակի կողմից Հայաստանի թագավոր հաստատվելուց հետո «կարգս կենցաղականս, որչափ մարթէր, սահմանեաց աշխարհիս»[83]: Շարունակելով իր պատմությունը, Խորենացին դարձյալ խոսում է թագավորության մեջ Վաղարշակի սահմանած կարգերի՝ «օրէն թագաւորութեան» մասին[84]:

(79) Strabo, XI, 14, 15 (C. 532).
(80) Նույն տեղում, XII, 2, 9 (C. 539).
(81) Համմա. Г.Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, էջ 64.
(82) Փավստոս Բուզանդ, Դ, ծե, իբ: Մովսես Խորենացի, Գ, լե:
(83) Մովսես Խորենացի, Բ, գ:
(84) Նույն տեղում, Բ, է:

Այս կապակցությամբ հետաքրքիր է նկատել, որ Վաղարշակը ոչ միայն օրենքներ էր սահմանել, այլև հատուկ պաշտոնյաների էր նշանակել, որոնք պարտավոր էին իր սահմանած օրենքների կատարմանը հետևելու։ Այսպես պիտի հասկանալ Խորենացու այն վկայությունը, թե Վաղարշակը սահմանում է «իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս և ի քաղաքս և յաւանս»[85]։

Դեռևս հին Արևելքի տերկատիրական երկրներում, այդ թվում նաև Ուրարտու պետության մեջ առեղծված հանգամանքներում, երբ ամբողջ երկիրը, իր հարստությամբ հանդերձ, համարվում էր թագավորի սեփականությունը, արքաներն ունեին նաև ոչ պակաս կարևոր մի իրավունք՝ նոր քաղաքներ ու բերդեր հիմնելու և կառուցելու ֆունկցիա։ Որպես իլլյուստրացիա մեր ասածին, բավարարվենք հիշատակելով սոսկ Ուրարտուի տարածքի վրա թագավորների կողմից հիմնված (նշենք, որ այդ ամենը վկայված են սեպագիր արձանագրություններում) մի շարք քաղաքների ու բերդերի անունները, Մենուախինիլի, Ռուսախինիլի, Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թեյշեբաինի և այլն։ Ինչպես նկատելի է, նորակառույց այդ քաղաքներն ու բերդ-բնակավայրերը շատ դեպքերում կոչվում էին թագավորի անունով։

Այնուհետև հելլենիստական ժամանակաշրջանում քաղաքաշինության մեջ այդ երևույթն իր հետագա զարգացումն ապրեց։ Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդների կողմից Արևելքում կառուցված մեզ հայտնի քաղաքների սոսկ թվարկումն իսկ մեր ասածն ապացուցող ամենապերճախոս փաստը կարող է համարվել։ Պատմությանը հայտնի են մի շարք Ալեքսանդրիաներ, Անտիոքներ, Սելևկիաներ, Լաոդիկեաներ, Արամեաներ և այլ դինաստիական անուններ կրող քաղաքներ։ Հետագայում հելլենիստական մանր տերությունների տարածքի վրա առաջացան թագավորների անունը կրող Ատտալիա, Նիկոմեդիա, Պրուսիա, Արիարաթիա, Փառնակիա, Արսամեա և այլ քաղաքներ։

Ուրարտական քաղաքաշինության ավանդները ժառանգած և աստիճանաբար հելլենիզմի ոլորտը ներգրավվող Հայաստանը չէր կարող ամբողջ Արևելքն ընդգրկած քաղաքաշինության այս հուժկու շարժումից հեռու մնալ։ Եվ պատահական չէ, որ Երվան-

(85) Նույն տեղում, Բ, ը։

դունիների և Արտաշեսյանների թագավորության ժամանակ, Հայաստանում ևս առաջացան մի շարք նոր քաղաքներ, որոնք կրել են իրենց հիմնադիր թագավորի անունը. օրինակ՝ Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը և այլն[86]։ Հայկական հնագույն ավանդության համաձայն, Արմավիր քաղաքը ևս կրում է իր հիմնադրի՝ Արամայիսի անունը։ Այդ առնչությամբ պատմահայրը գրում է «իսկ որդի նորա (Արամանեկայ — Ս.Կ.) Արամայիս չինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր»[87]։ Նույնը կրկնում է նաև Սեբեոսը՝ գրելով. «Զկի Արամանեկայ որդի նորա Արամայիս չինէ իւր ի վերայ գետեզրն տուն բնակութեան, և անուանէ զանուն նորա ըստ անուն իւրոյ Արամայիր»[88]։

Նույն սկզբունքներով քաղաքաշինության այս ընթացքը Հայաստանում շարունակվեց նաև հետագայում՝ Արշակունիների թագավորության ժամանակ։ Քաղաքաշինության ասպարեզում Հայաստանի Արշակունիների գործունեությունն, իհարկե, չուներ այն թափը, ինչ նկատելի էր Արտաշեսյան թագավորների, հատկապես Արտաշեսի և Տիգրան Բ-ի գահակալության տարիներին։ Այսուհանդերձ, սկզբնաղբյուրներում կան մի շարք տվյալներ, որոնք թույլ են տալիս ենթադրելու, որ Արշակունի թագավորները ևս, իրենց նախորդների նման, ամեն հնարավորություն ի գործ են դրել, Հայաստանում շինարարական աշխատանքներին

(86) Я.А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён, 2рд հրատ. Ереван, 1954; С.Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, N^{O} 3, էջ 11 և հաջ.; Г.Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, стр. 30 և հաջ.; Ս.Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 79–127։

(87) Մովսես Խորենացի, Ա, ժբ։

(88) Պատմութիւն Սեբեոսի ի Հերակլն, Ա, ա։ Նշենք, որ մեր մատենագիրների այս վկայություններն ունեն առասպելական բնույթ։ Արմավիրի, որպես քաղաքի, առաջացման ընդհանուր պրոցեսի պատկերը, հավանաբար, չէր տարբերվում Արևելքում հին քաղաքների առաջացման ընդհանուր պրոցեսից, որտեղ նրանք առաջանում էին «իբրև քաղաքներ, որոնք կառուցվում էին տաճարի շուրջը, սերտ կերպով կապված էին տաճարի տերիտորիայով, այդ տաճարի անտեսության հետ» (Н.В. Пигулевская, Города Ир: ia в раннем средневековье, М.-Л., 1956, էջ 17)։

զարկ տալու համար։ Մծուրն, Վաղարշապատ, Արշակավան քաղաքների կառուցումը, ինչպես նաև Խոսրով Կոտակի կողմից Տիկնունյաց անտառի տնկումը, դրա լավագույն վկայություններն են։ Արշակունի թագավորներից քաղաքաշինությամբ զբաղվել է հատկապես այդ հարստության հիմնադիր Տրդատ Ա-ը, որի անունը կրող քաղաք, ճիշտ է, մեզ հայտնի չէ, սակայն աղբյուրներից հետևում է, որ նա վերակառուցել է հռոմայեցիների կողմից հիմնովին ավերված Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքները։ Բացի այդ, Գառնիի ամրոցի վերակառուցումը և Գառնիի հեթանոսական հոյակերտ տաճարի կառուցումն իսկ մեզ իրավունք կտար Տրդատին դասելու հայոց չինարար արքաների շարքը։

Տարածքային առումով երկրի գերագույն տերը լինելու հանգամանքով էր պայմանավորված հայոց թագավորի նաև այն իրավասությունը, ըստ որի ազնվականության ներկայացուցիչներից իր մերձավորներին այս կամ այն ծառայության դիմաց նա ընդարձակ տիրույթներ, նույնիսկ ամբողջ գավառներ էր պարգևում։ Այդ մասին բազմաթիվ վկայություններ կան Ագաթանգեղոսի, Փավստոսի և Խորենացու մոտ։ Այս երևույթի խտացրած արտահայտությունը պիտի համարել Փավստոսի այն վկայությունը, թե երբ հայոց նախարարները գալիս են Ներսես եպիսկոպոսապետի մոտ Արշակ թագավորի բռնությունների դեմ գանգատվելու, կաթողիկոսը պատասխանում է. «Զի ամենեքեան դուք աւադիկ կայք և վկայէք. մանաւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք յազգէդ Արշակունոյ. ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէն. և ոմանք մեծամեծք աշխարհաց. ոմանք աւագ աւագ աւանաց գեղից և գանձուց տեարք լեալ էք, և պէսպէս դաստակերտացն։ Զի թէպէտ և առ արարիչն աստուած յանցաւոր իցեն պեղծ ազգն Արշակունեաց, սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան և յաղբոյ թօթափեալ է, զոմն գործով, զոմն պատուով, զոմն իշխանութեամբ, զոմն գործակալութեամբ»[89]։

Այն մասին, որ Արշակունի թագավորը իրեն մատուցված ծառայության դիմաց հողային տիրույթներ էր պարգևում իր այս կամ այն հպատակին, մեր տրամադրության տակ ունենք այնպիսի անժխտելի վավերագիր, ինչպիսին է արդեն մեր հիշատակած Ապարանի հունարեն արձանագրությունը, որում գրոշմված է այն փաստը, թե Մեծ Հայքի թագավոր Տրդատը Նիգ քաղաքը իր չրջակայքով պարգևում է Գնթունիներից մեկին։

Հայոց թագավորի՝ իր մերձավորներին չնորհած նույնպիսի պարգևների մասին բազմաթիվ վկայություններ կան նաև մեր պատմիչների մոտ։ Ահա մեկ օրինակ Խորենացուց. «Բայց թագաւորին Տրդատայ մխիթարել զդլուխ որդւոյն կամասրայ զԱրշավիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ գնա սերէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանց։ Յաւելու և այլ պարգևս — զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար նորոյն մեծի»[90]։

Արշակունի թագավորները, իրենց նախորդների՝ Արտաշեսյանների նման, հողային տիրույթներ պարգևել են ոչ միայն աշխարհիկ ազնվականության ներկայացուցիչներին, այլև տաճարներին ու եկեղեցիներին, ինչպես նաև եկեղեցու առանձին սպասավորներին։ Բերենք մեր պատմիչներից մի քանի վկայություն։

Ագաթանգեղոսը գրում է, որ քրիստոնեության ընդունելուց հետո Տրդատ թագավորը «յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց չորս չորս հողս երդոյ՝ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»[91]։

Այս տեսակետից ուշագրավ է նաև Փավստոսի հետևյալ վկայությունը. «Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր գհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց»[92]։ Նույն Փավստոսը հայտնում է, որ երբ Խոսրով Կոտակի թագավորության ժամանակ բնաջինջ արվեցին Մանավազյանների և Որդունիների նախարարական տոհմերը, սրանց կալվածքները տրվեցին Աղբիանոսին և Բասենի եպիսկոպոսին. «Եւ ետ (Խոսրով — Մ.Կ.) զաւանն և զբուն գահոյից գեղն նահապետին Մանաւազենից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի՝ զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և գաւառա-

(89) Փավստոս Բուզանդ, Դ, ծա։

(90) Մովսես Խորենացի, Բ, գ։ Հմմտ. նաև՝ Խորենացի, Բ, ձբ և Փավստոս Բուզանդ, Դ, ծա։

(91) Ագաթանգեղոս, ՃԺ-Ի

(92) Փավստոս Բուզանդ, Ե, լա։

կան հանդերձ, որ շուրջ զնովոք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ։ Եւ եառն զբուն գեղն Որդունւոյ, որոյ անուն էր Որդուրու ուստի[93] եպիսկոպոս Բասանու ամենայն սահմանօքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասանու»[94]։

Հոգևորականներին տրված այս և նման նվիրատվությունների, ինչպես նաև հեթանոսական տաճարների ունեցվածքը քրիստոնեական եկեղեցուն ու նրա նորընծա սպասաւորներին անցնելու հեռևանքով, արդեն IV դարի կեսերին Հայաստանում ստեղծվել էր այնպիսի դրություն, երբ երկրի զգալի մասերը կենտրոնացել էին կղերի ձեռքին։ Անկասելի կերպով աճում էր եկեղեցապատակական հողատիրությունը ի հաշիվ արքունի և աշխարհիկ հողատիրության։ Այս հանգամանքն էլ պայմանավորեց աշխարհիկ և հոգևոր հողատերերի՝ սոցիալական լուրջ հեռևանքներով հղի հակամարտությունը։ Այդ հակամարտության առաջին արտահայտություններից մեկը պիտի համարել Փավստոսի մոտ պահպանված հեռևյալ պատումը։

Հայր Մարդպետը[95] Աչտիշատի եկեղեցական կալվածքներում չրջելիս, տեսնում և հիանում է այդ ընդարձակ և գեղատեսիլ վայրերով և սկսում նախատինք թափել Տրդատի և առ հասարակ հայոց Արշակունի թագավորների վրա։ «Զի ա՞րդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է, և ոչ արանց .... և ասէր՝ եթե զայստեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է չինել զապարանս արքունի։ Եւ թէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորաւն հասիցց, ասէ, որ ինչ աստ իցէ, զայն ի բաց փոխեցից. և որ աստ իցեն, ասէ, զնոսա հանից, և զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից»[96]։

Արշակունի թագավորի կարևորագույն իրավունքներից էր նաև իր գերիշխանության տակ գտնվող երկրամասերի վրա կառավարիչներ, ինչպես նաև արքունի պաշտոնյաներ, գործակալներ նշանակելը։ Այդ մասին մի շարք վկայություններ կան սփռված Խորենացու և Փավստոսի մատյաններում։ Այս հարցին վերաբերող ամենահայտնի աղբյուրը, սակայն, Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի 7-րդ և 8-րդ գլուխներն են,

(93) Ց. Մարկվարտն «ուստի» բառն ուղղում է՝ «Եւստաղի» (J. Markwart. Die Entstehung der armenischen Bistümer, Rom, 1932, էջ 165).

(94) Փավստոս Բուզանդ, Գ, դ։

(95) Այս պաշտոնի մասին կը խոսվի ստորև։

(96) Փավստոս Բուզանդ, Դ, ժգ։

որոնցում պատմվում է վաղարշակ թագավորի վարչական բարեկարգումների մասին. դրանց բովանդակությանը այլ առիթներով մենք հատվածաբար կանդրադառնանք ստորև. ուստի և հարկ չենք համարում այդ երկար գլուխները այստեղ մեջ բերել։

Հին Հայաստանում թագավորական իշխանությունը Արտաշեսյանների ժամանակ եղել է ժառանգական, անցել է հորից որդի. արքայի անզավակ մահանալու դեպքում գահը ժառանգել է նրա եղբայրը կամ ամենամոտիկ ազգականը։ Այդ են վկայում անտիկ հեղինակների մոտ Հայաստանի մասին պահպանված վկայությունները։ Գահակալման իրավունքները ժառանգական են եղել նաև հելլենիստական մյուս պետություններում՝ Պտղոմեոսյան Եգիպտոսում, Սելևկյանների տերության մեջ, Պերգամոնում, Կապադովկիայում, Պոնտոսում և այլն։ Սակայն այդ նույնը չի կարելի հաստատել Հայաստանում Արշակունիների թագավորության սկզբնական շրջանի մասին։ Ճիշտ է, մեր մատենագիրների մոտ պահպանված վկայությունների համաձայն Հայաստանի գահը ժառանգաբար անցնում է հորից որդի, սակայն այդ պատմիչները (նկատի չունենք Խորենացուն և Սեբեոսին) պատկերել են Հայաստանում Արշակունյաց թագավորության երկրորդ կեսը, այն էլ Պարսկաստանում Սասանյանների հարստության հաստատումից հետո ընկած ժամանակահատվածը։ Մեր կարծիքով, Հայաստանում թագավորական իշխանության ժառանգաբար հորից որդուն անցնելու հարցում շատ կարևոր նշանակություն ունեցել է Պարսկաստանում Արշակունիների տապալումը և Սասանյանների իշխանության գլուխ անցնելը։ Բանն այն է, որ Հայաստանում Տրդատ Ա-ի թագավորությամբ (66 թ.), ինչպես նշել ենք, գահն անցավ Արշակունյաց տոհմի կրտսեր ճյուղին։

Մինչև Տրդատի թագավորելը, Հայաստանը, ինչպես ասվեց, դարձել էր պարթևների և Հռոմի միջև պայքարի մրցապարեզ։ Հռոմում պարթևների թեկնածու Տրդատի թագադրությամբ, ասես յուրատեսակ համաձայնություն հաստատվեց երկու մրցակից տերությունների միջև, ըստ որի ամեն անգամ, երբ Հայաստանի «թագավորական գահը թափուր էր լինում, պարթև Արշակունիների թագավորական տոհմից ներկայացվելու էր Հռոմեական կայսրության ի հաստատություն հաւմար ու ընդունելի թեկնածու»[97]։ Հասկանալի է, որ տվյալ պայմաններում խոսք

(97) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Բ, մաս Ա, էջ 19։

անգամ չի կարող լինել հայկական գահի ժառանգաբար հորից որդուն անցնելու մասին։

Այս նույն եզրակացության են հանգել նաև «Հայ ժողովրդի պատմության» բուհական դասագրքի հեղինակները, գրելով. «Զնայած Արշակունյաց դինաստիայի հաստատմանը, մինչև II դարի վերջը հայկական գահը ժառանգաբար չէր անցնում Հայաստանի Արշակունի թագավորների որդիներին։ Հռանդեայի դաշնագրի հիման վրա՝ յուրաքանչյուր թագավորի մահից հետո պարթև Արշակունիները հայկական գահի համար իրենց տոհմից առաջարկում էին նոր թեկնածու, որը կարող էր թագավորել հռոմեական կայսրության հավանությունը և հաստատությունը ստանալուց հետո միայն»[98]։

Ակներև է, որ Արշակունյաց Հայաստանում գահակալման ժառանգության կարգի վերաբերյալ այս նույն կարծիքին է նաև Ս.Տ. Երեմյանը, երբ վերջերս անդրադառնալով Սասանյան Շապուհ Ա-ի թողած եռալեզվյան արձանագրության տվյալներին, իմիջիայլոց գրում է. «Մովսես Խորենացու հիշյալ (երկրորդ գրքի 71–79 — Ս.Կ.) գլուխները նվիրված են III դարի պատմական դեպքերի նկարագրությանը, երբ Մեծ Հայքի գահի վրա իրրև ժառանգական գահակալներ նոր էին հաստատվել հայ Արշակունիները»[99]։

Այս հարցը, ինչ խոսք, չի կարելի վերջնականապես լուծել, առանց հաստատապես վերականգնելու Արշակունյաց Հայաստանի քաղաքական պատմությունը մեզ հետաքրքրող ժամանակահատվածում. մի բան, որ դեռևս լիովին հնարավոր չէ սկզբնաղբյուրների սղդի վիճակում։ Այդ ուղղությամբ մինչև այժմ ամենահաջող փորձը պիտի համարել ակադ. Հ.Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Բ հատորի և «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի 1 հատորի համապատասխան հատվածները[100]։ Հետևելով Հ.Հ. Մանանդյանի շարադրանքին, դարձյալ տեսնում ենք, որ նշված ժամանակահատվածում, այն է՝ Տրդատ Ա-ից մինչև II դարի վերջը, Հայաստանում չէր կարող գոյություն ունեցած լինել գահակալման ժառանգականություն։ Համոզվելու համար համառոտակի չարադրենք Տրդատից հետո մինչև Սասանյաններն ընկած ժամանակահատվածում գահակալած Արշակունի թագավորների ընդհանուր տվյալները։

Տրդատ Ա-ից հետո Հայաստանի գահի վրա տեսնում ենք Սանատրուկին (75–110 թթ.), որի մասին մեզ սակավ տեղեկություններ են հասել։ Նա ծագումով Արշակունի տոհմից էր, բայց նրա՝ Տրդատի որդին լինելու մասին ոչ մի տվյալ չունենք. այս էլ, հավանաբար, պատմական ճշմարտության արտացոլումն է։ Սանատրուկին հաջորդում է պարթևական Բակուր Բ թագավորի որդի Աշխադարը (110–113 թթ.)։ Սա գահընկեց է արվում և պարսկական գահի վրա Բակուրին հաջորդած Խոսրով թագավորը նրա փոխարեն հայոց թագավոր է կարգում Բակուրի մյուս որդուն՝ Պարթամասիրին (113–114 թթ.)։ Այնուհետև երեք տարի, Տրայանոս կայսեր արևելյան արշավանքի հետևանքով, Հայաստանը ժամանակավորապես զրկվում է թագավորությունից և օկուպացվում հռոմեական լեգեոնների կողմից։ Տրայանոսի մահից հետո վերականգնվում է հայկական թագավորությունը և գահին բազմում է վերոհիշյալ Սանատրուկի որդին՝ Վաղարշը (119–140–143 թթ.)։ Վաղարշին հաջորդում է Հռոմի դրածո՝ սենատոր Սոհեմոսը, որը սերում էր Եմեսայի (այժմ՝ Հոմս) իշխանական տոհմից և, ըստ երևույթին, Արշակունի էր մոր գծով։ Սա գահ է բարձրացել երկու անգամ՝ 140/3–161 և 164–165 թթ., Հայաստանում ստանալով Տիգրան հավելյալ անունը։ Սոհեմոս-Տիգրանի երկու գահակալումների միջև ընկած երկու թե երեք տարվա ժամանակահատվածում հայկական գահին նստել է պարթևների դրածո Բակուր Արշակունին։ Սոհեմոս-Տիգրանին հաջորդում է Վաղարշ Բ-ը (պարթևական Վաղարշ Դ-ի եղբայրը[a]), մինչև 216 թ., երբ հայկական գահի վրա տեսնում ենք Վաղարշի որդի Խոսրով Ա թագավորին։ Այսուհետև արդեն կարելի է խոսել Հայաստանում թագավորական իշխանության ժառանգական դառնալու մասին, համարյա մինչև հայկական Արշակունյաց թագավորության վերացումը։

Բոլորովին վերջերս հայտնաբերված մի վավերագրի տվյալների հիման վրա նույնպես կարելի է եզրակացնել, թե Արշակունյաց Հայաստանում թագավորական իշխանությունը դառնում է հորից որդի ժառանգական միայն II դարի վերջից III

(98) Հայ ժողովրդի պատմություն (բուհական ձեռնարկ), հ. 1, Երևան, 1963, էջ 240։

(99) Ս.Տ. Երեմյան, Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները ..., էջ 60։

(100) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Բ, մաս Ա, էջ 19–62։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 765–795։

դարի սկզբից հետո։ Մեր խոսքը 1962 թ. Գառնիի ամրոցի պեղումների ժամանակ լույս աշխարհ հանված արամեերեն արձանագրության մասին է, որը հրատարակել է Ա.Գ. Փերիխանյանը։ Այս արձանագրության մեկնաբանմանը նվիրված իր հոդվածում Ա.Գ. Փերիխանյանը ևս ընդունում է, որ «Հայաստանի Արշակունի թագավորների մեզ հայտնի ամբողջ ցուցակում Խոսրով Ա-ը առաջին դեպքն էր հայկական գահի վրա այդպիսի՝ հորից որդի ժառանգականության, իսկ նախորդ բոլոր դեպքերում թագավորները Հայաստանում հաստատվում էին Պարթևաստանի (կամ Հռոմի) կողմից, պարթևական տան արքայազունների թվից»[101]։ Հայաստանում Արշակունի թագավորների իշխանությունը ժառանգական դառնալուն մեծապես պիտի խանգարեր այն հանգամանքը, որ հենց Պարսկաստանում, իրենց՝ պարթև Արշակունիների իշխանությունը ևս, ինչպես նշել է Մ.Մ. Դյակոնովը, ժառանգաբար չի անցել, այլ թագավորն ամեն անգամ ընտրվել է տոհմի անդամների թվից[102]։

Այսուհանդերձ, եղել են հայագետներ, որոնք կարծում են, թե Տրդատ Ա-ի մահից հետո հայկական թագավորությունը ժառանգաբար անցել է նրա որդիներին։ Այսպես, Հ. Գաթրճյանը[103] կարծում է, թե Աշխադարը Տրդատ Ա-ի որդին էր. իսկ Ա. Գարագաշյանը[104] այս նույն Աշխադարին համարում է Տրդատ Ա-ի (Արտաշես Բ-ի) թոռը և ենթադրում է, որ նա թագավորել է Հայաստանում իր հոր՝ Արտավազդի մահից հետո։ Այս ենթադրությունների սխալ լինելը դեռևս իր ժամանակ ցույց է տվել Հ.Հ. Մանանդյանը[105]։

Դարձյալ անդրադառնալով այս նույն հարցին, Հ.Հ. Մանանդյանը գրում է. «Ինչպես հայտնի է, Տրդատ Ա-ի և նրա հաջորդների ժամանակ հայոց թագավորությունը չդառավ ժառանգական նրանց չառավիղների գծով։ Արշակունյաց հարստության հաստատումը Հայաստանում, այսինքն՝ նրանց թագավորումը որդեցորդի, ինչպես այդ մատնանշել է Գևորգ Ասլանը,

(101) А.Г. Периханян, Арамейская надпись из Гарни, ՊԲՀ, 1964, Նո 3, էջ 125։
(102) М.М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, էջ 195։
(103) Հ. Գաթրճեան, Տիեզերական պատմութիւն, հ. Բ, Վիեննա, 1852, էջ 152։
(104) Ա.Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, հ. Բ, էջ 253։
(105) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Բ, մ. Ա, էջ 19։

սկսվել էր միմիայն երկրորդ դարի վերջում, և հայ Արշակունիների դինաստիայի հիմնադիրն է Վաղարշ Բ-ը»[106]։

Հ.Հ. Մանանդյանի վերջին հայտարարության իմաստն, ըստ երևույթին, պիտի հասկանալ այնպես, որ Տրդատից մինչև Վաղարշ Բ-ը Հայաստանում թագավորած Արշակունիները դեռևս մնում էին պարթևներ, կապված պարսկական արքունիքի հետ. մինչդեռ Վաղարշ Բ-ից սկսած, հատկապես Պարսկաստանում իշխանությունը Սասանյաններին անցնելուց հետո, Հայաստանի Արշակունի թագավորները արդեն հայացել էին։

Նկատելի է, որ Արշակունյաց Հայաստանում գահակալման կարգը ժառանգական դառնալուց հետո ևս միշտ չէ, որ թագավորը մնում էր գահի վրա մինչև իր կյանքի վերջը։ Այս երևույթը պիտի համարել հետեվանքը երկրում ծայր առած սոցիալական ցնցումների, երբ սատրապական հասարակարգի ճգնաժամի պայմաններում ծնվում էին նոր, ֆեոդալական հարաբերություններ, երբ ավելի ու ավելի հզորացող ավագանին ձգտում էր առավել ինքնուրույնության, մինչդեռ հեռուհեռուէ թուլացող կենտրոնական իշխանությունը, հանձին թագավորի, չէր կարողանում վերջնական հաշվեհարդար տեսնել նախարարական կենտրոնախույս ուժերի հետ։

Դեռևս կենդանության օրոք հայոց այս կամ այն թագավորի՝ գահից զրկվելու հարցի մասին խոսելիս, մենք ամենևին էլ նկատի չունենք այն դեպքերը, երբ վճռական նշանակություն են ունեցել արտաքին գործոնները, ասենք՝ Հռոմի կամ Պարսկաստանի դեմ հայոց թագավորի մղած անհաջող պատերազմը, որի հետևանքով նա գահընկեց է եղել։

(106) Նույն տեղում, էջ 56։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հին Հայաստանում նախարարական հաստատութիւնը սոցիալ-տնտեսական և քաղաքական կեանքի կազմակերպման կարևորագոյն ձևն էր, իր որոշակի բովանդակութեամբ, որի զարգացումը համընթաց է եղել հայկական ամբողջ հասարակութեան զարգացմանը։ Միանգամայն իրաւացի է Հ.Հ. Մանանդյանը, երբ նշում է, թե «նախարարական կազմակերպութիւնը հին Հայաստանում հայոց պատմութեան այն ելակետային կարևորագոյն խնդիրն է, որի ուսումնասիրութիւնը հիմք է ծառայելու Հայաստանի սոցիալական կեանքի և անգամ քաղաքական պատմութեան լուսաբանման»[1]։

Հետևաբար, բոլորովին պատահական չէ, որ հին Հայաստանի պատմութեամբ զբաղվողները այս կամ այն չափով անդրադարձել են նախարարական կազմակերպութեան հարցերին։ Բոլորի մեջ, սակայն, առանձնանում են երկու ուսումնասիրութիւն՝ Ն. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» (1908) և Հ.Հ. Մանանդյանի «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» (1934) գրքերը։

Ն. Ադոնցը հիմնականում նպատակ ունենալով պարզել հայկական ֆեոդալիզմի ծագման հարցը, իր հիշյալ աշխատութեան մեջ ամենայն մանրամասնութեամբ խորամուխ է եղել հայկական նախարարութեանների քանակական և որակական վերլուծութեանը։ Ընդ որում, Ն. Ադոնցը ենթադրում է, որ ֆեոդալական հարաբերութիւնները Հայաստանում առաջացել են դեռևս Արտաշեսյանների ժամանակ, իսկ վերջնականապես ձևավորվել են Տրդատ Ա-ից հետո, Արշակունյաց թագավորութեան տարիներին։

---

(1) *Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 11։*

Մեծ գիտնականը, սակայն, հանդիսանալով պատմագրության մեջ իրավաբանական ուղղության խոշորագույն ներկայացուցիչ, նախարարական կազմակերպությունը Հայաստանում դիտում է որպես իշխանության բաժանում, այսինքն՝ սոսկ իրրև վերնաշենքային երևույթ և ուրիշ ոչինչ:

Հ.Հ. Մանանդյանը, իր հերթին, չարունակելով Ն. Ադոնցի գործը այս ուղղությամբ, իր վերոհիշյալ ուսումնասիրության մեջ քննության առավ Հայաստանում նախարարական, հատկապես Արշակունյաց շրջանի նախարարական, կազմակերպությունն իր ուրույն բովանդակությամբ և բոլոր էական առանձնահատկություններով: Հայաստանի ֆեոդալականացման սկիզբը ակադ. Հ.Հ. Մանանդյանը, ի տարբերություն Ն. Ադոնցի, ենթադրում է Արտաշեսյան թագավորության հաստատումից էլ առաջ, բայց միաժամանակ նշում, որ «ֆեոդալիզմի ծագման ամենահին շրջանի մասին մենք չունենք որոշ ու հաստատուն վկայություններ: Աղբյուրների տեղեկությունները վերաբերվում են, գլխավորապես, զարգացած ու հարդարված նախարարական կարգերին, որ վերջնականապես ձևակերպվել էին Արշակունյաց թագավորության հաստատման ժամանակ»[2]:

Նախարարների և նախարարական կազմակերպության մասին մեր գլխավոր աղբյուրները վաղ միջնադարյան հայ մատենագիրներն են՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Կորյունը, Եղիշեն, Ղազար Փարպեցին: Այս պատմիչներից վերջին երեքի վկայությունները գերազանցապես վերաբերվում են մարզպանական Հայաստանին, երբ արդեն վերացել էր հայ Արշակունիների թագավորությունը և երկիրը գտնվում էր պարսկական տիրապետության տակ. ուստի և մենք ընդհանրապես կանդրադառնանք առաջինների վկայություններին:

«Նախարար» բառի ստուգաբանական բացատրությամբ զբաղվել են մի չարք հայագետներ և արևելագետներ: Ղ. Ինճիճյանը այն մեկնել է որպես նախ և արար, համապատասխան համարելով լատիներեն praefectus բառին: Նա գրում է.... անունս նախարար իննքին յայտ առնէ ածանցեալ յանուանս նախ և արար՝ իբր նախկին յարարս, կամ նախակարգեալ իշխան, որպիսի էր և առ լատինս անունս praefectus, ցուցանելով գյառա-

(2) Նույն տեղում:

ջագահութիւն և գնախագաստութիւն քան զայլս»[3]: Նույն բացատրությանը հետևել է նաև Մ. Էմինը Մովսես Խորենացու պատմության ռուսերեն թարգմանության համապատասխան ծանոթագրությունը կազմելիս[4]: «Նախարար» բառի այդպիսի մեկնությունը մերժելով, Ն.Ց. Մառը նշում է, որ այդ բառի սկզբնական ձևը եղել է նահարար, որը նշանակում է երկրի, շրջանի տեր, գլխավոր[5]: Այս մեկնությունը լիովին ընդունում է նաև Ի. Ջավախովը[6]: Ն. Ադոնցը ևս, ոչ մեծ ուղղումով, ընդունելի է համարում Ն.Ց. Մառի այս տեսակետը, «նախարար» բառը համապատասխան համարելով հայկական «տանուտեր» բառին[7]: «Նախարար» բառին նույնպիսի բացատրություն է տվել նաև Մեյեն, որի կարծիքով, հայերեն նախարար (սկզբնապես՝ նահարար) բառը ծագել է իրանական nahadara բառից, որ նշանակում է «ցեղապետ»: Նույն իմաստով սոգդիերենում պահպանվել է nâfdâr բառը[8]: Այս վերջին բացատրությունն ընդունում են Ստ. Մալխասյանը[9] և, բստ երևույթին, Հ.Հ. Մանանդյանը[10]: Հենվելով վ. Հեննինգի վերջին մի աշխատության վրա[11], որում նա ուսումնասիրել է հարավային Խորասանում մ.թ. III դ. վերաբերող վերջերս հայտնաբերված մի արձանագրություն, որտեղ հանդիպում է nafdar բառը, Ա.Գ. Փերիխանյանը գտնում է, որ հայերեն նախարար տերմինը պարթևական փոխառություն է և նշանակում է՝ «նա, ով ունի

(3) Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 77:
(4) Н. Эмин, История Моисея Хоренского, М., 1893, էջ 298:
(5) Н. Марр, Этимология двух терминов армянского феодального строя, Записки Вост. Имп. Рус. Арх. Общ., т. XI, 1898, стр. 170.
(6) И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, С.П.б., 1905, էջ 133-135:
(7) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1905, էջ 451:
Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 159:
(8) Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ՝ է, Երևան, 1935, էջ 170:
(9) Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. ներած. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, 1940, Երևան, էջ 255, ծան. 3:
(10) Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., Հ. Բ, մաս Ա, էջ 313-316:
(11) W.B. Henning, A New Parthian Inscription, Journal of the Royal Asiatic Society, 1955, facs. 3-4, pp. 132-136.

իշխանություն, առաջին տեղը, պետ»[12]: Այս առնչությամբ էլ նշվում է, որ նախարար տերմինն իր նշանակությամբ նույնն է, ինչ «սատրապը» և որ «նախարարը» գործածական է եղել հյուսիսային Իրանում, իսկ «սատրապ»ը՝ հարավային:

Այս վերջին տեսակետը հաստատող մի հետաքրքիր հոդվածով նորերս հանդես եկավ Ս.Ս. Կոստանյանը, որը ուսումնասիրելով Աստուածաշնչի հայերեն թարգմանության մեջ հանդիպող «նախարար» բառի բոլոր դեպքերը և համապատասխան հատվածները համեմատելով Աստվածաշնչի հունարեն թարգմանության հետ, գտնում է, որ «նախարարը», Աստվածաշնչի հունարեն թարգմանության մեջ համապատասխանում է σατράπης-ին և ունի «կառավարիչի, նահանգապետի, իմաստ[13]:

Նախարարական կազմակերպության պատմությամբ զբաղված հայագետների միջև կան մի շարք տարակարծություններ, որոնք հնարավոր ենք համարում խմբավորել հետևյալ հարցերի շուրջ· նախարարական կարգերի առաջացման ժամանակն ու պատմական հանգամանքները, նախարարական կազմակերպության դերը և նշանակությունը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում, նրա էությունը, նախարարությունների թիվը Հայաստանում: Բնական է, որ նախարարական կազմակերպության առաջացման ժամանակը որոշելը շատ բան կպարզի, կապված մյուս հարցերի հետ: Ուստի և մենք կսկսենք դրանից:

Հայկական նախարարությունների ծագման մասին խոսելիս հայագետներն, ընդհանրապես, հենվում են Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի 7-րդ և 8րդ գլուխների վրա[14]:

Վերոհիշյալ գլուխներում պատմվում է այն մասին, թե Վաղարշակը, որն, ըստ Խորենացու, Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիրն է, երկրում հաստատում է կառավարչական նոր կարգեր: Այստեղ պատմահայրը հականեհանվանե նշում է չորս տասնյակ նախարարների և նախարարական սերունդների, որոնց, իբր, հաստատում է Վաղարշակ թագավորը:

Վաղ հայկական մատենագրության մեջ հանդիպող նախարարական հաստատության վերաբերյալ բազմաթիվ տվյալները հանրագումարելիս, ուրվագծվում է մի պատկեր, որի համաձայն հայկական թագավորության շուրջ 700-ամյա գոյության ընթացքում այդ հաստատությունը համարյա անփոփոխ գոյություն է ունեցել իր ծագումից (Վաղարշակի ժամանակից) մինչև վերջ, Արշակունյաց թագավորության վերացումը:

Անկասկած է, որ առաջին հայ մատենագիրները հարատտորեն են պատկերել իրենց ժամանակակից՝ IV դարի վերջին և V դարի առաջին կեսին Հայաստանում նախարարական հաստատությունը, որպես ժառանգական խոշոր հողատիրական համակարգ, որի պայմաններում խոշոր հողատերը միաժամանակ ժառանգաբար վարում էր այս կամ այն պետական պաշտոնը[15]:

Արշակունյաց թագավորության վերջին շրջանում նախարարական կազմակերպության մասին եղած այս, ընդհանուր առմամբ ճիշտ, պատկերացումները, այլ նյութերի չգոյության պայմաններում, ուսումնասիրողների կողմից մեխանիկորեն վերագրվել են նաև առավել վաղ շրջանին, որը, սակայն, ինչպես այժմ հետզհետե պարզվում է, այնքան էլ չի համապատասխանում պատմական իրականությանը: Բոլոր դեպքերում, սակայն, նախարարական կազմակերպության առկայությունը Հայաստանում հայտնաբերում է իշխանության որոշակի բաժանում թագավորի և նրան շրջապատող տիրող վերնախավի միջև:

Հին Հայաստանում իշխանության բաժանման մասին ինչ-որ ուրվագիծ նկատելի է դեռևս մ.թ.ա. VI դարի կեսերին: Մեր խոսքը վերաբերում է Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» տվյալներին, որոնց մասին խոսք է եղել սույն աշխատության երկրորդ գլխում: Քսենոփոնի այդ երկում խոսվում է հայոց

(12) А.Г. Периханян, Древнеармянские востаники, ВДИ, 1956, N°2, էջ 49-50: Հմմտ. Գ.Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, էջ 9, ծան. 1:

(13) Ս.Ս. Կոստանյան, «Նախարար» տերմինի մասին, ՊԲՀ, 1973, Նո 3, էջ 151-160:

(14) Մովսես Խորենացի, Բ, է:

(15) Ս.Ս. Կոստանյանը («Նախարար» տերմինի մասին, էջ 160), իրավացիորեն նկատում է, որ «նախարար» սկզբնապես նշանակելով միմիայն «կառավարիչ, նահանգապետ», ֆեոդալիզմի զարգացմանը համընթաց հետզհետե ձեռք է բերել նաև «հողատեր իշխանի», «ֆեոդալի» իմաստ, որ արդեն IV-V դարերում ղ արձել է տիրապետող:

մեծամեծների մասին, որոնց դերը, սակայն, այնքան էլ պարզ չի երևում: Առավել պարզ է արքայորդի Տիգրանի դերը, որը Կյուրոսի արշավանքներին մասնակցող հայկական զորամասերի հրամանատարն է: Իշխանության առավել որոշակի բաժանում նկատելի է սատրապական չրջանի Հայաստանում: «Անաբասիսի» տվյալներով, ինչպես տեսանք, սատրապ Օրոնտասի կողքին կան նաև հյուպարքոս Տիրիբազոսը, զորապետ Արտուխասը և գեղջավագները:

Մեկ այլ առնչությամբ մենք փորձել ենք իշխանության ինչ-որ բաժանում տեսնել նաև Հայաստանում սատրապական իշխանության վերջին տարիներին Օրոնտասի և Միթրաուստեսի միջև, որոնք Գավգամելայի ճակատամարտի ընթացքում առաջնորդում էին հայկական զորամասերը, ընդ որում նչելով, որ նրանցից մեկը, հավանաբար, առաջնորդում էր հայկական հեծելազորը, մյուսը՝ հետևակը:

Հայաստանում իշխանության առավել որոշակի բաժանման հավաստի վկայություններ ունենք Երվանդունիների թագավորության տարիների համար: Դրանց մասին մենք արդեն քանիցս խոսել ենք սույն ուսումնասիրության նախորդ հատվածներում: Դրանցից են, օրինակ, Արմավիրի հունարեն արձանագրություններից այն մեկը, որում Արմավիրի տաճարի քրմապետ Միթրասը իրեն անվանելով արմավիրցիների բասիլևս (թագավոր), ողջունում է Երրոնտես-Երվանդին. իսկ մյուսը, Խորենացու պատմածն է Երվանդ թագավորի և նրա եղբոր՝ քրմապետ Երվազի մասին: Սկզբնաղբյուրներում, դժբախտաբար, չկան առավել մանրամասն տվյալներ այդ տարիներին Հայաստանի վարչական ու պետական որևէ այլ դեկավար մարմնի կամ պաշտոնյայի գոյության մասին: Մեզ թվում է, թե աղբյուրներում այդպիսի տեղեկություններ փնտրելն իսկ անհեռանկար կլիներ, քանի որ, ինչպես նչել ենք, Երվանդունիների հայկական նորաստեղծ թագավորությունը, հանգամանքների բերումով, սկսեց արագորեն թուլանալ և իր գոյության վերջին չրջանում (մ.թ.ա. III դարի վերջ) անդամահատվելով, արդեն աչխարհագրական բոլոր ուղղություններով կորցրել էր իր տարածքի զգալի մասերը, որոնք անցել էին հարևան իշխանությունների ձեռքը: Երվանդունիների թագավորության սահմաններում, ըստ երևույթին, մնացել էին Հայկական լեռնաչխարհի կենտրոնական գավառները միայն, առանց

վարչական ստորաբաժանումների, որոնց կառավարումը չէր թելադրում վարչական նոր մարմիններ ստեղծելու հրամայական պահանջ: Այդպիսի պահանջ պետք է ստեղծվեր միայն հետագայում, երբ, Ստրաբոնի հայտնի վկայության համաձայն, Արտաչեսը և նրա գինակից Զարեհը, Երվանդ Վերջինին տապալելուց հետո, հաջողությամբ ավարտելու էին Երվանդյանների կորցրած երկրամասերը իրենց տերությանը վերամիավորելու գործը:

Արտաչեսի միավորիչ գործունեության մասին Ստրաբոնի այս անփոխարինելի վկայությունից կարելի է հետևցնել, թե հանճին Արտաչեսի, ոչ միայն հայկական գահն անցնում է նոր արքայատոհմի, այլև, հաստատված թագավորությունն իր էությամբ նոր պետություն էր, շատ բանով տարբեր իր նախորդից՝ Երվանդունիների պետությունից: Այդ տարբերությունը գլխավորապես պայմանավորված պետք է լիներ հայկական թագավորության սահմանների աննախընթաց ընդարձակությամբ, երբ հայկական տարրերով բնակեցված հիմնական երկրամասերը, որոնք մեկ առ մեկ թվարկված են Ստրաբոնի կողմից, ընդգրկվեցին պետական մեկ միավորման մեջ[16]: Այս առնչությամբ փոքր դեր պիտի չխաղար նաև այն, որ ինքը՝ Արտաչեսը, ինչպես նաև նրա գործի աջակից և բարեկամ Զարեհը, նախկինում եղել էին Անտիոքոս Գ-ի նշանակած կառավարիչ-սատրապեգոսներ, այն է՝ բարձր պետական պաշտոնյաներ, դրանով իսկ որոշակի դեր են ունեցել Սելևկյան արքունիքում:

Ստրաբոնի տվյալ վկայության մեջ, գուցե, հնարավոր է տեսնել նորաստեղծ թագավորության ինչ-որ վարչա-տերիտորիալ բաժանում, իրենց իսկ անվանումներով՝ Գոգարենե, Խորզենե, Կարենիտիս, Դերքսենե, Ակիլիսենե և այլն: Կասկած չի կարող լինել, որ արդեն բավական լայնարձակ սահմաններ ունեցող այդ տերությունը, ելնելով կառավարման առավել կուռ կազմակերպական պահանջներից, բաժանված էր ենթաչրջանների, որոնք Սելևկյանների և հարևան կապադովկիայի ու Պոնտոսի տերությունների ստորաբաժանումների նման և դրանց անմիջական ազդեցությամբ, կարող էին կոչվել սատրապեգիաներ[17]:

(16) Strabo, XI, 14, 6.
(17) Strabo, XII, 1, 4. C. Plinii Nat. Hist., VI, 9.

Ցավոք, օտար աղբյուրները, նույնիսկ Ստրաբոնը, ոչինչ չեն հաղորդում վարչական այդ միավորների կառավարիչների, ինչպես նաև Արտաշեսի պետության մեջ եղած պաշտոնյաների մասին: Այդպիսի տեղեկությունների կարելի է հանդիպել Խորենացու մատյանի այն գլուխներում, որտեղ խոսվում է Երվանդի ու Արտաշեսի հակամարտության և Արտաշեսի թագավոր դառնալուց հետո վերջինիս ձեռնարկած վերափոխիչ միջոցառումների մասին[18]: Պատմահոր հաղորդած այդ վկայությունները, սակայն, դեռևս կարոտ են լուրջ ուսումնասիրության և համակարգման, քանի որ նրա «Հայոց Պատմության» այս հատվածներում կան ժամանակագրական վրիպումներ, ինչպես նաև դեռևս չհաստատված հաղորդումներ: Այսուհանդերձ, դրանց հիման վրա այժմ իսկ հնարավոր է որոշակի ենթադրություններ անել: Խորենացու պատմելով, Արտաշեսի կողքին և նրա արքունիքում ամենալայն գործունեություն է ծավալում Սմբատ Բագրատունին: Ըստ պատմահոր, Սմբատը Արտաշեսի դայակն է (Բ, լէ և իզ), նրա թագադիրը (Բ, լէ): Նույն տեղում Խորենացին հաղորդում է, թե Արտաշեսը Սմբատին վստահում է հայոց բոլոր զորքերը, երկրի բոլոր գործակալներին և ամբողջ արքունական տունը: Սա, անկասկած, նշանակում է, որ Սմբատ Բագրատունին եթե իսկ ամենաբարձր պաշտոնյան չէր, ապա բարձրագույն պաշտոնյաներից մեկն էր:

Առանձին ուշադրության է արժանի Խորենացու այն հաղորդումը, թե Արտաշեսը թագավոր դառնալուց հետո «տայ և առն քաջի պատուականի Արգամայ գխօսատացեալ գահի երկրորդական ...»[19]: Ցավոք, պատմահայրը հետագայում չի անդրադառնում այս «երկրորդական գահին» և մեզ համար պարզ չէ, թե արդյո՞ք այդ պաշտոնն ունեցող հայ մեծատոհմիկի տեղը իշխանության մեջ նույնն է, ինչ թագավորից հետո երկրորդ անձնավորություն հանդիսացող քրմապետի (որի մասին խոսում է Ստրաբոնը) կամ ավագ բդեշխի գրաված դիրքը: Թագավորից հետո երկրորդ անձնավորության հարցին մենք հանգամանորեն անդրադարձել ենք մեր սույն աշխատության 6-րդ գլխում, ուստի և ավելորդ ենք համարում այստեղ ծավալվել:

(18) Մովսես Խորենացի, Բ, իէ:
(19) Նույն տեղում:

Արտաշեսի պետական միջոցառումներին, հատկապես Սմբատ Բագրատունուն տրված պաշտոններին վերաբերող Խորենացու այս վկայություններից պարզ նկատելի է, որ դեռևս Հայաստանի պետական ապարատում բարձրագույն պաշտոնները խիստ տարբերակված չէին: Դեռ ավելին. նույն անձնավորությունը կարող էր միաժամանակ զբաղեցնել մի շարք կարևորագույն պաշտոններ: Տվյալ դեպքում Սմբատ Բագրատունին թագավորի ե՛ւ դայակն է, ե՛ւ նրա թագադիրը, ե՛ւ զորքերի հրամանատարը, ե՛ւ, ըստ երևույթին, արքունի տան վերակացուն, ե՛ւ տարբեր գործակալությունների աշխատանքներին հսկողը:

Նման երևույթը, մեր կարծիքով, աստիճանաբար վերանում է, քանի որ հետագայում, Արշակունյաց Հայաստանում, պետական պաշտոնները՝ գործակալությունները մեծապես տարբերակված էին և որոշակիորեն բաժանված տարբեր տոհմերի ներկայացուցիչների միջև: Այս հարցին մենք դեռ կանդրադառնանք: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ այլ հանգամանքներից բացի, այս մեկը ևս խոսում է այն տեսակետի օգտին, թե Արտաշեսի մասին Խորենացու հաղորդած վկայությունները, ժամանակագրական առումով, իրենց տեղում չեն: Այս հատվածներում պատմվող դեպքերը պետք է որ կատարված լինեին ավելի վաղ, քան, ասենք, Վաղարշակի հաստատած Արշակունյաց արքայատոհմի թագավորությունը: Հայոց թագավորներն իրենց հատուկ ծառայություն մատուցած հավատարիմ անձնավորություններին վարձատրում էին, հանձնարարելով այս կամ այն պետական բարձր պաշտոնը: Արտաշեսի գործունեությունը նկարագրող գլուխներից մեկը Խորենացին նույնիսկ վերնագրել է այսպես. «Թագաւորել Արտաշիսի և առնել բարի իւրոյ երախտաւորացն»[20]: Այդ գլխում պատմվում է, թե Արտաշեսը Արգամին տալիս է նրան խոստացած երկրորդական գահը, ինչպես նաև այլ պատիվներ: Ոչ պակաս պատիվներ է տալիս Սմբատին, իսկ Ներսեսին, իր ծծմոր Գիսակ որդու որդուն նախարարական ցեղ դարձնելով, այն կոչում է Դիմաքսյան, նրա հոր քաջագործությունների անունով, որովհետև նրա դեմքի կեսը սրով կտրել էին, երբ նա Արտաշեսի համար կռվում էր:

(20) Նույն տեղում:

Այնուհետև Արտաշեսը նախարար է դարձնում Տուրի որդիներին այն բանի համար, որ վերջինս Երվանդին լրտեսելով, օգնել էր Սմբատին, որի համար էլ հատուցել էր իր կյանքով։

Հունա-լատինական աղբյուրները Արտաշեսի այսպիսի գործողությունների մասին ոչինչ չեն հաղորդում։ Մեզ չի օգնում անգամ Ստրաբոնի հայտնի հատվածը Արտաշեսի գործունեության մասին, որում մանրամասն թվարկված են հայկական թագավորության մեջ ներգրավված մարզերը, սակայն ոչինչ չի ասված, թե Արտաշեսն այդ երկրամասերում ինչպիսի՞ պաշտոնյաներ կարգեց։ Կոմմնակի ավյալների հիման վրա կարելի է միայն ենթադրել, որ Արտաշեսը, ինչպես արդեն նշել ենք, Սելևկյանների, ինչպես նաև հարևան Պոնտոսի և Կապադովկիայի թագավորությունների օրինակով, իր երկիրը բաժանեց սատրապեիաների՝ որտեղ կարգեց սատրապես-կառավարիչների։

Այս առումով առավել բովանդակալից են օտար աղբյուրների՝ Տիգրան Մեծին վերաբերող հաղորդումները, որոնցից ուսումնասիրողը կարող է որոշակի ավյալներ կորզել հայոց թագավորին ենթակա պաշտոնյաների մասին։ Դրանցում հիշատակվածներից բոլորն էլ, բացի Տիգրանի եղբայր Գուրասից, ներկայացված են որպես հայոց թագավորի զորահրամանատարներ։ Թվենք նրանց։

1) *Միթրաես և Բագոաս*. Տիգրան Բ-ի զորավարներ, որոնք մ.թ.ա. 94 թ. գրավեցին Կապադովկիան[21]։ Այլ աղբյուրներից անհայտ։ 2) Նեմանես, հայ զորավար (Νεμάνης ὁ Ἀρμένιος), որը մասնակցել է Միհրդատյան առաջին պատերազմին[22]։ Սա, Հ.Հ. Մանանդյանի կարծիքով, ոչ թե Տիգրանի զորապետն էր, այլ Միհրդատ Պոնտացուն ենթակա Փոքր Հայքի զորքերի հրամանատարը[23]։ 3) Գուրաս. Տիգրան Բ-ի եղբայր, Միգդոնիայի կառավարիչ-կուսակալ, որի նստավայրը Մծբին (Νίσιβις) քաղաքն էր։ Պլուտարքոսի մի հետաքրքիր վկայությունից կարելի է եզրակացնել, թե Գուրասը Մծբինում քաղաքական իշխանություն ունեցող պաշտոնյա էր, մինչդեռ ռազմական դեկավարությունը հանձնված էր հելլեն կալլիմաքոսին[24]։ 4) Բագարատ (հուն. Μαγαδάτης – Βαγαδάτης = *Մագադատես-Բագադատես*). Տիգրանի զորավարներից, որին հայոց թագավորը Ասորիքն ու Կիլիկիայի մի մասը գրավելուց հետո, կարգել էր այդ երկրների կուսակալ-կառավարիչ։ Ապպիանոսը նրան հիշատակում է իբրև στρατηγός – *սատրատեգոս, պաշտոն, որը հատուկ էր Սելևկյանների թագավորության*[25]։ *Ուսումնասիրողները սրան համարում են Բագրատունյաց նախարարական տոհմի նախահայր*[26]։ *Այս ենթադրությունը ժխտող ավյալներ թեև չկան, բայց դեռևս նոր, առավել համոզիչ են պետք այն հաստատելու համար*։ 5) *Մեհրուժան* (հուն. Μιθροβαρζάνης – *Միթրոբարզանես*[27]։ *Տիգրանը սրան երկու կամ երեք հազարանոց զորախմբով ուղարկել էր կասեցնելու Լուկուլլոսի առաջընթացը դեպի Տիգրանակերտ։ Ընկնում է Լուկուլլոսի դեմ կռվելիս*[28]։ *Ուսումնասիրողները իրավացի կերպով սրան համարում են Ծոփքի թագավորական տան՝ Զարեհյանների հետնորդ, որին, հավանաբար, Տիգրանը, Ծոփքը իր տերությանը միացնելուց հետո, նշանակել էր այնտեղ սատրապ-կառավարիչ*,[29] *սատրատեգոս։ Հատկանշական է, որ Պլուտարքոսի մոտ նա կոչված է* φίλος – *ընկեր։ Այս վերջին տերմինին մենք անդրադարձել ենք բդեշխության մասին խոսելիս*։ 6) *Մանկայոս* (Μαγκαῖος), *որին հայոց թագավորը, Տիգրանակերտից նահանջելիս, հանձնարարում է քաղաքի պաշտպանությունը Լուկուլլոսի դեմ*[30]։ *Ն. Ադոնցը Մանկայոս զորավարին համարում է Մամիկոնյան-*

(21) Appiani Mithrid., 10.

(22) *Նույն տեղում*, 19։

(23) *Հ.Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը*, էջ 39։

(24) «Ταύτην (Νίσιβιν) εἶχεν ἀξιώμασι μέν ἀδελφός Τιγράνου Γούρας, ἐμπειρίᾳ δέ ... Καλλίμαχος» (Plut., Lucull., 32)

(25) Appiani Syr., 46.

(26) J. Markwart, Eranšahr, էջ 174։ Ն. Адонц, Армения ..., էջ 412-413։ *Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ.*, էջ 51։

(27) *Յ. Մարկվարտը իր ուսումնասիրություններից մեկում* (Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus, Bd., 55, 1896, էջ 68-69) *առաջարկում է այդ անունը ուղղել և կարդալ* Μιθροβουζάνης – *Միթրոբուզանես։ Նրա կարծիքը բաժանում են. Ադոնցը* (Н. Адонц, Армения ..., էջ 413), *Հ.Հ. Մանանդյանը* (*Տիգրան երկրորդը ...*, էջ 101) *և ուրիշներ*։

(28) Plutarchi Lucull., 25; Appiani Mithrid., 84.

(29) Н. Адонц, *նշվ. աշխ.*, էջ 413-414, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, *Երևան*, 1971, էջ 585-586։

(30) Appiani Mithrid., 84.

ների նախարարական տոհմի նախահայր[31]: Նշենք, սակայն, որ այս ենթադրությունն առավել անապացույց է, քան վերոհիշյալ Բագարատեսին Բագրատունիների նախահայր համարելու տեսակետը:

Հետագա տարիների մասին պատմող օտարալեզու աղբյուրներում դարձյալ կարելի է հանդիպել Հայաստանում պաշտոնատար անձերի մասին հատ ու կենտ վկայությունների: Այսպես, Տիգրան Բ-ի հաջորդ Արտավազդ Բ-ի ժամանակ (մ.թ.ա. 51 թ.), պարթևական թագաժառանգ Բակուրի առաջնորդությամբ Ասորիք ներխուժած պարթևական-հայկական զորքերի կազմում հիշատակվում է Osaces — Օսակես (վասակ) զորավարը, որը, թագաժառանգի փոքրահասակության պատճառով, արշավող զորքի իրական հրամանատարն էր: Սրան Գր. Խալաթյանը և Հ. Մանանդյանը համարում են հայ[32]: Ապպիանոսի վկայությամբ, Հուլիոս Կեսարի և Պոմպեոսի միջև մղված քաղաքացիական կռիվների ժամանակ, մ.թ.ա. 49 թ., հայկական մի զորամաս գնում է օգնելու Պոմպեոսին՝ Արտավազդ թագավորի կուսակալ Մեգաբատեսի առաջնորդությամբ և մասնակցում է Փարսալայի ճակատամարտին[33]: Մ.թ. 2 թ. Հայաստանում հռոմայեցիների դեմ ծավալված չարժումը ճնշելու համար ժամանում է կայս Կեսարը: Սա Արտագերս (Αρτάγερσα) ամրոցում մահացու վիրավորվում է բերդապահ Ադոնի (Αδων ὁ φρούραρχος) ձեռքով: Այնուհետև այս Ադոնը գլխավորում է ապստամբած Արտագերսի պաշտպանությունը, ամրոցը պաշարած Կեսարի զորավարների դեմ[34]: Մ.թ. 30-40-ական թվականներին, հայ ժողովրդի համար ճակատագրական այդ տարիներին, երբ ահեղագույն վտանգ էր կախվել հայկական պետության գլխին, ասպարեզ է գալիս պրեֆեկտ Դեմոնաքսը (Demonax praefectus)[35], որը գլխավորում է հայ ժո-

(31) Н. Адонц, նշվ. աշխ., էջ 415:
(32) Г. Халатьянц, Очерк истории Армении, М., 1910, էջ 230: Հ.Հ. Մանանդյան, Քննական տեսություն ..., հ. Ա, էջ 254:
(33) Appiani de Bellis civilibus, II, 71: Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ. էջ 255:
(34) Dio Cass., LX, 10: Strabo, XI, 14, 6: Համմս. Հ. Ասատրյան, Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռոմա, Վենետիկ, 1912, էջ 143: Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 299: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 709:
(35) Taciti Annal., XI, 9.

ղովրդի պայքարը իր անկախության համար: Հ.Հ. Մանանդյանի կարծիքով, այս «Դեմոնաքսը, որի անունը .... Տակիտոսի մոտ աղճատված է՝ հայ իշխան է և Հայաստանի սպարապետը»[36]: Մեծանուն հայագետը երկրորդ անգամ անդրադառնալով այդ հարցին, նորից կրկնում է, որ «Demonax praefectus-ը, որի անունը Տակիտոսի մոտ մի փոքր աղավաղված է, կարող է լինել Դիմաքսյան հին տոհմի իշխաններից մեկը, որ նույն այդ ժամանակաշրջանում հիշատակված է Խորենացու պատմության մեջ»[37]: Նոր վաստերով նույն այս կարծիքը հաստատում է նաև ակադ. Ս.Տ. Երեմյանը[38]: 63 թ. Հռանդեայի հայտնի ճակատամարտում, երբ հայ-պարթևական զորական ուժերը պաշարեցին հռոմեական լեգեոններին և ստիպեցին նրանց կապիտուլացվել և անցնել «լծի տակով», մեծ դեր է խաղացել հենելազորի հրամանատար վասակը (Vasaces)[39], որը, Մանանդյանի կարծիքով, եղել է հայ[40]: Անտիկ հեղինակների վերոհիշյալ վկայություններին ծանոթանալիս, դժվար չէ նկատել, որ նշված անձնավորությունները, առանց բացառության, եղել են զորահրամանատարներ:

Այդ ժամանակաշրջանի պաշտոնատար անձանց ևս երկու անուն հանդիպում է վիմական արձանագրություններում: Գառնիի հունարեն արձանագրության մեջ կարդում ենք Մեննեաս (MENNEAΣ) անունը, որը, ինչպես իրավացիորեն նշում են ուսումնասիրողները, կրել է նույն արձանագրության մեջ հիշատակված լիտուրգոսը[41]: Լիտուրգոսի և լիտուրգիայի մասին մենք արդեն խոսել ենք սույն աշխատության 6-րդ գլխում: Գալով Մեննեաս անվան, ապա առավել ընդունելի պիտի համարել այն տեսակետը, թե դա հայկական աղբյուրներում հիշատակված և Ամատունյաց տոհմում ընդունված

(36) Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 318:
(37) Նույն տեղում, էջ 320:
(38) Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 723-725:
(39) Taciti Annales, XV, 14.
(40) Հ.Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 345:
(41) К.В. Тревер, Очерки ..., էջ 183 և հետո: Գ.Խ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության չուրջը, Տես. ՀԳԱՀԳ, 1956, Նո 3, էջ 45-46: Հ.Մ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊԲՀ, 1965, Նո 3, էջ 233-234:

Մանու կամ Մանէն անվան հունականացված ձևն է[42]:

Մեր ակնարկած երկրորդ անունը հասել է մեզ Ապարանի հունարեն արձանագրության միջոցով, որտեղ հիշատակված է ոմն Գնթունի՝ Ռոդոմիրի (կամ Ռոդոմիթրի) որդի, որը Տրդատ Թագավորից իրրև պարգև (հավանաբար մատուցած ինչ-որ ծառայության դիմաց) ստացել է Նիգ քաղաքը[43]: Ո՞վ և ի՞նչ աստիճանի պաշտոն ունեցող անձնավորություն էր նա, դժվար է որոշակի ասել առնվազն երկու պատճառով. նախ, որ տվյալ արձանագրությունը խիստ թերատ է և ապա, որ մեր սկզբնաղբյուրներում չկա այդպիսի անուն կրող անձնավորություն այդ դարերի հայ իրականության մեջ: Մեր կարծիքով, թեպետև այդ նույն անունը կրում էր Փարաման Իբերացու որդին, որը կարճ ժամանակ (51–52 թթ.) տիրացավ Հայաստանի գահին, սակայն նրա՝ Հռադամիզդի (Radamistus)[44] և Ապարանի արձանագրության Ռոդոմիթրի միջև անվան նմանությունից բացի որևէ այլ ընդհանուր բան փնտրելու փորձերը ապարդյուն կլինեին:

Տակիտոսը և Հովսեպոս Փլավիոսը, երբ խոսում են մ.թ. I դարի Հայաստանի մասին, հաճախ հիշատակում են հայոց ազնվականներին (nobiles)[45], մեծամեծներին (megistanes)[46], առաջիններին (primores armeniorum)[47]: Նկատենք, որ անտիկ հեղինակների այս ընդհանուր բնույթ կրող բնորոշումները չեն կարող մեզ օգնել հիշատակված ազնվականների, մեծամեծների և առաջինների՝ հայկական հասարակության մեջ ունեցած դիրքի էության մասին որոշակի դատողություններ անելու:

Այսուհանդերձ, անտիկ հեղինակների հիշատակած զորավարների անունները, որոնք նշվեցին վերևում, մեզ մղում են շատ կարևոր մի եզրահանգման: Պարզվում է, որ հայոց թագավորը տարբեր աուիթներով և տարբեր ժամանակներում

(42) Հ.Մ. Բարթիկյան, նույն տեղում:
(43) М.И. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб., 1911, стр. 8; К.В. Тревер, Очерки ..., стр. 273-276.
(44) Taciti annal., XII, 44-51; XIII, 6.
(45) Նույն տեղում, 56:
(46) Նույն տեղում, 27: Jos. Flav., Antiq. Jud., XVIII, 2 և 4: Համմ. նաև Strabo, XII, 3, 29 (C. 553):
(47) Taciti Annal., XII, 44.

տարբեր մարդկանց էր նշանակում զորահրամանատար: Դա նշանակում է, որ թագավորն ինքն էր հայոց զորքերի գլխավոր հրամանատարը և այդ ժամանակ դեռևս Հայաստանում սպարապետի պաշտոնը, եթե այն գոյություն ուներ, չէր պատկանում ժառանգաբար տոհմերից որևէ մեկին, այլ այդ պաշտոնում ամեն անգամ, անհրաժեշտության դեպքում, նշանակվում էր թագավորի հայեցողությամբ որևէ մի զորահրամանատար: Մեր այս եզրահանգումը իր հաստատումն է գտնում նաև Մովսես Խորենացու պերճախոս վկայություններում: Դեռ ավելին. Խորենացին, նկարագրելով Վաղարշակի գործունեությունը հայկական պետական ապարատի կազմավորման և տարբեր նախարարությունների հաստատման ուղղությամբ, չի հիշատակում հայոց սպարապետին և զորքերի սպարապետությունը[48]: Հավանաբար հայոց զորքի առաջնորդությունը այդ ժամանակ վստահված էր Բագրատունիներին, քանի որ իր պատմությունը շարունակելիս, Խորենացին հաղորդում է, որ Տիգրան Միջինը վերցնում է Բագրատունիներից զորքի իշխանությունը[49] և սպարապետ է կարգում Ռշտունյաց նախարարության նահապետ Բարզափրանին[50]: Արտաշեսը, հայոց թագավոր դառնալով, Սմբատ Բագրատունուն է վստահում հայոց բոլոր զորքերը[51]: Այնուհետև՝ երբ ապստամբել էր կասպից երկիրը, Արտաշեսն ապստամբների դեմ ուղարկում է Սմբատին հայոց բոլոր զորքերով[52]: Շուտով, երբ Սմբատը վշտացած թողնում է հայոց զորքի իշխանությունը, Արտաշեսն այն հանձնում է իր որդի Արտավազդին[53]: Մ.թ. III դարի վերջում Տրդատ Գ-ը հայոց զորքերի սպարապետությունը հանձնում է իր դայեկորդի Արտավազդ Մանդակունուն, իրրև երախտագիտություն այն բանի համար, որ սա փրկել էր իրեն և հասցրել հայրենի իշխանության[54]: Քիչ անց, վերջինիս մահից հետո, Տրդատը իր

(48) Մովսես Խորենացի, Բ, գ-ը:
(49) Նույն տեղում, Բ, ժգ:
(50) Նույն տեղում, Բ, ժթ:
(51) Նույն տեղում, Բ, խէ:
(52) Նույն տեղում, Բ, ձգ:
(53) Նույն տեղում:
(54) Նույն տեղում, Բ, ձր, ձէ:

մարդկանցից նշանակում է չորս զորավար,՝ վրաց առաջնորդ Միհրանին, Բագարատ ասպետին,, Ռշտունյաց Մանաճիհր նահապետին և Ամատունյաց Վահան նահապետին[55]:

Սպարապետի և սպարապետության մասին պատմահոր հաղորդած այս տվյալները լավագույնս իմաստավորելու համար անհրաժեշտ է վերացնել Արտաշեսին վերաբերող Խորենացու հայտնի անախրոնիզմը և այնտեղ նկարագրված դեպքերը տանել մ.թ.ա. II դարի առաջին կեսը, այսինքն՝ այն տարիները, երբ դրանք իրոք կատարվել են: Այդ դեպքում հեշտ է նկատել, որ հայկական միասնական թագավորության հիմնադիր Արտաշես – Վաղարշակի[56] գահակալության շրջանում երկու կարևորագույն գործակալություններ՝ սպարապետությունը և թագադիր ասպետությունը գտնվում էին Բագրատունիների նահապետի՝ Սմբատի ձեռքին: Եթե սրան ավելացնենք այն, որ Սմբատը միաժամանակ եղել էր Արտաշեսի դայակը[57], մեզ համար պարզ կլինի, թե նա ինչպիսի՞ բարձր դիրք և հեղինակություն ուներ պետական գործերում:

Եթե մեզ համար այս կամ այն չափով պարզ է հայոց սպարապետի դերն ու ֆունկցիան (նա զորքերի հրամանատարն էր պատերազմի ժամանակ), ապա նույնը չի կարելի ասել մեկ ուրիշ կարևոր պաշտոնյայի՝ հազարապետի ֆունկցիայի մասին Հայաստանում: Հայ մատենագրության մեջ հազարապետի մասին առաջին անգամ կարդում ենք Ասողիկի մոտ, որտեղ, սակայն, այնքան էլ պարզ չէ նրա վարած պաշտոնի էությունը: Բանն այն է, որ «հազարապետ» բառով մեր անդրանիկ թարգմանիչները տարբեր դեպքերում թարգմանել են հունարենի տարբեր բառեր: Այսպես, Ասողիկի հայերեն թարգմանության մեջ շուրջ 40 անգամ հանդիպում է «հազարապետ» բառը: 26 անգամ այն համապատասխանում է հունարեն χίλιαρχος – բառին, որը իրոք, բառացի նշանակում է հազարապետ, հազար հոգու վրա նշանակված հրամանատար: 6 անգամ այն համապատասխանում է հունարեն οἰκονομος (բառացի նշանակում է՝ տան կառավարիչ, տնտես) բառին[58]: 3 անգամ այն համապատասխանում է ἐπίτροπος (բառացի նշանակում է՝ կառավարիչ, տեղապահ, խնամակալ, պահապան) բառին, երկու անգամ՝ ὁ ἐπί τῆς οἰκίας (բառացի նշանակում է՝ ի վերայ տանն) արտահայտությանն, մեկ անգամ ἐφεστικῶς ἐπί πάντων արտահայտությունը թարգմանված է՝ հազարապետ հավատարիմ ի վերա ընչից, իսկ մեկ անգամ էլ հունարեն բնագրում մեր «հազարապետ» բառի դիմաց ոչինչ չկա:

(55) Նույն տեղում, Բ, ձէ, Գ, գ:
(56) Այս մասին տես վերևում՝ էջ 120-122:
(57) Մովսես Խորենացի, Բ, չէ:
(58) Նշենք, οἰκονόμος բառը մեկ անգամ թարգմանված է հրամանատար, իսկ մեկ անգամ գավառապետ:

Հունա-մակեդոնացիների մոտ հազարապետը պարզապես հազար հոգուց բաղկացած զորամասի հրամանատարն էր: Մինչդեռ Պարսկաստանում, հավանաբար, հազարապետն ուներ նաև արքունիքում ինչ-որ բարձրագույն պաշտոն: Պարսկաստանում հազարապետի ունեցած դերի և պաշտոնի մասին լավագույն պատկերացումը տալիս է Աքեմենյանների թագավորության վերջին շրջանին վերաբերող Դիոդորոս Սիկիլիացու հետևյալ հաղորդումը.

«Քանի որ նա (արքայից արքա Արտաքսերքսես Օքոսը – Ս.Կ.) իր դաժան վարվեցողությամբ ատելի էր դարձել, հազարապետ (χιλίαρχος) Բագոասը, որը թեպետև իր հատկություններով ներքինի էր, բայց իր էությամբ խորամանկ ու ռազմասեր, ինչ-որ բժշկի օգնությամբ թունավորելու միջոցով սպանեց Օքոսին և թագավորությունը հանձնեց արքայի ամենակրտսեր որդուն՝ Արսեսին: Նա միաժամանակ, ոչնչացրեց նաև (նոր) թագավորի եղբայրներին, որոնք բոլորովին երիտասարդ էին, որպեսզի պատանի (թագավորը) մեկուսացված լինելով, իրեն առավելևս հպատակվի: Բայց պատանին իր բացահայտ դժգոհությունը հայտնեց կատարված անօրենությունների մասին և արդեն ակնհայտ էր, որ պատրաստվում է պատժել ոճիրների հեղինակին. ուստի և Բագոասը, լսելով նրա մտադրությունը, սպանեց Արսեսին և նրա որդիներին, երբ արդեն թագավորել էր երեք տարի: Այսպիսով, քանի որ արքունի տոհմը ոչնչացվել էր և ուղիղ գծով ոչ ոք չէր մնացել իշխանությունը ժառանգելու համար, Բագոասը գերադասեց արքունիքին մոտիկ մարդկանցից մեկին, Դարեհ անունով և նրան դարձրեց թագավոր[59]: Սա որդին էր Արսանեսի և Թոռը

(59) Սա Դարեհ Գ կոդոմանոն է (մ.թ.ա. 336-330 թթ.), որը թագավոր դառնալուց առաջ, ինչպես հաղորդում է Ցուստինոսը, եղել էր Արմենիայի սատրապ (M. Juniani Justini Epitoma historiarium Philipicarum Pompeii Trogi X, 3, 4-5).

Օտտանեսի, որը պարսից Արտաքսերքսես արքայի եղբայրն էր։ Իսկ Բագոասի հետ կատարվեց այսպիսի հիշարժան դեպք։ Նա իր ոճրագործ սովորության համաձայն, փորձեց թունավորելով վերացնել Դարեհին։ Բայց արքան, տեղեկանալով դավադրության մասին, Բագոասին հրավիրեց իր մոտ և խրախճանքի պահին բաժակը նրան տալով, ստիպեց խմել թույնը»[60]։

Հայանի իրանագետ Ռիչարդ Ֆրայը նշում է, որ «վերջին Աքեմենյանների օրոք հազարապետը, բարձրագույն աստիճանավորներից մեկը, սկսեց կատարել վարչապետին մոտ պաշտոն։ ... Բառի ստուգաբանությունից կարելի է դատել, որ հազարապետ տիտղոսը Աքեմենյանների օրոք կրում էր «հազար անմահների»՝ արքայի թիկնազորի պետը, որը կանխավ դարձել էր արքունիքում կարևոր դեմք»[61]։

Հայկական իրականության համար հազարապետի գոյությունը հաստատապես վկայված է Արշակունիների թագավորության վերջին հարյուրամյակի համար՝ մ.թ. IV դարի սկզբից մինչև թագավորության անկումը, ինչպես նաև հետագա՝ մարզպանական շրջանի համար։ Ինչ վերաբերում է նախորդ դարերին, հատկապես Արտաշեսյանների թագավորության համար, ապա մեր միակ աղբյուր Խորենացու մոտ պահպանված կցկտուր վկայությունների ուշադիր քննարկումը, այնուամենայնիվ, մեզ համոզում է, որ հազարապետի պաշտոնը Հայաստանում առկա է եղել նաև այդ ժամանակ։

Ճիշտ է, Խորենացին, նկարագրելով թագավորության հիմնադիր Վաղարշակի գործունեությունը, Հայաստանում նրա հաստատած նախարարությունները և պաշտոնները թվարկելիս, չի հիշատակում հազարապետին և հազարապետությունը։ Այս փաստը գուցե հնարավոր լիներ մեկնաբանել այնպես, որ իբր Հայաստանում մ.թ.ա. II դարում դեռևս չէր հաստատված հազարապետության պաշտոնը։ Սակայն նույն Խորենացին, խոսելով Արտաշեսի գործունեության մասին, նշում է, որ «կարգէ Արտաշէս զվէրայր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի»[62]։

Այնուհետև հազարապետը Հայաստանում հիշատակվում

(60) Diodor., XVII, 5, 3-6.
(61) Р. Фрай, Наследие Ирана, М., 1972, էջ 139։
(62) *Մովսես Խորենացի*, Բ, ձգ։

է Արշակունիների ժամանակ, մ.թ. IV դարի սկզբին։ Այդ բանը մեզ հայտնի է դարձյալ Խորենացուց, որը հաղորդում է, թե «Տրդատ ի հազարապետութիւն Հայոց զՕտայն կացուցանէր»[63]։ Այստեղ խոսքը վերաբերում է Օտա Ամատունուն, որը մի քանի անգամ հիշատակվում է Ագաթանգեղոսի մոտ։ Նկատելի է, սակայն, որ Տրդատ Գ-ի պատմության հեղինակը ամեն անգամ Օտային հիշատակում է որպես նախարար, բայց ոչ մի անգամ նրան չի անվանում հազարապետ[64]։ Թվում է, թե Օտա Ամատունուց հետո Հայաստանի հազարապետության պաշտոնը ժառանգաբար գտնվել է Ամատունյաց նահապետի ձեռքին։ Այսպիսի եզրակացությունը բխում է Խորենացու մատյանի համապատասխան հատվածներից, որոնցում իբրև հայոց հազարապետ հիշատակվում է Վահան Ամատունին։ Հայկական աղբյուրներից մեզ հայտնի միակ բացառությունը Փավստոսի հետևյալ վկայությունն է, որտեղ հայոց երկրի հազարապետը Գնունյաց ազգից է։ «Եւ սկիզբն գործակալութեանն, աչխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, չինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին»[65]։

Ինչպիսի՞ն էր հայոց հազարապետի պաշտոնը։ Այս հարցին պատասխանելուց առաջ մեջ բերենք Փավստոսի մեկ հետաքրքրքիր վկայությունը ևս, որտեղ հազարապետի մասին կարդում ենք. «Բայց գումարեաց ընդ նման թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն, ըստ սովորութեան օրինակին, զմեծ հազարապետն ի հազարապետութեանն»[66]։ Ինչպես տեսնում ենք, պահպանված վկայություններից և ոչ մեկը հիմք չի տալիս հայոց հազարապետին համարելու հազար հոգուց բաղկացած կամ մեկ այլ զորամասի հրամանատար։

Հազարապետի պաշտոնը Հայաստանում, անկասկած, բարձրագույններից մեկն էր և այն վարում էր արքայի ամենա-

(63) Նույն տեղում, Բ, ձր։
(64) *Ագաթանգեղոս*, Ի, 217։
(65) *Փավստոս Բուզանդ*, Դ, բ։
(66) Նույն տեղում, Գ, ժբ։ Մենք չենք անդրադառնում կորյունի, Եղիշեի, Փարպեցու և Խորենացու՝ հայոց հազարապետին վերաբերող մյուս հաղորդումներին, քանի որ դրանք վերաբերում են արդեն մարզպանության շրջանին, երբ Հայաստանում վերացել էր Արշակունյաց թագավորությունը։

վստահելի անձնավորություններից մեկը: Ինչպես տեսանք, Արտաշեսի ժամանակ հազարապետ էր կարգվել արքայի որդի Վրույրը, որին և վստահված էին արքունական բոլոր գործերը: Հետագայում Տրդատ Գ-ը հազարապետ նշանակում է Օտային, որը, ինչպես Խորենացին է հաղորդում, Տրդատի բացակայության ժամանակ անուցել էր արքայադուստր Խոսրովիդուխտին և հավատարմությամբ պահպանել ամրոցը: Ագաթանգեղոսը Օտային անվանում է ավագ նախարար[67] (հունարեն տարբերակում՝ τιμιώτατον σατράπην – պատվավորագույն սատրապ)[68]: Հետևաբար, միանգամայն իրավացի է Հ.Հ. Մանանդյանը, երբ գրում է. «Մեծ "գործակալություն" էր նաև "հազարապետություն"-ը, որին հանձնարարված է եղել, հավանորեն, արքունի երկրի տնտեսական բարեկարգման և գյուղիական ու ելևմտական գործերի վարչությունը:

«Հազարապետ»-ի պարտականությունն էր, ըստ երևույթին, աջակցել երկրի շինարարական աշխատանքներին և շինական տնտեսության զարգացմանը: «Հազարապետության» այս պարտականությունները կապված էին հարկահանության գործի հետ: Հողի մշակությունը, ուռոման գործը և, ընդհանրապես, երկրի շեն վիճակը նշանակություն ունեին՝ իբրև հիմք և աղբյուր պետական բարեկեցության և պետական եկամուտների»[69]:

Իր այս տեսակետը փաստարկելու համար Հ.Հ. Մանանդյանը վկայաբերում է Փավստոսի հայտնի վկայությունը հազարապետության մասին, որն արդեն մեջ ենք բերել վերևում:

Խորենացու հաղորդումների համաձայն, ամենակարևոր արքունի գործակալությունը հին Հայաստանում պետք է եղած լիներ թագադիր ասպետությունը, որը ժառանգաբար հանձնարարված էր Բագրատունիներին: «Նախ և առաջին, – գրում է պատմահայրը, – փոխարէն բարեաց հատուցանելով (Վաղարշակ – Ս.Կ.) առնն զօրաւորի և խմաստնոյ, որ ի Հրէից՝ Շամբատայ Բագարատ, տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադիր լինել

(67) Ագաթանգեղոս, նույն տեղում:
(68) Agathangelus und die Akten Gregors von Armenian, neu herausgegeben von Paul de Lagarde, Göttingen, 1887, էջ 46:
(69) Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 69:

Արշակունեաց»[70]: Երկրորդ անգամ Խորենացին գրում է. «Արդ՝ նախ և առաջին օրինադրէ թագաւորն (Վաղարշակ – Ս.Կ.) գինքը և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ և ի թագէ: Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի Հրէից, չնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնաւուր ձեռնտուութեան առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, գյառաջասացեալ տանուտիրական պատիւն ազգին պարգևելով. և իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր, այլ և ասպետ»[71]: Երրորդ անգամ Խորենացին հավաստում է. «.... Եւ աղերսեալ որ ի Հրէից՝ Շամբատայ Բագարատ, որ և թագադիր և ասպետ»[72]: Եվ դարձյալ՝ «ոչ ինչ ընդհատ յայլոց պատուոյ տայ (Արտաշես – Ս.Կ.) գայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն և ի կարմիր կօշկէ: Եւ աւելի քան զհայրենական զիւր թագակապ ասպետութիւնն և գիշխանութիւնն արևմտեայ գօրուն, հաւատայ ի նա զամենայն գօրս Հայոց, և բոլոր աշխարհիս գործակալս և զհամօրէն տունն արքունի»[73]:

Արժեքավոր են նաև Ագաթանգեղոսի և Փավստոսի հետևյալ վկայությունները. «Յայնժամ թագաւորն ... գումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարզպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն ...»[74]:

«Առնոյր ընդ իւր (Տրդատ – Ս.Կ.) և ի գինուորական կողմանեն զչորեցան իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ՝ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդը՝ յԱրեւաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն, զմեծ իշխանն Անգեղ տան, և զթագադիր ասպետն ...»[75]:

Ագաթանգեղոսի հունարեն տարբերակում վերահիշյալ վկայությունների՝ թագադիր ասպետին վերաբերող հատվածնե-

(70) Մովսես Խորենացի, Բ, գ:
(71) Մովսես Խորենացի, Բ, ե:
(72) Նույն տեղում, Բ, ը:
(73) Նույն տեղում, Բ, խէ:
(74) Ագաթանգեղոս, ՃԺԲ, 795:
(75) Նույն տեղում, ՃԺԶ, 873:

րում համապատասխանաբար կարդում ենք. «... ὁ τέταρτος ἄρχων ὁ τό διάδημα ἐξουσίαν ἔχων ἐπιδῆσαι τῷ βασιλεῖ, ὁ λεγόμενος Ἀσπέτων» (Զորրորդ՝ իշխանը՝ որը թագավորի (գլխին) թագը կապելու իշխանություն ուներ, որը կոչվում էր Ասպետ)[76]: «Καί τόν στέφοντα τόν βασιλέα ἄρχοντα, Ἀσπέτ λεγόμενον») (և թագավորին թագադրող իշխանին, որը կոչվում էր Ասպետ)[77]:

Փավստոսն իր հերթին վկայում է, որ «առնէր հարսանիս և եղբօր նորին Վաղարշակայ, և տայր նմա զդուստր ասպետին Բագրատունոյ ի Սպեր գաւառէ, որ թագադիրքն (բնագրում՝ թագաւորքն) թագակապքն լեալ էին ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունոյ»[78]:

Ագաթանգեղոսի հաղորդումներում հատկանշականն այն է, որ երկու դեպքում էլ թագադիր ասպետը հիշատակված է գահերեց բդեշխներից անմիջապես հետո, առաջին իշխանների թվում. մի բան, որը վկայում է այդ պաշտոնն ունեցող անձի բարձր դիրքի մասին: Սա համահնչուն է Խորենացու հաղորդման, թե Վաղարշակը բարեկործություններ ձեռնարկելիս, նախ և առաջ Բագարատին իշխանություն տվեց որդոց որդի թագադիր լինել Արշակունիներին. թե նախ և առաջ թագավորը կարգավորում է ինքն իրեն և իր տունը, սկսելով իր թագից և Բագարատին իրավունք է տալիս թագ դնել թագավորի գլխին և կոչվել թագադիր, այլև ասպետ:

Հայագետների համար եթե պարզ է եղել «թագադիր» տիտղոսի նշանակությունը, ապա Բագրատունուն տրված «ասպետ» տիտղոսի բացատրության շուրջ կան տարակարծիքներ: Բառի ստուգաբանական բացատրությունը (ասպետ-հեծյալ իշխանավոր) դեռևս չի կարող այդ տիտղոսի էությունը բացահայտել: Առավել ընդունելի պիտի համարել Ն. Բյուզանդացու տեսակետը, թե, «ասպետ նույնանշան է թագակապ և թագադիր բառերի»[79]:

Այս հարցում մենք պետք է հենվենք բացառապես մեր

(76) Agathangelus..., էջ 68:
(77) Նույն տեղում, էջ 83:
(78) Փավստոս Բուզանդ, Ե, խդ:
(79) Նորայր Բյուզանդացի, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, էջ 284:

պատմիչների՝ Ագաթանգեղոսի և Խորենացու վերոհիշյալ վկայությունների վրա, որոնցում, ինչպես տեսանք, Բագրատունու պաշտոնը բնորոշված է իբրև «թագակապ ասպետություն» և «իշխանություն թագակապ ասպետութեան», իսկ Բագրատունին կրում է «թագադիր և ասպետ» կամ «թագադիր ասպետ» տիտղոսները: Թագադիր ասպետ (Ասպետ) կոչված է նաև Ագաթանգեղոսի հունարեն տարբերակում: Եթե Խորենացու հաղորդումներում նկատելի է այդ երկու պաշտոնների տարբերությունը —» կոչել թագադիր, այլև ասպետ» կամ «թագադիր և ասպետ» — ապա մյուս դեպքերում պաշտոնը կոչվում է «թագադիր ասպետություն»: Հետևաբար, ասպետությունը սերտորեն առնչվում էր թագադրի պաշտոնին և, համանաբար, թագադիր և ասպետ բառերով բնորոշվում էր նույն պաշտոնատար անձը:

Այս կարծիքի օգտին կարելի է բերել նաև Խորենացու այն վկայությունը, թե Ջիրավի ճակատամարտում կրած պարտությունից հետո, երբ Մեհրուժան Արծրունին ընկնում է Սմբատ Բագրատունու ձեռքը, սա չամփուրը տաքացնելով, այն բոլորում է պակի ձևով և չիկացնելով, դրանով պակում է Մեհրուժանին, ասելով.« ... ինձ ասպետիս պարտ է զքեզ պակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»[80]: Մեկ այլ առիթով մենք նշել ենք, որ Բագրատունիները հավանաբար պատկանելիս են եղել քրմական դասին և հայոց թագավորին թագադրելու իրավունք ունեցող Բագրատունի ասպետը պետք է լիներ քրմապետ: Հնարավոր է նաև, որ թագադրի «ասպետ» մակդիրը բխում է քրմապետի առանձին գործեր ունենալու փաստից:

Հայագիտության մեջ մարզպետությունը ևս համարվել է Հայաստանում խոշոր և կարևոր գործակալություններից մեկը: Մենք կուզենայինք ընդգծել, որ մարզպետությունը, հատկապես հայոց թագավորության առաջին շրջանում, եղել է ամենակարևոր գործակալությունը: Եւ ինչո՞ւ, այդ մասին ստորև:

Ն. Ադոնցի կարծիքով՝ մարզպետ նշանակել է սկզբում մարզերի պետ, այն ցեղի, որը բնակվում էր Մարդաստանում: Հետագայում մարզպետը դարձել է տոհմական տիտղոս, ինչ-

(80) Մովսես Խորենացի, Գ, լհ:

պես սպեռը, մաղխազը և սպարապետը[81]: Սա միայն տիտղոսի անվանման բացատրությունն է և, մեր կարծիքով, ոչնչով չի պարզում այդ պաշտոնի բուն էությունը: Մարդպետության պաշտոնն ունեցողը մեր աղբյուրներում, ընդհանրապես, կոչվում է նաև «հայր»: Ակադ. Ստ. Մալխասյանցը Փավստոսի «Հայոց Պատմության» իր կատարած աշխարհաբար թարգմանության համապատասխան հատվածին կցած ծանոթագրության մեջ այդ մասին գրում է. «— Հայր» հատուկ անուն չէ, այլ ամեն մի ներքինապետի հարգական կոչում (ինչպես տաճիկների մեջ էլ ներքինապետը կոչվում էր baba): Այնպես որ «Հայր մարդպետ» բառերից ոչ մեկը մի անձի հատուկ անուն չէ, այլ ներքինապետի պաշտոնի հարգական անունը, և անխտիր գործ է ածվում բոլոր ներքինապետների համար[82]: Միայն մի ներքինապետի հատուկ անուն է պահպանել Փավստոսը, դա Դրաստամատն է, որին հիշում է նա ե, է գլխում»[83]: Մեր կողմից ավելացնենք, որ Փավստոսը և Ամմիանոս Մարկելլինոսը պահպանել են մարդպետներից ևս մեկի անունը՝ Գղակ (Cylaces-Gylaces)[84]:

Հայաստանում առաջին ներքինի Հայրի մասին հիշատակում է Խորենացին, Արշակունյաց հարստության հիմնադիր Վաղարշակի հաստատած նախարարությունների մասին խոսելիս: Նա գրում է. «Նա և ներքինիս հրամայէ (Վաղարշակ) ի նոյն ազգէ խզել. և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցՃուաշ և ցՆախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ: Բայց թե որպէս կամ ուր սորա

(81) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 319:

(82) Այն, որ «Հայր» և «մարդպետ» բառերը որևէ անձի հատուկ անուն չի եղել, լավագույնս երևում է Փավստոսի (Դ, ժգ) օգտագործած «Հայր մարդպետներ» հոգնակի արտահայտությունից:

(83) Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թագմանություն, ներածություն և ծանոթագրություններն ակադ. Ս. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 318:

(84) Ammiani Marcellini, XXVI, 12, 5: Փավստոս Բուզանդ, Ե,զ և Ե,ը: Փավստոսի մոտ այս անունը պահպանված է «Դգղակ» և «Դղակ» ձևով. մենք ուղղել ենք «Գղակ»՝ հիմնվելով Ամմիանոս Մարկելլինոսի մոտ պահպանված Cylaces-Gylaces (Գիլակես) ձևի վրա: Նույնպիսի ուղղում կատարել է նաև Հ.Հ. Մանանդյանը (Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 66–67):

իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ»[85]:

Ինչպես տեսնում ենք, պատմահայրը, իր իսկ խոստովանությամբ, «ով գիտէ» թե սրա պատմությունը ինչպես և որտեղ պատահեց: Մարդպետության պաշտոնի առաջացման ժամանակի մասին հետաքրքիր մի վկայություն պահպանվել է նաև Փավստոսի մոտ, որի համաձայն «այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց թագաւորութեանն Արշակունոյ»[86]:

Խորենացու և Փավստոսի վերոհիշյալ եզակի վկայությունները համերաշխվում են իրար հետ և հաստատում են այն ենթադրությունը, թե մարդպետության պաշտոնը Հայաստանում գոյություն ուներ Արշակունյաց թագավորության ամենահին ժամանակներից իվեր, այսինքն՝ հեռևելով Խորենացու ժամանակագրության, մ.թ.ա. II դարից:

Մեր կարծիքով, մարդպետության պաշտոնը Հայաստանում արդեն պիտի որ հաստատված լիներ ամենաուշը մ.թ.ա. II դարի սկզբին, Արտաշես Ա-ի թագավորության ժամանակ, երբ հայոց թագավորի գերիշխանության տակ գտնվող ամբողջ տարածքը համարվում էր χώρα βασιλική — արքունի երկիր, ասած: Ինչպես մեկ ուրիշ առիթով նշել ենք, Արտաշեսը Հայաստանի ամեն մի թիզ հողին տիրացել էր իր սեփականի՝ երկնդի, ինչպես նաև սրա գահակալության ժամանակ հայրենակ չորջաններին տիրացած սահմանակից թագավորների դեմ մղած դաժան կռիվներից հետո: Հետևաբար, նա կարող էր Հայաստանը դիտել իրրև իր նիզակով նվաճված (δορίκτητος) երկիր: Այդպիսին էր իրավիճակը նաև Սելևկյան թագավորությունում և հելլենիստական մյուս երկրներում: Հետագայում, իհարկե, Հայաստանում նախարարական հողատիրության աճման զուգընթաց, աստիճանաբար կրճատվում է արքունի ոստանը և այն հիմնականում սահմանափակվում է Այրարատյան աշխարհով:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ հայր մարդպետներին է հանձնարարված եղել հայոց թագավորի կանոնցի, ինչպես նաև արքունիքի վերակացությունը, նրանց է վստահված եղել թագավորական ամրությունների և բերդերի

(85) Մովսես Խորենացի, Բ, է:

(86) Փավստոս Բուզանդ, Դ, է:

պահպանությունը, ինչպես նաև արքունի գանձերի ու կալվածների վերահսկողությունը[87], թեև առանձին դեպքերում ուրիշներ ևս կարող էին նշանակվել բերդապահներ։ Հիշենք, օրինակ, Արտագերսի պաշտպան բերդապահ Ագոնին[88]։ Նման հանգամանքներով էլ պայմանավորված էր մարզպետների հեղինակությունը երկրի պետական կյանքում, հատկապես հայկական թագավորության առավել վաղ շրջանում, երբ տերության ամբողջ տարածքը, ինչպես նոր նշվեց, եղել էր արքունի երկիր, ոստան, իսկ վերահսկողությունն այդ ամբողջ երկրի վրա հանձնարարված էր մարզպետին։ Արշակունիների թագավորության վերջին հայրուրամյակում, արքունի երկրի աստիճանական կրճատմանը զուգընթաց, բնական է, աստիճանաբար խախտվում էր Հայր մարզպետի կշիռն ու հեղինակությունը։ Այսուհանդերձ, նույնիսկ նման պայմաններում Փավստոսը, խոսելով Հայր մարզպետ Դրաստամատի մասին (մ.թ. IV դար), վկայում է, որ «բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն»[89]։ Իսկ ինչպե՞ս էր կրճատվում արքունի երկիրը։

Հայոց թագավորը, ամեն անգամ իր մերձավորներից որևէ մեկին պաշտոնի նշանակելիս կամ մի որևէ նոր գործակալություն հաստատելիս, նոր պաշտոնյային կամ գործակալին պարգևում էր, որպես վարձատրություն, արքունի երկրից որևէ մաս։ Հողային ընդարձակ տարածություններ թագավորները նվիրաբերում էին նաև տաճարներին և եկեղեցիներին ու նրանց սպասավորներին։ Եվ ահա IV դարի կեսերին առաջվել էր այնպիսի վիճակ, երբ արքունի երկիրը չափազանց սահմանափակվել էր։ Հանգամանք, որը չէր կարող բացասաբար չանդրադառնալ նաև Հայր մարզպետի հեղինակության վրա և չդիպչէր նրա շահերին։ Ուստի միանգամայն հասկանալի է, երբ Հայր մարզպետը նախատում է հայոց Արշակունի թագավորներին նման արարքի համար[90]։ Փավստոսի պատմածներից կարելի է հետևցնել, թե IV դարի կեսերին, երբ սկսել էր երերվել հայ Արշակունիների գահը և արդեն հողատեր դարձած նախարարների մոտ սկսել էին ուժեղանալ կենտրոնախույս

(87) Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 64։
(88) Strabo, XI, 14, 6։
(89) Փավստոս Բուզանդ, ե, թ։
(90) Նույն տեղում, Դ, ժգ։

ձգտումները, Հայր մարզպետն իր գործողություններով զորավիզ էր կանգնում արքայի կենտրոնաձիգ իշխանության։

IV դարում, Հայաստանի պատմության այդ խռովայույզ տարիներին, մարզպետության ունեցած քաղաքական խոշոր դերը մատնանշել է դեռևս Ց. Մարկվարտը։ Նրա կարծիքով, մարզպետները, իրրև արքունի գործակալներ, ձգտել են ամրապնդել հայ Արշակունիների հզորությունը և ստեղծել ուժեղ թագավորական իշխանություն. ուստի և, բնականաբար, նրանք ամեն կերպ աշխատել են հակահարված տալ և թուլացնել ինքնիշխանության հակված կենտրոնախույս նախարարություններ[91]։ Թվում է, թե այս կարծիքի դեմ չի առարկում նաև Հ.Հ. Մանանդյանը[92]։

Մարզպետական իշխանության էության մասին գաղափար կազմելու համար կարևոր են մեր պատմիչների հետևյալ վկայությունները։

«Արդ ելանէր սա շրջէր ընդ մարզպետութիւնն իւր. ապա եկն էր Հայր մարզպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գնդովն տեսանել ... : Եկն էջ և Հայրն մարզպետ գիւրով իշխանութեամբն շրջեալ»[93]։

«Ապա մինչդեռ մարզպետն Հայր գիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւրում բերդին»[94]։

«Իսկ Դրաստամատն ներքինի, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անդեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. այնպէս և յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն»[95]։

Ուսումնասիրողների հատուկ ուշադրությունն է գրավել վերոհիշյալ առաջին երկու վկայություններում հանդիպող «շրջէր ընդ մարզպետութիւնն իւր» և «գիւրով իշխանու-

(91) J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 58–70։
(92) Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 65։
(93) Փավստոս Բուզանդ, Դ, ժդ։
(94) Նույն տեղում, ե, գ։
(95) Նույն տեղում, ե, է։

թեամբ չրջէր» արտահայտութիւնը։ Ղ. Ինճիճեանը և Նորայր Բիւզանդացին այս վկայութիւններից հետևցնում են, թե մարդպետների իշխանութեան տակ գտնված կալվածները Տարոնում մարդպետութեան սեփական երկիրն էին[96]։

Հ.Հ. Մանանդեանն այս ենթադրութիւնը համարում է անհամոզական և անընդունելի։ Նա միանում է Ա.Մ. Գարագաշեանի կարծիքին, որը այս նույն հատվածների հիման վրա ենթադրում է, որ հիշյալ կալվածներն արքունի տան չրջաններ էին, որոնք գտնվել են մարդպետների տեսչութեան տակ[97]։ Հ.Հ. Մանանդեանը իրավացիորեն եզրակացնում է, որ «ընդ մարդպետութիւնն իւր» և «զիւրով իշխանութեամբ» խոսքերի տակ պիտի հասկանալ մարդպետների ոչ թե տանուտերական, այլ գործակալական իշխանութիւնը[98]։

Հայաստանում կարևոր գործակալութիւններից է եղել նաև մաղխազութիւնը։ Դեռևս պրոֆ. Ն. Ադոնցը ցույց է տվել, որ մաղխազ (ասոր. malxazu) նշանակում է «տեր, իշխան, թագավոր»[99]։

Մաղխազութեան գործակալութիւնը վարողը պատասխանատու էր թագավորի անձի պաշտպանութեան համար և նա գլխավորում էր արքունի թիկնապահներին, որոնց թիվը, ինչպես այլ առիթով նշել ենք, եղել է շուրջ երկու հազար։ Խորենացու այն հայտնի վկայութիւնից, թե Վաղարշակը իր թագավորութիւնը կարգավորելիս, հատատում է «թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս. և զգլուխ նահապետութեան նոցա զմաղխազ ոմն այր բարի և սրտեայ»[100], կարելի է հետևցնել թե մաղխազութեան առաջացումը կապվում է հայկական թագավորութեան հաստատման առաջին իսկ տարիների հետ և թե այդ գործակալութիւնը հանձնված է եղել Հայկազունի, այսինքն՝ հայկական հնագույն տոհմերից մեկի

(96) Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, վենետիկ, 1835, էջ 138։ Նորայր Բիւզանդացի, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1910, էջ 268։

(97) Ս.Մ. Գարագաշեան, Քննական պատմութիւն հայոց, Մ.Բ, էջ 7, 20։

(98) Հ.Հ. Մանանդեան, նշվ. աշխ., էջ 65։

(99) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 400.

(100) Մովսես Խորենացի, Բ, է։

նահապետին։ Մատենագրութեան մեջ մեզ հասած համապատասխան վկայութիւններից պարզ հետևում է, թե մաղխազութեան գործակալութիւնը վարել են Խորխոռունյաց տոհմի նահապետները[101]։

Մենք այս հինգ գործակալութիւնների մասին խոսեցինք առանձին-առանձին, ելնելով նրանց նշանակութիւնից և կատարած դերից։ Այս գործակալութիւնների առանձնակի դերը հայկական պետականութեան կյանքում երևում է մեր պատմիչների բազմաթիվ վկայութիւններից, ինչպես նաև առավել ուշ չրջանին վերաբերող երկու փաստաթղթի՝ «Գահնամակի» և «Զորանամակի» տվյալներից[102]։ Մեզ հետաքրքրող հարցի համար առանձնապես արժեքավոր են Ագաթանգեղոսի հետևյալ վկայութիւնները, որոնցում թվարկված են հայոց իշխանավորները։ Այսպես, Ագաթանգեղոսը, պատմելով, թե Տրդատ թագավորը Գրիգորին ուղարկում է կեսարիա եպիսկոպոս ձեռնադրելու, թվարկում է նաև նրան ուղեկցողներին։ Նա գրում է. «Յայնժամ թագաւորն .... գումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին. վեցերորդ՝ իշխանն Կորդուաց աշխարհին, եօթներորդ՝ իշխանն Մոփաց աշխարհին. ութերորդ՝ իշխանն Գուգարաց աշխարհին, որ միւս անուանեալ բդեաշխն. իններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին. տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին. մեհասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին. երկոտասաներորդ՝ իշխանն Մամղէից աշխարհին. երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին. չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ Ջարաւանդ և Հեր գաւառի. հնգետասաներորդ՝ իշխանն մաղխազութեան տանն. վեցտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց»[103]։

(101) Մովսես Խորենացի, Գ, թ։ Ագաթանգեղոս, §ԻՋ։ Փավստոս Բուզանդ, Գ, ժբ։ Ե, լը և այլն։

(102) «Գահնամակի» և «Զորանամակի» տվյալները մանրամասն վերլուծել է Ն. Ադոնցը, (Армения в эпоху Юстиниана, էջ 236–297), ուստի և մենք չենք անդրադառնում այդ վավերագրերին։

(103) Ագաթանգեղոս, §ԺԲ, 795։

Ու դարձյալ՝ «Եւ ի գինուորական կողմանէն՝ գչորեսին գահերէցան իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին. գառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և գերկրորդ սահմանակալն յԱտրեւտանեայց կողմանէն, և գերրորդն՝ յԱրեւատան կողմանէն, գչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն. գմեծ իշխանն Անգեղ տան, և գթագադիր ասպետն և զսպարապետն մեծ, և գիշխանն Մոկաց, և գիշխանն Սիւնեաց, և գիշխանն Ռշտունեաց, և գիշխանն Մաղխազութեան տանն, և գշահապն Շահապիւանի, և գիշխանն սպասակապետութեանն»[104]:

Նկատելի է, որ այս հատվածներում թագադիր ասպետը, մարդպետը, սպարապետը և մաղխազը հիշատակվում են իրենց իշխանություններով, այն է՝ զբաղեցրած պաշտոններով, մինչդեռ մյուսները՝ իրենց իշխանության տակ գտնվող երկրամասերի՝ աշխարհների անուններով: Այստեղից կարելի է եզրակացնել, թե վերջիններս չէին զբաղեցնում արքունիքում որոշակի պաշտոն՝ գործակալություն, այլ հանդիսանում էին որոշակի տարածքի իշխան-կառավարիչներ:

Ցուրաքանչյուր քիչ թե շատ զարգացած հասարակություն չի կարող գոյություն ունենալ և հարատևել առանց իրավական նորմաների՝ օրենքների և դրանց կիրառմանը հետևող մարմինների՝ դատական օրգանների: Ինչպես տեսանք, մեր սկզբնաղբյուրներում որոշակի ակնարկություններ կան հին Հայաստանում պետական օրենքների գոյության մասին: Այդ օրենքների կիրառման հակողություն էր հեթանոսական Հայաստանում քրմական դասի ձեռքին, իսկ քրիստոնեության արմատավորումից հետո դատավարության գործերն անցան եկեղեցուն, որը գլխավորում էր հայոց կաթողիկոսը: Վերջինիս էր վստահված «մեծն դատաւորութեան» գործակալությունը: Այդ մասին կա Փավստոսի հետևյալ ուշագրավ վկայությունը.

«Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի տէրն մեծն քորեպիսկոպոսն Դանիել, այր սքանչելի: Աչակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխաւոր եկեղեցեաց նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռական իշխանութեանն՝ կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն՝ ունէր գիշխանութիւն զայն առանձինն. այլ վերակացու և հրամանատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեայն Հայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս»[105]:

Այն, որ Հայաստանում դատավարական գործերը վստահվել էին կաթողիկոսին, հետևում է նաև Խորենացու հետևյալ հաղորդումից.

«Վասն որոյ հաւանեալ Վռամայ՝ զերկաքանչիւրոցն կատարեաց զինդիրս, տուեալ յաթոռ եպիսկոպոսութեանն զայլ ոմն տոհմի Շամուէլ անուն, զի լիցի ընդդիմավառ մեծին Սահակայ և հակառակաթոռ. և գործ նմա զատուցանէ զընկերել մարզպանին, կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրելոց և դատաստանաց և այլ աշխարհական կարգաց»[106]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում, Հայաստանում, բացի վերոհիշյալ մի քանի կարևոր գործակալություններից, գոյություն ունեցել են նաև ազբյուրներում վկայված և չվկայված տարբեր աստիճանի և կարևորության մեծ թվով պաշտոններ: Այսպես, Խորենացին վկայում է, թե վաղարշակը իրեն զգեստներ հագցնող նշանակեց Գնթունի Ջեռեսին, արքունական որսերի վրա՝ Դատին, որից սերվեցին վարաժնունիները, ձիերի երամակների վրա՝ Գաբաղին, սեղանատան սպասների և գահերի վրա՝ Աբելին. սրանցից էլ առաջանում են Գաբեղյան և Աբեղյան տոհմերը. Սպանդունիներին նշանակում է սպանդանոցների վրա, Ջյունականներին՝ ամառանոցների պահապաններ և ձյունակիրներ. Գնունիներին՝ գինի մատակարարողներ՝ մատուռակ-տակառապետներ, իսկ Արծրունիները թագավորի առաջ պետք է արծիվներ կրեին[107]: Հաջորդ գլխում պատմահայրը նույն եղանակով պատմում է Մուրացանների, Աղվանից Առանի, Գուգարաց Բդեչխի, Անգեղյա Տորքի, Սլաք Սլկունու, Միանդակ Մանդակունու և այլոց այս կամ այն պաշտոնում նշանակված լինելու մասին: Նշենք, որ սրանով չի սպառվում Խորենացու հիշատակած անունների և պաշտոնների ցանկը:

Խորենացին, հետևելով անձնանունները ստուգաբանելու իր սկզբունքին, այս կամ այն տոհմի անուանումից բխեցնում

(104) Ագաթանգեղոս, ՁԻԶ, 873:

(105) Փավստոս Բուզանդ, Գ, ժդ:

(106) Մովսես Խորենացի, Գ. կե:

(107) Նույն տեղում, Բ, է:

է ավյալ պաշտոնին՝ այդ տոհմի ներկայացուցչի նշանակումը։ Այս երևույթին ինքնին ուսումնասիրողի մեջ կասկած է հարուցում Խորենացու այս հատվածի արժանահավատության մասին։ Այսուհանդերձ, մի բան անկասկած է. թվարկված բոլոր պաշտոնները վստահված էին հայոց թագավորին չրջապատող մեծատոհմիկ ազնվականության ներկայացուցիչներին։

Նկատելի է, որ Խորենացու պատմության այս գլուխներում թվարկված բոլոր պաշտոնները անմիջականորեն վերաբերում են հայոց թագավորի արքունիքին։ Սակայն այդ դեռ չի նշանակում, որ Հայաստանում այդ ժամանակ չկային նաև այնպիսի պետական պաշտոնյաներ, որոնք իրենց վարած պաշտոնով առնչվում էին երկրի տարբեր չրջանների և ամբողջ տնտեսության այս կամ այն ճյուղի հետ։ Այդ մասին, ցավոք, աղբյուրներում չկան որոշակի տվյալներ։ Անկասկած է, սակայն, որ տեղերում եղել են արքունի հարկահավաքներ, աշխատանքային պարհակների կատարմանը հետևող գործակալներ և այլ բնույթի ստորին պաշտոնյաներ, որոնք անմիջականորեն պետք է որ ենթակա լինեին սատրատեգիա-պրեֆեկտուրաների (որոնց մասին արդեն խոսք եղել է նախորդ գլուխներում) կառավարիչներին։ Մի բան հաստատ է, որ Հայաստանի քաղաքներում նշանակված են եղել վերակացուներ[108], իբրև թագավորական իշխանության ներկայացուցիչներ[109]։

Հին Հայաստանում պետական ստորին պաշտոնները, հավանաբար, վստահված են եղել կրտսեր նախարարներին։ Հայ մատենագրության մեջ հիշատակվում են ավագ և կրտսեր նախարարներ[110]։ Հայագետների մոտ տարակարծություններ կան այն առթիվ, թե նախարարները ի՞նչ հատկանիշների հիման վրա բաժանվում էին ավագների և կրտսերների։

Ղ. Ինճիճյանի կարծիքով, «աւագ թուին կոչեցեալ նոքա՝ որոց մեծ էր կամ գործ կառավարութեան և կամ երկիր. իսկ կրտսեր նոքա՝ որոց փոքր էր պաշտօն և կամ երկիր»[111]։

Կ. Կոստանդյանցը գտնում է, որ Հայաստանում «երկու կարգի նախարարներ կային՝ ավագ և կրտսեր. առաջին կարգից էին այն նախարարները, որոնք հայոց ամենահին ազնվական կամ նահապետական ցեղերից էին հառաջացել. իսկ երկրորդ կարգից էին նոքա, որոնց նախահայրերը հասարակ մարդիկ են եղել առանց ազնվական ծագումի և նախարարություն ստացել են թագավորներից իրենց մի նշանավոր ծառայության կամ հավատարմության համար»[112]։ Մ. Էմինը ևս Խորենացու ուսյալին իր թարգմանության ծանոթագրություններում է նույն այս բացատրությունը[113]։ Կ. Կոստանյանցը երկրորդ անգամ անդրադառնալով այս հարցին, նշում է, թե «յուրաքանչյուր նախարարության մեջ կար ավագ նախարար՝ տանուտեր, և կրտսեր նախարար՝ սեպուհները»[114]։ Նկատելի է, որ Կ. Կոստանյանի վերոբերյալ երկու տեսակետները համերաշխ չեն իրար։

Ն. Ադոնցի եզրակացությունն այն է, որ հին Հայաստանում նախարարները համարվել են ավագ կամ կրտսեր իրենց հզորության և կարևորության համեմատ[115]։

Պրոֆ. Խ. Սամվելյանը ևս անդրադառնալով ավագ և կրտսեր նախարարների հարցին, գտնում է, որ դրանց տարբերիչ հատկանիշը «տոհմային ծագման հնությունն է ու ազնվազարմությունը, նմանապես տերիտորիալ հզորությունը։ Հետևապես, «ավագ» մակդիրը վերաբերում է ոչ թե առանձին անհատներին, այլ ամբողջական տոհմին՝ սոցիալական առումով։... Կրտսեր նախարարներ պետք է համարվեին ... նրանք, ովքեր իրենց ազնվազարմ ծագումով և հողային հարստությամբ սոցիալական ու քաղաքական մեծ նշանակություն չէին ներկայացնում»[116]։

(108) Համմա. Մովսես Խորենացի, Գ, գ և Գ, իզ։
(109) Այդ մասին տես սույն աշխատության քաղաքներին վերաբերող գլխում։
(110) Մովսես Խորենացի, Բ, կը։ Գ, ծա։ Եղիշե Վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Վենետիկ, 1864, Ը, էջ 343 և 354։ Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, ԻԶ, էջ 49։
(111) Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 90։
(112) Կ. Կոստանեանց, Հիւսուածք, Գ, Վիեննա, 1877, էջ 28-29։
(113) Н. Эмин, История Моисея Хоренского, М., 1893, էջ 298։
(114) Կ. Կոստանեանց, Նշվ. աշխ., էջ 36։
(115) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 453։
(116) Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 210-211։

Հ.Հ. Մանանդյանը վերոհիշյալ ենթադրություններից անհիմն և անհավանական է համարում «կոստանյանի և էմինի կռահումը, որ իբր «կրտսեր» նախարարների կարգին պատկանել են «հասարակ մարդիկ առանց ազնվական ծագումի», որոնք նախարարություն էին առացել իրենց ծառայության կամ հավատարմության համար»: Հ. Մանանդյանի կարծիքով, նախարարությունների բաժանումն «ավագ» և «կրտսեր» խմբերի, ինչպես մատնանիշ է արել Ջավախովը[117], բավարար կերպով լուսաբանված է Ղազար Փարպեցու մի վկայության մեջ: Փարպեցու պատմելով, Վարդան Մամիկոնյանը Պարսից արքունիքում արտասանած իր առենախոսության ժամանակ իմիջիայլոց ասում է՝ «բազումք են յայս երից աշխարհաց յազատոերոյ, որք են առագ քան զիս և գահու և առուրբք» (Տըղիս, 1905, գլ. ԻԶ, էջ 49): Այս վկայությունից դժվար չէ հետևցնել, որ «առագ» են համարվել նախարարները կամ «գահու» և կամ «ավուրբք»[118]:

Մեր կարծիքով, առավել ճիշտ է Հ. Մանանդյանի հայորդ եզրակացությունը, թե «ավագների խմբին են պատկանել այն հզոր ու առաջնակարգ տոհմերի նախարարները, որոնք «գահերեց» էին, իսկ «կրտսեր»՝ նրանք, որոնց գահերը եղել են երկրորդական կարգի»[119]: Դժվար չէ նկատել, որ Հ. Մանանդյանը այս դեպքում համերաշխ է Ղ. Ինճիճյանի և Խ. Սամվելյանի տեսակետին:

Մեր հնագույն մատենագրական աղբյուրներում, որոնք, հիմնականում, պատկերում են IV-V դդ. Հայաստանի իրավիճակը, բազմաթիվ հաղորդումներ կան նախարարության գլուխ կանգնած անձնավորության մասին: Հետևում է, որ «իշխանությունն ամեն մի նախարարության մեջ, — ինչպես նկատում է Հ. Մանանդյանը, — պատկանում էր նախարարական տոհմի ներկայացուցչին, որ կոչվում էր «տանուտեր», «տեր» կամ «նահապետ»[120]: Հ. Մանանդյանը իր ուսումնասիրության մեջ այդ առնչությամբ թվում է կարևորագույն մատենագրական

(117) И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, стр. 110.:
(118) Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 42:
(119) Հ.Հ. Մանանդյան, Նշվ. աշխ., էջ 43:
(120) Նույն տեղում, էջ 47:

վկայությունները[121]:

Մեր նպատակից դուրս է խոսել տանուտեր, տեր և նահապետ տերմինների ծագման և ստուգաբանության մասին: Մեզ, ավյալ դեպքում, հետաքրքրում է նրանց տեղը հին Հայաստանի պետական ապարատում, այսինքն՝ այդ տիտղոսը կրողների ֆունկցիաները պետական իշխանության հանդեպ: Այս առթիվ տարբեր կարծիքներ են հայտնվել, բայց առավել ճիշտ պիտի համարել Ղ. Ինճիճյանի բացատրությունը, թե տեր, տանուտեր կամ նահապետ «կոչէր նա՝ որ գլխաւոր էր իւրաքանչիւր տոհմի նախարարութեան, ... յորոյ ի ձեռին էր տէրութիւն երկրի նոյն տոհմին, և և տէրութիւն ի վերայ զօրաց այնր տոհմի»[122]: Նույն այս բացատրությանը համամիտ են նաև Ի. Ջավախովը և Հ.Հ. Մանանդյանը[123]: Իսկապես, նախարարը ոչ միայն իր տոհմի նահապետն էր, տանուտերը, այլև իրեն որպես տիրություն վստահված նախարարության իշխանը, կառավարիչը[124]:

Մեր շարադրանքի ընթացքում տարբեր առիթներով արդեն ակնարկություններ եղել են Հայաստանում նախարարությունների առաջացման հարցի վերաբերյալ: Հայագիտության մեջ, ընդհանրապես, այն կարծիքն է հայտնվել, թե նախարարությունները առաջացել են շատ հին ժամանակներում, տոհմային կարգերի հիման վրա, երբ այս կամ այն տոհմի առաջնորդը դարձել է ավյալ երկրամասի ժառանգական տերը և կառավարիչը[125]: Մեր կարծիքով, նախարարությունները, որպես պետական իշխանության կարևորագույն օղակներ, Հայաստանում առաջացել են հիմնականում հայկական պետականության կազմավորման զուգընթաց, երբ պետության գլուխ կանգնած հայոց թագավորը իրեն մոտիկ կանգնած ավագանու այս կամ այն ներկայացուցչին հանձնարարում էր իր անունից

(121) Նույն տեղում, էջ 48-49:
(122) Ղ. Ինճիճյան, Հնախոսություն, հ. Բ, էջ 78:
(123) И. Джавахов, Государственный строй ..., էջ 100-109: Հ.Հ. Մանանդյան, Նշվ. աշխ., էջ 47-48:
(124) Փաւստոս Բուզանդ, Գ, գ: ե, չէ: Ղազար Փարպեցի, Բ, լ, էջ 18: Բ, խլ, էջ 85:
(125) И. Джавахов, Государственный строй ..., стр. 111-115: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 400-410; Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 46-56:

որևէ երկրամասի կառավարումը: Հետագայում նկատվում է նախարարությունների առաջացման մի երկրորդ ուղի ևս: Թագավորը իրեն հատուկ ծառայություն մատուցած իր մերձավորներին հատուցելու նպատակով, ինչպես արդեն ասել ենք, նրանց դասում էր նախարարությունների չարքը:

Սկզբնաղբյուրների համադրումից կարելի է եզրակացնել, թե իրենց պարտականությունների կատարման տեսակետից Հայաստանում նախարարները բաժանվել են երեք խմբի. 1) նախարարներ, որոնք պարտավոր էին հոգալու արքունի տնտեսության տարբեր ճյուղերի մատակարարումը. 2) նախարարներ, որոնք տարբեր պաշտոններ էին վարում արքունի դուռը. 3) նախարարներ, որոնք հայոց թագավորի հանձնարարությամբ երկրի տարբեր մասերում վարում էին վարչա-պետական զանազան պաշտոններ[126]: Նախարարների պարտականությունների մեջ, ընդհանրապես, կարևոր տեղ էր գրավում նաև այն, որ պատերազմի ժամանակ, թագավորի առաջին իսկ պահանջով, նրանք պետք է իրենց գումարած զորամասերով ներկայանային պետության սահմանների պաշտպանության համար:

Հայագետների միջև վեճեր է առաջացրել նաև հին Հայաստանում գոյություն ունեցած նախարարությունների թվաքանակի հարցը: Վեճերի առիթը դարձյալ սկզբնաղբյուրների անորոշ հաղորդումներն են այդ մասին: Մանրթամնանք նախարարական իշխանությունների և գործակալների թվի մասին մեզ հասած մատենագրական վկայություններին, որոնք հիմք են ծառայել հայագետներին այս կամ այն եզրակացության հանգելու:

«.... Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ, որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին, թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս, որք գործակալք միայն էին ինն հարիւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց ...»[127]: Այս վկայությունը, ինչպես հայտնի է, վերաբերում է Արշակ Բ-ի արքունիքին: Նույնի մասին հաղորդում է նաև Ներսես Մեծ կաթողիկոսի վարքագիրը, որը, սակայն, 900-ի փոխարեն նշում է 400 թիվը. «կարգէր ի ժամ ճաշոյն ի սեղան արքային Արշակայ բարձս չորեքհարիւր»[128]:

Նույն այս 400 թիվը հաղորդում է նաև ավելի ուշ ժամանակի, XIII դարի պատմիչ Ստ. Օրբելյանը, գրելով՝ «Գրիգորիս (խոսքը Լուսավորչի մասին է – Ս.Կ.) հրամայէ մեծին Տրդատայ կարգել զթագաւորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն յունաց և տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի գահ և պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ, որ և գեղեցկապէս յօրինեալ ի ժամ ճաշոյն նստել բարձս չորեքհարիւր իշխանաց»[129]:

Ն. Ադոնցը մանրախույզ քննարկելով վերոհիշյալ վկայությունները և դրանք համադրելով Եղիշեի ու Ղազար Փարպեցու մոտ պահպանված, ինչպես նաև Գահնամակի և Զորանամակի համապատասխան տվյալներին, հանգել է այն ընդունելի եզրակացության, թե հին Հայաստանում նախարարական տների թիվը կարելի է հաշվել մինչև հիսուն[130]:

Այս նույն կարծիքին է հակված նաև Հ.Հ. Մանանդյանը:[131]

Նախարարական տների թվի վերաբերյալ Ն. Ադոնցի եզրակացությունը հավանական համարելով հանդերձ, մենք հակված ենք ենթադրելու, որ աղբյուրներում հիշատակված 900 կամ 400 թիվը զուրկ չէ հիմքից, սակայն մի վերապահությամբ. այդ թվի տակ պետք է հասկանալ ոչ թե հայ նախարարական տները միայն, այլև Արշակունյաց Հայաստանում գործակալություն վարող պաշտոնյաներին[132]: Այստեղից էլ ակներև է, որ Ն. Ադոնցը իրավացիորեն չի նույնացնում գործակալությունը նախարարության հետ, թեև, ինչպես տեսանք, շատ դեպքերում նախարարը կարող էր լինել միաժամանակ և գործակալ, վարելով պետական այս կամ այն պաշտոնը՝ գործակալությունը:

(126) Համմ. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 192:

(127) Փավստոս Բուզանդ, Դ, բ:

(128) Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի, «Սոփերք հայկականք», Զ, Վենետիկ, 1863:

(129) Մատթէոսեան Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, գլխ. Զ:

(130) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 236-297.

(131) Հ.Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 45-46:

(132) Համմ. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1: Երևան, 1939, էջ 218-219:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայկական լեռնաշխարհում Ուրարտական, նույն է թե՝ Վանի, թագավորության անկումից հետո անցած հազարամյակը որպես մեկ միասնություն կազմավորված հայ ժողովրդի պատմության ամենակարևոր փուլերից մեկն էր։ Ճիշտ է, հազարամյա այդ ժամանակահատվածը եղել է պարբերական և դաժան վայրիվերումների մի շրջան, սակայն այդ ընթացքում հայ ժողովուրդը պատմության քառուղիներում հասել է ոչ միայն ինքնահաստատման, այլև ճանաչում գտնելով ամբողջ Արևելքում, դարձել է հին Արևելքի պատմության կարևորագույն գործոններից մեկը։

Մ.թ.ա. VI դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հասարակությունը արդեն գտնվում էր միասնական ինքնուրույն պետականություն կազմելու շեմին, սակայն արագ թափով բարձրացող մեդա-պարսկական թագավորությունը, իր գերիշխանությունը տարածելով ամբողջ Առաջավոր Ասիայի վրայ, իրեն հպատակեցրեց նաև Հայկական լեռնաշխարհը, դրանով իսկ ժամանակավորապես, շուրջ երկու դար, խանգարեց հայկական ինքնուրույն պետականության կազմավորմանը։

Հայկական պետականության առաջացումը և հետագա զարգացումը սերտորեն առնչված է եղել Հայաստանի բնական-աշխարհագրական սահմաններում հայկական էթնիկական տարրերի համախմբման հիման վրա հայ ժողովրդի ազգային կազմավորման պատմական պրոցեսի հետ։

Սկզբնաղբյուրների (Հերոդոտոս-Քսենոփոն) վկայությունների մանրակրկիտ վերլուծությունը բերել է մեզ այն եզրակացության, որ դեռևս Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող Հայաստանում արտադրողական ուժերը գտնվում էին համեմատաբար զարգացած վիճակում և բոլոր նախադրյալները կային դրանց հետագա զարգացման համար։ Սակայն Պարսկաստանը մ.թ.ա. V-IV դարերում ինքը ապրում էր քաղաքական ու տնտեսական լճացման ծանր վիճակ, որով և, բնականաբար, խոչընդոտում էր և արգելակում իր տիրապետության տակ գտնվող երկրների, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհի, զարգացման բնականոն ընթացքը։

Սակայն նման դրությունը չէր կարող երկար շարունակվել։ Մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակները Մերձավոր Արևելքի երկրների քաղաքական կյանքում մեծ փոփոխություններ առաջացրին։ Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորած հունա-մակեդոնական առաջխաղացումը դեպի Արևելք խթանեց նոր՝ հելլենիստական տիպի միապետությունների առաջացմանը։ Վերջիններիս և Հայաստանի միջև ստեղծված տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը վճռական նշանակություն ունեցան երկրի հետագա սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման համար։

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների առաջին, մերձավորագույն հետևանքը Հայաստանի համար եղավ օտարերկրյա, Աքեմենյանների քաղաքական լծի տապալումը, որից հետո երկիրը, մեր ուսումնասիրած շուրջ յոթը դար տևած ժամանակահատվածում, պահպանեց իր անկախ քաղաքական գոյությունը։ Արդեն որպես ժողովուրդ կազմավորված հայերը, ստեղծելով իրենց ինքնուրույն պետականությունը, այն հաջող կերպով պաշտպանեցին, սկզբում Սելևկյանների, հետագայում՝ Հռոմի և Պարսկաստանի, բոլոր տեսակի ոտնձգություններից։

Եթե մինչ այդ պետականությունից զուրկ Հայաստանը հնարավորություն չէր ունեցել դուրս գալու միջազգային քաղաքական ասպարեզ, ապա Աքեմենյանների լուծը թոթափելուց հետո Հայաստանում որպես թագավոր հաստատված Երվանդունիները, իսկ հետագայում՝ Արտաշեսյանները, հանդես են գալիս միջպետական հարաբերություններում իրավական կողմ, լուրջ դեր խաղալով ընդհանրապես Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում։ Հետագայում, Արշակունիների թագավորության ժամանակ, ստեղծվեց արդեն միջազգային այնպիսի իրավիճակ, երբ Հայաստանը ստիպված էր խուսանավելու երկու հզորների՝ Հռոմի և Պարսկաստանի միջև։

Հայկական պետականությունը, անկասկած, առաջացել է տեղական միջավայրում, հայկական հասարակության սոցիալ-տնտեսական ներքին հետագա զարգացման հիման վրա։ Այնուհետև, սակայն, այն անկեղծաբար կրել է սատրապական տիրապետության ազդեցությունը, միաժամանակ և զերծ չի մնացել շրջապատի հելլենիստական միապետությունների, հատկապես

Մելևկյան թագավորության, ինչպես նաև պարթև Արշակունիների, պետական կառուցվածքի այս կամ այն ձևերի ներթափանցումից։

Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակ Հայաստանում կազմավորվեցին պետական այնպիսի կայուն հաստատություններ, ինչպիսիք գործակալությունն-նախարարությունները, որոնք նույնիսկ Արշակունյաց թագավորության անկումից հետո իսկ, երկար ժամանակ, օտար՝ բյուզանդական, սասանյան և արաբական տիրապետությունների տակ, չարունակեցին իրենց գոյությունը. իսկ ավելի ուշ, Բագրատունյաց թագավորության, նույնիսկ Կիլիկիայում հայկական պետության մեջ այդ հաստատություններից չատերը վերականգնվեցին, դառնալով պետության կառավարման կարևորագույն լծակներ։

ՅԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909։

Աստուածաշունչք հին և նոր կտակարանաց, Վենետիկ, 1660։

Եղիշէ վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Վենետիկ, 1864։

Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան Մեսրոպայ Վարդապետի, Վենետիկ, 1894։

Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904։

Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ՝ Ստ. Մալխասյանի, Երևան, 1940։

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913։

Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860։

Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941։

Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի, «Սոփերք հայկականք», Զ, Վենետիկ, 1853։

Սերէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939։

Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911։

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ՝ Ստ. Մալխասյանի, Երևան, 1947։ 2-րդ հրատ. *Երևան*, 1968։

Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերգուրգ, 1883։

Քսենոփոն, Անաբասիս, բնագրից թարգմանեց՝ Սիմոն Կրկյաշարյան, Երևան, 1970։

Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu herausgegeben von Paul de Lagard, Göttingen, 1887.

Ammiani Marcellini Rerum gestarum libri qui supersunt, rec. v.Gardthausen, bibl. Teubneriana.

Appiani Alexandrini Historia Romana, V.I-II, bibl. Teubneriana, Lipsiae, 1879.
Arriani Flavii De expeditione Alexandri, rec. Robertus Geler, Lipsiae, 1873.
Curtius Rufus, Historiae Alexandri Magni, Lipsiae, 1816.
Diodori Bibliotheca Historica, v.I-V, Lipsiae, 1866-1868.
Herodoti Historiarum libri IX, v. I-3, Cambridge, Mas. – London, 1946-1960 (Loeb Classical Library).
Josephi Flavii Opera omnia, rec. E. Bekker, bibl. Teubneriana.
Justini M. Juniani Epitoma historiarum Philipicarum Pompeii Trogi, Lipsiae 1915.
Memnonis Historiae Heracleae Ponti, Lipsiae, 1816.
Müller C., Fragmenta historicorum graecorum, v. I-IV, Paris, 1883.
Plinii Secundi C., Naturalis Historiae, Paris, 1883).
Plutarchi Vitae parallelae, v.I-IV, Lipsiae, 1914-1939.
Polybii Historiae, v. I-VI, Cambridge, Mass.-London, 1960, (Loeb Classical Library).
Polyaeni Strategematicon libri octo, bibl. Teubneriana.
Strabonis Geographica, rec. A. Meineke, v. I-III, Lipsiae, Lipsiae, 1907.
Suetonil Tranquilli De vita Caesarum libri VIII, Lipsiae, 1907.
Taciti opera, Lipsiae, 1829.
Xenophontis Cyropaedia, rec. Arnoldus Hug, Lipsiae, 1878.
Xenophontis Expeditio Cyri, rec. Arnoldus Hug, Lipsiae, 1878.
Xenophontis Oeconomicus, Berlin, 1910.

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա.Գ., Գառնիի հունարեն արձանագրությունը, «Էջմիածին», 1947, մարտ-ապրիլ,
Ադոնց, Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:
Ամատյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971:
Ամատյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Է, Երևան, 1935:
Ամատյան Հր., Օտար աղբյուրները հայերի մասին. Ստրաբոն. Երևան, 1940:
Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Հ. Ա, Երևան, 1959:
Առաքելյան Բ.Ն., Լատիներեն արձանագրություն Արտաշատից, ՊԲՀ, 1967, Ն*ո* 4:
Առաքելյան Բ.Ն., «Կօշիկը» որպես սոցիալական տերմին, Արմֆանի Տեղեկագիր, 1940, Ն*ո* 3:
Աստուրյան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմի, Վենետիկ, 1912:
Բազմաջյան Կ., Իսկական պատմություն հայոց, Պոլիս, 1914:
Բարթիկյան Հ.Մ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊԲՀ, 1965, Ն*ո* 3:
Բիւզանդացի Նորայր, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1910:
Գաթըրճեանց Ց., Տիեզերական պատմութիւն, Վիեննա, հ. Ա, 1849: Հատ. Բ, Վիեննա, 1852:
Գամսախուրդիա Թ.Կ., Բդեշխությունների ինստիտուտի հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների ինֆորմացիայի սեկտոր, Ն*ո* 5, 1971, Երևան:
Գարագաշյան Ա.Մ., Քննական պատմություն հայոց, մասն Ա, Թիֆլիս, 1895: Մասն Բ, Թիֆլիս, 1895:
Երեմյան Ս.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963:
Երեմյան Ս.Տ., Հայկական առաջին պետական կազմավորումները, ՊԲՀ, 1968, Ն*ո* 3:
Երեմյան Ս.Տ., Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության տվյալները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, Ն*ո* 2:
Էլչիբեկյան Ժ.Գ., Երվանդունիների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1971, Ն*ո* 2:

Ժամկոչյան Հ., Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և սոցիալիզմի շրջանում, Երևան, 1961:
Ինճիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Գ. Բ, Վենետիկ, 1835:
Լեո, Երկեր 10 հատորով, Հ. 1, Երևան, 1966:
Կարախանյան Գ.Հ., Արամեերեն երկու արձանագրություններ, ՊԲՀ, 1971, Նո 3:
Կոստանյան Կ., Հիւսուածք, գիրք Գ, Վիեննա, 1877:
Կոստանյան Ա.Ա., «Նախարար» տերմինի մասին, ՊԲՀ, 1973, Նո 3:
Կրկյաշարյան Ս.Մ., Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, Տեղ. ՀԳԱՀԳ, 1963, Նո 9:
Կրկյաշարյան Ս.Մ., Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, Նո 1:
Կրկյաշարյան Ս.Մ., Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, ՊԲՀ, 1965, Նո 3:
Կրկյաշարյան Ս.Մ., Բզեչխությունների առաջացումը Հայաստանում, ՊԲՀ, 1966, Նո 4:
Կրկյաշարյան Ս.Մ., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970:
Կրկյաշարյան Ս.Մ., Տիգրան II-ին վերաբերող մի կարևոր ուղղում, ՊԲՀ, 1967, Նո 4:
Հակոբյան Ս.Ե., Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը, Տեղ. ՀԳԱՀԳ, 1951, Նո 3:
Հակոբյան Ս.Ե., Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, Երևան, 1957:
Հայ ժողովրդի պատմություն (Ձեռնարկ միջնակարգ դպրոցների համար) հ. 1, Երևան, 1956:
Հայ ժողովրդի պատմություն (բուհական ձեռնարկ), հ. 1, Երևան, 1964:
Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971:
Հրանդ Արմեն, Մեծն Տիգրան, Կահիրե, 1957:
Մանանդյան Հ.Հ., Դիտողություններ չինականների դրության մասին մարզպանության շրջանում, Երևան, 1925:
Մանանդյան Հ.Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան), Երևան, 1934:
Մանանդյան Հ.Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940:

Մանանդյան Հ.Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Հ.Ա, Երևան, 1944,: Հ. Բ, մասն Ա, Երևան, 1957:
Մանանդյան Հ.Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան 1946:
Մանանդյան Հ.Հ., Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946:
Շահինյան Լ.Փ., Պարսիկ Արշակունիների հարաբերության հաստատման թվականը ըստ Խորենացու, ՊԲՀ, 1966, Նո 1:
Շահինյան Լ.Փ., Ինչպիսի՞ն է Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, ԲՄ, Նո 8, 1967:
Շահինյան Լ.Փ., Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող վահեի մասին, ՊԲՀ, 1973, Նո 4:
Ջամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784:
Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939:
Սարգսյան Գ.Խ., Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1963:
Սարգսյան Գ.Խ., Գառնիի հունարեն արձանագրության չուրջը, Տեղ. ՀԳԱՀԳ, 1957, Նո 10:
Տիրացյան Գ.Ա., Երվանդունիները Հայաստանում, Տեղ. ՀԳԱՀԳ, 1958, Նո 6:
Տիրացյան Գ.Ա., Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի Ն.մ.թ. 3–2րդ դարերի պատմության մասին, ԲՄ, 1962, Նո 6:
Տիրացյան Գ.Ա., Հին հայկական պետության առաջացումը, ՊԲՀ, 1966, Նո 4:

Адонц Н., Армения в эпоху Юстиниана, С.П.б., 1908.

Аракелян Б.Н., Гарни I, Ереван, 1951; Гарни II, Ереван, 1957.

Бокщанин А.Г., Парфия и Рим, ч. I, М., 1963.

Болтунова А.И., Греческие надписи Армавира, «Известия АрмФана 1942, No.1-2.

Болтунова А.И., Возникновение классового общества и государственной вдасти в Иберии, ВДИ, 1956, № 2.

Борисов А.Я., Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, № 2.

Джавахов И., Государственный строй древней Грузии и древней Армении, СПб., 1905.

Дройзен И.Г., История эллинизма, т. I, М., 1890.

Дьяконов И.М., Старкова К.Б., Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1955, № 2.

Дьяконов И.М., История Мидии от древнейших времён до конца IV века до н.э., М.-Л., 1956.

Дьяконов М.М., Очерк истории древнего Ирана, М., 1961.

Еремян С.Т., Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, Տեղ. ՀԳԱՆԳ, 1948, № 11

Еремян С.Т., О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1.

Еремян С.Т., Развитие городов и городской жизни в древней Армении, М., 1953, № 3.

Еремян С.Т., Рабовладельческое общество в древней Армении, 1953, (автореферат докт. дисс.).

Капанцян Гр., Историко-лингвистические работы, Ереван, 1956.

Капанцян Гр., Хаяса-колыбель армян, Ереван, 1948.

Саркисян Г.Х., Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960.

Кркяшарян С.М., Возникновение городов в Армении во II веке до н. э. -III в. н. э., «Научные доклады высшей школы. Исторические науки», 1961, № 4.

Манандян Я.А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древных времён (V в. до н.э. - XV в. н.э.), Ереван, 1930, 2ое изд. Ереван, 1954.

Манандян Я.А., Актуальные вопросы историографии древней Армении, «Историк марксист», 1940, № 6.

Манандян Я.А., Проблемы общественного строя доаршакской Армении, «Исторические записки», 1945, № 15.

Манандян Я.А., Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, Известия АН Арм. ССР, Общественные науки, 1951, № 4.

Марр Н., Этимология двух терминов армянского феодального строя, Записки Вост. Отд. Имп. Рус. Арх. Общ., т. XI, 1898.

Мартиросян А.А., Город Тейшебаини, Ереван, 1961.

ханян А.Г., Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. до н.э. - III в. н.э.), М., 1959.

Очерки истории СССР, Первобытно-общинный строй и древнейшие государства на территории СССР, М., 1956.

Периханян А.Г., Древнеармянские востаники, ВДИ, 1956, №2.

Периханян А.Г., Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959.

Периханян А.Г., Арамейская надпись из Гарни, ИФЖ, 1964, №3.

Периханян А.Г., Арамейская надпись из Зангезура, ИФЖ, 1965, №4.

Пигулевская Н.В., Города Ирана в раннем средневековье, М.-Л., 1956.

Пиотровский Б.Б., История и культура Урарту, Ереван, 1944.

Пиотровский Б.Б., Ванское царство, М., 1959.

Ранович А.Б., Эллинизм и его историческая роль, М.-Л., 1950.

Ростовцев М.И., Апаранская греческая надпись царя Тиридата. Анийская серия, №6, СПб., 1911

Саркисян Г.Х., Самоуправляющийся город Селевкидской Вавилонии, ВДИ, 1952, № 1.

Саркисян Г.Х., Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960.

Струве В.В., Новые данные истории Армении, засвидетельствованные Бехистунской надписью, ИАНАОН, 1946, №8.

Тирацян Г.А., Страна Коммагена и Армения, ИАНАОН, 1956, №3.

Тирацян Г.А., Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, ИФЖ, №2.

Тревер К.В., Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953.

Тревер К.В., Очерки по истории и культуры Кавказской Альбании, М.-Л., 1959.

Фрай Р., Наследие Ирана, М., 1972.

Халатянц Г., Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, ч. I, М., 1903.

Халатянц Г., «Истории Армении» Моисея Хоренского, М., 1893.

Церетели Г.В., Армазская билингва, Тбилиси., 1941.

Церетели Г.В., Эпиграфические находки в Мцхета - древней столице Грузии, ВДИ, 1948, № 2.

Эмин Н., История Моисея Хоренского, М., 1893.

Aslan K., Études historique sur le peuple arménien, Paris, 1909.

Babelon I., Les rois de Syrie, d'Arménie et de Commagéne, Paris, 1890.

Beloch K.J., Griechische Geschichte, III Band, II Abteilung, Strassburg, 1904.

Bengston H., Die Strategie der hellenistischen Zeit, II, München, 1944.

Bickermann W., Institutions des Seleucides, Paris, 1938.

Gary M., A History of the Greek World from 323 to 146 B.C., London, 1932.

Dittenberger W., Orientis Graeci Inscriptiones Selectae (OGIS), v, I-II, Lipsiae, 1903-1905.

Dittenberger W., Sylloge Inscriptionum Graecarum, ed. 3, Lipsiae, 1915-1924.

Dörner F.K. & Naumann R., Forschung in Kommagene, "Istanbuler Forschungen", Bd. 10, Berlin, 1939.

Dörner K.F., Goell T., Arsameia am Nyamphaies, "Istanbuler Forschungen", Bd, 23, 1963.

Henning W.B., A New Parthian Inscription, "Journal of the Royal Asiatic Society, 1955, Facs. 3-4.

Honigmann Ernest et Maricq André, Recherches sur le Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953.

Humann K., und Puchstein O., Reisen in Kleinasien und Nordsyrien, Berlin, 1890.

König Fr., Relief und Inschrift des Königs Dareics I, Leiden, 1938.

Langlois V., Numismatique générale de l'Arménie, Paris, 1859.

Lehmann-Haupt C.F., Eine griechische Inschrift aus der Spätzeit Tigranokertas, "Klio", VIII (1908).

Markwart J., Untersuchungen zur Geschichte von Eran, Heft I, Göttingen, 1896.

Markwart J., Eranšahr nach der Geographie des Pa. Moses Chorenac'i, Berlin, 1901.

Markwart, J., Die Chronologie des Kambyses und der Lüdenkönige und der altpersische Kalender, "Philologus", Suppl. X, 1905.

Markwart, J., Südarmenien und die Tigrosquellen nach den griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

Markwart J., Die Entstehung der armenischen Bistümer, Rom, 1932.

Perikhanian A., Les inscriptions araméennes du roi Artachés, REANS, t. VIII, 1971.

Perikhanian A., Une inscription araméenne du roi Artašes trouvée à Zanguézour (Siwnik'), REANS, t. III, 1966.

Ramsay W., The Social Basis of Roman power in Asia Minor, Aberdeen 1941.

Reinach Th., Mithridate Eupator, Paris, 1890.

Rostovtseff M.I., The Social and economic history of the hellenistic world, Oxford, 1941.

Rostovtseff M.I. & Welles C.B., A Parchment contract of loan from Dura-Europos,. Yale Classical Studies, II (1931).

Sandalgian J., Histoire documentaire de l'Arménie, II, Rome, 1917.

Seyrig H., Antiquitées syriennes, 42, Sur les ères de quelques villes de Syrie, "Syria", 1940.

Tomanoff C., Studies in Christian Caucasian history, Georgetown, 1963.

Weissbach F.H., Zur neubabylonischen und achamenidischen Chronologie, "Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft", Bd. 62, 1908.

Welles C.B., The Royal correspondence in the hellenistic period, New Haven, 1934.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	.....	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.-	Հայկական պետականության տարրերի առաջացումը Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում	25
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.-	Երվանդունի թագավորական հարստության մասին	47
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.-	Հայաստանը հունա-մակեդոնական էքսպանսիայի տարիներին	61
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	Թագավորական իշխանությունը հին Հայաստանում	93
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.-	Քրմական դասը Հայաստանում	129
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.-	Պետական ապարատի կազմավորումը նրա հետագա զարգացման փուլը Հայաստանում	153
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ	Քաղաքը հելլենիստական պետության կազմում	201
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ.-	Թագավորական իշխանությունը Արշակունյաց Հայաստանում	217
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ.-	Նախարարներն ու նախարարությունները Արշակունյաց Հայաստանում	259
ՎԵՐՋԱԲԱՆ	.....	296

ՅԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ 299

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Սիմոն Միսակի Կրկյաշարյանը ծնվել է 1923 դեկտ. 7-ին, Աթենքի Կոկինիա արվարձանում, ուր կենտրոնացել էին Թուրքիայից մազապուրծ հազարավոր գաղթականներ:

1936 թ. Ս. Կրկյաշարյանն ավարտել է յոթնամյա հայկական դպրոցը և ուսումը շարունակել է հունական գիմնազիայում, որն ավարտել է 1943 թ.:

Գիմնազիայում սովորած տարիներին մասնակցել է իտալագերման զավթիչների դեմ սկսած դիմադրական շարժմանը:

Անդամակցել է տեղի գրական խմբակին, ինչը վճռորոշ նշանակություն է ունեցել պատանի Կրկյաշարյանի գրական հետագա գործունեության համար: Այդ ժամանակ լույս է տեսել նրա անդրանիկ գործը՝ ΛΥΚΑΥΓΕΣ (Ցայգալույս) հունարեն բանաստեղծությունների ժողովածուն:

1944 թ. ընդունվել է Աթենքի համալսարան, ուր սովորել է մինչև հայրենադարձվելը (1947 թ.): Հայրենադարձվելը շրջադարձային փուլ եղավ Կրկյաշարյանի կյանքում: 1950 թ. ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ, որն ավարտել է 1954 թ.:

Ինստիտուտն ավարտելուց հետո որոշ ժամանակ որպես պատմության դասատու պաշտոնավարել է հանրապետության դպրոցներում, միաժամանակ զբաղվելով գրական-գեղարվեստական թարգմանությամբ:

1959 թ. ընդունվել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի ասպիրանտուրա և ուսումնառության համար գործուղվել Լենինգրադ (Սանկտ-Պետերբուրգ), ուր աշակերտել է Հ. Օրբելուն, Վ. Ստրուվեին, Բ. Պիոտրովսկուն, Ի. Դյակոնովին:

1962 թ. աշխատանքի է անցել ԳԱ Պատմության ինստիտուտի Հին և Միջին դարերի պատմության բաժնում, ուր անվանի հայագետներ Ս. Երեմյանի, Հ. Անասյանի, Գ. Սարգսյանի, Հ. Բարթիկյանի, Մ. Զուլալյանի միջավայրում ձևավորվել է որպես հայագետ-աղբյուրագետ:

1963 թ. «Հելլենիստական թագավորների փոխհարաբերությունները Փոքր Ասիայի և Հայաստանի քաղաքների հետ» ատենախոսության համար ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Առ այսօր աշխատելով Պատմության ինստիտուտում անցել է գիտական բոլոր աստիճաններով, մինչև բաժնի վարիչի պաշտոնը:

1968 թ. համատեղության կարգով հրավիրվել է Երևանի Պետական համալսարան, 1975 թ. Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան որպես պատմության, աղբյուրագիտության, անտիկ գրականության և հին հունարենի դասախոս, իսկ 1995 թ. Պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետ, որտեղ առ այսօր դասավանդում է հին հունարեն:

1980 թ. «Հին Հայաստանի պետական կառուցվածքը» ատենախոսության համար նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Ս. Կրկյաշարյանի ուսումնասիրությունների շրջանակը ներառել է հելլենիստական քաղաքների, Հին Հայաստանի պետական կառուցվածքի, քաղաքական պատմության ոլորտները (հազարամյա կտրվածքով), սկսած մ.թ.ա. VI դարից մինչև հայ Արշակունյաց թագավորության անկման շրջանը:

Ս. Կրկյաշարյանի գիտական գործունեության մեկ ուրիշ ասպարեզ էլ անտիկ հույն հեղինակների (Հոմերոս, Հերոդոտոս, Քսենոփոն, Դիոդորոս, Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասիոս, Պլուտարքոս) գործերի հայերեն թարգմանություններն են, առաջաբաններով և ծանոթագրություններով հանդերձ, որով հիմք դրվեց «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի «Հին հունական աղբյուրներ» շարքի: Այս և հին ու նոր հույն գրականությունից (Սոփոկլես, Եվրիպիդես, Արիստոփանես, Վառնալիս) նրա կատարած մեծարժեք թարգմանությունների համար, 1977 թ. նա ընտրվել է Հայաստանի գրողների միության անդամ, 1986 թ. Հռոմի գրականության և արվեստի «Տիբերինա» ակադեմիայի անդամ, 1987 թ. գրողների միությունը նրան շնորհել է Եղիշե Չարենցի անվան գրական մրցանակը, իսկ 2003 թ. թարգմանչաց «Կանթեղ» մրցանակը:

2004 թ. գիտա-մանկավարժական երկարամյա վաստակի համար պատմական գիտությունների դոկտոր Ս. Կրկյաշարյանն արժանացավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանին:

Ս. Կրկյաշարյանը 2000 թ. ընտրվել է ՀՀԳԱԱ թղթակից անդամ:

Ս.Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(Մ.Թ.Ա. VI - Մ.Թ. IV ԴԴ.)

Ստորագրված է տպագրության՝ 12.05.2005:
Չափսը՝ 70X100 $^{1}/_{32}$: Թուղթ օֆսեթ №1:
Տպագրությունը՝ օֆսեթ: 39 տպ. մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորիչ 6:
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47
էլ. փոստ lusakn@rambler.ru